

320

August 1919

August 1919

June 1919

August 1919

1919

August 1919

820

1919

№ 3

Բ. Հ. Կ. Միութեան հրատ. սեկցիա

№ 3

Изд. Издательской секции Б. А. К. Союза

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՍՏԻՆԻ ԶԵՐԻՐ
ՀԵՂ. ՄԱՅՄԱՐԻ
ՄԱՍԻ Բ.

Գինն է 30 կոպ.

Ведникъ безъ городовъ
Соч М **И**НЬ РИ
с. II

цѣна 30 коп.

Редакторъ К. Хатисовъ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

I.

ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

1. Ժողովրդական գրադարան

- № 1 Վրկեյժ Տեղ 5 կ.
- № 2. Յրիկի 5 կ.
- № 3. Թե ինչպես պեժ և հիմնել փարկայիս ընկերություններ 5 կ.

2. Պատանեկան գրադարան

- № 1. Անգղախ Չիաուր 1. մաս 30 կ.
- և՛նդ. Մայն Քիլի 2. " 30 կ.
- № 2. " " " " " " " " " " " "

3. Գրասրահներ

- № 1. Խրիստոսիա 75 կ.
- Ս. Մանգիլեանի II. գիրք " " " "

Պատանեկան Գրադարան

- № 1. Գիտան հայոց Պատանեկան Գիտ. 4 ր.
- Ս. Մանգիլեանի " " " " " "

2004

II

Հայ ևն տեսել և ՄԻՈՒԹԵԱՆ հրատարակած

ՇԵՏՆԻՇԱԼ ԳՐԲԵՐԸ

- Ն. Քրիստոսիան կանոնադրության 30 կ.
- II. Չարանեանի 30 կ.
- Պատանեկան կամ ընկերական զանգվածի Ս. Չարանեանի 2 կ.

(3117) 2193-60

825

38209 ա.հ.

Մ-23.

— 236 —

ԳԼ. ԼԵ.

ՅԱՐՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԻՆ.

Handwritten signature or mark

«Եթէ ուշանանք կէս ժամ էլ, կարելի է արդէն ուշ կը լինի».—այդ եղաւ որսորդի վերջին խօսքերը, երբ նա դուրս եկաւ խրճիթից և ճանապարհ ընկաւ.

Նա բարձրովն իրաւացի էր. բայց եթէ կէս ժամի փոխարէն ասէր «կէս րոպէ», աւելի մօտ կը լինէր ճրչմարտութեան: Հէնց այդ ժամանակ այն մարդը, որի սրբունտ նաճակն օգնութիւն էր խնդրում, նորից գայլերի շարձակեան ենթարկուեց. բայց այժմ նրանք չէին նախանայր երկնազալի, այլ մի ուրիշ աւելի սարսափելի թռչունովի նրան կորուսաւ էր սպանում:

Մօրիս Հերարդը,—հաւանական է, ընթերցողներն արդէն գուշակեցին, որ վերարկուով և պանամա զլխարկով միտաւոր երթոսարդը նա էր,—զէմ գնելով գայլերին և ազատելով նրանցից հաւատարիմ Թարայի օգնութեամբ, ինչպէս վերը նկարագրուած էր, հանգստութեան կարիք էր զգում: Վասան լինելով, որ իւր շորքտանի պահապանը կարող է պաշտպանել նրան գիշատիչ թռչուններից և աւելի վտանգաւոր գիշատիչ գազաններից, նա փակեց աչքերը և հանգիստ քնեց մի քանի ժամ: Արթնանալով նորիցն քաւականաչափ կազդուրած զգաց և սկսեց մտածել իւր դրութեան վտանգաւորութեան մասին: Շուտն ազատել էր նրան գայլերից և կը պաշտպանէ նրանց շարձակումը կրկնելու զէպրում: Բայց շուտը Հաւատարիմ վնասակին չէր կարող անգափոխել նրան մի ուրիշ տեսիլի այտեղ մնալն էլ նշանակում էր իր ցանցի և աւելի կորցնելուց մեռնել:

Նա փորձեց ասի կանգնել, բայց...

Թուլութիւն, այնպէս որ երկու երեք քայլ անելուց յետոյ
նորից նա ստիպւած էր պառկել: Նա չը գիտէր ինչ անէր:
Քանի որ ծնրա գլխում ծնւեց մի բաղդաւոր միտք: Թարան
կարող էր սուրհանդակի գեր կատարել և նրա մասին լուր
տանել տուն:

Բայց ինչպէս հարկադրէր նրան գնալ այստեղից, —
մտածեց նա անհանգստութեամբ:

— Ե՛կ այստեղ, հին բարեկամ, — ասաց նա դառնալով
շանը: — Դու կը լինես իմ սուրհանդակը և տուն կը տա-
նես մի նամակ: Հասկանո՞ւմ ես: Սպասիր, ես այս բոլորին
չը գրեմ, յետոյ կը բացատրեմ քեզ՝ թէ ինչ է հարկաւոր
անելու: Բարեբաղդաբար ինձ մօտ այցետոմս կայ, — ուե-
լացրեց նա հանելով ծոցատետրը. — միայն մատիւ չը
կայ: Բայց մի և նոյն է, չորս կողմս բաւականին թանաք
կայ, իսկ զբոյժի փոխարէն կարելի է օգտուել ազաւայի փշերից:

Այդ բոյսերից մէկը բսած էր նրանից ոչ հեռու: Մօ-
րիսը սողաց նրա մօտ, կտորեց նրա փշերից ամենաերկա-
րը, թաթախեց իւր սպանած գայլի արեան մէջ և այ-
դետոմսի վրայ մի քանի խօսք գրեց: Յետոյ կտորեց իւր
դանամա զվարկի աստառից մի կտոր, փաթաթեց նրա
մէջ այցատուր և փոկով զգուշութեամբ կապեց շան
վզին: Այժմ անում էր միայն բացատրել Թարային նրա
պարտականութիւնը, բայց այդ հեշտ գործ չ'ը կայ: Եւ-
նը ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թէ ինչու
էր տէրը, որին նա այնպէս հաւատարմութեամբ ծառա-
տում էր, հալածում էր իրան, և երկար ժամանակ հա-
նդանքն ու փաղաքշանքը չը կարողացան ստիպել շանը
հասկանալու:

Նա վճռեց թողնել Մօրիսին միայն այն ժամանակ,
կր զկերջինս սկսեց բարկացած գոռալ նրա վրայ և փայտով
ժողովել: Մինչև անգամ շան անձուիրութիւնը չը կարո-
ղաւ տանել այդպիսի անբարեխտութիւնը և, մի կշտամ-

բող հայեացք ձգելով իւր տիրոջ վրայ, նա դանդաղու-
թեամբ անյայտացաւ անտառում:

«Խեղձ, — խօսեց Մօրիսը, երբ շունն անյայտացաւ: —
եթէ դու իմանայիր թէ ինչպէս ծանր է ծեծել քեզ, ինչ-
պէս իմ լաւ բարեկամին, բայց ինչ արած, հանգամանք-
ներն այդպէս էին պահանջում և ես կը քաւեմ իմ ակա-
մայ վարմունքը, եթէ երբ և իցէ նորեց կը պատահենք
միմեանց: Այժմ միայնակ և առանց պաշտպանի մնալով,
հարկաւոր է ինձ միջոցներ ձեռք առնել այդ վատթար
կենդանիների յարձակումների դէմ: Ի հարկէ, նրանք դար-
ձեալ կարող են հաւաքուել, հէնց որ նկատեն, որ ես
միայնակ եմ»:

Եւ նա սկսեց ծրագիր կազմել:

Նրանից ոչ հեռու բսած էր մի մեծ պեկան, որի
երկու հաստ ճղները տարածւում էին գետնից վեց եօթ
տք բարձր՝ մինը միւսին զուգահեռաբար:

Մօրիսը հանեց վերարկուն, փոսեց խոտերի վրայ և
դանակով նրա ամեն մի կողմին մի շարք ծակեր բաց
արաւ: Յետոյ արձակեց մետաքսէ գօտին և պատուեց մի-
ջից այնպէս, որ երկու կտոր ստացաւ, իւրաքանչիւրը մի
քանի եարգ երկարութեամբ: Երկու ճղների վրայ ձգելով
վերարկուն և մետաքսէ երիզներով պինդ ամրացնելով
շինեց ձօձի նման մի բան, որի մէջ Մօրիսը կարող էր
ձգուել ամբողջ երկարութեամբ:

Նա գիտէր, որ գայլերը չեն կարողանում բարձրանալ
ձաների վրայ, ուստի պսակելով իւր օրբանի մէջ, կարող
էր հանգիստ կերպով դիտել նրանց իրան հասնելու հա-
մար արած ջանքերը:

Նա հաւատացած էր, որ գայլերը կը շարունակեն
դրա համար էլ այդպիսի նորագոյն շփոթումներով ար-
տուել: Եւ յիշաւ, մի քանի ժամանակից յետ-
կօսեցին մէկ-մէկ է կայ մարտանքի:

նրանք մի քանի զգոյշ քայլեր արին և կանգ առնելով դե-
 տեցին իրենց շուրջը, ապա դանդաղութեամբ մօտեցան
 արեան դաշտին: Սրախուսուած իրենց սարսափելի թշնա-
 մու, շան բացակայութեամբ, շուտով մի անագին խումբ
 գայլեր հաւաքեցին և դարձելի ազահութեամբ ընկան ի-
 րենց սպանուած ընկերներէ վրայ ու լափեցին այնպիսի
 արագութեամբ, որ ծառից նրանց դիտող Մօրիսը հագիւ-
 թէ՛ կարողանար այդքան ժամանակամիջոցում համարել
 մինչև քսանը: Դրանից յետոյ նրանք իրենց ուշադրութիւ-
 նը դարձրին Մօրիսի վրայ, որը կախելով իւր օրրանը
 այդպէս բարձր, չէր մտածել ծածկելու նրան: Գայլերը
 ոչ մի դէպքում չէին կարող հասնել նրան և այդ նրան
 բաւական էր թուում: Սակայն սև կտորից վերարկուն և
 նրա մէջ պառկած մարդը նկատելի էին հեռւից: Գայլերը
 խմբեցին ծառի տակ. նրանց ազահութիւնն աւելի էր
 գրգռել զգլելի խնջոյքից յետոյ: Չարհուրելի էր տես-
 նել, թէ ինչպէս նրանք լիզում էին երկար ու կարմիր
 լեզուներով իրենց արիւնոտ շրթուքները:

Մօրիսը երբէք չէր անհանգստանում, երբ գայլերը
 փորձում էին ծառը բարձրանալ, կամ ցատքում էին նրան
 հասնելու նպատակով: Նա իրեն համարում էր կատարեալ
 ապահովութեան մէջ: Այն ինչ նրան վտանգ էր սպառնում,
 որը նա կանխօրէն չէր նախատեսել. այդ մասին նա յի-
 շեց միայն այն ժամանակ, երբ գայլերը յոգնելով անօ-
 շուտ ջանքերից, նստեցին ծառի տակ, շրջապատելով նը-
 ան շորս կողմից:

Տափաստանի գայլերն անտառի և տափաստանի բո-
 ր կենդանիներից գերազանցում են իրենց խորամանկու-
 րեամբ: Որսորդներն ասում են, որ դրանք աշխարհիս ա-
 ինախորամանկ գազաններն են: Նրանց մէջ աղւէտի խո-
 րամանկութիւնը միանում է գայլի ազահութեան հետ:
 Նրան և ուրիշները, բայց նա միշտ և ամեն բո-

պէ պատրաստ է խածնել իրան փաղաքշող ձեռքը: Երե-
 խան կարող է հալածել նրանց փայտով, բայց պաշտպան-
 ւելու կարողութիւնից զուրկ մարդուն սպանում է նը-
 րանց յարձակումը: Այդ գայլերը մէն մենակ շատ վախ-
 կոտ են, ինչպէս նապաստակը, իսկ խմբերով նրանց երկ-
 չոտութիւնը շատ քիչ է նկատելի և երբեմն քաղցից տանջ-
 ւած՝ նրանք դառնում են սարսափելի և կատաղի:

Բայց ամենից աւելի սարսափելի էր նրանց խոր-
 մանկութիւնը և այդ էլ սկսել էր մուստանգերին երկիւղ
 ներշնչել:

Համոզւելով, որ չեն կարող հասնել այդ մարդուն,
 գայլերը փոխանակ ցրւելու և հեռանալու, նստեցին ծառի
 տակ. խմբից յետ մնացածներն էլ փոքր առ փոքր եկան
 և միացան իրենց ընկերներին: Մօրիսը հասկացաւ նրանց
 մտադրութիւնը. նրանք կամենում էին պաշարել իրան:

Իմանալով, որ մինչև ցած չը գայ իւր կախուած օր-
 րանից, Մօրիսին ոչ մի վտանգ չէր սպառնում գայլերը,
 այդ պաշարումը նրան չէր անհանգստացնիլ, եթէ չըս-
 պանար նրան մի ուրիշ վտանգ, որը բոլոր առ բոլոր
 ակներև էր դառնում: Նրան տանջում էր ծարաւը:

Այժմ նա ինչպէս էր յանդիմանում ինքն իրեն իւր
 անհասկացողութեան համար: Նա մինչև ծառը բարձրա-
 նալը կարող էր վերցնել իւր հետ շրի պաշար. գետակը
 մօտիկ էր և անօթի փոխարէն նա կարող էր գործածել
 ազաւի գոգաւոր տերևները: Բայց զոջումն անագ
 անպիտան: Չուրը պսպղում էր նրա աչքերի տուջ
 ւելի զոգում նրան տանջող ծարաւը: Գետին հասնելու
 համար նրան հարկաւոր էր անցնել գայլերի խմբի միջով
 իսկ այդ նշանակում էր գնալ ճիշդ դէպի մահը: Քիչ յոյս
 ունէր՝ թէ շուրջ կը վերադառնայ և երկրորդ անգամ
 կ'ազատէ նրան գայլերից. գետ աւելի քիչ յոյս ունէր
 նամակը կ'հասնի նստատեղին:

Առհասարակ շատ արին կորցրած մարդուն միշտ տանջում է ծարաւը: Մօրիսը սարսափելի տանջանք էր կրում. ժամանակն անցնում էր շատ դանդաղ և ծարաւն աւելի անհանդուրժելի դառնում: Ամբողջ ժամանակը նա անցկացրաւ կիսամոռացութեան մէջ: Նրան թւում էր, թէ գայլերի խումբը ըստ է առ ըստ է մեծանում էր, — արդէն ոչ թէ հարիւր, այլ ամբողջ հազարներ էին շրջապատում ծառը և ծածկում փոքրիկ տափարակը: Նրանք աւելի և աւելի էին մօտենում նրան. նրանց աչքերն այրում էին չարագուշակ փայլով, կարմիր լեզուներով և գոմ էին կախ ընկած վերարկուն և սուր ատամներով պատառոտում այդ վերարկւի ծայրերը: Ահա նրանք արդէն թռչում են ճիւղի վրայ և նրանց ծանր շնչառութիւնը արդէն զգալի է Մօրիսին:

Բայց շուտով վերադառնում է վերաւորի գիտակցութիւնը և նա տեսնում է, որ այդ ամենը միայն գառանջանք էր: Գայլերը դեռ այդտեղ էին և առաջևայ նման նանգիստ նստած խոտերի վրայ, համբերութեամբ սպասում էին օրհասական ըստ էին: Բայց նախ քան նա նորից կորցրեց իւր գիտակցութիւնը, յանկարծ անսպասելի և անբացատրելի մի փոփոխութիւն առաջացաւ: Բոլոր գայլերն էլ վեր թռան նստած տեղից և սաստիկ ուժով փախան անտառը:

Միթէ այդ էլ նրա երեակայութեան խաղն էր: Մօրիսը չէր հաւատում իւր աչքերին. նա սկսեց մտածել, թէ խելագարում է:

Բայց ոչ, այդ ճշմարտութիւն էր — գայլերը չը կային: Ի՞նչը կարող էր սակայն նրանց այդպէս վախեցնել:

Նա բարձրացրեց գլուխը և թեքւելով ծառի բնին, նայեց տափարակին. ոչ շունը և ոչ ծառան դեռ չէին երևում, շուրջը նկատելի էին միայն թփեր և ծառեր: Նա սկսեց Թ... ոչ մի ձայն չը կար, բացի փախչող գայլերի

րի ոռնոցից: Այդ ամենը նման էր երազի: Ի՞նչն ստիպեց նրանց այդպէս շտապ փախչել: Բայց միևնո՞յն չէր: Ծանապարհն այժմ բաց էր, կարելի էր անվտանգ հասնել գետակին, որի շուրջը պսպղում էր և առկայծում արեգակից, իսկ դուրեկան վշտոցը հասնում էր Մօրիսի ակունքին:

Մօրիսը ցած իջնելով ծառից, սողալով հասաւ գետակին, բայց նախ քան ջրի վրայ խոնարհւելը, նայեց շուրջը: Մինչև անգամ սաստիկ ծարաւի տանջանքը չը կարողացաւ զսպել նրա զարմանքը: Ո՞ւմն էր պարտական նա իւր հրաշալի ազատութիւնը: Չընայելով այն յոյսին, թէ նրան ազատել է շունը, նա մութ կերպով մի վտանգ զգում էր: Մի ըստ է կ'ս նրա ենթադրութիւնը արդէն հաստատուած կը լինէր: Ծառերի տերևների միջից նը կատելի էր մի բծաւոր գեղին մորթի, երկար ու բարակ մի մարմին, որ ինչպէս օձ՝ գալարում էր թփերի մէջ: Այդ մի յովազ էր, ամերիկական վագր, որ իւր վայրագութեամբ պակաս չէր հին աշխարհի իր ցեղակցից:

Ահա հէնց դրա երևալն էլ հալածեց գայլերին: Նոյնպէս առել էր արեան հոտն և շտապել էր այնտեղ վճռական տեսքով, որը պարզ ցոյց էր տալիս, թէ նա չէ հեռանալու այնտեղից, մինչև որ այդ խնջոյթից չըստանա իւր բաժինը:

Նա աչքերը լառած ծառից իջած մարդու վրայ, շարունակ էր սկզբում դանդաղ, գաղտագողի քայլերով աւելի և աւելի արագ, որպէս թէ պատրաստ տիւն գործելու:

Յետ նահանջել դէպի ծառը կատարել էր ինչէր. մուստանգերին քաջ մագլցում է ծառն ի վեր ինչէր էլ չիմանար, դարձեալ մի

անցել էր ծառը, որի վրայ ապաստանել էր Մօրիսը: Ա-
սենք Մօրիսը չէր էլ մտածում ծառը բարձրանալ. նա
այնպէս կորցրել էր իրան, որ այլ ևս ոչ մի բանի
մասին չէր կարողանում մտածել: Բոլորովին բնազդամբ
նա մտաւ դետը և մինչև գօտին խրեց ջրի մէջ:

Եթէ նա կարողանար դատել, կը հասկանար, որ զբ-
րանով չի խուսափում վտանգից. եթէ յովազը կարողա-
նում է մագլցել ծառն ի վեր՝ ինչպէս կատու, նա կարո-
ղանում է և լողալ ջրի մէջ ջրշան ճարպիկութեամբ և նոյն-
քան վտանգաւոր է ջրի մէջ, որքան և ցամաքում:

Յուսահատութիւնն ընկճեց անբաղդին. նա ուղղեց
և մտադրեց կուել մինչև վերջին շունչը: Նա չունէր իւր
ձեռքին ոչ դանակ, ոչ ատրճանակ և ոչ էլ մի հասարակ
փայտ. անգէն ձեռքով կռիւը կարող էր վերջանալ միայն
իր կորստով:

Երկիւղի մի աղաղակ դուրս թուաւ նրա կրծքից, երբ
յովազը ձգեց իրեն ջրի մէջ և որպէս թէ նրան իբրև պա-
տասխան, հնչեց հրացանի տրաքոցը, որին հետևեց մի
բարձրաձայն բացականչութիւն: Յովազը փօխանակ իւր
գոհին տիրանալու, մոնչալով ընկաւ ջրի մէջ:

Մի մեծ շուն դուրս պրծաւ թփերի միջից և յովազի
ետևից ընկաւ ջրի մէջ. յետոյ երևաց մի հսկայ մարդ,
որ արագ քայլերով դիմեց դէպի գետափը, իսկ մի ուրի-
շ, նրանից աւելի փոքրահասակ, վազում էր հսկայի
ետևից, ուրախութեան աղաղակներ արձակելով:

Մօրիսին այդ ամենն աւելի շուտ տեսիլք էր թուում,
նա թէ իրականութիւն. դրանք այդ օրւայ վերջին անց-
ն էին, որ մնացին նրա յիշողութեան մէջ: Նրա բա-
նութիւնը, որ երկար ժամանակ գտնուում էր անգա-
տաւոր մէջ, բոլորովին պղտորեց: Նա
ատարիմ շանը, որ ուրախ ճիչով
յուսահատ դիմադրում էր այն

ուժեղ ձեռներին, որ աշխատում էին դուրս բերել նրան
ջրի ափը:

Սարսափելի իրականութիւնից յետոյ, նա գոհ դարձաւ
զառանցանքի առթած սարսափելի տեսիլների:

ԳԼ. ԼԶ

ԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ՊԱՏԳԱՐԱԿ

Այն մարդը՝ որի ուժեղ ձեռները բարեկամական օգնութիւն հասցրեց Մօրիս Հերալդին, Ձէբ Ստոմպն էր:

Այցեատմսի վրայ գրեած ցուցմունքին հետեւելով, նա շտապով ուղևորեց նշանակեած սեղը և, բարեբաղդաբար մօտեցաւ այնքան, որ կարող էր արձակել հրացանը այն վճռական բոպէին, երբ յովազն արդէն պարասուում էր յարձակելու իւր գոհի վրայ: Թէպէտ և գնդակը դիպել էր կենդանու ուղիղ սրտին, բայց նա դարձեալ մի ոստիւն արաւ, որն արդէն նրա կեանքի մէջ վերջինն էր:

Որսորդն ընկաւ ջրի մէջ, որպէսզի աւելի լաւ ստուգէ թէ գնդակը իր նպատակին է հասել, նա չէր կասկածում, որ իրեն վտանգ էր սպառնում այն մարդու կողմից, որին հէնց նոր ազատեց վայրագ կենդանու ձանկերից: Հագիւ նա մօտեցել էր Մօրիսին, երբ վերջինս բռնեց իւր հին բարեկամի կոկորդից և աշխատում էր խեղդել նրան: Որսորդը դէն ձգելով հրացանն ու հաւաքելով բոլոր ոյժը, կարողացաւ պաշտպանել անսպասելի յարձակումից: Նրա բազդից Մօրիսը դանակը թողել էր ծառի վրայ:

Վերջապէս նա գրկեց երիտասարդին իւր ուժեղ ձեռներով և դուրս բերաւ ափը: Հէնց որ նա բաց թողեց Մօրիսին իր գրկից, վերջինս վագեց դէպի անտառը այնպիսի արագութեամբ, որ կարծես թէ վրասած ոտը երբէք չէր խանդարում նրան: Որսորդը գուշակեց նրա գիտաւորութիւնը: Հասակով վեց ֆուտից աւելի բարձր լինելով, նա տեսաւ մեծ պեկանի ձգների վրայ փռեած սև վերարկի վրայ արիւնոտ դանակը, — մուստանգերը վազում էր դանակը վերցնելու:

Ձէբը մի ոստիւն գործելով հասաւ նրան և խելագարին

բռնելով իւր գրկի մէջ, մի կողմը քարշ տաւ և հեռացրեց ծառից:

— Ֆելիմ, բարձրացիր շուտով ծառը, — գոչեց նա. — և վերցրու այնտեղից դանակը: Խեղճը բոլորովին կորցրել է բանականութիւնը: Երևի նա տաքութեան մէջ է. ինքն իրեն մոռացել է:

Ֆելիմն իսկոյն հնազանդեց և ծառը բարձրանալով վերցրեց դանակը:

Մօրիսը վայրենի և սպառնացող աղաղակներ արձակելով դուրս պրծաւ իւր ազատարարի գրկից: Նրա մոլորեած աչքերն այրում էին խելացնոր կրակով: Վերլորեած աչքերն այրում էին խելացնոր կրակով: Վերջապէս բոլորովին ուժից ընկած՝ նա փռեց գեանին: Մի սարսուռ անցաւ նրա ամբողջ մարմնով. նա մի քանի անգամ խորը հառաչեց և ֆուսց անշարժ, կարծես թէ նրա վերջին հառաչանքների հետ դուրս եկաւ և հողին:

Ֆելիմը կարծելով թէ նա մեռաւ, սկսեց ողբալի դաղակներ արձակել:

— Իողարիւր ոռնալուց, յիմար, գուաց Ձէբ Ստոմպը: — Միմիայն քո աղաղակները բաւական են նրա հոմարմնից բաժանելու: Քո տէրը նոյնքան մեռած է, քան դու: Նա ուղղակի գրկել է զգացմունքից: Ի նա տի առնելով այն հանգամանքը, թէ նա ինչպէս վարելիս հեռաւ, պէտք է ասել, որ գործն այնքան էլ վատ չէր երևի ոչ մի վտանգաւոր վերք չը կայ, — շարունակեց թեքելով Մօրիսի վրայ և դիտելով նրան: — Ծունկը թուում է, բայց ոտը կոտրեած չէ, թէ չէ նա չէր կարող կանգնել: Իսկ ինչ այս ձանկաուածներին է վերջերում, գրանք այնքան էլ կարեւոր չեն: Բայց որտեղ կարող էր նա ստանալ այդ չնչին վերքերը: Եօզիսը ձանկարտել նրան. այդ վերքերն աւելի տան են կտանների հետքերի: Մ. այժմ կը խոստանայ:

բան այդ խայտաբղետ կենդանու երևալը, Մօրիսը գործ է ունեցել գայլերի հետ: Ո՞վ կը հաւատար, որ այդ երկչոտ անբարձները կը համարձակեն յարձակել մարդու վրայ: Սակայն հասկանալի է, որ նրանք չեն վախեցել այդպիսի հաշմանդամից:

Ծերունի որսորդը կարող էր դեռ երկար ժամանակ խօսել, բայց Ֆելիմը չէր լսում նրան: Նա ուրախութիւնից իրեն կորցրած, որ տէրը կենդանի է, ողբալի աղաղակները փոխեց ուրախ բացականչութիւնների և, ինչպէս ինչպէս սովորութեան համաձայն, մատները տրաքեցնելով, սկսեց պարել: Ծունը տեսնելով նրա մոլի ոտտիւնները, չը կարողացաւ անտարբեր մնալ, նա էլ վազեց Ֆելիմի մօտ և երկուսով սկսեցին կաքաւել մի ինչպէս դական վայրենի պար:

Զէքն ուշադրութիւն չէր դարձնում ուրախութեան այդ աղմկալի արտայայտութիւններին: Նա թեքւելով խոտերի վրայ տարածւած Մօրիսի վրայ, շարունակեց իր գննութիւնը: Ծուտով համոզւելով, որ ոչ մի վտանգ չկար վերք չը կայ նրա մարմնի վրայ, ոտի կանգնեց և սեղ գիտել տափարակը: Նրա աչքովն ընկաւ պանաս գլխարկը և մի տարօրինակ միտք ծագեց նրա գլխում:

Գլխարկի վրեժն խոտերից հիւսած այդ գլխարկը, որ սխալմամբ պանամա են կոչում, ընդհանուր գործածութեան մէջ էր. առանձնապէս այդ գլխարկները կրում են հարաւային նահանգների ամերիկացիները: Զէքը գիտէր, որ երիտասարդ իռլանդացին միշտ գերադասում էր մեքսիկական սեմբերթօն, բայց և շատ հնարաւոր էր, որ վերջին ժամանակները նա հարկաւոր էր համարել փոխել իւր սովորութիւնը: Սակայն սրբան Զէքն աւելի էր նախընտրում այդ գլխարկին, այնքան աւելի էր համոզուած, որ նա տեսել էր այդ գլխարկը մի ուրիշի գլխին և ոչ թէ

Մօրիսի: Ի հարկէ, նա թոյլ չէր տալ իրան մտածելու թէ իռլանդացին տիրացել է ուրիշի սեփականութեան, բայց, այնուամենայնիւ, նա թեքւեց և վերցրեց գլխարկը, որպէսզի աւելի մօտիկից դիտէ: Աշխատելով գտնել այդ գաղանիքի բացատրութիւնը կամ, աւելի լաւ է ասել, նրա մտքերն զբաղեցնող մի շարք անբացատրելի, խորհրդաւոր անցքերի բացատրութիւնը, նա ուշադրութիւն էր դարձնում ամենաչնչին հանգամանքների վրայ անգամ:

Ծուռ տալով գլխարկը, նա գրոշմի վրայ կարգաց գլխարկի Նոր-Օրլէանցի վարպետի ազգանունը և աստաօի վրայ գրւած իրեն լաւ ծանօթ «Հենրի Պօյնդեքստեր» անունը:

Մօրիսի հագուստը նոյնպէս ենթարկեց ուշադիր քննութեան: Զէքը համոզւեց, որ նա էլ պատկանում է Հենրի Պօյնդեքստերին:

«Շատ տարօրինակ է այս բոլորը, — խօսեց նա՝ խոր մտածմունքի մէջ աչքերը գետնին յառելով: — Տարօրինակ են և՛ գլխարկները, և՛ բոլոր մնացածը: Մէկի գլխարկը միւսի գլխից է, մէկը առանց գլխի է մնացել իր ձիւ վրայ: Այս բոլորը շատ վտու բաներ են գուշակել տալիս: Եթէ ցաւ չը զգար իր ձախ աչքի տակ այն հարւածից, որ հասցրեց իրան երիտասարդ մուստանգերը, Ստոււպը պիտի կարծէր, թէ կորցրել է իր գլուխը: Ո՞ւմ գիմել այս բոլորի մասին բացատրութիւններ ուզելու համար: Մօրիսը մինչև իր առողջանայ չի կարող ոչինչ բացատրել, իսկ պատուով նա չի կարող յայտնել չէ: Երկար չը մտաւորեց իր խորհրդը, նա գտաւ, որ ամենից ամէն հարկաւոր է Մօրիսին տուն փոխադրել:»

Բայց ինչպէս փոխադրել: Զէքը կարելի չէր գտնէր մտածել այդ յիմարից ոչինչ չէր կարելի գտնել մտածել իր, Ֆելիմին նայել:

ւած էր շան հետ խօսելով:—Սյդ անլեզու կենդանին ա-
ւելի խելօք է նրանից: Իրանից կարելի էր օգուել միայն
այն ժամանակ, երբ կարողանամ մի պատգարակ շինել,
իսկ պատգարակ կարելի է շինել երկու մատղաշ ծառե-
րից և նրա վրայ փռել Մօրիսի վերարկուն կամ Ֆելիմի:
բերած վերմակը»:

Նա կանչեց Ֆելիմին, որ իրան օգնի: Նրանք տասն
ոտնաչափ երկարութեամբ երկու մատղաշ ծառեր կտրե-
ցին, յետոյ երկու հատ աւելի կարծերը կտրեցին և խա-
չաձև միացրին առաջիններին, ապա վերարկուն և վեր-
մակը ամրացրին այդ պատգարակի վրայ, որի վրայ ցան-
կացան պարկեցնել Մօրիսին և տուն տանել: Սակայն երբ
մօտեցան վիրաւորին և բարձրացրին նրան գետնից, նա
դարձեալ սկսեց կատաղել և փորձեց փախչել, այնպէս որ
Զէբը հարկաւոր համարեց կապկպել նրան պատգարակի
վրայ:

Պատգարակը տանում էին Զէբի պառաւ մատակը,
որ գնում էր առաջից և իօլանդացի Ֆելիմը, որ պահում
էր պատգարակը յետևից, իսկ ինքը, Զէբն ուղեցոյցի գեր
էր կատարում:

Ծերունի որսորդն ինքը չէր հնարել տեղափոխու-
թեան այդ ինքնուրոյն միջոցը: Իսկ մեքսիկական litera-
կոպիտ պատճէնն էր, որին Զէբը շատ անգամ էր
տեսել հարաւային Տեխասում, բայց իր շինածը գա-
նազանում էր իսկականից նրանով, որ նա չունէր վերջին
մասը և երկու շորիների փոխարէն լծւած էին մի մա-
տակ ձի և մի մարդ:

Պատգարակի վրայ Մօրիս Հերալդին հրացորին իւր
խրճիթը, երբ գիշերը արդէն վրայ էր խաւել:

Մի գոյգ ուժեղ ձեռներ քնքշոյթեամբ գրկելով Մօրի-
սին պատգարակից ցած բերին և դրին ձիու կաշւի վրայ, որ
ձառայում էր նրան և անկողին: վիրաւորը դեռ



20 (11-1)
u

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՕՐԸ

Քոն Սիրվիլոյի Մարտինեցը մինն էր մեքսիկական այլ հարստաներից (ricos), որոնք մնացել էին Տեխասի հիւսիսի համարձակ գաղթականների այդ երկիրը ձերուց յետոյ: Նա լինելով բնակորութեամբ խաղաղ էր և բողոքականութեան մէջ չը միջամտող, հեշտութեամբ հաշուեց նոր կարգերի հետ, առաւել ևս, որ այլին անկախութեան կորուստը հաւասարակշռում էր ունեւորների յարձակումներից ազատելով: Կոմանչները եխասին կատարեալ ամայութիւն էին սպանում, մի իսկ նոր գաղթականների մուտքն այդ երկիրը խանդալակէր նրանց:

Թէպէտ և կարմրամորթները դեռ բոլորովին հնամենիցրած չէին, բայց նրանց յարձակումներն այս պատահում էին երկարատե միջոցներից յետոյ, — իսկ այնպե՛ս անգամանքն արդէն մի նշանաւոր քայլ էր դէպի առաջ սմեմատած հին ժամանակների հետ:

Քոն Սիրվիլոն անասնապահ էր: Նրան պատկանող օտարեղերը մի քանի մղոն երկայնութիւն և լայնութիւն ունէին և կերակրում էին մի քանի հազար ձիեր լճերու որ անասուններ: Նրա գաղէնդան, որ մի մեծ խոյրկանի երկար ու նեղ տուն էր, չորս կողմից շրջապատւած, աւելի նման էր բանտի, քան թէ սովորական բնակարանի:

Այստեղ միշտ լինում էր խաղաղ, բացի harradero- ղմկալի և ուրախ ածնից, որ տեւում էր մի քանի օր շտապակ: Բայց այդ պատահում էր տարին մի անգամ այն: Տարւայ մնացած ժամանակը գաղթականները մի ձերուսի ամուրի էր, անց էր և...



և համարեա առանձնացած իւր քրոջ հետ միասին, դեռ նրանից մեծ էր: Երբեմն Ռիօ Գրանդէի այն կողմ գալիս այցելում էր նրանց իրենց քրոջ գեղեցիկ աղջկորի ներկայութեամբ դօն Սիլվիոյի տունը փոքր ինչ դանութիւն էր ստանում:

Իզիդորան նրանց ցանկացած հիւրն էր: Նա իր ուռ մօտ ապրելով, անում էր ամեն բան, ինչ որ կ'ընում էր: Ծերունի գազենդատիրոջ զիւր էր գոյի աշխոյժ, ուրախ բնաւորութիւնը: Նրա բնաւորութեան մի քանի նշանները, որոնք կարող էին ոչ կանացի եր ամեն մի ուրիշ տեղ, բոլորովին սովորական էին մի երում, ուր մարդկանց կեանքն անցնում էր մշտապէս վտանգների մէջ, ուր տունը փոխարկւում էր ամբողջ ընտանեկան օջախը ոռոգւում էր բնակիչների արեւոյց:

Արդեօք զարմանալի է՞ որ այստեղ կանայք սօս լինին այնպիսի յատկութիւններով, որոնք այնպէս իր կերպով արտայայտւում էին Իզիդորայի բնաւորութեան մէջ:

Շատ դէպքերում Մեքսիկացի կանայք շատ նեղ սիրելի և քաղցր (douce) — եթէ թոյլ կը տրւի փոխ նել վերջին խօսքն այն լեզուից, որով ամենից աւելի սնում են կանանց մասին, — ահա մեքսիկոսները այնպիսի նոյ գատկութիւնը: Առանձնապէս այլ կարելի է կարմրամորթների յարձակումներից ապահով մեծ դաքների բնակչուհիների մասին: Մահմանի վրայ վերջին կէս դարում ենթարկւած էր տափաստանի աւազակների յաճախակի յարձակումներին, այդ բնութիւնը փոքր ինչ փոխւում է, հեզութիւնը միան համարեա այրական և երբեմն հերոսական խիզախութեամբ:

Անագուակայի պատմութեան էջերում այդպիսի սուտերներ շատ են փայլում:

Դօն Սիլվիօ Մարտինեցն անձամբ շատ է վկայ եղել իրենալի աեսարանների: Նրա երիտասարդութիւնն ան իր վտանգների մէջ, և Իզիդորայի քաջութիւնը, որն անհնում էր անխոհեմութեան, ոչ միայն չէր անանում նրա կշտամբանքին, այլ և նրան մեծ բնութիւն էր պատճառում:

Ծերունի ամուլին սիրում էր իւր ազգականուհուն, որ իր հարազատ աղջկան, և վճռել էր կտակել նրան իր կարողութիւնը: Ամեն ոք գիտէր, որ դօն Սիլվիօն մահից յետոյ Իզիդորան կը լինի նրա ընդարձակ տեղիների տէրը, ինչպէս տէր կը գառնայ և անոր հազար գլուխ ձիերի և եղջիւրաւոր անասունները: Նրանց յետոյ կարիք չը կայ ասելու, որ սինեօրիտան տեղ վայելում էր մեծ յարգանք, իսկ Մարտինեցի գազենդայի բնակիչները համարում էին նրան իրենց ապագայ տիրուհին:

Առանց այդ ժառանգութեան էլ նա դաժան ասպետներին այնպիսի յարգանք էր ներշնչում իւր բնաւորութեամբ, որ նրանցից ոչ մէկն էլ չէր զլանալ հէնց առաջին հրամանից հանել գօտկից դանակը և թաթախել նրա թշամու արեան մէջ:

Միգել Դիազը ճիշդ էր ասում, թէ նրան վտանգ էր սպառնում: Եթէ որ Իզիդորան մտածէր կանչել իր քեռու վակերօներին և հրամայէր նրանց վրէժխնդիր լինել, նրանք իսկոյն վերջ կը տային Դիազին, կախելով նրան մօտակայ ծառից: Եւ զարմանալի չէ, որ Դիազն այնպէս շտապով հեռացաւ իւր պարտութեան տեղից:

Ինչպէս արդէն յիշեցինք, Իզիդորայի հօր տունը գտնուում էր Ռիօ-Գրանդէի միւս կողմը, Մարտինեցի գազենդայից մօտ վաթսուն մղոն հեռաւորութեան վրայ, որը, սակայն, չէր խանգարում նրան յաճախ գալ ազգայինը, սակայն, չէր խանգարում նրան յաճախ գալ ազգականների մօտ: Նա այցելում էր նրանց ոչ թէ շահա

րական մտքով, ոչ, ժառանգութիւնն այստեղ ոչ մի դեր չէր խաղում, — նա առանց այդ էլ իւր հօր նշանաւոր կարողութեան միակ ժառանգուհին էր, — նա սիրում էր իւր քեռուն և մօրաքրոջը և նրան հաճելի էր նրանց ընկերակցութիւնը: Նրան դիւր էր գալիս նոյնպէս անցնել մի գետից միւսը, լինել ազատ և յաճախ բոլորովին այնակ:

Վերջին ժամանակներս նրա այցելութիւններն էին աւելի յաճախակի լինել. արդեօք դէպի ազգակերտըն ունեցած սէրն էր սաստկանում, որքան նրանք մեծանում էին, թէ այստեղ մի ուրիշ պատճառ կ'սր:

Աւելի անկեղծ և պարզ լինե՞ք, ինչպէս նա ինքն էր և ասենք ընթերցողին, որ Իզիդորան սկսեց աւելի յաճախ այցելել Լէօն նրա համար, որ յոյս ունէր այստեղ պատահել Մօրիս Հերալդին, չը թագցնենք. նոյնպէս, որ նա սիրում էր մոռստանգերին:

Ինչպէս յայտնի է, երիտասարդ իռլանդացին նրան բարեկամական ծառայութիւն էր ցոյց տւել, ազատելով վայրենիների ձեռքից. բայց շատ հնարաւոր է, որ ոչ այնքան այդ ծառայութիւնը, որքան նրա ազնւութիւնը, սիրելիութիւնը և ուրիշ հրապուրիչ յատկութիւններն էին գրաւել Իզիդորայի սիրտը:

Արդեօք Մօրիսը ցանկութիւն ունէր այդ յաղթութիւնը տանելու: Այդ հարցին նա բացասաբար կը պատասխանէր և չէր կարելի կասկածել, որ նա ճշմարտութիւնը չի ասել, թէ և դժւար է երևակայել, որ մահկանացուն կարողանար նայել Իզիդորա Խօփարուբիօ դը լօս-Լանօսի սևորակ աչքերին և չը ցանկանար սիրել նրան:

Մօրիսը կարող էր բոլորովին անկեղծ ասել, բայց մենք աւելի կը հաւատայինք նրան, եթէ որ նա պատաս- հեր Լուիզա Պօյնդեքստերին մինչև Իզիդորայի հետ ծա-

նօթանալը: Սակայն հարբած վայրենիների հետ անցքը պատահել էր այրւած տափաստանի փոթորկից մի քանի շաբաթ առաջ:

Ըստ երևութին Իզիդորայի և Մօրիսի մէջ պատահել էր մի բան, որը մեքսիկացուհուն յոյս էր տալիս կարծելու թէ սիրւած է: Նա արդէն չէր կարողանում հանգիստ մնալ. տանջւել անյայտութեան մէջ — այդ նրա բնաւորութեան մէջ չը կար: Նա գիտէր, որ սիրում էր Մօրիսին և վճռել էր անկեղծօրէն խոստովանւել նրան, պահանջելով նրանից նոյնպէս անկեղծ խոստովանութիւն: Նա կամենում էր իմանալ թէ Մօրիսն էլ մասնակից է իւր գզացմունքներին և դրա համար տեսակցութիւն էր նշանակել, որը սակայն չը յաջողեց, որովհետև Միգել Գիազը խլել էր նրա նամակը: Նա հաւատացած էր, որ եթէ Դիազը չը խառնէր այդ գործում, Մօրիսն անշուշտ տեսակցութեան կը գար...

Նստած իւր վայելչակազմ մոխրագոյն ձին, նա արշաւում էր անտառից դէպի քեռու գազենդան: Նրա գր- լուխը բաց էր, երկայն սև խոպոպներն անկարգ թափւած էին ուսերի վրայ: Նա մոռացել ու թողել էր անտառի փոքրիկ մարգագետնում իւր վերարկուն և գլխարկը: Նր աչքերը պսպղում էին և այտերը վառւում էին բարկութիւնից:

Բայց յանկարծ նա քաշեց ձիու սանձը, և սկսեց ուռջ գնալ աւելի դանդաղ և, վերջապէս, բոլորովին Լ առաւ ճանապարհի մէջ. կարելի է նա փոխել էր իր տաւորութիւնը կամ կամենում էր միայն աւելի լաւ ձրտել, թէ ի՞նչ պիտի անի:

«Կարծեմ աւելի լաւ կը լինի, թողնել նրան այնտաւում: Այդ շատ խօսակցութիւններ կառաջա Աստուած գիտէ, թէ ի՞նչպիսի եզրակացութիւններ նեն... Բայց ես ի՞նչ կարող եմ ասել ինձ արդարաջ

համար: Այն, եթէ իմանային այդ մասին քաջ տեխասցի-
ները: Իմ մի խօսքը բաւական կը լինէր, որպէս զի
խիստ կերպով պատժէին նրան: Բայց ոչ, թող նա
ապրի: Ես չեմ վախենում այդ աւագակից. այդ ամենը
պատահելուց յետոյ նա չի համարձակել ինձ մօտենալ:
Santa Virgial Ինչպէս կարողացայ հրապուրել այդ
մարդով: Հարկաւոր է ուղարկել մէկին նրան ազատելու,
բայց այնպիսի մի մարդու, որ պահէր իմ գաղտնիքը:
Ո՛ւմն արդեօք: Մի՞թէ տան վերակացու Բէնիտօին. նա
քաջ է և ինձ հաւատարիմ: Փնօք Աստուծոյ, ահա նա
ըստ սովորութեան զբաղւած անասունների հաշուով»:

— Բէնիտօ, Բէնիտօ:

— Ձեր տրամադրութեան տակն եմ, սինեօրիտա:

— Բարի Բէնիտօ, կը համաձայնէք ինձ մի լաւու-
թիւն անել:

— Ձեր տրամադրութեան տակն եմ,— կրկնեց տան
վերակացուն խորը գլուխ տալով:— Ինչ որ հրամայէք
պատրաստ եմ կատարելու:

— Ես չեմ հրամայում, Բէնիտօ, այլ միայն խնդրում
եմ:

— Կը կատարեմ, ինչ որ ձեզ հաճելի է, սինեօրի-
տա:

— Ճանաչո՞ւմ էք բլրի վրայ փոքրիկ մարգաղետինը,
ուր միանում են երեք ճանապարհները:

— Այո, այնքան լաւ, որքան լաւ ճանաչում եմ ձեր
քեռու գազնդայի շրջակայքը:

— Շատ գեղեցիկ: Կը գնաք այնտեղ և կը գտնէք
մի կապկալած մարդու, կարծակէք նրան կապանքից և
ազատ կը թողնէք: Եթէ ձիուց վայր ընկնելուց նա իրեն
լաւ չի գգալ, կ'օգնէք նրան, բայց չէք ասիլ, թէ ձեզ
ով ուղարկեց: Շատ կարելի է դուք կը ճանաչէք նրան,
բայց այդ միեւնոյն է, չը հարցնէք նրան ոչ մի բանի

մասին, և չը պատասխանէք նրա հարցերին: Հէնց որ
նա կարողութիւն կունենայ ոտի վրայ կանգնելու, կը
թողնէք նրան և յետ կը դառնաք: Հասկանո՞ւմ էք:

— Perfectamente, սինեօրիտա: Կը կատարեմ ճշգու-
թեամբ այն ամենը, ինչ որ հրամայում էք:

— Շնորհակալ եմ, Բէնիտօ: Քեռի Սիլվիոն նոյնպէս
շնորհակալ կը լինի, թէպէտ և դուք նրան ոչինչ չը պի-
տի ասէք. այդ մասին ամեն բան բացառելը ինձ թողէք:
Իսկ եթէ նա մինչև անգամ գոհ չը մնայ ձեզանից, այն
ժամանակ մօտ օրերս մեր կալւածքում բացելու է կա-
ռավարչի տեղ և դուք, եթէ կամենաք, կարող էք այդ
տեղը բռնել:

— Ամեն ոք գիտէ, որ դօնա Իզիդօրան նոյնքան
բազի է, որքան և գեղեցիկ:

— Շնորհակալ եմ, Բէնիտօ, շնորհակալ եմ: Մի խօսք
ևս. այն ծառայութեան մասին, որը դուք ցոյց կը տաք
ինձ, պէտք է իմանան երեք մարդ միայն,— երրորդն այն
մարդն է, որին դուք օգնութիւն ցոյց կը տաք, իսկ ա-
ռաջին երկուսը կարծեմ, որ դուք գիտէք:

— Հասկանում եմ, սինեօրիտա: Ամեն ինչ կը կա-
տարի ձեր ցանկութեան համաձայն:

Բէնիտօն ճանապարհ ընկաւ:

— Սպասեցէք,— կանչեց նրան Իզիդօրան.— Ես մտա-
ցայ ասելու ձեզ, որ դուք այնտեղ կը գտնէք մի գլխարկ
և վերարկու. դրանք իմն են, կը բերէք ձեզ հետ, ես
կ'սպասեմ այստեղ:

Բէնիտոն պատասխանի փոխարէն գլուխ տուաւ
խիթեց ձին, բայց ստիպւած եղաւ նորից կանգ առ-
նել:

— Ես փոխել եմ իմ միտքը, սինեօր Բէնիտօ: Ես կը
գամ ձեզ հետ: Vamos!

Բէնիտոն լաւ իմանալով իւր տիրոջ քրոջ ազդեցու-

տարօրինակ բնաւորութիւնը, նրա վճռի այս յանկարծակի փոփոխութիւնը զարմանքը չառթեց իրան: Նա առանց այլև այլութեան հնազանդւեց և սկսեց ուղեկցել նրան: Իզիդորան այս անգամ հրաժարւելով Տելխասի արիստոկրատիքական սովորութիւնից, այն է որ ծառան միշտ գնում է տիրոջ ետևից, — գնում էր Բէնիտոյի յետևից:

Բայց Բէնիտոն սխալւել էր: Մինետրիտայի մի հասարակ քմահաճոյքը չէր, այլ նա ունէր լուրջ պատճառ, որը հարկադրում էր նրան յետ դառնալ: Նա մոռացել էր անտառում մի աւելի կարևոր բան, քան թէ վերարկուն և գլխարկը, — այդ նամակն էր, որ այնքան անհանգստութիւն էր պատճառում նրան:

«Բարի Բէնիտոն» այնքան էլ արժանի չէր նրա կատարեալ վստահութեան, հետևաբար և նրան շէր Կարելի յայտնել ամեն բան: Այդ կարող էր աւելի մեծ ազմուկ հանել, քան թէ Միգէլ Դիազի հետ իր ունեցած վէճը:

Իզիդորան յետ էր դառնում, որ խլի նրանից նամակը: Ինչպիսի՞ յիմարութիւն արաւ ինքը, որ աւելի շուտ չը մտածեց այդ մասին: Բայց ինչպէ՞ս էր ընկել այդ նամակը Մեգէլի ձեռքը: Հաւանական է, որ նա ստացել էր այդ խօսքից: Միթէ ծառան դաւաճանել էր իւր տիրուհուն, թէ Դիազը պատահել էր նրան և ուժով խլել նրա ձեռքից նամակը: Երկու ենթադրութիւններն էլ ձշմարտանքման էին:

Դիազի կողմից այդպիսի վարմունքը շատ բնական էր, իսկ ծառայի հաւատարմութեան վրայ էլ նա կասկածելու պատճառներ ունէր:

Այդպէս էր մտածում Իզիդորան, երբ բարձրանում էր խորթուբորթ շաւղով: Ահա նրանք հասան բլրի կատարը և նրանց առաջ բացւեց փոքրիկ մարգագետինը: Այժմ Իզիդորան գնում էր Բէնիտոյի հետ կողք կողքի: Ոչ Միգէլ Դիազը և ոչ մի ուրիշ մարդ չը կար մարգա-

գետնում, ի մեծ վիշտ Իզիդորայի, անյայտացել էր և նամակը: Գետնին ընկած էին միայն գլխարկը, վերարկուն, արկանի կտորը և ուրիշ ոչինչ: X

— Դուք կարող էք յետ դառնալ, սինետր Բէնիտո: Զիուց վայր ընկած մարդը, հաւանական է, ուշքի է եկել և գնացել այստեղից: Փնօք Սուրբ Կոյսին: Բայց յիշեցէք, բարի Բէնիտո, որ բոլորն էլ առաջւայ նման պէտք է գաղտնիք մնայ: Հասկանալի է:

— Այո, դօննա Իզիդորա: Բենիտոն շուտ տաւ ձիու գլուխը և շուտով անյայտացաւ ծառերի ետևում:

Իզիդորան մենակ մնաց անտառի խորքում: Նա ձիուց վայր ցատկեց, հազաւ ծածկոյն ու գլխարկը և նորից դարձաւ մի գեղեցիկ պատանի: Ապա դանդաղ և մեքենայօրէն նա պատրաստեց ձի նստել, երբ մօտիկից ւրսեց ինչ որ խշշոց, որի պատճառը հանգարտօրէն և անփսաս կերպով մոտեցող խօզէն էր:

— Ի՞նչ արեցիր նամակը, անպիտան: — Տեղ հասցրի, իմ տիրուհի: — Ո՞ւմ յանձնեցիր:

— Մօրիսին այնտեղ չ'գտնելով, թողեցի հիւրանոցում նրան յանձնելու համար, մրմնջաց նա գոռատուելով:

— Անպիտան ստախօս, դու նամակը տւել ես Միգէլ Դիազին, մի արդարանալ, ես տեսայ իմ նամակս նրա ձեռքում:

— Օ՛ տիրուհի երբէք, ես մեղաւոր չեմ:

— Յիմար, դու պէտք է աւելի լաւ փաստեր յօրինէիր քեզ արդարանցնելու համար. մինչդեռ առանց այդ փաստերի ինքդ քեզ մասնում ես. ո՞րքան վճարեց քեզ դօն Դիազը քո դաւաճանութեան համար:

— Երգւում եմ կեանքովս, տիրուհի, զա դաւաճանու-

Թիւն չէր. նամակը առաւ ինձնից ստիպմամբ սպանա-
լիքներով, ծեծով.... ես.... ես դրա համար ոչինչ չեմ
ստացել....:

— Ուրեմն նրա տեղ ես կ'վճարեմ քեզ. ահա իմ ըն-
ծաները քեզ, ստացիր ահա նորերն էլ... վերջին խօսքերը
կրկնեց առնուազը տասն անգամ, մինչդեռ մտրակը շա-
ռաչում էր անհաւատարիմ ծառայի թիկունքին: Խօզէն
ի հարկէ փորձեց փախչել, բայց կատաղած ձիու սմբակ-
ների տակ ընկնելու երկիւղը նրան կասեցրեց: Պատիժը
միայն այն ժամանակ վերջացաւ, երբ ծառայի սև մոր-
թու վրայ կարմրաւուն հետքեր երևացին:

— Հեռացիր այժմ՝ աչքիցս, անպիտան, և չ'համար-
ձակես այլ ևս աչքիս երևալու, հապա, դէպի լեռը,
չուտ կորիր:

Յոգնեցնող արագութեամբ կատարեց այդ հրամանը:
կատու արագութեամբ Խօզէն դուրս ընկաւ անտառի խոր-
քից, շնորհակալ լինելով իր բախտից, որ գոնէ ազատեց
իր տիրուհու ձեռից:

Իզիդորան մնաց իր տեղում կանգած: Նրա բարկու-
թիւնը փոխեց կսկծի: Նա ոչ միայն չէր հասել իր նպա-
տակին, այլ և նկատեց, որ իր գաղտնիքները գտնուում են
դաւաճանների ձեռքին:

Նա նորից ձիու գլուխը դարձրեց դէպի տուն և տուն
հասաւ հէնց այն ժամանակ, երբ այնտեղ տեղի էր ունե-
նում մի օտարտախ տեսարան:

Խառնիճաղանձ մի ամբոխ, խոնւած ցանկապատի մօտ,
արձակում էր սարսափի աղաղակներ: Տղամարդիկ շտա-
պով զինուում էին, իսկ կանայք ծնկաչոք աղօթքներ էին
մըմնջում Մեքսիկայի տասնեակ սրբերի անունով:

— Այս յուզմունքի պատճառն ի՞նչ է, հարցրեց Իզի-
դորան Բէնիտոյին, որը նրանից առաջ էր տեղ հասել:

Նորն

— Տափաստանում սպանւած է, կազա-դէլ-Կօրվոյի ա-
մերիկացի ազարակատիրոջ որդին, և այդ սպանութիւնը
վերագրում են հնգիկներին:

Հնգիկ խօսքի մէջ ամփոփւած էր դոն-Սիլվիոյի
ժառանգի յուզմունքի ամբողջ գաղտնիքը, և դրանով էլ
բացադրում էր մարդկանց զինւելը և աղօթքները, որով-
հետև մարդասպանութիւնն ինչպէս մի սովորական երևոյթ,
այն էլ մի ամերիկացու սպանութիւնը, այնքան էլ մեծ
կարևորութիւն չէր կարող ունենալ այդ անսանձ կրքերի
երկրում:

Այն լուրերը, որ իբրև թէ աւազակներ են յայտնել
այդ կողմերում, ներշնչում էր մարդկանց մտածել և ի-
րենց անձերի պաշտպանութեան մասին: Այդ տեղեկու-
թիւնը սակայն բոլորովին այլ տպաւորութիւն թողեց
Իզիդորայի վրայ: Աւազակները նրան չէին վախեցնում,
Իզիդորայի վրայ: Աւազակները նրան չէին վախեցնում,
բայց սպանւածի անունը գարթեցնում էր նրա մէջ այն-
պիսի վտքեր, որոնք առաջ էլ չարաչար յուզում էին ի-
րան: Նա լաւ գիտէր, որ սպանւածն ունի մի քոյր, որի
գեղեցկութեան մասին խօսւում էր ամեն տեղ և ինքը
չէր կարող չ'համաձայնել այդ խօսողների հետ, քանի որ ան-
ձամբ էլ տեսել էր գեղեցիկ Լուիզային: Նա լսել էր
նոյնպէս, որ այդ անհաւասար գեղեցկուհուն տեսել էին
և Մօրիսի հետ: Նրա եղբօր սպանման լուրը Իզիդորայի մէջ
գարթեցրեց իր մէջ հանգած խանդը:

Մի բանի ժամ անցած նա աւելի ևս սկսեց հետա-
քըրքըւել այդ սպանութեամբ: Վրայ հասան նոր լուրեր,
որոնցով սպանութիւնը վերագրում էին ոչ թէ աւազակ-
ների, այլ Մօրիսին: Վերջին նորութիւնը, ի հարկէ մա-
սամբ հանգստացնում էին դոն-Սիլվիոյի ժառանգիին, բա-
ն և այնպէս այդ նորութիւնը բոլորովին հակառակն էր
դում նրա ազգականուհու վերայ, որը, չ'անցած կէս ժ-
կանգնեցրեց իր ձին գիւղական հիւրանոցի առաջ:

Իզիդորան, իրեն էլ անյայտ պատճառներով, վերջին ժամանակները սկսել էր անգլիերէն սովորել, թէպէտ շատ քիչ էր հասկանում այդ լեզուն, բայց և այնպէս, նա կարողացաւ իրան հարկաւոր տեղեկութիւնները հաւաքել թէ սպանութեան և թէ այն անձի մասին, որին վերագրու էին այդ սպանութիւնը:

Հիւրանոցի տէրն իմանալով նրա ով լինելը, պատասխանեց նրա հարցերին խորին յարգանքով: Այդտեղ Իզիդորան իմացաւ, որ Մօրիս Հերալդն արդէն հեռացել էր հիւրանոցից, իմացաւ սպանութեան բոլոր մանրամասնութիւնները, որքան յայտնի էին Դուֆֆերին, և ճնշւած սրտով վերադարձաւ գազէնդան:

Տանը նրան սպասում էր մի նոր տեղեկութիւն, որը ծայրահեղ կերպով վրդովել էր բոլորին: Տափաստանում Ռիօ-Նուէցէսից ոչ հեռու, երևացել էր մի անգլուխ ձիաւոր: Այդ լուրը տարածել էր ամբողջ գաղութում և, հակառակ նրա ակնյայտի անհեթեթութեան, չէր կարելի չը հաւատալ նրան, որովհետեւ այդ հաստատում էին ակահատեսները:

Դօն Սիլվիոյի երեք հովիւները, որոնք գնացել էին փախած տաւարը գտնելու, պատահել էին այդ անգլուխ ձիաւորին և, երկիւղից թողնելով իրենց խուզարկութիւնը, գլխապատառ փախել էին գազէնդան, հաւատացած լինելով որ դա մի չար ոգի է: Նրանք մինչև անգամ պատրաստ էին երգմամբ հաստատել իրենց խօսքերը: Բայց տեսնելով թէ նրանք որքան էին վախեցել, ոչ ոք չը մտածեց կասկածելու նրանց խօսքերի ճշմարտութեանը վրայ:

Վերահաս զիշերը գտաւ ամբոցի և գաղութի բնակիչներին այդ արտասովոր և տարօրինակ ձայներից դեռ աւելի վրդովւած:

Իզիդորան վճռեց վերադառնալ Ռիօ-Գրանդէ իւր հօր տունը. դօն Սիլվիոյի և նրա քրոջ յորդորները չը կարո-

ղացան յետ կանգնեցնել անխոհեմ ազգականուհուն այդ դիտաւորութիւնից: Նրա ինչ գործն էր, թէ սպանութիւնը կատարել էր այն ճանապարհի վրայ, որով պիտի անցէր ինքը: Նա չէր վախենում անգլուխ ձիաւորին հանդիպելուց: Այն ինչ որ ամեն մի ուրիշին կը սարսափեցընէր, թուում էր՝ թէ նրա համար մի առանձին գրաւչութիւն ունէր: Նա մինչև անգամ կամենում էր գնալ բոլորովին միայնակ. քեռի Սիլվիոն առաջարկեց նրան վերցնել իւր հետ մի քանի զինւած վաղերոններ, բայց նրա առաջարկութիւնը մերժեց,

Արդեօք նա չէր վերցնիլ իւր հետ գոնէ Բէնիտոյին Ո՛չ, նա վերադասում էր գնալ բոլորովին միայնակ և նր վճիռն անփոփոխ էր...

Հետևեալ օրն արշալոյսին նա արդէն ձիու վրայ էլ իսկ երկու ժամից յետոյ նրան կարելի էր տեսնել ոչ թ Ռիօ-Գրանդէ տանող ուղիդ ճանապարհի վրայ, այլ Ալս մոյի ափին: Ի՞նչն էր հարկազրել նրան թեքւել այդ կողմը: Արդեօք չէր շեղւել ճանապարհից:

Ո՛չ, այդ նկատելի չէր, որովհետեւ նրա տխուր դէքըն անհանգստութիւն չէր արտայայտում և ձին էլ գնում էր հաստատ քայլերով:

Իզիդորան չէր շեղւել ճանապարհից, թէ և այդ նլ համար երջանկութիւն կը լինէր:

Թանգ

ԳԼ. ԻԸ.

ՀՐԱՑԱՆԱԶԳՈՒԹԻՒՆ ՍԱՏԱՆԱՅԻ ՎՐԱՅ.

Վերաւորն ամբողջ գիշերը չը քնեց. ժամանակ առ ժամանակ նա պառկում էր հանգիստ, բայց յետոյ նորից ընկնում էր զառացանքի մէջ: Ամբողջ գիշերը որսորդը նստած նրա սնարի վերև ականջ էր դնում նրա անմիտ խօսքերին: Այդ խօսքերը դեռ աւելի էին հաստատում Ձէբ Մտումբի այն եզրակացութիւնը, թէ Մօրիսը սիրում է Հուրգա Պօյնդեքստերին և թէ նրա եղբայրն սպանւած է:

Ծերունի որսորդի համար դառն էր լսել այդ վերջին տեղեկութիւնը, մանաւանդ շատ դառն էր, երբ գործի մէջ խառնուում էր Մօրիսի անունը, իսկ նրա համար սեղանի տանջանք էր, երբ մտածում էր, որ Հէնրիի գլխարկն ու վերարկուն ընկել էին Մօրիսի ձեռքը: Նա իր կեանքում երբէք չէր եղել այդպիսի դժւարին դրութեան մէջ. մութ կարծիքներ ու ենթադրութիւններ նորից ու նորից ծրնւում էին նրա գլխում միմիանց յետեից, այնպէս որ նա վերջապէս, մի խորը հառաչանքով, պէտք է խոստովանւէր, որ չի կարողանում գտնել այդ առասպելական դէպքի մասին ոչ մի բացազրութիւն:

Իուր բաց էր փնտրել: Ձէբը գիտէր, որ եթէ նրանք գալու վրինն այստեղ, յամենայն դէպս առաւօտից վաղ չեն կարող գալ: Սակայն գիշերւայ վերջին մօտ, երբ լուսնի լոյսն սկսել էր աղօտանալ արշալոյսի ծագումով, նա մտածեց թողնել Մօրիսին և դուրս գնալ:

Թարան, որ այդ ժամանակ թափառում էր ծառերի տակ, յանկարծ աղիողորմ ձայնով սկսեց ուռնալ և վախեցած վազեց խրճիթը մտաւ: Այդ վերդովեց Ձէբին. նա փչեց ճրագը, դուրս եկաւ խրճիթի առաջ ընկած փոքրիկ մարդագետինը և սկսեց ա-

կանջ դնել: Գիշերային երգիչներն արդէն լսել էին, գուցէ շան ոռնոցի պատճառով: Բայց ինչն էր վախեցրել շանը: Որսորդը մի հայեացք ձգեց փոքրիկ մարդագետինին, յետոյ անտառի եզրին, ուշադրութեամբ դիտեց ծառերի սուերները տակը, բայց ոչ մի առանձին բան չը նկատեց: Նա բարձրացրեց աչքը. նրա առաջ բարձրանում էր Այամոյի ժայռոտ ափը, որի մութ գիծը խիստ կերպով որոշւում էր երկնքի գունատ ֆօնի վրայ, որ երկու կողմից ընդհատւում էր լանջի վրայ բնած ծառերի խմբերով: Սեպացած ժայռի մի մասը, մօտ 50 քայլ երկարութեամբ, բոլորովին մերկ էր. այդտեղ տափաստանի բարձրաւանդակը վերջանում էր մի խոր անդնդով:

Ժայռոտ ափի մութ գիծը չէր ձուլում երկնքի գույնի հետ, նա երևում էր պարզ, ինչպէս ցերեկը: Ժայռը լուսաւորւած էր լուսնի լուսով այնպէս պարզ, որ ժայռի ծայրին սողացող օձն անգամ կարելի էր նկատել այստեղից:

Այնտեղ ևս ոչինչ չը կար:

Յարկարծ Ձէբի ականջին հասաւ մի ձայն, որ նման էր մերկ քարերի վրայից անցնող ձիու ոտնաձայնի: Հաւանականաբար մէկը ձիով անցնում է վերին սարահանգիցով:

Այդպիսի եզրակացութեան գալով, Ձէբը կրկնակի ուշադրութեամբ սպասում էր, մինչև որ ձայնը կը կրկնուի: Թէ և ձայնը չը կրկնուեց, բայց Ձէբը տեսաւ, որ իւր եզրակացութիւնը ճիշդ էր: Մի խումբ ծառերի միջից դուրս եկաւ մի ձի, որը գնում էր կտրւածքի վրայով: Նրա վրայ նստած էր մի մարդ: Եւ ձին և մարդը պարզ կերպով որոշւում էին երկնքի կապոյտ ֆօնի վրայ: Վայելչակազմ ձին իւր գեղեցիկ գծազրութեամբ նման էր բրօնզէ քանդակի: Զիաւորի կազմուածքը կարելի էր

որոշել միայն թանձրից մինչև ուսերը. ոտները ձուլել էին կենդանու սուերի հետ, միայն պապղուն խթաններն ու սալանդակները ցոյց էին տալիս նրանց տեղը: Ուսերից վեր բոլորովին ոչինչ չէր կար—գլխի հետքն անգամ չէր երևում:

Ձեքը տրորեց աչքերը, սրբեց ու նորից նայեց,— գլուխը չէր կար ու չկար: Դարձեալ նա սրբեց աչքերը և նայեց,— դարձեալ նոյն տեսիլքը: Նա կարող էր թէկուզ հազար անգամ փակել ու բաց անել աչքերը, բայց միշտ մի և նոյնը կը տեսնէր, ինչ որ առաջ—այն է, առանց գլխի ձիաւորը:

Այո, նա տեսաւ նրան իւր աչքով. տեսաւ ձին, որ դանդաղ, բայց հաստատ քայլերով առաջ էր շարժւում, կտրւածքի վրայով առանց կանգ առնելու և սայթաքելու, ինչպէս կախարդական լապտերի շարժական սուերը: Այդ ձիւնայէս կախարդական լապտերի շարժական սուերը: Ձեքը բաւատարօրինակ տեսիլքն իսկոյն չանյայտացաւ. Ձեքը բաւատարօրինակ ունեցաւ դիտելու նրա ամեն մի մասնական ժամանակ ունեցաւ դիտելու նրա ամեն մի մասնական ժամանակ ունեցաւ դիտելու, որ դա պատրանք չէր:

Ապա տեսիլքը սկիսեց անյայտանալ դանդաղ և աստիճանաբար. նախ ծածկւեց ձիու գլուխը, պարանոցը և կուրծքը, յետոյ ձիաւորի տարօրինակ մարմինը և, վերջապէս ձիու երկար ալիքաւոր ազին:

«Ո՛վ Յովսափաթ»:

Անգլուխ ձիաւորի անյայտանալը չէր այդ բացականչանաչութեան պատճառը. այստեղ զարմանալու ոչինչ չէր կար, — տեսիլքը ծածկւեց կուլիաների ետևում, որոնց դերը խաղում էին ծառերի կատարները:

«Ո՛վ Յովսափաթ», — կրկնեց որսորդը դեռ աւելի ազդու կերպով, որ ցոյց էր տալիս նրա անսահման զարմանքը:

Չէր նայելով Ձեքի անկասկած անվիճելութեանը, այնուամենայնիւ նա դողաց ամբողջ մարմնով. նրա աչքերը

երկիւղ էին արտայայտում, իսկ շրթունքները, որ ծխախոտից բոլորովին դեղնել էին, սկսեցին նկատելի կերպով գունասաւել: Մի առ ժամանակ նա մնաց լուռ, կարծես թէ չէր համարձակուում կրկնել իւր բացականչութիւնը:

«Տարօրինակ բան,— վերջապէս խօսեց նա ցած ձայնով, աչքը չը հեռացնելով այնտեղից, ուր անյայտացածին:— Թող ես այլ ևս Չաբուրն Ստոււպը չը լինիմ եթէ այստեղ հրաշքներ չեն գործւում: Ախր իրաւագոյնն ճիշդ էր ասում. ես կարծում էի թէ շատ խմելուց էր նրան այդպէս երևացել, բայց ոչ, նա մի բան տեսել էր: Չարմանալի չէ, որ նա այնպէս սաստիկ վախեցել էր ինձ վրայ մինչև անգամ սարսուռ է գալիս: Բայց ի՞նչ կարող է լինել այդ,— շարունակեց նա քիչ մտածելուց յետոյ:— Սատանան տանի ինձ, եթէ ես չը կարողանամ ինչ ձևով ուզում է լինի իմանալ այդ: Եթէ որ պատահէր ինձ այդ երևոյթն օրը ցերեկով, կարող էի աւելի լաւ դիտել նրան: Կը ցանկանայի որ նա աւելի մօտից անցնէր: Է՛, ինչ եմ ասում, միթէ ես չեմ կարող գնալ նրա առաջը: Ես, ես չեմ լինիլ, եթէ չանեմ այդ: Չէ որ նա ինձ չի ուտելու, թէկուզ ինքը սատանան լինի: Տեսնեմ կարող է գնդակը ծակել նրա սատանայական մարմինը՝ առանց թամբից վայր ձգելու: Ով ուզում է լինի, ոչ մի բան չի խանգարում ինձ աւելի մօտից ծանօթանալու այդ տեսիլքի հետ:

Այսպէս խօսելով ինքն իրան, որսորդը մտաւ անտառը և դիմեց դէպի ժայռը: Նրան հարկաւոր չէր մտնել խրճիթը հրացանը վերցնելու համար, որովհետեւ շան ոտնոցը լսելուն պէս, նա իսկոյն վերցրել էր իւր հետ և հըրացանը— իր անբաժան ընկերը: Ձեքը յոյս ունէր տեսնելու անգլուխ ձիաւորին, թէ նա իրապէս մարմնից և արիւնից կազմւած մի արարած է և ոչ թէ միւս աշխարհից եկած մի ոգի:

Որսորդը նկատել էր, որ ձին դիմեց ուղղակի դէպի սարահարթի գառիվայրը, որը իջնում էր Ալամոյի հովիտը: Նա հաշուեց, թէ որքան ժամանակ է հարկաւոր, որ հասնի շաւղի վերջին ծայրին, ուր յոյս ունէր պատահել ձիւտորին, եթէ նա ի հարկէ չէր փոխիլ իւր ուղղութիւնը: Եւ նա չսխալեց:

Վեր բարձրանալով խորթ ու բորթ շաւղով, Ձէբը տեսաւ ձիւտորի ուսերը, յետոյ ամբողջ մարմինը, մի քայլ էլ առաջ գնաց և ձին պատկերացաւ նրա առաջ իր ամբողջ մարմնով: Նա կանգնած էր անշարժ, գլուխը դարձրած դէպի ձորը, կարծես թէ մտադիր էր ցած իջնող գառիվայրից: Թւում էր, թէ ձիւտորն էր կանգնեցրել ձին երևի զգալով որսորդի մօտենալը:

Ձէբը նոյնպէս կանգնեց: Մի ուրիշը նրա տեղ քար կը կտրէր երկիւղից՝ տեսնելով իւր առաջ այդ սարսափնի տեսիլքը, սակայն նա քաջութիւն ունեցաւ իրաւորձել իր միտքը, որը մղել էր նրան դէպի այդ տարօրէնակ հանդիպումը: Ինչ էլ որ լինի՝ նա կամենում էր յիմանալ, թէ ում հետ գործ ունի, — մարդ արարածի, թէ սատանայի հետ:

Մի ակնթարթում նա բարձրացրեց հրացանը և նշան բռնեց ուղղակի անգլուխ ձիւտորի սրտին, որ լուսնի յուսի տակ պարզ երևում էր, ինչպէս ցեղիք: Մինչև մի քայլէն գնդակը կը ծակէր նրան, բայց յանկարծ կայծուկի արագութեամբ մտածեց նա՝ թէ արդեօք այդպիսով սպանութիւն չի գործում:

Նա ցած թողեց հրացանի փողը և մի առժամանակ մտաց անորոշ դրութեան մէջ:

Քուցէ գա կենդանի մարդ է, մտածեց նա, բայց որտեղ է նրա գլուխը. գուցէ վերարկուի տակ է գտնուում և եթէ հետը խօսեմ, հաւանականաբար կարող է ինձ պատասխանել, մտածեց Ձէբը և հարցրեց:

— Է՛յ, պարոն, երևի շտապել էք և մոռացել ձեր գլուխը վերցնելու:

Պատասխան չը կար. միայն ձին փռշտաց, երբ լսեցրաւ ձայնը:

— Է՛յ, այստեղ նայեցէք: Ձեզ հետ խօսում է բուն Ձէբը՝ կէնտուկեցին: Նա այնպիսի մարդ չէ, որ կարելի լինի յիմարի տեղ դնել. նա երբէք չի խաբար խորհուրդ եմ տալիս քեզ դադարեցնել այդ անսիրտ խաղը. թէ չէ իսկոյն կեանքից կը զրկեմ քեզ: Երբևում եմ Յովսէփի մասին, որ եթէ իսկոյն չը պատասխանես, կը գրեմ դակահարեմ քեզ:

Ո՛չ մի պատասխան: Մինչև անգամ ձին, որ սովորել էր նրա ձայնին, միայն գլուխը վեր բարձրացրեց:

— Ի՛էհ, սատանան քեզ հետ, — գուցայ որսորդը գայրացած այդ վիրաւորական լուսիւնից. — Վեց վայրկեան ժամանակ եմ տալիս քեզ և եթէ դարձեալ չես խօսիլ, իսկոյն վերջ կը տամ կեանքիդ: Սատանային հրացանի գնդակը չի վնասում, բայց եթէ դու մարդ ես, այն ժամանակ դու արժանի ես գնդակահարւած լինելու քո այդպիսի խաղերի համար: Ի՛էհ, խօսի՛ր, — շարունակեց նա աւելի և աւելի զայրանալով. — խօսի՛ր, հրամայում եմ քեզ: Չէս կամենում: Լաւ: Մէկ... երկու... երեք... չորս... հինգ... վեց:

Երբ հերթը հասաւ եօթին, որոտաց հրացանը, սուրբ գնդակը, լուեց մի խուլ ձայն, կարծես թէ գնդակը դիպաւ մի պինդ մարմնի:

Տրաքոցի միակ հետեանքն այն եղաւ, որ ձին վախեցաւ: Ձիւտորը նստած էր թամբի վրայ ուղիղ և անշարժ, ինչպէս առաջ: Կարելի է ձին էլ բոլորովին չէր վախեցել, որովհետև նրա բարձր խրինջոցը, որ տրաքոցի միակ պատասխանը եղաւ, հնչեց ինչպէս ծաղր: Ձին կատաղի արշաւով սլացաւ հարթութեան վրայով, թողնելով

լով Ձէբ Ստոււմպին զարմանքից ապուշ կտրած: Մի քանի
րոպէ նա մնաց անշարժ կանգնած, մինչև անգամ չը հա-
մարձակեց տեղից շարժել: Եթէ դրանից առաջ այդ
ոս համար երկիւղալի էր, այժմ կարելի էր երևակայել
թ. նա ինչ էր զգում: Նա սարսափեց, տեսնելով որ իւր
գնդակն անհետեանք մնաց, որովհետև գիտէր, որ գնդա-
կը ծակել էր անձանօթի սիրտը: Ծերունի որսորդն այն-
պէս հաւատացած էր դրանում, որ կարծես թէ հրացանի
փողը կպած լինէր ձիաւորի կրծքին:

«Պա մարդ չէ»,—մտածեց Ձէբը և արիւնը սառեց
նրա երակներում: Նա գողում էր ինչպէս ջերմ ու տեն-
դում, երբ յիշում էր ձիու վայրենի և դժոխային խրը-
խընջոցը:

Հարկաւոր էր խրճիթը վերադառնալ, բայց Ձէբը կա-
րողութիւն չունէր մի քայլ անգամ անելու և, միևնոյն
տեղն անշարժ կանգնած, լուռ սարսափով պաշարւած,
նայում էր օրհասական տեսիլքին, որ դանդաղութեամբ
անյայտանում էր լուսնի լուսով լուսաւորւած հարթու-
թեան վրայ:

Վերջապէս նա ժողովեց բոլոր ուժերը, ցած իջաւ
ձորը և վերադարձաւ խրճիթը: Մտնելով խրճիթի տանի-
քի տակ, նա շուտով այնքան հանգստացաւ, որ կարող
էր սառնասրտութեամբ մտածել այդ տարօրինակ արեւ-
ծի մասին: Երկար ժամանակ նա չէր կարողանում ա-
զատել այն մտքից, թէ նրա հակառակորդն ինքը սա-
տանան էր. բայց երկար ու լուրջ մտածողութիւնը ցոյց
տուաւ նրան այդպիսի ենթադրութեան ամբողջ անստու-
թիւնը, թէև, երևոյթի գաղտնիքը չը կարողացաւ գուշա-
կել:

«Ի հարկէ,—մտածեց նա ինքն իրեն.—զա միւս
աշխարհից եկած չէր, թէ չէ ես չէի կարող լսել իմ
գնդակի հարւածը: Եւ հաւատացած եմ, որ արձիճը կպաւ-

ինչ որ պինդ բանի, իսկ չար ոգու մարմինը միևնոյն է,
ինչ որ ողբ: Է՛յ, ինչ մտածելու բան կայ,—ասաց նա,
վերջապէս հրաժարելով այդ տարօրինակ երևութի բա-
ցադրութիւնը գտնելուց:—Թող նա ազատ ման գայ իր
համար: Երկուսից մէկը. նա կամ լցրւած խրտւիլակ է
կամ թէ ծերունի Հարրին է հրեղէն գեհէնից դուրս ե-
կած»:

Արդէն առաւօտ էր, երբ Ստոււմպը մտաւ խրճիթը:
Նա վեր կացրեց Ֆելեմին, որպէսզի նրան յանձնէ վի-
րաւորին խնամելը: Իուանդացին բոլորովին զգաստացած՝
պատրաստ էր եռանդով կատարել իւր պարտականութիւ-
նը, նամանաւանդ որ ինքն էլ իրեն փոքր ինչ մեղաւոր
էր զգում:

Ծերունի որսորդը նախ քան հիւանդին իւր անհմուտ
տեղապահին յանձնելը, նոր վիրակապերով փաթաթեց
նրա վէրքը, նա հմուտ էր առհասարակ բուժական բոյ-
սերի գործածելում, որը սովորել էր անտառներում եր-
կարամեայ կեանք վարելուց: Ձէբը վստահութեամբ չէր
վերաբերում բժիշկներին և եթէ նրա տրամադրութեան
տակ լինէին ամբողջ տասնեակ բժիշկներ, նա, միևնոյն
է, նրանց օգնութեանը չէր դիմիլ, նամանաւանդ հաւա-
տում էր, որ Մօրիսի վէրքերը մի քանի օրւայ մէջ կը
առողջանան՝ no bal անունով յայտնի բոյսի հիւթը քսելով,
բայց ծերունուն անհանգստացնում էին Մօրիսին սպառ-
նացող միւս վտանգները:

—Դէհ, միստեր Ֆելեմ, մենք արինք ամենը, ինչ որ
հարկաւոր էր մարդու արտաքինի համար, ասաց Ձէբն
իւր վերաբուժական պարտականութիւններն վերջացնելով.
—այժմ հարկաւոր է մտածել ներքինի մասին: Ասում
ես որ ձեզ մօտ ուտելու ոչինչ չը կայ:

—Մի հատ գեանախնձոր անգամ, միստեր Ստոււմպ:

Բայց դեռ աւելի վառն այն է, որ խմելու ոչինչ չունինք: Ամբողջ տանը մի կաթիլ օղի չի մնացել:

— Գրողը տանի՛. այդ արդէն քո մեղքն է, — գոռաց որսորդը կատաղութեամբ յօնքերը կիտելով և նրա դէմքի վրայ արտայայտեց անկեղծ վիշտ: — Եթէ որ դու չը լինէիր, օղին կը բաւականանար մինչև Մօրիսի առողջանալը: Այժմ ինչ պիտի անենք:

— Ախ, միտեր Ստումպ, դուք բոլորովին ի գուր էք նախատում ինձ, բոլորովին ի գուր: Ես միայն փոքրիկ սրակի միջինն եմ խմել: Հնդիկներն են դադարկել մեծ շիշը: Հաւատացնում եմ ձեզ, միտեր Ստումպ, նրանք են խմել բոլորը:

— Այո, ես գիտեմ, թէ քո բաժինը որքան է ընկել, բայց հարցը դրանում չէ: Այժմ երկու ախանջով լսիր ինձ, անիծեալ հարբեցող, խմելու մեզ ոչինչ չունինք, բայց դա դեռ պատճառ չէ, որ առանց ուտելու մնանք: Հիւանդը, հարկաւ ինքն էլ այնքան կուշա չէ: Իսկ ինչ ինձ է վերաբերում, ես այնքան քաղցած եմ, որ պատրաստ եմ ուտել և սատկած գայլի միս. բայց և այնպէս մենք դեռ ևս դատապարտւած չենք կերակրել հոտած մսերով, քանի դեռ որսացու թռչուններ կան այստեղ: Ուրեմն դու հոգս տար այստեղ երիտասարդի մասին, իսկ ես կը գնամ պաշարեղէնի յետևից. բաց արա զլսիզ փակուրդ, յիմար էջ, որովհետև ինձ հարկաւոր է հիմայ քո բոլոր խելքը: Իմ բացակայութեան ժամանակ եթէ մի բան պատահի, առանց մի վայրկեան ուշացնելու ինձ յայտնիր:

— Անշուշտ...
— Դէ, լաւ տեսնենք...

— Բայց միտեր Ստումպ, կարող է պատահել, որ դուք այնքան հեռու կը լինիք, որ իմ ձայնը չէք լսիլ:
— Յոյս ունիմ որ այդ չի պատահիլ, որովհետև օրւայ

այս ժամին թռչուններ կարելի է գտնել մօտ տեղերում, բայց յամենայն դէպս, հարկաւոր է և դրա մասին էլ մտածել: Չէ որ դուք ունիք մի որևիցէ զէնք, օրինակ հէնց ատրճանակ:

— Ոչինչ չը կայ, պարոնը վերջին անգամ գնալիս բոլորը իւր հետ վերցրեց: Չէքը սկսեց մտածել:

— Ա, ձիշտ որ... Եկ այստեղ դռների մօտ, տեսնում ես այնտեղ իմ ձիւն: Այ այս ուղղութեամբ թփերի մուտքի մօտ բսել են փշեր... լսիր, կանգնիր դռների մօտ և հէնց որ կը նկատես որևէ մէկին, իսկոյն կը պոկես այդ փուշը և կը խրես ձիւնս պոչի տակ:

Պ, Տիրամայր, ի՞նչու համար պէտք է ես այդ անեն...

— Քո տեղը եթէ ես լինէի, կը հասկանայի բոլորը առանց բացազրութեան: Համաձայնիր, որ լաւ կը լինէր, եթէ ես այստեղ լինէի որևէ մէկի գալուց առաջ: Ես չեմ կարծում, որ շատ հեռու կը գնամ, բայց կարող է պատահել, որ քո ձայնը չը լսեմ, մինչ դեռ ձիւնը կը լսեմ շատ հեռուից: Արա այնպէս, ինչպէս ես քեզ պատուիրում եմ:

— Դա ինձ ոչ մի վնաս չի հասցնիլ:
— Ո՛չ. բայց չը մոռանաս, որ քեզանից է կախած քո պարոնի կեանքը:

Այդպիսի եզրափակումից յետոյ, որսորդը վերցրեց հրացանը և դուրս եկաւ խրճիթից:

— Հեռատես ծերուկ, ասաց ինքն իրեն Ֆելեմը, բայց ինչու է նա մտածում, որ պարոնին վտանգ կարող է պատահել, եթէ մէկը յայտնելի մեր խրճիթում և այդ վտանգի հետ կատարւած է իմ ախրով կեանքը:

Հաւ, կը գնամ, կը կանգնեմ դռան մօտ և կը հսկեմ: Եւ իսկապէս, Փեղեմը մուտքի մօտ մի այնպիսի դիրք բռնեց, որը նրան հնարաւորութիւն էր տալիս հսկել և շրջակայքի վրայ և խրճիթի ներսը:

X
Ստորագրում
10/10/33

Ա Ջ Դ Ա Ն Շ Ա Ն

Փեղեմի դիրք բռնելուց դեռ չէր անցել տասն րոպէ, երբ լսեց ձիու ոտների տրոփիւն: Նրա սիրտը թուլացաւ: Խիտ ծառերը նրան արգելում էին ձիաւորին տեսնել, իսկ ինքը անկարող էր ենթադրել թէ ի՞նչպիսի հիւր կարող էր դալ իրենց բնակավայրը: Միայն ձայնից հասկանալի էր, որ ձիաւորը մենակ է, որը նրան աւելի էր երկիւղ ազդում: Նորան երբէք ցանկալի չէր նորից հանդիպել անգլուխ ձիաւորին: Նա մտածեց անմիջապէս կատարել Ձէբի պատուերը, բայց երկիւղը այնքան կաշկանդեց նրան իւր տեղում, մինչև անտառի յետևից երևաց ձիաւորի պատկերը:

— Ա, գլուխը իւր տեղումն է, մտածեց Փեղեմը, և դէմքն էլ այնքան վառ չէ, թէպէտ այնքան էլ ուրախ չի երևում, կարծես, թէ վերադառնում է իր տատի թաղման հանդիսից: Երգում եմ Պատրիկով, որ դա կին է:

Մինչ դեռ Փեղեմը այդպէս էր դատում, ձիաւորը մի քանի քայլ էլ մօտենալով կանգ առաւ: Փեղեմի ենթադրութիւնը նորա ինչ սեռի լինելը արդարացաւ: Եկող հիւրը ոչ այլ ոք էր, եթէ ոչ Իգիգօրան: Փեղեմը երբէք չէր տեսել մեքսիկոնուն, ինչպէս և վերջինը չէր տեսել Փեղեմին:

Ճիշտ որ Իգիգօրայի դէմքը շատ տխուր էր, նոյն իսկ յուսահատութիւն էր արտայայտում: Երբ նա գուրս եկաւ ծառերի յետևից, նրա տխրութեան վերայ աւելացաւ նաև զարմացման և յուսախաբութեան արտայայտութիւն: Ակնբրև էր, որ բնակավայրի տեղը նրան յայտնի էր, և նրա հիասթափման պատճառը խրճիթի շէմքում կանգնած սպասող մարդն էր:

Իգիգօրան սպասում էր տեսնել այստեղ մի ուրիշին: Քիչ տատանումից յետոյ, նա աւելի մօտեցաւ ան-

ծանօթ մարդուն և ասաց ամերիկական լեզուով, որքան որ կարող էր:

—Ներեցէք, բայց ես կարծում էի թէ այստեղ սպրում է դօն-Մարիշօն...

—Դօն-Մարիշօ, ոչ այդպիսի մարդ այստեղ չկայ. մենք ունէինք մի Մարիշօ, Բալիբալազից ոչ այնքան հեռու: Ես նորան լաւ յիշում եմ, որովհետև նա կամենում էր ինձ խաբել ձիավաճառութեան մէջ, միայն նորան կոչում էին ոչ դօն, այլ պատ-Մարիշօ, սատանան տանի նրան:

—Ես ասում եմ դօն-Մավրիկիօ... Մօրիս... Մօրիս...

—Ա՛, Մօրիս, դուք երևի ցանկանում էք իմ տիրոջը, պարօն Հերալդին...

—Si, si, signor, Շիրազ: (այն, այն, պարօն)

Նա իսկապէս սպրում է այս խրճիթում, երբ ցանկանում է զւարճանալ ձի որսալով, հասկանում էք: Այս միայն որսորդական մի ապաստարան է: Դուք կ'հիանալիք, եթէ տեսնէիք այն մեծ ամրոցը, որ նա ունի. Իլլանդիայում և այն գեղեցիկ արարածը, որը այժմ անշուշտ արտասուքներով փչացրած կլինի իւր կապուտակ աչերը և այդ հէնց միայն նրա համար, որ սա դեռ չէ ցանկանում վերադառնալ հայրենիք. այն, արժէ տեսնել այդ բոլորը:

Իզիզօրան իրլանդացու խօսքերից ամեն ինչ հասկացաւ, որովհետև խանդառութիւնն էլ նրա ասածները շատ յաջող թարգմանեց: Մի ճնշած հառաչանք դուրս թռաւ օրիորդի կրծքից, երբ Ֆելիմը յիշեց կապոյտ աչերի մասին:

—Ես չեմ ցանկանում ոչ մի բան և ոչ ոքի տեսնել, բացի Մօրիսից, վրայ բերաւ Իզիզօրան: Տանն է արգետօք նա, այնտեղ է նա...

—Հնա տանն է նա: Հէնց բանն էլ դրանումն է. իսկ եթէ ես ասեմ այո, դուք ուրիշ ինչ կ'ցանկանայիք...

—Ինձ հարկաւոր է նրա հետ խօսել...

—Այդպէս: Ուրեմն մնում է քեզ սպասել, մինչև նա տրամադիր կլինի ձեզ լսելու:

Չնայելով ձեր շրթունքների վերայի սև շերտին, դուք վատ անձնաւորութիւն չէք երևում, բայց այնուամենայնիւ բացի հոգևորականից կամ բժշկից, պարօն Մօրիսը այժմ ոյժ չունի խօսակցել որևէ մէկի հետ: Դուք չէք կարող գնալ նրա մօտ:

—Բայց ես շատ կ'ցանկանայիք...

—Հասկանալի է ձեր ցանկութիւնը, բայց չի կարելի: Ֆելիմ Օ'Ռէյլէն այնպիսի մարդ չէ, որ կանանց մերժի, մանաւանդ այսպիսի սեռչեայ և դուրեկան շարածիններին, բայց երբ չի կարելի, չի կարելի...

—Ի՞նչու համար չի կարելի...

—Է՛, դրա համար շատ պատճառներ կան: Առաջին, ես ասացի որ նա այնպիսի տրամադրութեան մէջ չէ, ինչպիսի տրամադրութեամբ հիւրերին ընդունում, նամանաւանդ կանանց:

—Բայց ինչու համար, պարօն:

—Որովհետև նա պատշաճապէս չէ հագնւած: Նրա վրայ ոչինչ չ'կայ բացի շապկից և այն փայտաներից, որոնցով փափաթեց նրան միստեր Ստուլպը, թէև փայտաները այնքան շատ են, որ փոխարինում են սիւրտուկին ժիլետին և անդրավարտիկին:

—Պարօն, ես ձեզ չեմ հասկանում...

—Բայց կարծեմ շատ պարզ է: Կ'հասկանա՞ք դուք վերջապէս եթէ ես ասեմ ձեզ, որ պարօնը այժմ պառկած է անկողնում:

—Անկողնո՞ւմ, հիմա, միթէ նրա հետ ինչ որ...

—Դուք ցանկանում էք ասել պատահել է: Այո, պա...

տահել է և մինչև անգամ շատ բաներ, այնպէս որ նա հազիւ թէ երկուշաբաթեայ ընթացքում կազդուրի:

— Օ՛ պարոն, մի՛թէ դուք ցանկանում էք ասել որ նա հիւանդ է....

— Ի՞նչու պէտք է ես այդ թաղցնեմ. չէ՞ որ այդ նրան մնասել չի կարող և նա հէնց ինքն էլ չի հերքի, եթէ նոյնը ասեմ հէնց իր ներկայութեամբ:

— Ուրեմն նա հիւանդ է, օ, պարոն, ասացէք խընդրեմ, ի՞նչու՞մն է կայանում նրա հիւանդութիւնը և ի՞նչ կերպ է պատահել այդ....

— Այդ հարցերից միայն առաջինին կարող եմ պատասխանել: Նրա հետ վարել են բարբարոս կերպով, բայց ո՞վ, միայն Աստուած գիտէ. նրա ոտը շատ է վատուած, իսկ ամբողջ կաշին կարծես քրքրել են երկու տասնեակ վայրենի կատուններ: Այո, ամբողջ մարմնի վրայ չես կարող գտնել մի առողջ տեղ, բայց ամենից վատը նա է, որ յիշողութիւնը տեղը չէ....

— Ի՞նչ էք ասում...

— Այո, նա զառանցում է, երազում սատանաների հետ կուռղ մարդու նման: Իմ կարծիքով այժմ ամենից լաւ կ'լինէր, եթէ գտնէր նրա համար մի քիչ կազդուրող խմիչք, բայց ո՞րտեղ ձարել... Ձի գտնելի արդեօք ձեր ճանապարհորդական շիշում այդ խմիչքից:

— Շատ ցաւում եմ, պարոն, որ ինձ մօտ այդ խըմիչքից չ'կայ:

— Այո շատ ցաւելի է պարոն Մօրիսի համար. հարկադրեա՞ծ մի կերպ պէտք է յարմարւենք առանց այդ ամբեցնող խմիչքի ապրել....

— Սակայն, պարոն, ես կարող եմ նրան տեսնել:

— Ասացի՛. ո՛չ: Ի՞նչ օգուտ ձեր նրան տեսնելուց: Նա ձեզ այնքան կարող է ճանաչել, որքան իւր նախատատե-

րին: Ախր ես ասացի որ նրան վիրաւորել են և նա ոչինչ չի յիշում....

— Հէնց դրա համար էլ ես ցանկանում եմ նրան տեսնել: Կարող է պատահել, որ ես նրան օգտաւէտ լինեմ: Ես նրան պարտական եմ....

— Ա՛, դուք նրան պարտք էք և ցանկանում էք վճարել ձեր պարտքը, այդ ուրիշ բան է: Բայց դրա համար ձեզ հարկաւոր չէ նրա հետ տեսնել. ես նրա աջ ձեռն եմ և վարում եմ նրա գործերը: Չ'նայելով որ ես անգրգէտ եմ, բայց և այնպէս իմ մի նշանը ստացազրի վերայ կունենայ իր ոյժը բոլոր դատաստաններում: Հաւատացնում եմ ձեզ, տիրուհի, որ իմ պարոնը ձեզանից երկրորդ անգամ չի պահանջի իր փողերը: Իսկ մեզ դրամ ստանալ այժմ շատ հարկաւոր է. մենք պատրաստուում ենք գնալ և մեզ հարկաւոր են շատ և շատ իրեր: Կ'հրամայէք տալ գրիչ և թուղթ:

— Ո՛չ, ո՛չ, իմ պարտքը շնորհակալութեան պէտք է:

Ան, միայն այդ: Այդպիսի պարտքերը վճարուում են շատ հեշտ և դրա համար չեն պահանջում ստացազրեր և դրանից բացի հարկաւոր չէ շտապել, չրօվհետև պարոնը չի հասկանալ ձեր խօսքերը: Երբ, նա խելքի կ'գայ, ես կ'յայտնեմ որ դուք այստեղ էք եղել և նա արդէն ինքը կ'կարգադրի այդ պարտաճանաչութեան ձևը:

— Ուրեմն դուք ինձ չէք թողնում նրա մօտ....

— Չէ կարելի....

— Բայց ինձ անհրաժեշտ է, պարոն....

— Սատանան տանի ձեզ: Ինձ դրել են այստեղ պահպանութեան համար և ամենախիստ կերպով պատւիրեա՞ծ է ոչ ոքի չ'թողնել հիւանդի մօտ:

— Այդ ինձ չէ վերաբերում: Ես դօն Մավրիկիոյի բարեկամներից եմ:

— Ես կարիք չեմ գգում այդ իմանալու: Չ'նայելով ձեր

Handwritten notes in the gutter, including the word "այդ" and some illegible scribbles.

գեղեցիկ դէմքին, այնուամենայնիւ դուք կարող էք լինել նրա ամենաոխերիւմ թշնամին: Այո, ես որքան շատ եմ նայում ձեզ վերայ, դա այնքան ինձ աւելի հաւանական է թւում:

— Ես պարտաւոր եմ նրան տեսնել... պարտաւոր եմ... ցանկանում եմ և կ'ատեսնեմ... Վերջին խօսքերի հետ Իզիդորան ցած թռաւ ձիուց և դիմեց դէպի դռները: Նրա վճռողականութիւնը, վայրենի, կանաչի դէմքի արասյայտութիւնը համոզեցին Ֆելեմին, որ արդէն ժամանակն է կատարելու որսորդի յանձնարարութիւնը:

Նա արագ ներս սողաց խրճիթը, վերջրեց այնտեղից մի հնդկական դանակ և ցանկացաւ անցնել իրենից ձեռք չ'վերցնող հիւրի մօտով, բայց յանկարծ կանգնեց, նկատելով դէպի ինքն ուղղած ատրճանակի փողը:

— Ապա, ձեռքդ ինձ վերայ բարձրացրու, անպիտան և կը մեռնես, գոռաց Իզիդորան:

— Ես... ձեռքս ձեզ վերայ բարձրացնեմ... կմկմաց վախեցած իրլանդացին: Ո՛վ, ամենասուրբ Կոյս, ես այդ մտտին նոյն իսկ չեմ կարող երազել, ես կարող եմ երգել այդ բանի մասին աշխարհի բոլոր սուրբ գրքերով: Գանակը ես ձեզ համար չէի վերցրել, տիրուհի...:

— Ապա ի՞նչու համար վերցրիք նրան, հարցրեց Իզիդորան, դէնքը ցած թռգնելով:

— Որպէս զի կատարեմ մի յանձնարարութիւն: Պէտք է կտրելի այն փշի մի ճիւղը և խրէի ահա այն ձիու սուչի տակ, դուք չէ՞ որ սչինչ հակառակ բան չունէք դրա դէմ, տիրուհի...:

Այդպիսի օտարոտի պատասխանից գարմացած, Իզիդորան ոչ մի խօսք չ'գտաւ պատասխանելու: Նա նկատեց միայն, որ ինքը ոչ մի երկիւղ չի կարող ունենալ այդ

երիտասարդից, որի խօսքերն ու շարժումները ծիծաղ միայն յարուցին նրա մէջ:

Հուութիւնը համաձայնութեան նշան է: Ենորհակալութիւն, մրմնջաց նորից Ֆելիմը և մօտենալով փշին, ճշտօրէն կատարեց Ձեքի հրամանը:

Մեքսիկուհին լուռ գարմանքով շարունակում էր նայել նորան: Ասեղների ծակծկոց զգալով խեղճ ձին, բարձր, և խղճալի ձայն հանեց, որը խրճիթում երկրորդեց շունը, իսկ նրանց հեռակեցին թռչունները, շորքոտանիք, միջատները և սողունները: Բարձրացաւ մի խառնածայն աղմուկ:

— Ի՞նչու համար է այս երաժշտութիւնը և ի՞նչով կ'վերջանայ արդեօք այս բոլորը, մտածում էր Իզիդորան գարմացած նայելով իր շուրջը:

Փելեմն նորից վերադարձաւ խրճիթ և բռնեց իր տեղը մուտքի մօտ: Այժմ նա կանգնած էր ինչպէս մի ինքնաբաւական գերասան, որ իր գերը վերջացնելով իրաւունք է ձեռք բերում անցնելու հանդիսատեսների շարքը:

ՀԱՄԲՈՅՐԸ ԽԱՅԹՈՒՄ Է.

Ամբողջ տասն րոպէ շարունակեց անտառային այգ վայրենի երաժշտութիւնը, որ լսելի էր մի մղոն տարածութեան վերայ, իսկ Ձէբը անշուշտ այնքան էլ հեռու չէր:

Համոզւած լինելով, որ որսորդը չի յապաղի արձագանք տալ իւր ազգանշանին, Ֆելեմը շարունակում էր պաշտպանել դռները: Չ'նայելով մեքսիկոնու բոլոր յորդորներին, Ֆելեմին թւում էր, որ նա բարի դիտաւորութիւններ չունի, հակառակ դէպքում ինչու պիտի միտար Ստումպը այնքան խստորէն նախազգուշացներ իրան: Թէև նա տրամադիր չէր գեղեցիկ օրիորդին դիմադրելու, որովհետև նրա աչքերի առաջ շարունակ գոյլում էր ատրճանակի փողը: Թարան էլ բոլորովին չհաշտեց անձանօթ հիւրի այցելութեան հետ և երբեմն կատաղի ուննոցով մորտուում էր և սպանում նորեկին: Իզիգորան շարած կանգնել էր մի տեղ և չէր կարողանում որ և է բան վճռել սպասելով, որ վերջապէս մի կերպ լուծւի նրա համար անհասկանալի հանելուկը: Ֆելեմի դէմքը բոլորովին չէր արտայայտում, թէ նա կատակ է անում, ընդհակառակը նա կատարում էր բոլորը կատարեալ լրջութեամբ որ տարօրինակ կերպով հակասում էր նրա գործողութեան կատականման ձևերին: Անցան մի քանի րոպէներ և անա ծառայի դէմքը սկսեց փայլել հրճւանքով: Ծառերի միջից երևաց մի յաղթանդամ մարդ հրացանը ուսին, փաթաթած մի տարօրինակ վերմակով:

Իզիգորան նկատելով եկողին, բնազդաբար սեղմեց իր ատրճանակը, մասամբ երկիւղ կրելով խրճիթի բնակչի մասին, որովհետև, վիթխարին չափազանց վճռողաբար էր մօտենում դէպի խրճիթի դռները:

Սակայն երկուսի էլ վճռողական շարժումները տեղի տուին կատարեալ զարմացման, երբ յաղթանդամ մարդը այնքան մօտեցաւ, որ նրանք իրար ճանաչեցին: Որսորդը զանդաղեցրեց քայլերը, մրմնջաց մի անախորժ խօսք, և շտապով ազատեց իր ձիուն նրան շարշարող փշերից:

Տիրեց լուսթիւն. սակայն և այնպէս Իզիգորան գետն չէր հասկանում բոլոր այս դէպքերի պատճառը:

Ձէբ Ստումպը մօտեցաւ խրճիթին և առաջին րոպէից սկսեց յանդիմանել Ֆելեմին, առանց ի նկատի առնելու գեղեցկունու ներկայութիւնը:

— Ի՛նչ գլուխ, մի՞թէ կարիք կար դրա համար ինձ կանչել հէնց այն րոպէին, երբ ես պատրաստուում էի մի թռչուն սպանել, դէ ասա, այժմ ինչ պէտք է ուտենք:

— Բայց, միտար Ստումպ, չէ՞ որ դուք ինքներդ հրամայեցիք այդպէս անել: Դուք պատիրեցիք, որ եթէ մէկը զայ խրճիթ...

— Յիմար, կանանց մասին չէր իմ խօսքը և չէի էլ կարող մտածել:

— Բայց ո՞վ կարող էր նրան զանազանել տղամարդուց, ես չէի իմանում որ կանայք էլ, տղամարդկանց նման կարող են ձի նստել:

Ինչ գործ ունիս դու նրա ձի նստելուն հետ, կամ կարծես երբէք չես տեսել այստեղ, թէ ինչպէս են մեքսիկացի կանայք ձի նստում: Իմ կարծիքով, դու աւելի շատ ես նման կնոջ և նոյն իսկ աւելի թեթևամիտ, քան նրանք: Դժուար չէ, կարծեմ, հասկանալ, թէ ինչ բան կարող էր բերել այստեղ մի կնոջ, թէպէտ նա խօսէր զեզ հետ սպաներէն:

— Սխալուում էք, միտոր Սաոււմպ, աիկինը խօսում է
և անգլիերէն:

— Միթէ, ասաց որսորդը քիչ վիրաւորւած. ուրեմն
ինչ է հարկաւոր ձեզ, աիրուհի: Դուք ինչպէս երևում է
չեղել էք ճանապարհից:

— Ո՛չ, պարոն, քիչ աստանւելուց յետոյ պատասխա-
նեց օրիորդը:

— Նշանակում է, դուք գիտէք թէ որտեղ էք գտն-
ւում:

— Si sinoi... սա դօն Մօրիս Հերալդի տունն է:

— Այո՛, այդպէս է կոչւում մեքսիկական լեզուով-
Դուք երեի ցանկանում էք նրան տեսնել:

— Օ, պարոն, այո՛, ես հէնց դրա համար էլ եկել
եմ:

— Լաւ, ես հաւատացած եմ, որ դուք չէք կարող
ուսենալ դէպի այդ երիտասարդը վատ դիտաւորութիւն-
ներ, միայն ցաւում եմ յայտնելու ձեզ, որ դուք շատ
քիչ բան կարող էք հասկանալ, որովհետեւ նա իր ներկայ
դրութեան մէջ հազիւ թէ կարողանայ ձեզ զանազանել կօ-
շիկի տակի կաշուց:

— Նա հիւանդ է, նրա հետ դժբաղդութիւն է պա-
տահել...

— Այո՛, նա վիրաւորւած է և նրա ուղեղը կանոնա-
ւոր դրութեան մէջ չէ. բայց դա այնքան էլ նշանակու-
թիւն չունի: Նա նորից մարդ կը լինի, երբ նրա ուղեղը
կը թարմանայ այդ յիմարութիւններից:

— Օ, չեմ կարող արդեօք նրան խնամել: Por amor
Dios... (Աստուծոյ սիրուն համար) թոյլ տուէք ինձ մը-
նալ նրա մօտ, ես նրա հաւատարիմ բարեկամն եմ...:

— Իմ կարծիքով այստեղ անկարելի ոչինչ չկայ:

կանայք, ինչպէս ասում են, լաւ հիւանդապահներ են. չը-
նայելով ես ինքս այդ չեմ փորձել այն ժամանականից,
երբ իմ պառաւս թաղւեց Միսիսիպիում: Եթէ դուք իսկա-
պէս բարեկամ էք երիտասարդին, նստեցէք նրա մօտ, մինչ
մենք կ'վերադառանք. թոյլ չտաք, որ նա վայր ընկնի
մահնակալից և կամ պոկոտի իր վիրակապերը:

— Վստահ եղէք, բարի պարոն. ես կ'գործադրեմ իմ
բոլոր ջանքերը նրան խնամելու համար, միայն նախքան
այդ, ինձ պատմեցէք թէ ինչպէս պատահեց այդ բոլորը:
Արդեօք հնգիկներն են վիրաւորել նրան, թէ մի սպիտա-
կամորթի հետ վէճի է բռնւել:

— Դրա մասին մենք այնքան գիտենք, որքան դուք,
աիրուհի: Նա ընդհարում է ունեցել անապատի գայլերի
հետ, բայց նրա ծունկը այդ ընդհարման ժամանակ չի
փնասւել: Ես երեկ նրան գտայ Չապպարալիում, արեւ
մայր մանելու ժամանակ: Մենք նրան գտանք մինչև պա-
րանոցը ջրի մէջ խրած հէնց այն բոպէին, երբ նրա վե-
րայ պատրաստւում էր յարձակում գործել մի բժաւոր
վագր, որի ձեռից և ազատեցի նրան. բայց թէ ինչ էք
պատահել առաջ, ինձ յայտնի չէ: Այդ ժամանակից նրա
դատողութիւնը խանգարւած է և մենք պէտք է սպասենք
այնքան, մինչև նա կ'անոնաւորւի:

— Իսկ դուք հաւատացած էք որ նա վտանգի մէջ
չէ...:

— Ամենափոքր վտանգ անգամ չկայ, նա ջերմում է
միայն: Վէրքերը հասարակ շանկուածներ են, մնում է որ
նա ուշքի գայ և այն ժամանակ բոլորը իր կարգով կըն-
թանայ: Մի շաբթից յետոյ նա դարձեալ կ'թոշկոտար ինչ-
պէս եղջերու:

— Եւ մեծ ջանքով կ'հսկեմ նրան...:

— Ձեր կողմից շատ գովելի է այդ միայն..... միայն..... Այստեղ մի նոր միտք ծագեց Ձերի գլխում:

— Այո, երևի հէնց նա ինքն է, որ Մօրիսին ճաշարանում քաղցրաւենիքով հիւրասիրում էր, մըմնջաց Ձէքը: Որ նա սիրահարւած է Մօրիսի վերայ, դա պարզ է. կայե մի ուրիշը, բայց նրա սիրտը, ակնյայտ է, որ սրան չի պատկանում: Եթէ նա նորից գառանցանքի մէջ սոսի Լուիզայի անունը ինչպէս անցեալ գիշեր, դա ցաւալի կլինի այս խեղճի համար: Ես ամսոսում եմ սրան, որովհետեւ սա էլ հասարակ դասակարգից չէ: Իրանդացին չէ կարող իւր իրանդական ծագումի պատճառով միաժամանակ սիրել երկուսին: Սարսափելի անախորժ դէպք կարող է տեղի ունենալ: Ի՞նչպէս համոզել սրան, որ չ'մնայ նրա մօտ, մինչև նա կ'զազարի Լուիզայի մասին գառանցելուց:

— Ես խորհուրդ կ'տայի ձեզ, տիրուհի, այժմ տուն գնալ և վերադառնալ այն ժամանակ, երբ սա քիչ քակկզկայ իրան: Չէ որ նա ձեզ չի ճանաչիլ և բացի դրանից նա այնքան վտանգաւոր հիւանդ չէ, որ կարիք զգացել ձեր օգնութեանը:

— Ի՞նչ փոյթ, թէ կ'ճանաչի, կամ չի ճանաչիլ ինձ: Ես ցանկանում եմ խնամել, նրան շատ բան է հարկաւոր. ես կուզարկեմ զրանց յետեից, իսկ ինքս կ'մնամ նրա մօտ:

— Եթէ դուք այդ անպատճառ ցանկանում էք այն ժամանակ ես հակառակ չեմ ձեզ, բայց միայն այնքան էլ ուշադրութիւն չ'զարձնէք նրա դատարկախօսութեանը: Ես կ'սկսի խօսել օտարոտի բաներ—օրինակ ինչ որ մի սպանուած մարդու մասին, որ յաճախ պատահում է գառանցանքի մէջ, այնպէս որ, չ'պէտք է վախենալ զրանից: Կարող է պատահել որ նա կ'զառանցի ինչ որ կ'նշ մասին, որը նրա սրտին շատ մօտ է:

— Կնոջ մասին.....

— Այո, նա երբեմն և նրա անունն էլ տալիս է:

— Բայց ինչ է այդ անունը, պարոն....

— Չ'գիտեմ, երևի քրոջ անունն է...

— Օ, միտք Ստոււմպ, եթէ դուք խօսում էք միտք Մօրիսի մասին, ընդմիջեց Ֆելիմը....

— Լուիս, յիմար, քո ինչ գործն է թէ ես ո՞ւմ մասին եմ խօսում, ինչ ես հասկանում դու այս գործերից, աւելացրեց Ձէքը մեղմ կերպով, նշան անելով Ֆելիմին որ հետևի իրեն: Գնանք ափը, այնտեղ ես մի օձ եմ սպանել....

Օձ, և դուք ցանկանում էք ուտել, միտք Ստոււմպ, բայց չէ որ նա թունաւոր է:

— Յիմար, չէ որ ես նրա գլուխը կտրել եմ....

— Մի և նոյնն է, ես աւելի շուտ կ'համաձայնեմ քաղցից մեռնել, քան օձ ուտել:

— Իէ. մեռիւր և գնա ստատանայի մօտ... Ես չեմ պահանջում, որ դու օձ ուտես, այլ ես ցանկանում եմ, որ նրան տուն բերես... այդպէս, եկ իմ յետեից, եթէ ոչ, ես կ'ստիպեմ քեզ ուտել օձի թունաւոր գլուխը:

— Ես կուտեմ ամբողջ օձը, եթէ միայն այդ ձեզ հաճելի է:

Եւ Ֆելիմը գնաց անտառ, որտեղի յետեից:

Իգիգորան ներս մտաւ սենեակը և մօտենայով հիւանդին, քնքշութեամբ համբուրեց նախ նրա այրւող ճակատը, ապա նրա պապակած շրթուքները, բայց խնայ չ'ա քաշեց, ինչպէս կարիճից խայթւած:

Մինչ այդ, հիւանդը զառանցաքնի մէջ արտասանեց մի բառ միայն: Ինչ զարմանալի բան կայ այստեղ: Սակայն միթէ բաղդաւորութիւնը շատ անգամ կախուած չէ հէնց միայն մի այդ-ից և կամ միթէ նոյն իսկ երիտասարդութիւնը չի խորտակուում մի ոչ ով:

[Handwritten signatures and scribbles in blue ink on the left side of page 289.]

ԼՈՒԻԶԱՆ ՆԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ ԶԻ ԳՏՆՈՒՍ

Միզէլ-Դիագին արկանի կապանքներից ազատելու օրը Լուիզա Պոյնդեքատերի կեանքի ամենամոայլ օրն էր: Մի օր առաջ նրան տանջուում էր կորած եղբօր և վրտանգի ենթարկւած սիրահարի դրութեանց անստուգութիւնը. իսկ այդ օրը նոյն տանջանքի վրայ աւելացել էր և խանդաութիւնը, որ հետևանք էր Իզիդորայի Մօրիսին գրած նամակի ընթերցման և այն համոզման, թէ Մուստանգերն արդէն իրան դաւաճանել է: Խանդն այնքան էր նրան կուրացրել, որ չէր կարողանում հասկանալ, թէ Իզիդորայի կողմից Մօրիսին գրած մի նամակ, չէր կարող այս վերջինի մեղաւորութեան անհերքելի ապացոյցը լինել. նա միայն հասկանում էր այն, որ այդ նամակը արտայայտութիւն էր նրանց մտերմական յարաբերութեան: Այն, այն, Մօրիսը խաբուում է Լուիզային, այլապէս մի կէն, ինչքան պէտք է մոռացած լինէր ամօթխածութիւնը, որ իրան թոյլ տար այնպիսի ազատ կերպով արտայայտել իր հրճուանքը մի երիտասարդ տղամարդու աչքերին — «գեղեցիկ, գրաւիչ աչքերին»: Ո՛չ դա հասարակ մտերմութիւնից էլ աւելի էր, այդ բառերը արտայայտում էին բոցավառ տենչ: Չաճել ամերիկուհին շատ լաւ էր հասկանում Իզիդորայի գործածած բառերի իմաստը. գրանք իր սեփնական զգացումների արտայայտութիւններն էին: Ճիշդ է, որ նամակը սկսւած էր խնդիրքով բայց չէ որ նա վերջանում էր գրական հրամանով, որ թէ նամակագրի և թէ նամակը ստացողի դիմախները վայր էր ձգում: «Եկէք» հրամայում էր Մեքսիկուհին և ինքն էլ գնում էր իր հրամանը կատարողին պատահելու անտանում:

Հետզհետէ աւելի շատ մտածող ու ենթադրութիւններ անող Լուիզայի մէջ խանդը տեղի տուեց մի աւելի

ուժեղ զգացման, մի տանջող կրքի, վրէժխնդրութեան և նա շղաճգաբար սկսեց ճմուռել, տրորել տոմսակը:

—Օ ինչքան դժբաղդ եմ, մտածեց Լուիզան. այժմ ինձ համար պարզ է բոլորը, Մօրիսն առաջին անգամը չէ, որ հպատակել է այդպիսի հրամանների. առաջին անգամը չէ, որ նրանք պատահում են բլրի վրայ: Նամակում պարզ յիշեա՛ծ է ժամադրավայրի մասին «Հօրեղբօրս տան մօտ, բլրի վերայ»...

Երկար ժամանակ նա մնաց տխուր մտածմունքի մէջ, աչքերը յառած ոտի տակ ընկած տրորեա՛ծ թղթի կտորին, որ նրա կտորեա՛ծ սրտի խորհրդանշանն էր: Նրա կրծքի տակ կուռում էին բազմազան զգացմունքներ և գլխում առաջանում էին ամենայուսահատ վճիռներ: Նա յիշեց իւր սիրած Լուիզիանան և կամեցաւ վերադառնալ այնտեղ ու իր գաղտնի տխրութիւնը ծածկել Sacre Coeur վանքում: Եթէ այդ վանքն այնքան հեռու չլինէր, անշուշտ նա կը վճռէր թողնել հայրենական տունը և, անձնատուր լինելով անծայր յուսահատութեան: ապաստան որոնել նրա սուրբ պատերի մէջ:

Այն, այդ օրը նրա կեանքում ամենամուայլ օրն էր: Բայց փոքր առ փոքր նա հանգստացաւ և նրա մրաքերն սկսեցին ընդունել աւելի խելացի ուղղութիւն: Նամակը վերցրեց, նորից կարդաց և բովանդակութիւնը խիստ քննութեան ենթարկեց, ահա նրա մէջ սկսեցին երևիլ յոյսի աղօտ նշոյլներ: Չէ՞ որ Մօրիսը շրջակայքում չէր այդ օրերին, չէ՞ որ նա խոստացել էր իրան, Լուիզային, գնալ իր խրճիթը, ուր մի քանի կարգադրութիւններ անելուց յետոյ պիտի անցնէր Իւլանդիա: Այդ յոյսը՝ հիմնւած ենթադրութեան վրայ՝ թէև շատ թոյլ էր, բայց գեղեցիկ ամերիկուհու այդ դրութեան մէջ, մի կարևոր նեցուկ էր նրա համար:

Սակայն հարկաւոր էր տեղեկութիւններ հաւաքել իր

յուսարու իրաւունքը հաստատելու համար, իսկ այդ Լուիզա Պօյնդեքստերի համար փոքր ինչ անյարմարութիւն էր ներկայացնում: Բայց ուրիշ ելք չը կար և հենց որ երեկոյեան վերջալոյսն ընկաւ երկրի վրայ, նա հրամայեց թամբել իւր խայտաբղէտ մուստանգը և շուտով կանգ առաւ հիւրանոցի առաջ հէնց այն տեղ, ուր մի քանի ժամ առաջ կանգնած էր Իզիդօրայի մոխրագոյն ձին:

Որովհետև համարեայ բոլոր տղամարդիկ ցրւել էին, — ոմանք գնացել էին մարդասպանին որոնելու, ոմանք էլ կոմանչներին հալածելու, — ուստի Դուֆֆերն եղաւ նրա անմիտ վարմունքի միակ վկան: Բայց ծերունին բոլորովին բնական համարեց նրա այդ վարմունքը, մտածելով. որ սպանւածի քոյրը ցանկանում էր տեղեկութիւններ հաւաքել այն մարդու մասին, որին համարում են ոճրագործութեան հեղինակը: Բթամիտ գերմանացին չը նկատեց այն բաւականութիւնը, որով Լուիզան սկզբում լուռ էր նրա պատասխանները, չը նկատեց և այն, որ նա՝ յանկարծ ընդհատեց խօսակցութիւնը և հեռացաւ հիւրանոցից, հէնց որ իմացաւ, որ ինքը առաջին կինը չէ, որ գալիս է հիւրանոց տեղեկանալու Մօրիս Հերարդի մասին: Նա խորը մտատանջութեան մէջ վերադարձաւ կազա-Դէլ-Կօրվօ:

Ամբողջ գիշերը նա անհանգիստ քնեց: Նրա քունը յաճախ խանգարւում էր սարսափելի տեսիլներով: Նա ապաստիպւած եղաւ մի լուրջ ու համարձակ վճիռ տալ, այն է, գնալ Ալամօ իրան տանջող կասկածները ստուգելու, հաստատելու կամ փարատելու համար: Նա այնպիսի բնաւորութիւններից էր, որ չէր կարող երկար ժամանակ կասկածների մէջ տարուբերել: Նա գերադասում էր մահը անասուզութիւնից: Նա կը գնայ, այն, մուստանգերի խրճիթը և նրանից բացատրութիւն կը պահանջի, մանա-

ւանդ, որ տանը ոչ ոք չը կայիր ան այդ վճիռը գործադրելու արդիւրդ: Ալամոյում Մօրիսի հետ բացադրութիւն ունենալուց յետոյ, գուցէ կը համոզւի, որ իզուր են եղել իր բոլոր կասկածները և իրան դարձեալ երջանիկ կը զգայ, կամ գուցէ կը հաստատուին իր կասկածները բոլորովին և հիասթափուամբ կատարեալ կը լինի: Բայց գոնէ դա էլ մի բան է, գոնէ դա կազատի իրան տանջող անստուգութիւնից:

Միրոյ ոյժը նոյնիսկ եզիպտական թագուհու կամքից աւելի անխախտելի էր դարձրել ամերիկեան կրէօլուհու կամքը: Լուիզան ոչ մի դժարութեան առաջ կանգ չի կարող առնել, նրա վճիռը անխախտելի է և նրա գործադրութեան արգելք կարող է դառնալ միմիայն մահը:

Այդպիսի բնաւորութիւններ շատ քիչ կան կանանց մէջ, — խաղաղութեան մէջ նրանք հնազանդ ու մեղմ են, ինչպէս առաւօտեան արշալուսի ճառագայթները, մաքուր ինչպէս քրեխայի աղօթքը. բայց երբ նա գրգռւած է ու յուզւած, երբ նրանում ծնունդ է առել սէրը, իր անբաժան ընկեր — խանդաութեան հետ, այն ժամանակ նրանք լինում են հպարտ և վտանգաւոր, ինչպէս Լիւցիֆերի կրակը:

Այդ բնաւորութիւններից էր և Լուիզա Պօյնդեքստերը: Նա ենթարկեց ամբողջութեամբ սիրոյ և խանդի ազդեցութեան և առաւօտեան վաղ դուրս եկաւ կազա-Դէլ-Կօրվօյի դռնից և սկսեց ընթանալ իր ծանօթ ճանապարհով դէպի Ալամօ:

Ճանապարհի շրջակայքում տարածւող շատ տեղեր թանկագին յիշողութիւններ էին զարթեցնում նրանում, բայց մտայլ մտքերը հետզհետէ տեղի տուին ուրախանիթ յոյսերի: Շուտով նա մոռացաւ իր ճանապարհորդութեան

սպասակը և սրանում էր դէպի իր սիրելի խրճիթը նրան պաշտպանելու համար վերահաս վտանգից:

Կազա-Դէլ-Կօրվօյից մինչև մուստանդերի խրճիթը, քսան մղոն ճանապարհ էր: Եւրոպացիք այդքան տեղ գնալը ճանապարհորդութիւն կը համարէին, այն ինչ Տելաւի բնակիչների համար դա համարւում էր միայն մի երկու ժամուայ զբօսանք: Նոյն իսկ մի ծոյլ ձիով այդքան ճանապարհ գնալը այնքան էլ տխուր չէր, ուր մնաց մի ճարպիկ կենդանի հեծած գնալը: Լուիզայի ձին, Լիւնան, արագաշարժ էր և կարող էր անհամեմատ աւելի շուտ տեղ հասցնել իր տիրուհուն, որ արդէն սկսել էր քիչ քիչ յուսալ:

Սակայն այդ յոյսը տևեց մինչև Ալամօյի խրճիթի դռնից ներս մտնելը, որ ժամանակ մի ճնշւած աղաղակ դուրս թռաւ նրա բերնից, որպէս խորտակւած սրտի վերջին հառաչանք:

Խրճիթում մի կին կար, որի շրթներից նոյնպէս դուրս թռաւ մի դառն աղաղակ, որպէս արձագանք սրտի անհուն կսկիծի:

Իզիգօրան երեսը դարձնելով հիւանդի կողմից դէպի Լուիզային, այն աղջկան, որին այնքան սիրում էր Մօրիսը և որի անունը նա նոր լսեց նրա դառանցանքների միջից: Երկու կանայք իրար նայեցին ուշադրութեամբ ու բարկութեամբ լի հայեացքով: Նրանք երկուսն յուզւած էին, երկուսի սիրտն էլ բարսխում էր ուժգին:

Այժմ ամեն ինչ պարզ էր ջահել կրէօլուհու համար: Նա տեսաւ Մօրիսին անկողնում պառկած, տեսաւ թէ ինչպիսի քնքոյշ հոգածութեամբ խնամում էր նրան այն կինը, որ գրել էր այն նամակը, որի մէջ անւանում էր նրան querido, գովաբանում էր նրա աչքերի գեղեցկու-

Թիւնը և հրամայում էր գալ տեսակցութեան, որն անշուշտ կայացել էր: Կասկած չէր կարող լինել—այդ նա էր: Ախ, Լուիզայի մտքերը չափազանց տանջող էին և անկարելի էր նրանց առթած տանջանքի չափը բացազրել բառերով:

Իզիդորան ևս նոյնպիսի անխուսափելի և տանջող եզրակացութեան եկաւ: Նա գիտէր, որ այլ ևս ի զուր էր յոյս դնել Մօրիսի սիրոյ վրայ. նա չափազանց երկար ժամանակ լսեց հիւանդի զօռանցանքը, որ շատ բան պարզեց գեղեցիկ մեքսիկոնու համար: Իսկ ի լրումն ամենայնի, անա նրա առաջ կանգնած է նա, որը յափըշտակել էր մուստանգերի սիրտը:

Հաւասար սէրը, հաւասար խանդը, բերել էին նրանց այդ մարդու մօտ, որ չէր գիտակցում ոչ մէկի և ոչ միւսի ներկայութիւնը: Իւրաքանչիւրն իւր հակառակորդին համարում էր երջանիկ, որովհետև Լուիզան չէր լսել այն խօսքերը, որոնք կարող էին նրան մխիթարել և որոնք պատուոտում էին Իզիդորայի սիրտը:

Նրանք մի խօսք անգամ չը փոխանակեցին միմեանց հետ և այդ մտայլ լուծիւնը, թւում էր թէ աւելի ևս վառում էր նրանց նախանձը: Ոչ մէկն արժան չը համարեց զիմել միւսին բացազրութիւն պահանջելու համար և հազիւ թէ այդ հարկաւոր լինէր: Կայ դրութիւն, երբ խօսքերն աւելորդ են. երկուսն էլ պարզ կերպով զգում էին այդ: Միմիայն երկուսի էլ աչքերի բարկացում փայլը և զողզող շուն շրթունքները բացազրում էին իւրաքանչիւրի հոգեկան յուզմունքը:

Այդ ամբողջ տեսարանը տեսց կէս բոպէից ոչ աւելի: Լուիզա Պօյնգեքստերն առաջինը դարձրեց երեսը և գուրս եկաւ. Մօրիս Հերալդի խրճիթում նրա համար տեղ չը կար:

Իզիդորան հետևեց նրան համարեա կոխ տալով նրա

ամազօնկայի քղանցքը: Միևնոյն տանջող միտքը ծանրացած էր և նրա հոգու վրայ. նա էլ գտաւ, որ այլևս աւելորդ էր մնալ Մօրիս Հերալդի խրճիթում:

Թւում էր, թէ երկուսն էլ ցանկանում էին, որքան կարելի է, շուտով թողնել այն տեղը, ուր նրանց սրտերն այնպէս անխնայ կերպով կոտորեցին:

Մոխրագոյն ձին կանգնած էր աւելի մօտ, մուստանգը—հեռու: Իզիդորան առաջինը ձի նստեց և ճանապարհ ընկաւ. բայց երբ նա անցաւ իւր հակառակորդի մօտով, վերջինս արդէն նստել էր ձին և պատրաստում էր նրան հետևելու:

Նրանց հայեացքները նորից հանդիպեցան միմեանց. այդ հայեացքները չէին արտայայտում ոչ յաղթանակ, ոչ ներումն. շատ պարզ էր, որ այդ վիրաւորանքը երբէք չէր մոռացել: Կրէօլուհու դէմքի վրայ նկատելի էր տխրութիւն, զարմանք, այն ինչ Իզիդորայի վերջին հայեացքը, որին հետևեց նենգամիտ մի ակնարկ, մի զարհուրելի բացականչութիւն, յիշեցնում էր մեծաչեայ դիցուհու այն հայեացքը, որ նա ձգեց Աֆրօզիդէի վրայ, երբ գեղեցիկ Պարբիսը խնձորը նրան յատկացրեց:

ԳԵՂԵՑԿՈՒՀԻ ՄԱՏՆԻՉԸ:

Եթէ կարելի լինէր արտաքին աշխարհի առարկաները համեմատել մարդու զգացմունքների հետ, այն ժամանակ մենք կ'ասէինք, որ Ալամոյի վրայ տարածւած պայծառ կապոյտ երկինքը խրճիթից շտապ հեռացող Իզիդորայի մռայլ ու տխուր մտքերի գարմանալի հակապատկերն էր ներկայացնում: Նրա կրծքի տակ յուզուած էին կատաղի կրքեր, որոնցից ամեազօրեղը — վրէժխնդրութեան ծարաւըն էր:

Այդ զգացմունքը պատճառում էր նրան մի խանդավառ հրճանք, որը խանգարում էր նրան յուսահատութեան մէջ ընկնելու. առանց այդ զգացման նա, անշուշտ կը կորչէր վերահաս վշտի ճնշման տակ: Նա գնում էր ծառերի սաւերներով, մռայլ մտքերի մէջ խորասուզւած: Նրա հայեացքը չը պարզւեց և այն ժամանակ, երբ աչքը բարձրացնելով տեսաւ իւր գլխավայրը ժպտող կապոյտ երկինքը: Նրան թւում էր՝ թէ հրճուող բնութիւնը ծաղրում էր իր զժբազդութիւնը:

Նախ քան ժայռը բարձրանալը, նա դիմեց գէպի ճիւղաւէտ կողմնին և կանգնեց նրա տակը: Նրա տխուր սրտին սաղարթախիտ ծառի մռայլ սաւերն աւելի էր դուր գալիս, քան արեգակի պայծառ լոյսը:

Շարունակ մինը միւսից անմխիթար ու կատաղի մտքեր էին ծնւում նրա գլխում. հակառի վրայ յայտնւել էին խոր կնճիւններ, սև յօնքերը կիտւել էին, աչքերը փայլում էին չարագուշակ կրակով և սպիտակ ատամները շողշողում էին սև բեխերի տակից, նրա դէմքին աւելի դաժան արտայայտութիւն տալով: Ակներև էր, որ նրա գլխում ինչ որ դիւային ծրագիր էր կազմւում: Եւ որ-

պէս արտայայտութիւն իր գաղտնի մտքերի, Իզիդորան սկսեց խօսել:

— Ես կարող էի սպանել նրան տեղնուտեղը: Եւ չը վերադառնամ արդեօք այդ անելու, հրաւիրելու նրան մահւան մենամարտի. բայց ի՞նչ օգուտ, եթէ նոյնիսկ մեռնէր էլ նա: Մօրիսի սիրաբար արդէն ինձ համար առմիշտ կորած է և պատկանում է նրան և ո՛չ մի բան չի կարող նրանից խլել ու ինձ վերադարձնել: Չառանցանքի մահուանը, որի պատկերը տպաւորւած էր նրա սրտում: Ո՛չ, մեռնողը պէտք է լինի ինքը Մօրիսը, որը ինձ յուսահատութեան հասցրեց: Ի՞նչ կը լինի, եթէ ես սպանեմ այս վերջինին: Պիտի տանջւեմ անպայման, չէ... Բայց մի՞թէ այժմ չեմ տանջւում: Ես ոչ մի ուրիշ մխիթարութիւն չունիմ բացի վրէժխնդրութիւնից, պէտք է նրանք երկուսն էլ մեռնեն, բայց ոչ այժմ և ոչ շուտ քան Մօրիսը կարող կը լինի իմանալ թէ ո՞ւմ ձեռքից է մահ ընդունում: Նա պէտք է զգայ պատիժը, պէտք է գիտնայ, թէ որտեղից է հասնում այդ նրան: Օ՛, սրբեր, ամբարջէք իմ բազուկը ուզիդ հարուածելու համար:

Նա խթեց ձիուն: Կենդանին առաջ սլացաւ սրարշաւ, բայց շուտով ծուեց գէպի լէճօն տանող ճանապարհի կողմը: Գեղեցիկ հեծեալը թողել էր նրան իր կամքին և գլուխը քաշ, մտախոհ առանց իր շուրջը նայելու ձիու քմահաճոյքի համաձայն առաջ էր գնում: Բայց յանկարծ ձին փռշտաց՝ ու կանգ առաւ: Օրիորդը սթափուեց և տեսաւ իւր առաջ սևազէմ մարդկանց մի խումբ:

Միթէ սրանք հնդիկներ են, մտածեց Իզիդորան նրանց արևից այրւած դէմքերը նկատելով. բայց հազուատներից և ձի նստելու ձևերից կարելի է եզրակացնել, որ սրանք սպիտակամորթներ են:

— Ապա Իզիդորան մտածեց, որ զբանք կարող են լինել հնդիկ աւազակներին հալածելու համար գուրս եկող

ամբողջի մարդիկը, բայց նա շուտով յիշեց նաև այն, որ գիւղում ասում էին, որ աւագակները գանուում են ամբողջի այն կողմը, հետևաբար այդ մարդիկը չէին կարող լինել նրանց հալածողները: Ուրեմն ովքեր էին սրանք: Սակայն ովքեր ուզում են լինեն, մտածեց վերջապէս Իգիգորան և վճռեց իր ճանապարհը շարունակել, առանց նրանց պատահելու, բայց նրան մատնեց իր ձիու խրխրնջոցը: Ձիաւորները արագընթաց սկսեցին մօտենալ նրան:

— Դրանք չեն կարող խուզարկուներ լինել, — նրանց աւելի մօտից դիտելուց, ասաց Իգիգորան ինքն իրեն, աւելի շուտ դրանք նմանում են այն օրինակատարներին, որոնք սպանւածի հօր առաջնորդութեամբ ուղևորւել են մարգասպանին գտնելու: Այո, նրանք են: Ահա վրէժխնդիր լինելու յարմար դէպք: Սրանից աւելի յարմար և լաւ առիթ չէի կարող գտնել. ինքը ճակատագիրն էլ օգնում է ինձ:

Եւ փոխանակ փախչելու, նա վճռական դէմքով գուրս եկաւ մացանների յետևից և մի քանի քայլ առաջ անցնելով, քաշեց ձիու սանձն ու կանգնեց: Մի մոայլ միտք բոլորովին պաշարեց նրա հոգին:

Մի բողբ էլ և տեսասցինները շրջապատեցին նրան չորս կողմից: Ձիաւորները թւով հարիւր հոգի էին, հագած գանազան հագուստներ և ոտից մինչև գլուխ զինւած: Երբ նրանք տեսան Իգիգորային, նրանց դէմքի դաժան արտայայտութիւնը փոխեց հետաքրքրութեան:

Թէպէտև այդպիսի հասարակութիւնը կարող էր երկիւղ ներշնչել ամեն մէկին, մանաւանդ մի կնոջ, բայց Իգիգորան երկնշոտներից չէր, թէև ձիաւորները նրան շատ անպատկառօրէն շրջապատեցին: Մի քանի վայրկեան չանցած, նրան մօտեցաւ հասակն առած մի ձիաւոր, որն, ըստ երևոյթին, խմբի առաջնորդն էր. թէև բոլորովին անձանօթ Իգիգորային, բայց վերջինս իսկոյն գուշակեց,

որ դա սպանւածի հայրն էր, հայրը նոյն կնոջ, որին նա կը ցանկանար տեսնել մեռած և կամ խայտառակւած:

— Ֆրանսերէն խստօ՛ւմ էք օրիորդ, — հարցրեց Վուրլէյ նոյն լեզուով ծերունի Պօյնդեքստերը, կարծելով թէ Իգիգորան այդ լեզուով իրեն աւելի լաւ կ'հասկանայ:

— Ո՛չ, ես խօսում եմ անգլիերէն, բայց շատ քիչ, սեր, — պատասխանեց Իգիգորան:

— Անգլիերէն. մեզ համար այդ աւելի լաւ: Ասացէք խնդրեմ, միաս, այսօր տափաստանում ձեզ ոչ ոք չի՞ պատահել:

Իգիգորան տատանւեց:

Ագարակատէրը շարունակեց իւր հարց ու փորձը քաղաքավարութեամբ:

— Կարո՞ղ եմ հարցնել, թէ դուք որտե՞ղ էք ապրում:

— Ուրի-Դրանդէի ափերին, սինեօր:

— Այնտեղից էք գալիս:

— Ո՛չ, ես եկել եմ Լէօնից:

— Լէօնից:

— Դա ծերունի Մարտինեցի քրոջ աղջիկն է, — միջամտեց արշաւախմբի անդամներից մէկը: — Նրա կալւածքը սահմանակից է ձեր կալւածքին, միստեր Պօյնդեքստեր:

— Այո, ես դօն Սիլվիօ Մարտինեցի քրոջ աղջիկն եմ:

— Ուրեմն դուք գալիս էք նրա կալւածքից: Ներեցէք ինձ, իմ աւամայ անպարկեշտութիւնը, միսս: Հաւատացէք, որ մենք հարցնում ենք ձեզ ոչ թէ հասարակ հետաքրքրութիւնից դրդւած, այլ որովհետև դրա համար աւելի լուրջ պատճառներ ունենք:

— Այո, ուղղակի Մարտինեցի գաղէնդայից, — պատասխանեց Իգիգորան, որպէս թէ չը լսելով նրա վերջին խօսքերը: — Ես գուրս եմ եկել իմ քեռու տնից սրանից երկու ժամ առաջ:

— Եթէ այդպէս է, հաւանական է, որ դուք լսած կ'լինէք նորերս կատարւած սպանութեան մասին:

— Այո, երէկ քեռուս տանը խօսում էին այդ մասին:

— Իսկ այսօր ոչ մի նոր բան չէք լսել: Մենք մի քանի տեղեկութիւններ ունենք, բայց հաւանականաբար, ձերինները աւելի թարմ կը լինեն:

— Ես լսեցի, որ գաղութից մարդիկ են գնացել մարդասպանին գտնելու: Երևի այդ դ՞ուք էք, սինեօր:

— Այո, այո, անկասկած այդ մեր մասին են ասել: Էլ ուրիշ ոչինչ չէք լսել:

— Լսել եմ մի շատ տարօրինակ բանի մասին, որ որքան տարօրինակ, նոյնքան և ծիծաղելի է: Եթէ ասեմ ձեզ, դուցէ դուք կատակի տեղ կրնդունէք այդ:

— Ի՞նչ էք լսել, — միանգամից հարցրին մի քանի ձայներ միասին և բոլորն էլ հետաքրքրութեամբ երենց աչքերը դարձրին անձանօթ աղջկայ վրայ:

— Պատմում էին, որ իբր թէ տափաստանում թափառում է ինչ որ անդուխ ձիաւոր: Նրան տեսել են այստեղից ոչ հեռու Նուէցէսս գետի մօտ, հէնց այնտեղ, ուր անցնում է Ռիօ-Պրանզէ տանող ճանապարհը: Ինձ պատմել են այդ ձիաւորի մասին մեր վակերօները:

— Ա. ուրեմն ձեր վակերօները տեսել են նրան:

— Այո, սինեօր, նրանցից երեքը երդւում են, որ տափաստանում պատահել են այդ տարօրինակ ձիաւորին:

Իզիդօրան շատ զարմացաւ, երբ տեսաւ, որ այդպիսի անսովոր նորութիւնը տեխասցիների վրայ շատ թոյլ սպաւորութիւն թողեց: Չճմարիտ է, նրանք հետաքրքրւած էին, բայց բոլորովին չը զարմացան և Իզիդօրան շուտով իմացաւ նրանց անտարբերութեան պատճառը:

— Մենք ինքներս էլ ենք տեսել այդ անդուխ ձիա-

ւորին, բայց միայն հեռուից, — ասաց խուզարկուներից մէկը: — Ձեր վակերօները չէն մօտեցել նրան:

— Ի հարկէ ոչ:

— Իսկ դուք ինքներդ, միսս, չը գիտէք ով է նա:

— Ե՛ս, ոչ: Ինչպէս ասացի ձեզ, ես ինքս չեմ տեսել նրան, այլ միայն լսել եմ նրա մասին:

Կարճ ժամանակ լռութիւն տիրեց: Թուում էր, թէ բոլորն էլ մտածում էին այն մասին, ինչ որ լսել էին Իզիդօրայից: Վերջապէս ազարակատէրը նորից հարցրեց:

— Ուրեմն դուք այստեղ ոչ ոքի չէք պատահել, միսս:

— Ես պատահել եմ մի կնոջ:

— Մի կնո՞ջ, — զարմացած հարցրին մի քանի ձայներ:

— Այո, պարոններ:

— Դա ինչպիսի կին էր:

— Ամերիկուհի:

— Ամերիկուհի: Այստեղ: Միայնակ:

— Այո, սինեօր:

— Ձը գիտէք ով է նա,

— Ո՛չ, չը գիտեմ:

— Ո՞վ կարող է լինել այդ: Նա ինչպէ՞ս էր հագնւած:

— Նրա վրայ կար ամազօնկա:

— Ուրեմն նա ձիով էր գնում:

— Այո:

— Որտեղ էք պատահել այդ կնոջը:

— Այստեղից ոչ հեռու, մացառների միւս կողմում:

— Տարօրինակ է: Նա որտեղ կարող էր գնալ: Մի՞թէ այնտեղ որ և է բնակութիւն կայ:

— Այո, կայ մի խրճիթ: Գոնէ ես մէկը միայն գիտեմ:

— Խրճիթ, այդ ի՞նչ բան է, — հարցրեց Պոյնդեքստերն սպաններէն հասկացող ընկերներին գտնալով և ո՞ւմ է պատկանում այդ խրճիթը:

— Մաուրիցիօ մուստանգերին:

— Մօրիս մուստանգերին, — մի յաղթական շշուէ անցաւ ամբոխի մէջ:

Երկօրեայ եռանդուն, բայց ի գուր խուզարկութիւններինց յետոյ, վերջապէս, նրանք գտան մարդասպանի հետքը: Բոլորն էլ, որ ցած էին իջել ձիերինց, նորինց թամբի վրայ թռան և պատրաստ էին առաջ շարժելու:

— Մենք չէինք ցանկանալ ձեզ նեղութիւն տալ, միսս Մարտինեց, բայց դուք պէտք է առաջնորդէք մեզ մինչև այն տեղը, որի մասին ասացիք:

— Թէև այդ բոլորովին իմ ճանապարհի վրայ չէ, բայց միևնոյն է, գնանք, ես ցոյց կը տամ ձեզ ճանապարհը:

Այդ խօսքերն ասելով, Իզիդօրան առաջ անցաւ և դիմեց դէպի մացառները հարիւրաւոր ձիաւորների ուղեկցութեամբ, որոնք շտապով հետևում էին նրան: Հասնելով անտառի արևմտեան եզրին, որտեղից սկսում է անփաստանը, որը տարածւում է մինչև Ալամօի ավերը, նա կանգ առաւ:

— Տեսնո՞ւմ էք հորիզոնի վրայ այն սև կէտը, — ասաց Իզիդօրան: — Դա մի մեծ կաղէնու կատար է, որը բռնած է Ալամօի հովիտը տանող գառիվայրի գլխին: Գնացէք ուղղակի դէպի այնտեղ, ցած իջէք հովիտը և այնտեղ կը գտնէք այն խրճիթը, որի մասին ասացի ձեզ:

Պաշտօնները սաստիկ շտապում էին. առանց ուշադրութիւն դարձնելու իրենց ուղեկցուհու վրայ, նրանք արշաւեցին դէպի այն կողմ, ուր գառիվայրի գլխին երևում էր կաղէնու մութ կատարը:

Ձիաւորներից միմիայն մէկը յետ մնաց: Նա խմբի առաջնորդը չէր, որ խօսում էր Իզիդօրայի հետ, այլ մի մարդ, որ, ըստ երևոյթին, նոյնքան շահագրգռած էր այդ գործով, որքան ձերուներն: Նրան աւելի շատ էր հե-

տաքքրել Իզիդօրայի պատմածները իրան պատահած կրնոջ մասին: Նա գիտէր սպաններէն այնպէս, ինչպէս իւր մայրենի լեզուն, և հասկանում էր այն ամենը, որ ասում էր մեքսիկուհին:

— Ասացէք խնդրեմ, սինեօրիաւ, դուք ուշադրութիւն չը դարձրիք այն կնոջ ձիու վրայ, — հարցրեց նա՝ Իզիդօրային մօտենալով:

— Ի հարկէ, այո: Այդ ի՞նչ հարց է, սինեօր: Միթէ կարելի էր ուշադրութիւն չը դարձնել:

— Ի՞նչ գոյնի էր նրա ձին, — հարցրեց ձիաւորը՝ յուզմունքից ընդհատուղ ձայնով,

— Պայտաբղէա մուստանգ: Օ՛, Աստուած իմ, — հառաչեց Կասսիյ Կէլիօուներ և սլացաւ ձիաւորների ետևից:

Այդ դէպքից յետոյ Իզիդօրան եկաւ այն համոզման, որ միմիայն իւր սիրտը չէր տոչորուում բոցավառ տենչանքով, այլ կար իր նման մի ուրիշն էլ: Իսկ այդ երկու տենչանքները հանգստութիւն ու բաւարարութիւն կարող էին գտնել միմիայն մահով:

տարբեր-այսպէս դասը
11/5531

ԳԼ. ԼԸ.

ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ.

Աննկարագրելի զարմանքով Լուիզա Պոյնդեքստերը նայեց իւր շտապ հեռացող հակառակորդի ետևից: Նա արդէն ձի նստած պատրաստ էր հեռանալու այդտեղից, բայց Իգիդորիայի յանկարծակի և անսպասելի հեռանալը այն աստիճան ապշեցրեց նրան, որ նա մնաց կանգնած անորոշ դրութեան մէջ: Նրան թուեց մի րոպէ նոյն իսկ, թէ այդ կնոջը ինքը չէր տեսել մուստանգերի խրճիթում:

Ի՞նչով կարելի էր բացատրել սակայն գեղեցիկ մեքսիկուհու շտապ հեռանալը: Ի՞նչով բացատրել նրա նենգամիտ և ատելութեամբ լի հայեացքը, որ նա ձգեց իր վրայ: Ի՞նչու նա չուներ այն հպարտ ու վստահ տեսքը, որ իւրաքանչիւր կին զիտէ, ունենում է, երբ գիտէ որ ինքը սիրւած է իր սիրած էակից:

Իգիդորայի վարմունքը Լուիզային պատճառեց յուզումնալից բերկրանք: Նա իջաւ ձիուց, ուղղեց դէպի խրճիթը և ներս մտաւ: Նա մոռացաւ բոլորովին իր կրած վիրաւորանքը, մանաւանդ երբ տեսաւ Մօրիսի դալուկ գէմքն ու մոլոր աչքերը:

— Աստուած իմ, Աստուած իմ, — բացականչեց նա՝ իր սիրած էակի մօտ վազելով: — Մօրիսը... վիրաւոր... մեռնում է: Ո՞վ է դրա պատճառը:

Պատասխան չը կար, լսում էր միայն հիւանդի անմիտ գառանցանքը:

— Մօրիս, Մօրիս, պատասխանիր: Ինձ չե՞ս ճանաչում: Ես Լուիզան եմ, քո Լուիզան, ինչպէս կոչում էիր ինձ դու: Գոնէ մի անգամ էլ կրկնիր այդ խօսքը:

Այո, դուք գեղեցիկ էք, երկնային հրեշտակներ... և ինչպէս գեղեցիկ... Ես տեսնում եմ ձեզ իմ առաջ... Բայց

մի ասէք, թէ երկրի վրայ չը կան ձեզ նման գեղեցիկները: Այդ ճիշտ չէ: Ես ճանաչում եմ մէկին, նա իւր գեղեցկութեամբ գերազանցում է ձեզ, երկնային հրեշտակներ: Գեղեցկութեամբ և ոչ բարութեամբ, — դրանք երկուսն էլ սարբեր իրեր են: Ես բարութեան մասին չեմ խօսում, այլ խօսում եմ...

— Մօրիս, սերելի Մօրիս, ինչո՞ւ ես այդպէս խօսում... Իու երկնքումը չես, այլ այստեղ ինձ մօտ, քո Լուիզայի մօտ:

— Ես երկնքումն եմ, այո, երկնքումը, բայց չեմ կամենում այստեղ մնալ, որովհետև նա ինձ հետ չէ... Այո, այստեղ լաւ է, բայց միայն նրա հետ միասին: Եթէ որ նա այստեղ լինէր, ես երջանիկ կը լինէի: Օ՛հ, հրեշտակներ, որ սաւառնում էք իմ գլխի վրայ, լսեցէք ինձ: Ես չեմ հակառակում, դուք գեղեցիկ էք, բայց ձեր մէջ չը կայ մէկը, որ իւր գեղեցկութեամբ հաւասար լինի նրան... Ախ, ես գիտեմ, երկրի վրայ կայ և դե... գեղեցիկ դե... Բայց ես նրա մասին չեմ մտածում: Ես մտածում եմ իմ հրեշտակի մասին:

— Իու յիշում ես նրա անունը:

Գուցէ ոչ ոք Լուիզայի չափ սրտատրուի անհամբերութեամբ չէր սպասել այն հարցի պատասխանին, որն առաջարկեց տաքութեան մէջ զառանցող մի մարդու: Նա թեքելով հիւանդի վրայ, ազահութեամբ ականջ էր դնում և հետևում նրա շրթունքների ամեն մի շարժմանը:

— Անունը... Ո՞վ է հարցնում նրա անունը: Մի՞թէ դուք անուն ունիք... Այո, յիշում եմ. Միքայէլ... Գարբիէլ... այդ հրեշտակների անուններ են, բայց իմ հրեշտակին այդպէս չեն անւանում... Նա կին է. նրան անւանում են...

— Նրան ի՞նչ են անւանում:

— Լուիզա... Լուիզա... Լուիզա... Ինչու թապցնել

այդ ձեզանից, — դուք ամենագէտ էք: Ի հարկէ, դուք ճանաչում էք իմ Լուիզային և պարտաւոր էք սիրել նրան. դուք չէք կարող չը սիրել նրան, ինչպէս ես եմ սիրում բոլոր սրտով... Բոլոր սրտով...

Առաջին անգամ Մօրիսը արտասանեց այդ խօսքերը ակացիայի սուերի տակ կատարեալ գիտակցութեան մէջ և անհանքի տապով ու եռանդով. բայց այն ժամանակ դրանք չը լսեցին այնպիսի հրճուանքով, ինչպէս այժմ: Օ՛, երջանիկ բոպէսներ: Քնքոյշ համբոյրները նորից ծածկեցին հիւանդի այրող ճակատն ու գունատ շրթունքները և նրա անկապ խօսքերը չը կարողացան վախեցնել Լուիզային:

Հրճանքով ու յաղթանակով լի էր Լուիզայի կրծքի տակ թռթռող սիրտը, բայց միևնոյն ժամանակ նրան պատառոտում էր մի սարսափելի միտք: Նա վախենում էր, որ այդ երջանկութիւնը երկար չի տևի և շուտով կընդհատուի:

Շուտով նրա երկիւղը հաստատուեց: Մի սուեր անցաւ խրճիթի առաջից և շէմքում երևաց մի մարդ, որի արտաքինը ոչինչ սարսափ չէր արտայայտում, այլ բնականապէս, դժւար էր երևակայել աւելի ծիծաղաշարժ մի բան, քան թէ նրա դէմքն ու հագուստը: Նա մի ձեռքին բռնած էր կացինը, միւս ձեռքին մի մեծ օձ, որի պոչը վերջանում էր մի շարք օղակաձև բոժոժներով: Դժւար չէր գուշակել թէ այդ օձը որ տեսակին էր պատկանում:

Երբ որ այդ մարդը խրճիթը մտաւ և նկատեց այն փոփոխութիւնը, որ առաջացել էր նրա բացակայութեան ժամանակ, նրա դէմքն ընդունեց ծայրահեղ զարմանքի այնպիսի մի արտայայտութիւն, որ նրան նայողը հազիւ կարող էր գտնել իւր ծիծաղը:

— Սնրբ Պատրիկ, — բացականչեց նա աչքերը չռելով և ձեռքի բեռը վայր ձգելով: — Արդեօք երանգ չէ այս: Այո՛,

պէտք է որ երազ լինի: Միթէ այդ դուք էք, միսս Պօյնդեքստեր: Ինչպէս է պատահել որ...

— Այո՛, ես եմ, միստեր ՕՐէայէ: Լաւ բան չէ ձեր կողմից այդպէս շուտ մոռանալ ինձ:

— Ես մոռանամ ձեզ, միթէ այդ հնարաւոր է: Ինչպէս կարող եմ մոռանալ ձեզ, որ իւր կեանքում գոնէ մի անգամ տեսել է ձեր գեղեցիկ դէմքը, միշտ կը յիշէ ձեզ: Ահա մեզ մօտ կայ մի մարդ, որ զառացանքի մէջ անգամ չի կարողանում մոռանալ ձեզ:

Նա ցոյց տուեց հիւանդին, որ ժամանակ քաղցր հրճանք արտայայտեց Լուիզի դէմքը:

— Ի՞նչ է նշանակում այս ամենը, — շարունակեց Փելիմը Լուիզային դառնալով: — Որտեղ է այն երիտասարդը... տիկինը... օրիորդը... ճիշտն ասած՝ չը գիտեմ ինչ անուն տամ նրան: Միսս Պօյնդեքստեր, չը տեսնե՞ք այստեղ մի կնոջ:

— Այո՛, տեսայ:

— Ա՛, ուրեմն դուք տեսել էք նրան: Այժմ նա որտեղ է:

— Պէտք է որ գնացած լինի:

— Գնացած լինի: Շատ շուտ է փոխել նա իւր միտքը: Տասն բոպէ չը կայ, որ ես թողեցի նրան այստեղ ու գնացի: Նա վերցրաւ գլխարկը և, կարծես թէ մտադիր էր երկար ժամանակ մնալ այստեղ: Ասում էք, որ նա գնացել է: Խոստովանում եմ, միսս Պօյնդեքստեր, որ շատ ուրախ եմ, որ նա գնացել է: Նա ձեռքին ատրճանակ ունէր և այնքան ճարպիկութեամբ էր գործածում իր ատրճանակը: Կհաւատնե՞ք, օրիորդ Պօյնդեքստեր, որ նա քիչ էր մնում ինձ սպանէր:

— Միթէ և ի՞նչու համար:

— Նրա համար, որ ես թոյլ չէի տալիս նրան խրճիթ մտնել, բայց և այնպէս նա գնաց տիրոջ մօտ, ասենք

միստրը Ստուժպն էլ դրա դէմ ոչինչ չունեցաւ, որովհետեւ նա յայտնեց, որ ինքը միստր Մօրիսի բարեկամն է և եկել է նրան խնամելու:

— Միթէ. բայց դա զարմանալի է, շատ զարմանալի է...:

— Այստեղ վերջերս ամէն բան զարմանալի է, միսս:

— Մէրելի Ֆելիմ, պատմեցէք ինձ ուրեմն այն բոլոր բաների մասին, որ պատահել են այստեղ:

— Այդ դէպքում, օրիորդ, դուք այստեղ պէտք է մըշաք երկար, որովհետեւ այն բոլոր խորիմաստ բաները, չի կարելի մի օրում պատմել:

— Միթէ մեզանից առաջ այստեղ ուրիշ մարդիկ էլ են եղել:

Այո, շատ մարդիկ, միսս, ամեն տեսակի և գոյնի մարդիկ:

Ամենից առաջ ասեմ ձեզ մէկի մասին, որ բոլորից զարմանալի մարդն էր, սակայն... նրա մասին չեմ համարձակուում խօսել, դա կարող է ձեզ վախեցնել...:

— Պօտէք համարձակ, ես այնքան էլ վախկոտ չեմ...:

— Բայց սա շատ սարսափելի բան է, գոնէ ես չեմ կարողանում առանց երկիւղի նրա մասին յիշել: Այդ մարդը մի ձիաւոր էր, որ գլուխ չունէր:

— Գլուխ չունէր...:

— Նոյն իսկ գլխի հեռքն անգամ չկար նրա վրայ: Բայց ինչ որ աւելի զարմանալին էր, օրիորդ, նա ամեն բանով նման էր միստեր Մօրիսին, ինչպէս ջրի երկու կաթիլներ նման են իրար: Նոյն ձին, նոյն մեքսիկական ծածկոցը ուսերի վերայ, նոյն իսկ ձի նստելը շատ նման էր միստեր Մօրիսի նստելուն: Երբուհում եմ Աստուծով, որ նրան տեսնելով շատ վախեցայ:

— Բայց ո՞րտեղ տեսար նրան, միստեր ՕՐէալ է...:

— Ահա այնտեղ, քարափի վերայ: Ես գնացել էի տիրոջ զիմաւորելու, որ զի զից պիտի վերադառնար այդ առաւօտ, նրան հեռուից տեսնելուս պէս ճանաչեցի և ուրախացայ, բայց երբ նա քիչ մօտեցաւ ինձ, նկատեցի, որ գլուխ չունի: Ես սարսափեցի, բարեբաղդարար նա շուտ հեռացաւ խրճիթի շրջակայքից: Թարան հաշելով հետեւեց նրան, իսկ ես սարսափահար վերադարձայ խրճիթ ու պառկեցի, բայց երկար ժամանակ քունը չէր մօտենում աչքերիս: — Հաւանօրէն մէկը հանաք է արել ձեզ հետ, միստեր Ֆելիմ:

Այո, այդպէս էլ ասում էր Ձեքը:

— Միթէ նա էլ այստեղ էր:

— Այո, այո, միայն բաւական ուշ եկաւ ուրիշներից...:

— Ուրիշները... ուրեմն ուրիշ մարդիկ էլ են եղել այստեղ:

— Այո, միսս, Ձեքը եկաւ միայն երեկ առաւօտ, մինչդեռ միւսները եկել էին նախորդ գիշերը, մի բոլորովին անյարմար ժամանակ և զարթեցրին ինձ:

— Բայց ո՞վքեր էին նրանք:

— Հնդիկները:

— Հնդիկներ էլ են եղել այստեղ:

— Այո և ամբողջ մի ցեղ: Ես քնած էի, միսս, յանկարծ քնիս մէջ լսեցի թուղթ խաղացողների ձայներ... երկիւղը սախում է ինձ դադարեցնել իմ պատմութիւնը: Բայց այս ինչ է... լսում էք ձիու ոտնաձայն, այն էլ շատ մօտ մեր խրճիթին:

Եւ առանց պատասխանի սպասելու իուրանդացին վագեց դէպի դուռը:

— Սուրբ Պատրիկ, արդէն մեր խրճիթը շրջապատւած է ձիաւորներով, այն էլ հազարաւոր ձիաւորներով և դեռ շատերն էլ գալիս են: Երևի դրանք են այն վտանգաւոր մարդիկը, որոնց մասին զգուշացնում էր ինձ ձե-

բունի Ձէբը: Հարկաւոր է դարձեալ մատակի օգնութեանը
դիմել:

Եւ վերցնելով խրճիթում յատակի վրայ ընկած կրօ-
զէնու ճիւղը, նա դուրս վազեց խրճիթից:

«Օ, Աստուած իմ, այս ի՞նչ խայտառակութիւն դուրս
եկաւ,—բացականչեց կրէօլուհին խրճիթի դռնից դուրս
նայելով. հայրս և իր ընկերներն են, որ դիմում են ուղիղ
այստեղ: Այժմ ի՞նչով բացադրեմ նրանց իմ ներկայու-
թիւնը այստեղ և արգարացնեմ ինձ: Սո՛ւրբ Կոյս, ազատիր
ինձ այս խայտառակութիւնից»:

Նա կողպեց դուռը, բայց մի րոպէ մտածելուց յետոյ
գտաւ, որ դրանով չէր կարող խրճիթ մտնելը արգելել
այն մարդկանց, որոնց ձայներն այժմ աւելի մօտից էին
լսուում: Նա նայեց շուրջը և պատի մէջ նկատեց մի բաց-
ւածք: Արդեօք չը փախչե՞լ այդ ճանապարհով: Բայց ար-
դէն ուշ էր, ձիաւորները շրջապատել էին խրճիթը ամեն
կողմից: Բացի դրանից, նրա խայտաբղէտ մուստանգը
կանգնած էր խրճիթի դռան մօտ և խրճիթին մօտեցող-
ները անշուշտ նրան ճանաչել էին:

Բացի այդ արգելքները մի ուրիշ աւելի ազնիւ միտք
էլ պատճառ դարձաւ, որ նա չփախչի. Մօրիսը վտանգի
մէջ էր, նրան չէր կարող իրան սպառնացող վտանգից
ազատել մինչև անգամ նրա անզգայ դրութիւնը: Էլ ո՞վ
կը պաշտպանէր անբաղդին, եթէ ինքը թողնէր նրան:

«Թո՛ղ խորտակւի իմ բարի անունը,— մտածեց Լուի-
զան:—Նրա համար ես կը մոռանամ հօրս, բարեկամներիս
և ամեն ինչ աշխարհումս: Երևի այդպէս է հաճելի Աս-
տրծուն. ինչ էլ ուզում է լինի, ես կը մնամ այստեղ»:

Եւ նա վճռելով սիրած մարդու համար զոհել ամեն
ինչ, մինչև անգամ կեանքը, կանգնեց հիւսնադի գլխա-
տակին:

ԼՈՒԻԶԱՆ ՍՊԱՍՈՒՄ Է.

Մուստանգերի խրճիթի շուրջը, նրա կառուցման օ-
րից սկսած մինչև այժմ, դեռ չէր լսել ձիերի այդպիսի
մի սոսկալի ստածայն, մինչև անգամ այն ժամանակ, երբ
նրա բակը լցում էր նոր բռնած մուստանգներով:

Երբ Ֆելիմը դուրս եկաւ խրճիթից, բարկացած ձայ-
ներ հրամայեցին նրան կանգնել: Մի ձայն աւելի բարձր
էր հնչում միւսներից և, նրա հրամայողական եղանա-
կին նայելով, Ֆելիմը ենթադրեց, որ այդ խօսողը խմբի
գլխաւորն էր:

—Երբէք փախչելու փորձ չ'անես, այդ քեզ չի օգ-
նիլ: Կանգնիր, ասում եմ քեզ: Եթէ մի քայլ կ'անես, իս-
կոյն գնդակը կը խրեմ ճակատիդ մէջ:

Այդ խիստ հրամանը սաստիկ ազդեց իռլանդացու
վրայ, որ դիմում էր մարգագետնի միւս կողմը, ուր կա-
պած էր Ձէբի մատակը: Նա րոպէսապէս կանգնեց:

—Ճշմարիտն եմ ասում, ջէնտլմեններ, ես չէի կա-
մենում փախչել,—մրթմրթաց նա երկիւղից դողալով, երբ
նկատեց նրանց դաժան ու վճռական դէմքերը և դէպ ի-
րեն ուղղւած հրացանները:—Ես բոլորովին դիտաւորու-
թիւն չունեմ փախչելու, միայն կամենում էի...

—Փախչել, եթէ կը յաջողւի, հա՛: Ճիշտ ես ասում:
Է՛յ, Դիկ Տրասսէյ, Շէյլտօն, կապեցէք սրա ոտ ու ձեռքը:
Ի՞նչ տարօրինակ կերպարանք: Անշուշտ սա նա չէ՛, որին
որոնում ենք: Ո՛չ, ոչ դա նրա ծառայ Ջօնն է:

—Ա՛, ուրեմն նա չէ: Է՛յ դուք, ետևի կանգնածներ,
ի՞նչ էք ապուշի պէս այս ու այն կողմ նայում. նայեցէք
սրան, որ չը փախչի: Աւելի սեղմւած կանգնեցէք, որ
մուկն անգամ առանց նկատելի չը փախչի ձեր միջից:
Դէ՛հ, աւազակ, այժմ ասիր, թէ ո՞վ կայ այստեղ, ներսը:
—Ներսը, այսինքն խրճիթում:

— Երբ որ հարցնում են քեզ, պատասխանիր հասկանալի կերպով,—ասաց Տրասսէյը՝ թողով հարևաններ հասցրելով գերիին: Ո՞վ կայ այստեղ խրճիթում:

— Տէր Աստուած, ինչ անեմ: Երևի հարկաւոր է ասել: Առաջինը՝ այստեղ է իմ տէրը:

— Այս ի՞նչ է,—հարցրեց Վուդլէյ Պոյնդեքստերը մօտենալով խրճիթին և ցոյց տալով խայտաբղետ մուտանդէ՛: — Կարծես թէ Լուիզայի մուտանդն է սա:

— Այո, քեռի, նա է,—պատասխանեց Կասսիյ Կէլիօունը, որ գնում էր նրա կողքից:

— Զարմանալի է: Բայց ո՞վ կարող է բերել նրան այստեղ:

— Հաւանական է, ինքը Լուիզան:

— Այդ ի՞նչ անհաճելի բան է: Կաստիկ ես անում, ինչ է, Կասսիյ:

— Երբէք, ես բոլորովին լուրջ եմ խօսում:

— Կամենում էք ասել, որ իմ աղջիկն այստեղ է գրել:

— Նա այժմ էլ այստեղ է:

— Այդ անկարելի է:

— Ահա, տեսէք ինքներդ:

Խրճիթի դուռը բացեց և ներսում երևաց մի կնոջ կերպարանք:

— Աստուած իմ: Իմ աղջիկը:

Պոյնդեքստերը ցած թռաւ ձիուց և Կէլիօունի ուղեկցութեամբ մտաւ խրճիթը:

— Լուիզան, ի՞նչու համար ես եկել այստեղ: Այս ի՞նչ է, վիրավոր: Այդ... այդ Հենրիին է...

Մինչև Լուիզայի պատասխանելը, հօր հայեացքն ընկաւ գլխարկի և վերաբուրի վրայ, որոնք Հենրիին էին պատկանում:

— Նա կենդանի է: Փնօք Ամենաբարձրեալին:

Պոյնդեքստերն շտապով մօտեցաւ հիւանդի անկողնին: Մի ակնթարթում նրա ուրախութիւնը հիասթափման փութեց, երբ նկատեց բարձի վրայ գունատ դէմքը, որ իր որդուն չէր պատկանում: Անբաղդ հայրը հառաչելով ու տատանւելով յետ կանգնեց:

Ըստ երևոյթին Կէլիօունը նոյնպէս ապշած էր մնացել իւր տեսածով, նրա շրթունքներէց դուրս թռաւ երկիւղի մի բացականչութիւն և շտապով դուրս վազեց խրճիթից:

— Տէր Աստուած, ի՞նչ է նշանակում այս ամենը,—բացականչեց ազարակատէրը: — Բացադրի՛ր ինձ, Լուիզան:

— Ես ոչինչ չը գիտեմ, հայր: Ինքս էլ ձեզանից մի քանի ըրպէ առաջ եկայ այստեղ և գտայ նրան նոյն դրութեան մէջ, ինչ դրութեան մէջ այժմ տեսնում էք: Նա տաքութեան մէջ է:

— Իսկ Հենրիին:

— Նա ոչինչ չ'ասաց ինձ նրա մասին: Միստեր Հեւալըը միայնակ էր, երբ ես ներս մտայ, իսկ նրա ծառան հէնց նոր վերադարձաւ:

— Բայց դու ի՞նչու համար ես եկել այստեղ:

— Ես չը կարողացայ այլ ևս մտալ անյայտութեան մէջ: Ինձ համար զարհուրելի էր միայնակ նստել տանը: Իմ միտքը, թէ իմ անբաղդ եղբօր... Օ՛, Աստուած իմ:

Պոյնդեքստերը մի ուշադիր և զննող հայեացք ձգեց աղջկայ վրայ:

— Ես կարծեցի թէ կարող եմ Հենրիին այստեղ գրտնել, վրայ բերաւ իսկոյն աղջիկը:

— Այստեղ: Եւ ինչպէս եկա՞ր գտար այս խրճիթը, դու միայնակ ես եկել, թէ առաջնորդ ես ունեցել:

— Բոլորովին միայնակ, հայր, առաջին անգամ ես եղել եմ այստեղ, երբ իմ մուտանդը ինձ փախցրեց, տափաստանի պիկնիկի օրը: Զիս ինձ այս կողմերը բե-

րեց, որտեղերում և ինձ ճարեց Մօրիս Հերալդը և երբ վերադառնալիս անցնում էինք խրճիթի մօտով, նա ինձ յայտնեց, որ ինքը այս խրճիթումն է բնակւում: Ես բուրովին միայնակ եմ եկել այտեղ:


Պօյնդեքսերին դիւր չեկան աղջկայ տուած բացազրութիւնները, նրա դէմքը մռայլեց, հայեացքը սկսեց արտայայտել խորին դժգոհութիւն:

— Լուիզա, քո վարմունքը շատ անմիտ ու վտանգաւոր է եղել, շուտ հեռացիր այտեղից և շտապիր տուն, այտեղ կ'նոջ, այն էլ քեզ նման կ'նոջ տեղ չէ: Այտեղ կարող է տեղի ունենալ այնպիսի տեսարաններ, որոնց սկանառես լինել քեզ համար այնքան էլ ցանկալի չէ: Դ

Լուիզան դժգոհութեամբ հնազանդւեց հօրը, նրա հետ միասին գուրս եկաւ խրճիթից և մօտեցաւ իր ձիուն:

Մինչ ծերունի ազարակատէրը խրճիթումն էր, իր ուղեկիցները խսկոյն հաւաքւեցին խրճիթի առաջ և ցանկացան նոյնպէս ներս մտնել: Կէլիօունն այդ բանը աւելորդ համարեց, որին հետեւեցին և՛ միւսները, որոնք հաւաքուեցին ձեւիմի շուրջը, որ կապտուած ձգւած էր խոտերի վրայ: Նրա լեզուն էր միայն ազատ: Նրան հարցաքննում էին, թէ և այնքան էլ հաւատք չընծայելով նրա ասածների ճշմարտութեանը:

Երբ որ հայր և աղջիկ գուրս եկան խրճիթից, բուրրը լռեցին և սկսեցին հետաքրքրութեամբ նայել նրանց կողմը: Շատերը ճանաչում էին աղջկան և զարմանում, որ սպանւածի քոյրը սպանողի տանն է գանւում: Այն համոզմունքը, որ Մօրիսն է եղել սճրագործը, աւելի հաստատուեց, երբ Կէլիօունը յայտարարեց վերարկուի և զրլխարկի մասին և թէ մուստանգերն էլ վիրաւորել է յանցանքը գործելու ժամանակ: Բայց ի՛նչու համար Լուիզա Պօյնդեքստերը այտեղ է, այն էլ մենակ, առանց ուղեկիցների: Մի՞թէ հիւր է եկել: Լուիզայի ազգական Կէլ-



... Մի քանակ գալիս աստիկ բախով յարակեցին երեսօտորի վրայ բայց նա դանակով աջ ու ձախ հարւածելով... (Երես 216)

Չիս Գրիգէ կարգաւորել եւ ի վերջում
 Գրիգոր սրբաբանու իրոյ՛ն, անժամաց իր
 վար կողմէ՛ր զիս հեղեղաւի լաւագործ
 Բարսեղ Է: Բարսեղաւոր շնորհալից
 Է Գրիգորի, այդպէ՛ն. Գրիգէ կարգու
 Լով, զիս պարկեւորացաւ եւ, թե
 չարաւ Է ~~Գրիգոր~~ Կրիստոս եւ Գր
 Կրիստոս. ի վերջում Բարսեղ իր Եր
 չի հեղեղաւ Երկարացաւ Է կա
 Երկարացաւ իր Երկրի յիջ:

1. Երկրորդ կարգաւորուած կողմէս
 որ հեղեղաւի անարժան Բարսեղ
 Է Բարսեղի, այնպիսի Երկրորդաւ,
 Բարսեղ անժամ Կրիստոս Է Գրիգոր

3. Գրիգոր: Երկրորդ Երկր Է, որ Եր
 Կրիստոս Է Գրիգոր Երկր Է, որ Եր
 "Մարգարէ Երկր, որ անժամ Կրիստոս
 անարժան Է զուրկաւ"

Գրիգոր Երկր Երկր 22 / II 53R
 Մարգարէ 8-ին

հունը այդ մասին չէր կարողանում ոչ մի բացադրու
 թիւն տալ հետաքրքրողներին:

— Գնահ, Լուիզան, միտեր Եանսէյը կ'ուղեկցէ քեզ:

Երիտասարդ ազարակատէրը, որի անունը տւաւ Պոյն
 դեքստերը, պատրաստակամութեամբ իւր ծառայութիւնն
 առաջարկեց օրիորդին: Իսկ այն շատերից մէկն էր, որոնք
 նախանձում էին կապիտան Կէլհունի կարծեցեալ երջան
 կութեանը: Նա ի բոլոր սրտէ շնորհակալ էր Պոյնդեքս
 տերից, որ իրեն առաջարկեց այդպիսի մի հաճելի գրո
 սանք:

— Բայց չի՞ կարելի սպասել ձեզ, հայրիկ, — ասաց
 Լուիզան: — Միթէ դուք երկար պիտի մնաք այստեղ:

Եանսէյի դէմքի վրայ անհանգստութեան արտայայ
 տութիւն երևաց:

— Ես կ'ամենում եմ, որ դու գնաս այստեղից և յոյս
 ունեմ, որ այդ բաւական է քեզ համար:

Եանսէյը նորից սկսեց յուսալ, թէ և լաւ ծանօթ լի
 ներով ջանել կրէօրուհու հպարտ բնաւորութեանը, կասկա
 ծում էր, որ նա կը կատարէ հօր հրամանը: Սակայն ադ
 ջրիկը, հազիւ թագցնելով իւր դժգոհութիւնը հետաքրքր
 ւած հանդիսատեսների ամբօխի առաջ, հնազանդւեց հօրը:

Նրանք ճանապարհ ընկան. երիտասարդ ազարակա
 տէրը գնում էր առաջից ուրախ և գոհ դէմքով, իսկ Լուի
 զան հետևում էր նրան տխուր ու մտախոհ: Եանսէյին չէր
 դարձացնում իւր ուղեկցուհու մեղամաղձոտ դէմքը, նա
 Լուիզայի տխրութիւնը վերագրում էր սիրելի եղբոր կորստ
 եան առթած ցաւին: Բայց եթէ նա աւելի ուշադրու
 թեամբ դիտէր Լուիզայի դէմքը, կարող էր նկատել, որ
 այդ դէմքն աւելի շուտ երկիւղ և անհանգստութիւն էր
 արտայայտում, քան թէ խաղաղ և լուռ վիշտ, կորածի
 մասին:

Նրանք շարունակում էին աւելի խորը մտնել անտա

ոի մէջ, բայց դեռ ևս կարողանում էին լսել յեա մնացած մարդկանց ձայները: Յանկարծ շահել աղջկայ դէմքը պայծառացաւ, կարծես թէ նրա կորած յոյսը նորից վերադարձաւ: Նա պահեց իւր ձին, նրա ուղեկիցը հարկադրուած էր նոյնպէս կանգնել:

— Միտեր Եանսէյ, — ասաց Լուիզան. — Ինձ համար շատ արյարմար է նստել թամբի վրայ, երևի փորկապերը թուլացել են: Բարի եղէք ամբացնել:

Եանսէյն ուրախութեամբ ցած թռաւ ձիուց և դիտեց փորկապերը: Նրա կարծիքով ամբացնելու կարիք չը կար, բայց, այնուամենայնիւ, նա չը հակառակեց և սկսեց փոքրը ինչ ձգել փոկերը:

— Սպասեցէք, — ասաց Լուիզան. — Սյդպէս անյարմար է, թոյլ տւէք ցած իջնեմ ձիուց:

Եւ նա չսպասեց որ ուղեկիցն օգնէր, այլ իսկոյն ցած թռաւ թամբից ու կանգնեց ձիու մօտ: Երիտասարդը սաստիկ կարմրած լարւած գրութիւնից, շարունակ ձգում էր փոկերը: Վերջապէս նա փոկը հագցրեց մի ծակ և ամբացրեց:

— Կարծեմ այժմ լաւ կը լինի միսս Պոյնդեքստեր, — ասաց նա:

— Հաւանական է, ասաց Լուիզան և ձեռքը դնելով թամբի վրայ, փորձեց շարժել: — Այո, շատ լաւ է: Բայց ափսոս, որ պէտք է շուտով հեռանանք այստեղից: Ես հէնց նոր եմ եկել այստեղ և իմ խեղճ Լիւնին չափազանց յոգնած է: Սպասենք մի քիչ, մինչև որ նա կը հանգստանայ:

— Բայց, միսս Պոյնդեքստեր, չէ որ ձեր հայրը կամենում էր, որ դուք...

— Որ ևս տօ՛ւն գնամ: Օ՛, այդ միկնոյն է: Նա կամենում էր միայն ինձ հեռացնել այն կոպիտ մարդկանցից: Ես արդէն գիտեմ որ, հէնց որ մենք հեռացել

ենք այստեղից, նա իսկոյն մոռացել է իմ մասին: Ինչ գեղեցիկ տեղ է: Ինչպէս հոյ է այստեղ, այս սաղարթախիտ ծառերի տակ, իսկ տափաստանում այժմ արեգակն այրում է: Սպասենք մի քիչ, թող իմ խեղճ Լիւնին հանգստանայ, իսկ մինչ այդ մենք դիտենք ձրկաների խաղը. նայեցէք, միտեր Եանսէյ, ինչպիսի գեղեցիկ արարածներ են:

Երիտասարդ ազարակատէրը սիրով համաձայնեց նրա առաջարկութեան հետ: Նա կարծում էր, թէ դուցէ իւր ընկերակցութիւնը հաճելի է գեղեցիկ ուղեկցուհու համար, որ կամենում էր երկար ժամանակ մնալ այստեղ իր հետ միասին, իսկ ենթադրել թէ նա, յիրաւի, հետաքրքրւում էր գետի մէջ խաղացող արծաթափայլ ձկներով, բոլորովին աւելորդ էր:

— Ձեր ցանկութիւնն ինձ համար օրէնք է, — ասաց երիտասարդ Եանսէյը. — որքան դուք երկար մնաք այստեղ, այնքան ես երջանիկ կզգամ ինձ:

— Ո՛չ, մենք միայն միջոց կը տանք մեր ձիերին հանգստանալու: Ես հէնց նոր էի ցած իջել ձիուց, երբ դուք եկաք: Տեսէք ինչպէս ծանր է շնչում խեղճ կենդանին:

Եանսէյը համաձայն էր կատարել իւր ուղեկցուհու ցանկութիւնը, բայց նրան զարմացնում էր այն հանգամանքը, որ Լուիզան, ըստ երևոյթին, շատ քիչ էր զբաղւում արծաթափայլ ձկներով և մուստանգով: Նա շատ ուրախ կը լինէր, եթէ կարողանար դրանով Լուիզայի ուշադրութիւնը գրաւել: Նրա բոլոր փորձերն ի դուր անցան. Լուիզան անմտաբար նայում էր այս ու այն կողմը և լարւած ուշադրութեամբ ախանջ էր դնում խրճիթի մօտից լուող ձայներին: Եանսէյը նոյնպէս սկսեց ախանջ դնել. նա արդէն գիտէր, որ այստեղ, խրճիթի առաջ, Լիւնի օրէնքով մի սարսափելի տեսարան է կատարւում:

Նրանց ականջին էին հասնում գրգռած խօսակցութեան ձայներ: Այդ ձայները հնչում էին դաժան և վրձնական կերպով: Երկուսն էլ շարունակում էին ականջ դնել: Լուիզան ինչպէս տրադիկ գերասանուհի, կուլիսնե-րի ետևում սպասում էր իւր դուրս գալուն:

Լսում է մի քանի ձայների թնդիւնը, յետոյ մէկն սկսում է ճառախօսել: Լուիզային ծանօթ է այդ ձայնը, նա պատկանում էր Կասսին: Նա խօսում է բարկացած, թախանձագին, կարծես թէ կամենում է համոզել իւր կարծիքին հակառակող ունկնդիրներին:

Նա վերջացրեց իւր ճառը, լսում են քաջալերութեան բացականչութիւններ և բարձրաձայն աղաղակներ, որոնք բովանդակում էին մի սարսափելի միտք միայն:

Երիտասարդ ագարակատէրը բոլորովին մոռացել էր իւր խնամատարութեան յանձնուած աղջկայ մասին. նա ուշքի եկաւ միայն այն ժամանակ, երբ տեսաւ, որ Լուիզան շուռ տուաւ ձիու դուխը և շտապով յետ արշաւեց դէպի խրճիթը:

Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ը .

Այն աղմկալի աղաղակները, որոնք հարկադրեցին շահել կրէօլուհուն այնպէս յարկարձակի թողնել իւր ուղեկցին և հեռանալ դատաւորների բացականչութիւններն էին, որոնք արդէն մի դաժան և անողորմ դատավճիռ էին կայացրել, այն է, մահուան դատապարտել Մօրիս Հերալդին: Սարսափելի խօսքը—«կախել»—կայծակահար արաւ Լուիզային:

Լուիզան, որ երիտասարդ ագարակատիրոջը թւում էր թէ խորասուզած դիտում էր գետի մէջ խաղացող ձկներին, մտքով գտնւում էր ոչ թէ անտառում, այլ այնտեղ խրճիթի առաջ, մարգագետնում, ուր այդ միջոցին տեղի էր ունենում մի վայրենի գործողութիւն: Թէև սաղար էր ունենում մի վայրենի գործողութիւն: Թէև սաղար-թախիտ ծառերը խանգարում էին Լուիզային տեսնել այն՝ ինչ որ կատարւում էր, բայց նա, լաւ ճանաչելով դերա-կատարներին և լսելով նրանց խօսքերը, հեշտութեամբ կարողանում էր հետևել գործողութեան ընթացքին:

Օրինակատարները, որ առաջ ցրւած էին, հաւաքու-ցին մարգագետնի մէջ տեղը և մի շրջան կազմեցին: Այդ շրջանի մէջտեղը քնացին նախագահը, նրա երեք չորս «մարշալները», Վուդլէյ Պօյնդքստերն ու Կասսիյ Կէլ-հօունը: Վերջին երկուսը անձամբ չէին մասնակցում գր-բամային, այլ միայն ներկայ էին՝ որպէս վկաներ:

Դատն սկսեց Լինչի օրէնքով, մի սարսափելի և անու-ղորմ դատ: Օրէնքի ներկայացուցիչը, օրինակատարների ղեխաւոր՝ Սէմ Մանլէյն էր, իսկ երդուեալներն էին—այն բոլոր անձինք, որոնք հաւաքուել էին մուստանգերի խր-ճիթի առաջ, մեղադրեալներն էին—Մօրիս Հերալդն ու նրա ծառայ ֆելիմը, որոնց ոտ ու ձեռները կապկպած ձգել էին շրջանի մէջ տեղը խոտերի վրայ: Բացի այդ, նրանք կոխել էին Մօրիսի բերանը մի փայտ, որպէսզի նրա զառանցանքները չխանգարէին գա-

սուտորների դատողութիւնները:

Սպանութեան մէջ մեղադրում էին միայն տիրոջը, իսկ ծառային համարում էին նրա մեղսակիցը:

Հարց ու փորձի ենթարկեցին միայն ծառային, որովհետև բոլորովին անօգուտ էին համարում հարցեր առաջարկել նրա տիրոջը: Օրինակատարները հրամայեցին Ֆելիմին պատմել բոլորը, ինչոր յայտնի էր նրան: Հարցըրին նոյնպէս թէ նա ինչ կարող է ստել իւր արդարացման համար: Իոյանդացին պատմեց նրանց իւր բոլոր արկածները, որոնք այնքան տարօրինակ էին, որ չէր կարելի հաւատալ նրանց, թէև նրա պատմութեան ամենաանհաւատալի մասը, անգլուխ ձիաւորին հանդիպելը, ոչ ոքի չը զարմացրեց: Ի հարկէ, Ֆելիմը չէր կարող բացազրել այդ տարօրինակ երևոյթը. նրա պատմութիւնը միայն հաստատեց օրինակատարների կասկածը, որոնք ենթադրում էին թէ անգլուխ ձիաւորը առնչութիւն ունի կատարած ոճրագործութեան հետ:

— Ինչ որ զրոյցներ է հնարել հնդիկների և վագրերի մասին, որպէս զի մեզ վախեցնէ, — ասում են նրա ունկընդիրները: — Այդ բոլորը սո՛ւտ է:

Գործի քննութիւնը տան ըոպէից աւելի չը տեսց: Դատաւորների մեծամասնութիւնը, որոնք կանխօրէն նախազգուշացրած էին, այժմ վերջնականապէս համոզեցին, որ Հէնրի Պոյնդեքստերն սպանւած է և սպանողը Մօրիս Հերալդն է:

Նորից քննեցին նրա մեղաւորութեան բոլոր ապացոյցները, որոնց վրայ աւելացրին և նորերը, այն է՝ սպանւածի գլխարկն ու վերարկուն, որ գտնւել էին մուստանգերի խրճիթում:

Իոյանդացու անկապ և անսրոշ բացազրութիւններին ոչ ոք չէր հաւատում: Եւ միթէ կարելի էր հաւատալ: Այդ ամենը մարդասպանի համախոհի հնարած արդարա-

ցումներն էին: Այլ ևս չէին կամենում լսել նրան. ամբօխի միջից լսեցին անհամբեր աղաղակներ:

— Կախել մարդասպանին:

Գեանի վրայ արդէն ձգւած կար մի պարան, որ կարող էր փոխարինել կախելու մի լաւ գործիքի, իսկ դատավայրից քիչ հեռու, կար մի յարմար ծառ, որը կատարելապէս կ'փոխարինէր կախաղանի: Սկսեցին ձայներ հաւաքել: Դատին մասնակցող հարիւր անդամներից ութսունը վճռեցին, որ Մօրիսը պէտք է մեռնի: Տեղի ունեցաւ ըոպէական ընդմիջում: Ոչ ոք ձեռք չէր մեկնում պարանին, չ'նայելով մեծամասնութեան համոզմունքին և Կէլհօունի համոզեցուցիչ ճառին:

Բանը նրանումն էր, որ փոքրամասնութիւնը, որոնց և համամիտ էր ինքը դատաւոր Սէմ-Մանլէյը, հակառակ էին այդ վճռին:

— Համաքաղաքացիներ, ասաց Սէմը, հէնց որ ձայները քիչ հանդարտւեցին:

Ես այն կարծիքին եմ, որ գործի մէջ կան շատ չը պարզաբանւած կէտեր, որոնց մենք անուշադիր օչենք կարող թողնել: Ես անհրաժեշտ եմ համարում լսել և մեղադրեալին, երբ նա կարող կ'լինի պատասխանել մեզ: Այժմ դուք ինքներդ տեսնում էք, որ նրան հարց ու փորձ անել անօգուտ է: Նա լաւ հսկողութեան տակ է և եթէ անոյն իսկ յանցուոր էլ լինի, հնարաւորութիւն չի ունենայ փախչելու: Դրա համար էլ ես առաջարկում եմ յետաձգել դատը, մինչև...:

— Ի՞նչու համար յետաձգել, տաքացած ոտքի է կանգնում Կէլհօունը: Ի՞նչ լաւ էք խօսում, Սէմ-Մանլէյ. բայց եթէ ձեր բարեկամը կամ, ազգականը մեռած լինէր այսպիսի անարգ կերպով, այն ժամանակ դուք, հաւանօրէն, այդքան մեղմ չէիք լինի: Այլևս ի՞նչ է հարկաւոր մեզ,

որպէս զի մեղաւոր ճանաչենք այս անպիտանին: Աւելի պարզ ապացոյցներ... այո՞... լաւ...:

— Ունի՞ք դուք այդ ապացոյցները միտք կասսիյ, իուլանդական զօրեղ առողջանութեամբ հարցրեց մի ձայն:

— Այո, ունիմ...:

— Ապա, յայտնեցէք մեզ:

— Փառք Աստուծոյ, արդէն բերւած են այնքան պարզ ու հաստատուն ապացոյցներ, որոնք բաւական էին նոյն իսկ ամենափոքրօրի դատաւորին համոզելու, եթէ նա կամենար համոզուել:

— Սուէք առանց սրան կամ նրան վիրաւորելու, միտարր կէլիօուն: Մի մոռանաք, որ դուք Տեխասումն էք գտնուում և ոչ Միսսիսիպիում:

— Ես ցանկութիւն չունիմ ոչ ոքի վիրաւորել և պատրաստ էի յայտնել այն, ինչ որ գիտեմ, եթէ միայն ես դա կարևոր համարէի: Դուք գիտէք այն ամենը, ինչ որ պատահել է իմ և այս մարդու մէջ և կարող էք ենթադրել, որ ինձանում խօսում է վրէժխնդրութիւնը: Բայց եթէ կամենում էք անպատճառ լսել իմ ցուցմունքները... ես համոզւած եմ... որ...:

Կէլիօունը սկսեց կակազել, նրա շրթները դողդողացին, որը որոշ սպաւորութիւն թողեց ունկնդիրներին վերայ:

Վայրկենական տատանումից յետոյ նա շարունակեց. այո, եթէ ես հաւատացած չ'լինէի որ այս մարդն է ոճրագործը, այն ժամանակ ես չէի ասիլ ոչ մի խօսք այդ մասին. այն, ինչ որ ես տեսել կամ աւելի ճիշտը, լսել եմ, ինձ իրաւունք է տալիս պնդելու, որ այս անպիտանն է ոճրագործը:

— Ի՞նչ էք լսել, որտեղ և երբ, ասացէք, թող ձեզ չվախեցնի այն հանգամանքը, թէ մեղադրեալի հետ ձեր ունեցած հակառակութիւնը կարող է մեզ կասկած ներշնչել ձեր ասածների ճշմարտութեան մասին:

— Այդ պատահեց այն գիշերը, որի երկրորդ օրը անյայտացաւ իմ ազգականը:

— Այսինքն երեքշաբթի գիշերը...:

— Այո: Ես պառկել էի քնելու և համոզւած էի, որ Հենրին էլ նոյնն էր արել, բայց տօթր ինձ հնարաւորութիւն չառուեց քնելու: Իրա համար էլ նորից վեր կացայ, ծխեցի և որոշեցի դուրս գալ կարան դիտարանը: Կէս գիշերուայ մօտ էր. յանկարծ լսեցի ձայներ գետի կողմից: Սօսում էին այնքան բարձր, որ խօսողները իւրաքանչիւր արտասանած վանկը լսում էի ես և որ ինձ համար շատ բան պարզեց: Բարձր ձայնով այդ վիճողները էին Հենրին և Մօրիսը, որ այժմ պառկած է մեր առաջ:

— Շարունակեցէք, միտք կէլիօուն, մեզ հարկաւոր է ձեր ամբողջ ցուցմունքը, իսկ յետոյ ժամանակ կ'լինի լսելու և ձեր անձնական ենթադրութիւնները:

— Հեշտ է երեւակայել, պարոններ, որ ես առանց դարմանքի չ'լսեցի իմ ազգականի ձայնը, որին համարում էի քնած: Ես այնքան պարզ որոշում էի ձայները, որ նոյն իսկ հարկաւոր չը համարեցի ստուգել թէ արդեօք Հենրին սենեակումն է, թէ ոչ. միայն դարմացայ, թէ ինչու նա հակառակ իր սովորութեան, դուրս էր գնացել այնքան վաղ: Որքան աշխատեցի լսել ու հասկանալ վէճի պատճառները, ինձ չ'յաջողուեց այդ. լսում էի միայն, որ Հենրին գործ ածեց բաւական սուր խօսքեր ու դարձւածքներ, ինչպէս մի վիրաւորւած մարդ, իսկ իուլանդացին իւր կողմից սպառնալիքներ արաւ: Պատրաստեցի դնալ գործը իմանալու, բայց մինչ կօշիկներս կ'հագնէի, նրանց ձայները դադարեցին և վէճը վերջացաւ: Էլի կէս ժամ սպասեցի Հենրիի վերադարձին, բայց որովհետեւ նա չ'վերադարձաւ, այն ժամանակ ես ենթադրեցի, որ երևի մէկը նրան հիւրանոցում ուշացրած կ'լինի... և գնացի քնելու:

Այժմ պարոններ, ես յայտնեցի այն, ինչ որ գիտեմ.
Իմ խեղճ ազգականս այլ ևս չ'վերադարձաւ Կազա-դէյ-Կօրվօ:

— Ակներև է, որ նրա անկողինը եղել է այդ գիշեր չոր
գետինը և նրա ճիշտ տեղը կարող է ցոյց տալ միմիայն
մի մարդ, վերջացրեց իր ճառը Կէլիօուճը: Վերջին խօս-
քերի հետ նա ձեռքով ցոյց տւեց մեղադրեալին, որի շըր-
ջահայեաց աչքերը պարզ ցոյց էին տալիս, որ նա շատ
լաւ հասկանում է, թէ որպիսի վրէժինդրութեամբ ուղ-
ղւած են իր կողմը մի քանի հայեացքներ:

Կէլիօուճի ճառը պարզ ասպացոյցներով չէր հաստա-
տում Մօրիսի յանցանքը, բայց և այնպէս նրա վերջին
խօսքերը կարծես էլեքտրականացրին ամբոխին:

— Կախել նրան, հնչւեցին իննսուն ձայներ:

Ինքը դատաւորը, ըստ երևոյթին տատանւում էր,
իսկ նրա համակից խումբը զգալի կերպով թուլացաւ: Շու-
տով տեսարանը վճռական ըոպէ ընդունեց: Մէկը, որ քիչ
առաջ Կէլիօուճի ականջին փսփսում էր, բռնեց հաստապա-
րանը և արագութեամբ հագցրեց մեղադրեալի պարանոցին:
Ոչ ոք չհամարձակեց բողոքել կամ կասեցնել նրան, նոյն իսկ
նա օգնող էլ ունեցաւ: Մի քանի մարդիկ միայն զարմա-
ցան այդ անակնկալ գործողութիւնը տեսնելով, բայց ի-
րենց այդ զարմանքը դեռ չբացատրւած, նրանք տեսան
պարանի միւս ծայրը հագցրած ծառի ճիւղին:

— Մի ըոպէ էլ և Մօրիս Հերալդը կաւանդի իր հո-
զին Տիրոջ ձեռքը, մտածում էին շատերը:

ՄԻ ՇԱՐՔ ՄԻՋՆԱԴԵՊԲԵՐ.

Յիրաւի նա շուտով կաւանդէր իր հողին. եթէ մի
այլանդակ միջնադէպք չը խանգարէր ոճրագործների գոր-
ծը: Այն ժամանակ, երբ դատաւորները զբաղւած էին
Կէլիօուճի ճառը լսելով, անուշադրութեան էին մասնել
Ֆելիմին, որ թուլացնելով իր կապանքները, առաջ սողաց
հանդիսականների ոտների արանքով և թագնւեց փշա-
թփերի մէջ:

Բայց իսկապէս դա այդպէս չէր:

Եւ երբ նկատեց, որ արդէն բոլորովին ծածկւել է
ամբոխի տեսողութիւնից, բոլորովին արձակեց իր կա-
պանքները և շտապեց դէպի ծերունի Ձէբի ձին: Բայց
պանքները և շտապեց դէպի ծերունի Ձէբի ձին: Բայց
ցաւալին այն էր, որ նա մոռացել էր վերցնել հանգիսա-
կանների ոտքերի տակ մնացած փուշը, իր մօտ էլ դա-
կանների ոտքերի տակ մնացած փուշը, իր մօտ էլ դա-
նակ չկար, որ կարողանար նորից կտրել: Բայց նա երկար
չտատանւեց: Հերոսական վճռականութեամբ նա ձեռնե-
րով բռնեց փուշը և դուրս հանեց նրան իւր արմատով և
ուշ չ'դարձնելով իւր արիւնոտ ձեռքերին, վստահ համար-
ձակութեամբ մի անգամ ևս տանջանքների ենթարկեց
Ձէբի խեղճ ձիուն:

Ֆելիմը իր վերջին գործողութիւնը կատարեց այն
ժամանակ, երբ խրճիթի առաջ դահիճները խնամքով ամ-
րացնում էին մեղադրեալի պարանոցին հագցրած օգակի
հանգոյցները, որպէս զի նա չը թուլանայ և բացւի, իսկ
թոկի միւս ծայրը, որ ձգւած էր թղեհու ճիւղով, բռնած
էին վճռական ու դաժան դէմքերով երկու միրուքաւոր
երիտասարդներ և անհամբերութեամբ սպասում էին դա-
տաւորների դատաւճիռները կատարելու հրամանին:

Ոչ ոք իւր իրաւունքը չէր համարում սակայն այդ
հրամանն արձակելու. ոչ ոք չէր կամենում իւր վրայ
վերցնել մի մարդու մահւան պատասխանատուութիւնը,

Թէև այդ մարդը յանցաւոր է ճանաչւած: Մինչև անգամ կէլիօունը բնազդաբար իրեն հեռու էր պահում վճռակա- նութիւնից:

Հանդիսատեսների մէջ տիրեց գերեզմանային լուռութիւն: Բոլորն էլ զգում էին մահւան մերձաւորութիւնը ամենա- սարսափելի և ամենամոռայլ ձևով առաջ բերւած մի մահ, որ հէնց իրանք էին պատրաստել: Բոլորն էլ լուռ ու սրտատրոփ սպասում էին վճռական գործողութեան, սպա- սում էին այն սոսկալի տագնապին, որ շուտով պիտի հասնէր.

Վերջապէս հասաւ վճռական րոպէն, բայց փոխանակ տեսնելու թէ ինչպէ՞ս են Մօրիսին բարձրացնում, նրանք ստիպւած էին ականատես լինել մի ուրիշ տեսարանի, որը խանգարեց ընդհատել հանդիսաւորութիւնը և հարկադրեց առժամանակ յետաձգել մահւան պատիժը:

Զէքի պառաւ մատակը յանկարծ կատաղեց, նա խոր- ինջարով պատուում էր մարգեանում: Նրա օրինակին հե- տեցին ծառերից կապած ձիերը և արձակելով կապերից՝ պատասխանեցին նրան բարձր խրխինջիւնով:

— Հնդիկներ, — աղաղակեցին բոլորը միաձայն, բայց այդ բացականչութիւնը կորաւ ընդհանուր աղմուկի մէջ:

Բացի կօմանչներից էլ ո՞վ կարող էր այդպիսի յուզ- մունք և իրարանցում պատճառել: Սարսափած դատաւոր- ները թողեցին իրենց գերին և զանազան կողմեր վախան- մի քանիսը յետ ու առաջ էին վազում մարգագետնում՝ իրենց ձիերը բռնելու, մի քանիսը պատրաստում էին զէնքերը, իսկ մնացածները երկիւղահար լուռ և անշարժ կանգնած էին մնացել:

Այդ մարդկանցից շատերը բոլորովին գործ չէին ունեցել հնդիկների հետ. մեծամասնութիւնն անփորձ մարդիկ էին, ուստի և բոլորովին կորցրել էին իրենց գը- լուխն ու չը գիտէին ինչ անեն:

Վերջապէս տեսացինները բռնեցին իրենց ձիերը և թափնեցան նրանց ետևում, որպէսզի ծածկեն հնդիկ- ների նետերից: Բռնւած ձիերը փոքր առ փոքր հանգըս- տացան, միայն Զէքի անբաղդ մատակը շարունակում էր վայրենի ձայնով աղաղակել:

Օրինակատարները նկատելով Յելիմի բացակայու- թիւնը, դուշակեցին թէ ով պէտք է լինէր այդ իրարանց- ման պատճառը: Բարեբաղդաբար նա շտապել էր ժամա- նակին թագնել անտառում և այդպիսով խոյս տալ իւր տիրոջ հետ միասին կախելու վտանգից: Մի քանի մար- դիկ ուղղեցին հրացանները և նշան բռնելով մատակին, կամենում էին սպանել: Բայց նախ քան նրանք կարձա- կէին, մէկը ձգեց արկանը ձիու պարանոցին և ստիպեց լուել...

Պաղաղութիւնը նորից վերականգնեց և ողբերգու- թիւնը շարունակուեց: Դատաւորների վճռականութիւնը երբէք չը տատանուեց: Ծիծաղելի արկածը, որ հարկադը- րեց նրանց այդպիսի իրարանցման մէջ ընկնել, ի հարկէ, փոխանակ նրանց ուրախ տրամադրութեան տակ դնելու, աւելի ևս զրգոեց ոճրագործի դէմ, որին իսկոյն շրջապատեցին:

Դարձեալ պահանջեցին դատավճուի անյապաղ իրա- գործումը, կրկին և իսկոյն գործադրել դատավճիռը:

Բայց երկնքին հաճելի էր, որ միանգամ էլ խանգարելի այդ դաժան դատավճիռը: Ծառերի միջից յայտնուեց մի պայծառ պատկեր և մի ընդհանուր շանցած, արեգակի լուսով լուսաւորւած մարգագետնում երևաց մի գեղեցիկ կին:

«Ինչպիսի գեղեցկու՞նի», մտածում է իւրաքանչիւ- ըրը, բայց ոչ ոք չի համարձակում տեղից շարժել և մի խօսք արտասանել: Մինչև անգամ ամենակոպիտ և դա- ժան մարդիկ յարգում են կնոջ ներկայութիւնը: Նրանք նայում էին շփոթւած, կարծես թէ զգում էին իրենց

միտքը:

Թեթև և պայծառ ինչպէս օդերևոյթը, նա հանդարտ անցաւ ամբօխի միջից առանց աչքը բարձրացնելու և կանգնեց խոտերի վրայ լուռ ընկած դատապարտւածի մօտ: Նա երկու ձեռքով բռնեց պարանր և դուրս կորզեց դահիճների ձեռքից, որոնք այն աստիճան յաղթահարւած էին նրա անսպասելի միջամտութեամբ, որ մինչև անգամ չը հակառակեցին նրան:

— Տեխասցիներ: Վախկոտներ,— բացականչեց նա արհամարհանքով լի մի հայեացք ձգելով նրանց վրայ:— Ամաչեցէք:

Նրանք չը կարողացան գտնել այդ թունաւոր, բայց իրաւացի յանդիմանութեան պատասխանը:

— Եւ այս կոչուում է դատաստան,— շարունակեց նա, — լաւ դատաստան է: Մեղադրել մէկին առանց հարց ու փորձի, մահւան պատժի դատապարտել նրան առանց նրա արդարացումները լսելու: Ահա՛ ձեր արդարագատութիւնը, տեխասցիներ: Ես արհամարհում եմ ձեզ, դուք դատաւորներ չէք, այլ մարդասպաններ:

— Այդ ի՞նչ է նշանակում,— գոռաց Պոյնդեքստերը մօտենալով աղջկան և բռնելով նրա ձեռքը: — Ցնորւել ես ի՞նչ է, Լուիզա: Ինչո՞ւ համար ես վերագարձել այստեղ, չէ՞ որ ես հրամայեցի քեզ տուն գնալ: Հեռացիր այստեղից այս րոպէին և մի խառնւիր մի գործում, որը երբէք քեզ չի վերաբերում:

— Ո՛չ, հայր, այդ գործն ինձ է վերաբերում:

— Սա սպանել է քո եղբօրը:

— Ո՛չ, ես չեմ կարող և չեմ կամենում հաւատալ դրան: Երբէք, երբէք: Ոչ մի առիթ չկար... Օ, պարոններ, եթէ դուք չիրաւի ազնիւ մարդիկ էք, մի վարւէք ինչպէս վայրենիներ: Դատեցէք նրան արդարութեամբ և եթէ...

— Նա դատւած է արդարութեամբ,— ասաց ամբօխ:

միջից մէկը, ըստ երևոյթին, հնազանդւելով կողմնակի ազդեցութեան:— Նրա մեղաւորութիւնն ապացուցւած է: Նա է սպանել ձեր եղբօրը և ոչ մի ուրիշը: Ներեցէք ինձ իմ անկեղծութիւնը, միսս Պոյնդեքստեր, բայց ես պէտք է ասեմ, որ դուք, պաշտպանելով պատժի արժանի այդ մարդուն, բոլորովին լաւ չէք վարւում:

— Այո, այո, ճիշտ է,— պատասխանեցին համարեա բոլոր օրինակատարները:

— Մեզ համար շատ ցաւալի է վշտացնել ձեզ, միսս, սակայն պարտաւոր ենք խնդրել ձեզ հեռանալ այստեղից: Միստեր Պոյնդեքստեր, հեռացրէք ձեր աղջկան:

— Գնանք, Լուիզա, այստեղ քո տեղը չէ՛, հարկաւոր է հեռանալ այստեղից: Ա՛, դու չես կամենում հնազանդւել ինձ: Օ՛, Աստուած իմ, աղջիկս ապստամբուում է ինձ դէմ: Ե՛կ այստեղ, Կասսիյ, բռնիր նրա ձեռքից և տար այստեղից: Եթէ դու քո յօժար կամքով չը գնաս, մենք կըստիպենք քեզ ուժով հեռանալ այստեղից: Դէ՛հ, Լուիզա, լիր, խնդրում եմ քեզ, գնա՛, հեռացիր այստեղից:

— Ո՛չ, հայր, ես չեմ գնալ այստեղից, մինչև որ դուք չը խոստանաք, մինչև որ այդ մարդիկ չը խոստանան, որ...

— Մենք ոչինչ չենք կարող խոստանալ ձեզ, միսս, ինչքան էլ որ այդ վշտալի լինի մեզ համար: Այստեղ կի՛նը գործ չունի: Կատարւած է մի ոճիր, սպանութիւն, ինչպէս ձեզ էլ յայտնի է, և մեղաւորը պէտք է արժանի պատիժը կրէ: Նրան ողորմութիւն չը կայ:

— Ողորմութիւն չը կայ— հնչւեց ամբօխի մէջ՝ ինչպէս արձագանք:— Կախել նրան, կախել:

Օրինակատարներն այլևս չը քաշւեցին կնոջ ներկայութիւնից. նրա միջամտութիւնը միայն շտապեցրեց դատավճիռի իրագործումը: Շատերը նախանձում էին գա-

ՄԻ ՆՈՐ ՄԻՋԱԴԵՊՔ ԷԼ.

տապարուածի երջանկութեանը և դեռ աւելի ատում էին նրան, նրան ցոյց տւած յարգանքի համար:

Բոլորն էլ վառուած վրէժխնդրութեամբ, բոլորովին մոռացել էին ասպետական պարկեշտութիւնը, որ կազմում է իւրաքանչիւր տեխասցու բնաւորութեան առանձնայատկութիւնը:

Հնազանդելով իւր քեռու հրամանին, Կէլիօունը հեռացրեց, կամ աւելի շուտ քարշ տւաւ իւր աղգակնունհուն դատապարտածից: Լուիզան հաւաքելով իւր բոլոր ուժերը, դուրս պրծաւ ատելի մարդու ձեռքից և հառաչելով սկսեց յանդիմանել բոլորին անմարդավայել վարմունքի մէջ:

— Հրեշներ, չարագործներ, — աղաղակում էր նա:

Բայց նրա ջանքն ի զուր անցաւ. նրա արտասուքներին, նրա յանդիմանութիւններին ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց: Կորաւ այն յոյսը, որով կամենում էր ազատել սիրած մարդուն, որի համար ուրախութեամբ կը գոհէր իւր կեանքն անգամ:

Կէլիօունը ստիպւած եղաւ լսել շատ դառն ու թունալից յանդիմանութիւններ, այնպէս որ նա զղջաց, որ իւր վրայ վերցրեց աղգակնունհուն հեռացնելու պարտականութիւնը: Այն միաբը, թէ Լուիզան կարող է մի օր իր այսօրայ վարմունքի համար վրէժխնդիր լինել, Կէլիօունին դրեց անմխիթար դրութեան մէջ, ճիշտ է, իր հակառակորդը շուտով կենդանի չի լինել, բայց ի՞նչ օգուտ դրանից, իր ձեռքից դուրս պրծած գեղեցիկ արարածը երբէք թոյլ չի տալ յօժարակամ գրկել իրան: Կէլիօունը կարող է սպանել նրա սրտին տիրացած մարդուն, բայց չի կարող ստիպել նրան՝ իրեն սիրելու:

Երրորդ անգամ դերակատարներն ու հանդիսատեսները բռնեցին իրենց տեղերը: Նորից թոկը ձգւեց թղեսու ճիւղի վրայ և նոյն երկու լրբերը նորից բռնեցին թոկի ծայրը:

Անբաղձն այժմ աւելի մօտիկ էր կորստեան, քան թէ եղել էր երբ և իցէ: Մինչև անգամ սէրը անզօր եղաւ նրան ազատելու, այժմ ո՛ւմ պաշտպանութիւնը կարող էր վայելել նա:

Գատաւորների դէմքերն այժմ ոչ թէ կարեկցութիւն, այլ անհամբերութիւն էին արտայայտում: Դատավճիռն իրագործողները նոյնպէս շտապում էին շուտ վերջացնել իրենց գործը, երևի վախենում էին նոր արգելքից: Ներանք բռնեցին թոկի ծայրը վաղուց սովոր դահիճների ճարպիկութեամբ:

Մի բուպէ էլ և ամեն ինչ վերջացած կը լինի:

— Հը՛մ, ինչ է, Բիլլ, պատրանս էք, — կանչեց նրանցից մէկը միւսին և իւր այդ հարցով ցոյց տւաւ, որ այլևս դիտաւորութիւն չունի նոր հրամանի սպասելու:

— Ամեն ինչ կարգին է, — պատասխանեց Բիլլը: —

Բարձրացնենք այս աւազակին:

Թոկը ձգւեց, բայց այնքան թոյլ, որ չէր կարող օդի մէջ բարձրացնել դատապարտածին. նա միայն բարձրացրել էր նրա գլուխը: Ըստ երևոյթին թոկը ձգում էր միայն դահիճներից մէկը:

— Հը՛մ, ինչու բերանդ բաց մնացել ես կանգնած, զբորողը տանի քեզ, — գոռաց Բիլլը՝ գարմացած իւր օգնականի գործողութեամբ:

Նա կանգնած էր մէջքը դէպի անտառը դարձրած և չը նկատեց, որ անտառից դուրս եկաւ մի մարդ, որին

տեսնելուց նրա ընկերը բաց թողեց թոկն և տեղն ու տեղը սառեց:

— Դէհ, քաշիր, — գոչեց Բիլլը: — Ձդենք երկուսով միասին, օդը բարձրացնենք նրան:

— Ո՛չ, դուք այդ չէք կարող անել, — հնչեց մի բարձրը ձայն:

Հսկայ հասակով մի մարդ, վեց ոտաչափ երկարութեամբ, հրացանը ուսին, վազելով մարդագետնով մտաւ ամբոխի մէջ:

— Ո՛չ, դուք այդ չէք կարող անել, — ասաց նա կանգ առնելով գետնի վրայ փուռած Մօրիսի մօտ և հրացանն ուղղեց թոկը բռնող դահիճների վրայ: — Եթէ՞ դու, Բիլլ Գրաֆֆին, կը համարձակես ձգել պարանը մի ութերորդ մատաչափ անգամ, այն ժամանակ ծիտով կը լցնեմ քո փորը: Բնց թող այս ըսպէին թոկը, անդգամ:

Ձէք Ստոնմայի պառաւ մատակի վայրենի խրինջոցն ու աղաղակը այնքան գորեղ տպաւորութիւն և ազդեցութիւն չ'ունեցան ներկայ եղողների վրայ, որքան որսորդի երևալը, որ եկաւ դատի տեղը հէնց ժամանակին:

Նա գրեթէ յայտնի էր բոլոր օրինակատարներին. մեծամասնութիւնը յարգում էր նրան, շատերն էլ մինչև անգամ վախենում էին նրանից: Դրանց թւին էին պատկանում Բիլլ Գրաֆֆինը և նրա ընկերը: Որսորդի հրամանը լսելուն պէս նրանք առանց հակառակելու բաց թողին թոկի ձայրը:

— Այս ի՞նչ դիւային կատակներ էք սարքել դուք այստեղ, պարոններ, շարունակեց նա՝ զարմանքից լուռ ամբոխին դառնալով: — Մի՞թէ դուք կամենում էիք կախել նրան:

— Այո, պատասխանեց մի տխուր ձայն:

— Ինչպէ՞ս: Ի՞նչ վճռել էիք կախել ձեր համաքաղաքացուն առանց դատի:

— Նա մեր համաքաղաքացին չէ նախ, երկրորդը՝ նա դատւած է Լինչի օրէնքով:

— Բռնել մի մարդու, մահուան պատժի դատապարտել և պատրաստել նրան միւս աշխարհն ուղարկելու այն ժամանակ, երբ դատապարտածը չի հասկանում մինչև անգամ թէ ինչ է կատարւում իւր հետ, — և այդ ձեզ մօտ կոչւում է դատաստան, արդարադատութիւն:

— Մեր ի՞նչ գործն է, թէ նա անզգայ է, երբ գիտենք, որ նա մեղաւոր է:

— Դէհ, այստեղ երկար խօսելու ժամանակ չը կայ: Ես չեմ սկսիլ ի զուր խօսել այնպիսի մարդկանց հետ, ինչպէս դո՛ւ, Ջիմ Ստոդգարս. իսկ դո՛ւք, Սէմ Մանլէյ, դո՛ւք, միտեր Պոյնդեքստեր, զարմանում եմ, թէ դուք ինչպէ՞ս կարող էիք համաձայնել այնպիսի մի գործի, որն ըստիս ոչ այլ ինչ է, եթէ ոչ, մարդասպանութիւն:

— Ի՞նչ գեռ բոլորը չը գիտեք, Ձէք Ստոնմայ, — վրայ բերեց դատաւորը, կամենալով արդարանալ: — Ներկայացրել են փաստեր, որոնք...

— Թող կորչեն այդ փաստերը: Դրանք միայն հնարած բաներ են և ես չեմ կամենում լսել նրանց մասին: Ահա, երբ գործը կը համնի կանոնաւոր դատաւարութեան, — ներկայացրէք այդ փաստերը, որքան հաճելի է: Բացի դրանից, ի՞նչ ունիք դուք կանոնաւոր դատի դէմ: Տեսնում էք, որ այդ երիտասարդն այնպիսի դրութեան մէջ է, որ չի կարող փախչել ձեր ձեռքից, եթէ մինչև անգամ կամենայ: Ո՞վ է դրան հակառակ:

— Ի՞նչ շատ բան էք վերցնում ձեզ վրայ, Ձէք Ստոնմայ: Ձեզ ինչ թէ այս անպիտանը մարդ է սպանել, որովհետև սպանուածը ոչ ձեր որդին է, ոչ եղբայրը և ոչ ազգականը: Ինձ թւում է, որ հակառակ դէպքում դուք բոլորովին այլ կերպ կը վարէիք:

— Ինչ էլ լինի սակայն, միտք կէլիօուն, ես չեմ

կարող ձեռներս ծալած կանգնել և հանգիստ սրտով դիտել այդպիսի մի զգուշի գործի կատարումը:

— Այստեղ զգուշի գործեր չեն կատարուում, իսկ եթէ դուք չէք կամենում դիտել, կարող էք հեռանալ այստեղից: Է՛հ, տղերք, մի՞թէ այդ պարծենկոտը կարողացաւ հարկադրել ձեզ մոռանալ ձեր պարտականութիւնը: Վերջացրէք շուտով այն, ինչ որ սկսել էք: Սպանւածի արիւնը վրէժ է խնդրում. ձգեցէք թոկը:

— Հապա մի փորձեցէք: Երդուում եմ Ամենաբարձրեալի անունով, ով որ առաջ կ'անցնի, նա գործ կ'ունենայ միայն ինձ հետ: Դուք կարող էք օգը բարձրացնել այդ անբողոքին այնքան բարձր, որքան հաճելի է ձեզ, բայց միայն այն ժամանակ, երբ Զաւուլօն Ստումպը մեռած վայր կընկնի ձեզանից մի քանիսի հետ միասին: Տեսնեմ, ո՞վ է այդ համարձակը, որ չի վախենում թոկը ձգելուց:

Ստումպի խոսքերին հետևեց խորին լուռութիւն: Ներկայ եղողներից ոչ ոք չը շարժեց տեղից՝ մասամբ վախենալով Զէբի կոչն ընդունելուց, մասամբ դէպի նրա քաջութիւնն ու անձնուրացութիւնն ունեցած յարգանքից: Բացի դրանից շատերը կասկածում էին դատավճռի արդարութեան մէջ: Ուշադիր որսորդը նկատեց ամբոխի վրայ իւր արած շահաւէտ սպաւորութիւնը և շտապեց օգուտել դրանից:

— Ուղարկեցէք այդ երիտասարդին ամբողջ և դատեցէք նրան այնտեղ օրինական կարգով, — շարունակեց Զէբը: — Դուք ուղղակի ապացոյցներ չունիք, թէ նա է կատարել ոճիրը և սատանան գիտէ. ես երբէք չեմ հաւատում և չեմ հաւատար, մինչև որ նա չը խոստովանուի իւր մեղաւորութիւնը: Ես գիտեմ, թէ նա ինչպէս էր վերաբերուում երիտասարդ Պոյնդեքստերի հետ. նա ոչ միայն նրա թշնամի չէր, այլ և բարեկամն էր և սիրում էր նրան գուցէ

աւելի, քան թէ նրա համար վրէժխնդիր լինողներից որ և է մէկը: Եթէ երիտասարդը վէճ է ունեցել իւր սիրելի եղբօր հետ, այդ դեռ ոչինչ չի ապացուցանում:

— Ի հարկէ, դուք չը գիտէք այն, ինչ որ մենք այս րոպէին լսել ենք, — ասաց դատաւորը:

— Ի՞նչ դուք ինչ էք լսել:

— Ձեր խօսքերի բոլորովին հակառակը: Մենք մեր ձեռքին ունենք ապացոյցներ, որոնք հաստատում են, որ Մօրիս Հերալդն ու Հենրի Պոյնդեքստերը վիճել են միմեանց հետ և այդ վէճը պատահել է այն գիշերը...

— Ո՞վ է ասում այդ:

— Ե՛ս, — պատասխանեց կէլիօունն առաջ անցնելով:

— Ա՛, դ՞ուք, միտտեր կասսիյ կէլիօուն: Դուք կը հաստատէք, որ նրանք վիճել են: Ինչ է, դուք ներկայ էք եղել այդ վէճին:

— Ես չեմ ասում թէ ներկայ եմ եղել, Զէբ Ստումպ: Բացի դրանից, ես բոլորովին դիտաւորութիւն չունեմ պատասխանելու ձեր հարցերին, որովհետև ինչ որ ինձ յայտնի էր, արդէն պատմել եմ այն մարդկանց, որոնք իրաւունք ունին իմ վկայութիւնը լսելու: Պարոններ, ինձ թւում է, թէ դուք ձեր յօժար կամքով էք տուել դատավճիռը, այժմ չեմ հասկանում, թէ ինչն էք թող տալիս այս ծերունի յիմարին միջամտելու ձեր գործերի մէջ:

— Ծերունի յիմարին, — գոռաց որսորդը: Դուք էք ինձ ծերունի յիմար անւանում: Երդուում եմ, որ ես կը հարկադրեմ քեզ յետ վերցնել քո խօսքերը, թէ չէ ես Զաւուլ Ստումպը չեմ լինիլ: Ի միջի այլոց, չ'արժէ այդ մասին խօսել. շուտով և ձեր ժամը կը խփէ, միտտեր կէլիօուն: Ինչ վերաբերում է Հենրի Պոյնդեքստերի և այդ երիտասարդի մէջ եղած վէճին, — շարունակեց նա՝ դատաւորին դառնալով. — դրան ես չեմ հաւատում և չեմ հաւատար, մինչև որ չեն ներկայացնիլ աւելի արժանահա-

ւատ ապացոյցներ, քան թէ այդ համբակի դատարկաբանութիւնները: Դուք ասում էք, որ ապացոյցներ ունիք, ես էլ ունիմ ապացոյցներ, որոնք կարող են օգնել մեզ այդ մութ ու խճճած գործը պարզելու:

—Ի՞նչ ապացոյցներ ունիք, Զէք Ստոնմպ,—հարցրեց դատաւորը:—Հաղորդեցէք մեզ ձեր ապացոյցները:

—Լաւ: Առաջինը՝ դուք ի՞նչով էք բացադրում այդ մարդու ամբողջովին վիրաւորւած լինելը: Ես չեմ խօսում ճանկոտւածների մասին,—դրանք գայլերի գործերն են, որոնք յարձակւել են նրա վրայ, նրա վիրաւորւելուց յետոյ: Նայեցէք նրա ծնկանը: Գալերը չեն վիրաւորել նրան, այլ մի ուրիշը: Դուք ի՞նչ էք կարծում, Սէմ Մանլէյ:

—Ներկայ եղողներից մի քանիսը ենթադրում են, որ այդ առաջացել է...

Մուստանգերի և կորած երիտասարդի մէջ ծագած կռից,—շարունակեց դատաւորը:

—Այո, այդ մեր կարծիքն է,—ասաց շրջապատողներից մէկը:—Բոլորիս յայտնի է, որ Հէնրի Պոյնդեքստերը թոյլ չէր տալ սպանել իրեն՝ ինչպէս մի հորթ. նրանք կուէլ են և մուստանգերն ընկել է քարի վրայ, որից և ուռել է նրա ծունկը: Բացի դրանից, նրա գլխի վրայ վէրք կայ, որը նման է ատրճանակի քերածքի: Ինչ վերաբերում է ճանկոտւածքներին, մենք չք գիտենք այդ որտեղից է ստացել վիրաւորը: Դրանք կարող են լինել կամ փշոտ ծառերի ճանկոտւածքներ, կամ գայլերի առամների հեռքեր, ինչպէս դուք էք ասում: Նրա ծառան պատմել է մեզ ինչ որ վագրի մասին, բայց ո՞վ է հաւատում նրան, այդպիսի հնարքներով մեզ չեն կարող խաբել:

—Ես ինքս էլ տեսել եմ այդ կենդանին և հէնց ժամանակին ազատեցի երիտասարդին նրա ճանկերից: Բայց

բանը դրանում չէ: Ինչպէս երևում է, դուք արդէնհարցրել էք իւրանդացուն: Նա ձեզ ուրիշ ոչինչ չի պատմել:

—Ինչպէս չէ, նա խօսում էր ինչ որ հնդիկների մասին, բայց ո՞վ կը հաւատայ այդպիսի զրոյցներին:

—Սակայն նա ինձ էլ է պատմել այդ մասին, նշանակում է այստեղ փոքր ինչ ճշմարտութիւն կայ: Բացի դրանից, նա հաւատացնում էր, որ նրանք թուղթ էին խաղում և անձ ձեզ խաղաթղթի ամբողջ կապոցը: Ես դտայ այդ խրճիթի յատակի վրայ ցրւած: Ինչպէս երևում է, սպանական խաղաթղթեր են:

Զէքը հանեց դրպանից խաղաթղթի կապոցը և տւաւ դատաւորին: Սաղաթուղթը մեքսիկական արտագրութիւն էր, որով սովորաբար խաղում են մօնթէ:

—Ո՞վ է լսել թուղթ խաղացող կօմանչների մասին, —ասաց այն մարդը, որ կասկածում էր հնդիկների երեւալու մասին:—Այդ մինչև անգամ ծիծաղելի է:

—Ասում էք ծիծաղելի՞ է,—վրայ բերեց մի ծերունի որսորդ, որը մի ամբողջ տարի գերի էր եղել կօմանչների մօտ:—Կարելի է այդ ծիծաղելի է ձեզ համար, բայց միւլնոյն ժամանակ իրաւացի է: Նրանք շատ խաղեր են խաղում, ես շատ անգամ եմ տեսել, թէ նրանք ինչպէս են մօնթէ խաղում գետնին փռած գոմշի կաշւի վրայ: Կարծում եմ, որ նրանք սովորել են այդ իրենց մեքսիկացի գերիներից, որոնք հազարներով են հաշւում գոնազանցեղերի մէջ: Այո, —եզրափակեց նա.—կօմանչները թուղթ են խաղում, այդ նոյնքան ձիշտ է, որքան և այն, որ նրանք գիտեն նեա արձակել:

Զէք Ստոնմպը շատ ուրախացաւ ծերունի որսորդի խօսքերից, նա իւր խօսքերի համար դրանից աւելի լաւ հաստատութիւն չէր կարող գտնել: Դատապարտեալի համար գործն աւելի բարեյաջող ընթացք էր ստացել: Այն տեղեկութիւնը, թէ այստեղ հնդիկներ են եղել, նոր լոյս

սփռեց կատարեաժ զէպօքի վրայ և մեծ ազդեցութիւն ունեցաւ ներկայ եղողները վրայ, որոնք համոզեաժ էին, որ կօմաչները երևացել են գաղութի հակառակ կողմից:

— Ի հարկէ, այստեղ եղել են հնդիկներ կամ նրանց նման մարդիկ, — շարունակեց Ձէբն՝ աշխատելով ձեռք բերել դատի յետաժգումը: — Յովսափանթ, — յանկարժ բացականչեց նա: — Որտեղից է արշաւում նա:

Այդ վայրկենին գառիվայրից լուեց ձիու ոտաժայն: Կարիք չը կար Ձէբին հարցնելու նրա տարօրինակ և անսպասելի բացականչութեան պատժառը: Կտրեաժքի ծայրին երևաց արշաւող մի ձի, որի վրայ նստաժ էր մի կին: Նրա մագերը ժաժանուում էին քամուց, արագ գնացքից գլխարկն ընկել էր ետևը: Ձին այնպէս արագ վազում էր զէպի անդունդը, որ հէնց առաջին հայեացքից կարելի էր մտաժել, թէ նա փախցնում է իւր հեժնողին, սակայն ոչ, ըստ երևոյթին, այդ արագութիւնն անբաւական էր թւում հեժնողին և նա խթելով, մտրակելով, աշխատում էր դեռ աւելի արագացնել ձիու գնացքը: Յաժում կանգնաժ հանդիսատեսները պարզ նկատում էին այդ և ապշաժ ու երկիւղով դիտում այդ յուսահատ սրարշաւը:

Բոլորն էլ հէնց առաջին հայեացքից ճանաչեցին այդ անվախ ձիաւորին. դա այն գեղեցկուհին էր, որին կէս ժամ առաջ պատահել էին տափաստանում:

ՆՆԴԻԿՆԵՐԻՑ ՆԱԼԱԾԻՈՂ ԿԻՆԸ.

Սակայն ինչն էր ստիպել Իգիգօրային վերադառնալ և այն էլ այդպէս շուտ ու հապժեպ: Այդ հարցին պատասխանելու համար, մենք պարտաւորաժ ենք քիչ յետ դառնալ: Իգիգօրան վրիժառուներին պատահելուց յետոյ այլևս առանց յետ նայելու, մտախոհ շարունակեց իր ճանապարհը: Այն միտքը, թէ Լուիգա Պօյնդեքստերն էլ հեռացաւ խրժիթից, գեղեցիկ սպանուհուն որոշ չափով ներքին գոհունակութիւն պատժառեց: Կանացի բնազդումը գաղտնօրէն թերագրում էր նրան այն հաւատքը, թէ իւր նախանժորդը չի կարողացել գուշակիլ այն, որ Մօրիսը ամբողջութեամբ նուիրեաժ է նրան: Թող նա էլ չարաչար տանջի ինժ նման: Իգիգօրան մինչև անգամ յոյս էր տաժում, որ այդ հանդիպումից յետոյ, հպարտ օտարուհին իրեն հարկադրեաժ կ'զգայ անջատել այն մարդուց, որին այնքան սիրում էր: Բայց այդ գոհունակութիւնը կարժատե եղաւ: Իգիգօրան մի որոշ տարաժութիւն անցնելուց յետոյ նկատեց, որ Լուիգան չի հեռուում իրան և չէ էլ անցել այդ տեղերով, մինչևեռ նա բացի իր անցաժ ճանապարհից, ուրիշ անցնելու տեղ չունէր: Այդ միտքը Իգիգօրային դարժեալ ախուր մտքերի մէջ զցեց: Օտարուհին անշուշտ փոխել է իր դիտաւորութիւնը և մնացել խրժիթում: Գուցէ այժմ նա կատարում է և այն պարտակախութիւնները Մօրիսի վերաբերմամբ, որ կատարելն իր վրայ էր վերցրել Իգիգօրան: Այդ միտքը յուսահատական կը լինէր, եթէ Իգիգօրային քիչ շատ չ'մխիթարէր այն հանգամանքը, որ Լուիգան իր սիրողի պարտականութիւնները կատարելիս, խայտառակութեան պիտի ենթարկել իր հարազատների և բարեկամների շրջանում: Նա մխիթարւում էր աւելի շատ նրանով, որ այդ խայտառակութիւնը հէնց ինքն էր պատրաստել: Դա վրիժառութեան

առաջին քայլն էր: Նա վստահ էր իր նախանձորդին սպասող խայտառակութեան վատ հեռանքներից իր քաղելիք օգուտների մասին և որպէսզի աւելի շուտ ձեռք բերի այդ օգուտները, նա որոշեց փոխանակ Լէօն գնալու վերադառնալ Ալամօ և ներկայ լինել այնտեղ կատարող դրամային:

Բայց շուտով նա կանգ առաւ խիտ ծառերի ստուերի տակ: Յոգնած ձին դժուարութեամբ էր շնչում, թէև չէր զարմանում իր տիրուհու վայրենի և յանկարծակի բռնկումների վերայ—որոնց արդէն սովոր էր: Իզիդորան խոր մտքերի մէջ ընկրլմած տանջւում էր: Օ, որքան խոր մտքերի մէջ ընկրլմած տանջւում էր: Օ, որքան վատ վարւեց ինքը իր սիրած տղամարդու վերաբերմամբ. ճիշտ է վրէժխնդրութեան իր գործադրած ձեր դատը պըտուղներ պիտի տար իր ատելի կնոջ համար, բայց չէ՞ որ միևնույն ժամանակ նա ստեղծեց դժբախտութիւն իր սիրած մարդու համար, որին հակառակ բոլոր պատահարներին, նա չէր կարող դադարել սիրելուց: Santissima Vergen—շնչաց նա: Ի՞նչ արեցի ես: Եթէ այդ մարդիկ... այդ սարսափելի դատաւորները... ճանաչեն Մօրիսին մեղաւոր, ի՞նչով կ'վերջանայ նրանց քննութիւնը... անպայման նրա մահով... ո՛չ, ո՛չ...

Տիրամայր, ես այդ չեմ ցանկանում, նա չ'պէտք է մեռնի նրանց ձեռքով:

Ի՞նչպիսի խիստ և անողոք դէմքեր ունէին նրանք և ինչպէս սրարշաւ առաջ քշեցին ձիանքը, հէնց որ ես նրանց ճանապարհ ցոյց տւի, նրանք արդէն վճռել էին, որ Մօվրիկիօն պիտի մեռնի, մանաւանդ նա օտար է այդ բոլորի համար:

Santissima, այս ինչ արեցի ես նրան...:

Վերջին անգամ ինձ մօտեցողը նրա ազգական կէր հօտնն էր, որի մասին ես այնքան վատ բաներ եմ լսել... Օ, ես այժմ եմ միայն հասկանում նրա արած խորհրդա-

ւոր հարցումների իմաստը: Նորա սիրտն էլ այնպէս է, ինչպէս և իմը...

Իզիդորայի հայեացքը՝ անհանդիստ և տատանւող՝ ընդարձակ սարահարթի վերայ ինչ որ բան էր որոնում: Ձիաւորները վազուց արդէն անհետացել էին, բայց և այնպէս նրանց բարձրացրած փոշին դեռ չէր ցրւում:

Յանկարծ ձին խրինջաց և անհանգիստ սկսեց նայել դէպի մի կողմ, որտեղից թշնամիների յայտնուելուն էր սպասում: Ո՛վ, կամ ի՞նչ կարող է լինել այդ: Ձիու խրխրնջոցից նախագողշացած Իզիդորան նայեց դէպի անտառի խորքը, դէպի այն ուղին, որտեղով քիչ առաջ էր անցել եւ ոչ մի կասկածելի բան չնկատեց, բացի երկու երեք գայլերից, որոնք սակայն չէին կարող անհանգստացնել իրան, կամ իր ձիուն:

Կենդանին նորից խրինջաց, որին այս անգամ պատասխանեցին մի քանի ուրիշ ձիանք, որոնք անկասկած ծածկուած էին ծառերի ետև: Իզիդորան ականջ դրեց: Թ'փերի միջից լսւում էին խօսակցութեան մեղմ ձայներ, որոնց տէրերը անպայման տղամարդիկ էին: Երիտասարդ աղջիկը սկսեց անհանգստանալ: Ո՛վքեր կարող էին լինել նրանք: Ճանապարհորդներ: Գուցէ տեխասցիների խմբից յետ մնացած ձիաւորներ: Գուցէ և հնդիկներ: Նա լուր հեռացաւ իր կանգնած տեղից և թագնւեց ծառերի յետև: Շուտով ձիաւորները սկսեցին մօտենալ նրան, բայց ոչ սովորական շաւղով, այլ մացառների միջով և ոչ խմբով, այլ բաժան-բաժան, որպէս զի շրջապատէն նրան: Իզիդորայի անհանգստութիւնը կրկնապատկեց, նա առանց երկար տատանուելու առաջ քշեց իր ձին և փորձեց դուրս գալ ուղիղ շաւղի վերայ, որը տանում էր դէպի Ալամօ:

Միաժամանակ ամեն կողմից երևացին կիսամերկ մարդիկ, դէմքները զարդարւած նկարներով և կարմիր փետուրներ գլխների վրայ:

— Los indios, բացականչեց մեքսիկոնսին և սաստիկ արագութեամբ դուրս եկաւ անտառի խորքից: Նրան սկսեցին հետամտել հնգիկները շատ զգուշութեամբ, մեծ եռանդով և հակառակ իրենց սովորութեան, բոլորովին լուռ:

Լուռութիւնը պարզ սպացոյց էր, որ նրանք մեծ կարեւորութիւն էին տալիս իրենց որսին, նախապէս մտածած ծրագրի համաձայն: Մինչև այժմ Իզիդորան չէր վախենում կարմրամորթների պատահելիս, որովհետև նրանք երկար տարիներ պահպանել էին տեխասցիների և մեքսիկացիների հետ խաղաղութիւն, թէպէտև նրանցից ամեն ժամանակ կարելի էր սպասել կոպիտ վարմունքներ, մանաւանդ երբ արագի ազդեցութեան տակ էին լինում: Բայց այժմ նրա պայմանները բոլորովին փոխել էին: Խաղաղութիւնը խանդարւած էր և հետամուտ եղողները ծարաւի էին արեան: Նրան սպառնում էր ոչ միայն խայտառակութիւն, այլ և մահ:

Նւ ահա նա քշում էր իր ձին բոլոր ուժով, հարկադրելով նրան սասանդակներով, մտրակով և իր խրախուսուցիչ խօսքերով: Նա գրեթէ գոռում էր իր բոլոր ուժով, մինչդեռ նրան հետևողները լուռ էին ինչպէս տեսիլք: Բաւական տեղ գնալուց յետոյ նա յետ նայեց, տեսաւ որ հետևողներից միայն չորսն են մնացել, թէև այդ թիւն էլ մեծ ուժ էր մի կնոջ վրայ բռնութիւն գործելու համար: Նա անպատճառ կ'սորտակէր, եթէ նրան չ'յաջողէր միանալ տեխասցիների հետ:

Ն Ն Դ Ի Կ Ն Ե Ր .

Մի անգամ էլ աղջիկը յետ նայեց: Տէր, օգնիր ինձ. այն, օգնիր նրան, Աստուած: Նրա հետամտողներից մէկը արդէն բաց արեց պարանը և թափահարեց իր գլխի վրայով: Նախ քան նա կ'հասնի ցած իջնելու տեղը, օղակը արդէն կ'ըջապատի նրա պարանոցը և այն ժամանակ...: Մի յանկարծակի միտք փայլեց նրա գլխում, միտք, որը ըստ երևոյթին փրկութիւն էր խոստանում: Ճեղքւածքի մօտ, որով գնում էին զէպի Ալամօ, կար մի դուրս ցցւած աչքի ընկնող ժայռ, որտեղից երևում էր խրճիթը: Կայծակի արագութեամբ Իզիդորան փոխեց իր ուղղութիւնը և բարձրացաւ ուղիղ զէպի ժայռը: Նրա այդ թեքւելը շփոթեցրեց, բայց և ուրախացրեց իր հետամտողներին, որոնք լու ծանօթ էին այդ տեղերին և գիտէին, որ ժայռը իջնում է ուղղահայեաց, որտեղով իջնելիս անպայման կը բռնէր իրենց որսը: Առաջնորդը նորից գցեց ճոպանը, թէև այս անգամ չշտապեց, որովհետև հաւատում էր իր յաջողութեան: Chingoro, մրմնջաց հետապնդողը, եթէ նա մի անգամ էլ կը շարժւի զէպի քարափի ծայրը, անշուշտ կ'գլորւի ցած: Բայց որսը չ'գլորւեց, այլ փոխելով իր ուղղութիւնը, վերջապէս հասաւ իր նպատակին, այնպէս որ նրան տեսաւ Ձէր Ստոմպը և արտասանւեց մեր վերև ցիշւած բացականչութիւնը—Յովսափաթ... որին իսկոյն պատասխանեց—Los indios. los indios.....

Միայն անխելքը և խուլը չէին կարող հասկանալ, թէ ինչ տեսակի երկիւղ էր արտայայտում նա այդ խօսքերով: Նրան խրճիթից լսողները լու հասկացան նրա խօսքերի իմաստը:

—Տեխասցիներ, շարունակեց Իզիդորան, փրկեցէ՛ք ինձ. ինձ հետևում են... արդէն մօտ են... մօտ:

Վերջին անգամ վայրենիների առաջնորդը շարժ ցեխը

պարանը յաղթութեան կատարեալ համոզմունքով, ուշադրութիւն չ'դարձնելով իր զոհի գոռոցին և շտապեց դէպի նա, բայց յանկարծ ցաւ զգալով, հարկադրեա՞ծ եղաւ պարանը թողնել: Նա նայեց շուրջը և նշմարեց սպիտակ ծխի ցրուող մի ամպ և բազմաթիւ հրացանների փողեր, որոնք ուղղեա՞ծ էին դէպի վեր:

Այդ երևոյթը ստիպեց վայրենիներին փոխել իրենց գործելակերպը և շուտով նետուել քարափից ցած:

— Ցաւալի է, ասաց Ձէբ Ստուժար, եթէ չ'լինէր այդ աղջիկը, ես միջոց կ'տայի վայրենիներին իջնել ձորը, որ ժամանակ մենք կարող էինք բացատրել նրանց հետ, մինչդեռ այժմ նրանք անպայման կ'փախչեն և դեռ մինչ ժայռի գլուխը չբարձրացած, նրանց հետքն անգամ չի մնալ այս կողմերում: Վայրենիների յայտնուելը ձիորսի խրճիթի առաջ հաւաքեա՞ծ ամբոխի մէջ առաջացրեց տրամադրութեան փոփոխութիւն, մասնաւորապէս առաջ բերեց հայեացքների փոփոխութիւն: Մօրիսին մեղադրողների ըստուար մասը այժմ նրա կողմն էին: Կէլիօնը և նրա համախոհները կորցրին իրենց ազդեցութիւնը մտքերի վերայ և Սէմ-Մանլէյի կարգադրութեամբ Մօրիսի դատը յետաձգեց:

Նոր ծրագրի մասին երկար չ'դատեցին: Վճռեցին մեղադրեալին տեղափոխել ազարակը և այնտեղ քննել տեղական օրէնքներով: Մնում էր այժմ հնդիկների մասին մի բան վճռել: Արդե՞ծք հարկաւոր էր հետապնդել նրանց: Ի հարկէ: Իսկ ե՞րբ. այժմ. բանականութիւնը խորհուրդ էր տալիս զգուշանալ: Նրանք տեսան միայն չորոփն, բայց ո՞վ է իմանում, որ նրանց չեն հետևում հարիւրեակներ:

— Սպասեն մինչև կ'գայ օգնութիւն ինդորդ կինը, խորհուրդ է տալիս ամենազգուշներից միինը: Հնդիկները այլևս

չեն հետամտում նրան և ես լսում եմ, թէ ինչպէս նա իջնում է դէպի ձորը:

Այդ առաջարկութիւնը շատերին դուր եկաւ: Նրանք ի հարկէ երկչոտներ չէին, բայց և յաճախ էլ չէին կրուել անապատում վայրենիների հետ, ուստի և այնքան էլ ծանօթ չէին նրանց պատերազմական խորամանկութիւնների հետ:

Սակայն բոլորը սկսեցին ձիաները պատրաստել, բացի Ձէբ Ստուժարից, որը այդ ժամանակ թուլացնում էր մեղադրեալի կապանքները և հանում նրա բերանից փայտի կտորը: Նրան հետևում էին և մի երկրորդի երկու աչքերը, որ կարեկցում էր Մօրիսին, բայց ամօթխածութիւնից չէր կարողանում Ձէբին օգնել: Սակայն ո՞րտեղ է դօն-Սիլվիօ Մարտինեցի ազգականուհին — Իզիդօրան: Նրան անհամբեր սպասում էին ներքևում, բայց և այնպէս չէր լսում նրա ձիու ոտների տրոփիւնը: Վաղուց պէտք է նա հասած լինէր խրճիթին:

Նրա ուշանալը և բացակայութիւնը նոր երկիւղ և նոր իրարանցում առաջացրեց: Ամբոխի մէջ կային Իզիդօրային մի քանի երկրպագուներ, շատերը ճանաչում էին նրան անձնապէս, մի մասն էլ լսել էր նրա մասին, այնպէս որ բոլորն էլ, շատ թէ քիչ, շահագրգռեա՞ծ էին նրա դրութեամբ:— Կարող է պատահել, որ նրան հասած և բռնած լինին— կրկնեց քանիցս այս շարաբաստիկ հարցը, որին զժբաղդաբար ոչ ոք չէր կարողանում պատասխանել:

Տեսասցինները սկսեցին ամաչել իրենց վարմունքի համար: Նրանց օգնութեան կանչեցին, իսկ այդ կոչը մընաց անհետեանք: Այդ ամօթի զգացումը վրէժխնդրութեան թշնամական զգացում առաջ բերեց նրանց մէջ: Վառվառ են երիտասարդները այլևս չէին կարողանում տանել զրութեան անորոշութիւնը: Նրանք ձի հասեցին և

շտապեցին աղջկան որոնելու և ինչ գնով էլ լինի նրան փրկելու: Նրանց եռանդը մասնաւորապէս բորբոքում էր և այն միտքը, թէ երիտասարդ Պոյնդեքստերին էլ այս հնդիկները կարող էին սպանած լինել:

Մօրիսի խրճիթի առաջ մնացին շատ քիչ մարդիկ, որոնց թւում և Ձէր Մատեմար:

Մերունի որսորդը ոչ մի կարծիք չէր յայտնում հետապնդելու վերաբերմամբ: Նա իր մտքերի մէջ խորասուզած, զբաղւած էր խնամելով հիւանդին, որը դեռ ևս չէր սթափւել: Դատաւորները աչքաթող չէին անում իրենց գերուն:

Հարկաւոր է նկատել որ բացի Ձէբից, ձիորսը ունէր և երկու հաւատարիմ բարեկամներ էլ: Նրանցից մէկը կին էր—որը ամեն ջանք թափում էր, որպէս զի թագցրած լինէր իր սրտի զգացմունքները կողմնակի մարդկանցից. իսկ երկրորդը, անկիրթ և ծիծաղելի մի արարած, որը այժմ կանգնած էր Մօրիսի մօտ և շտապում էր նրան ամեն տեսակ քնքոյշ խօսքեր: Վերջապէս Փելիմը դուրս սողաց հսկայ կաղնու արմատների մօտ բուսած խիտ պատուտակների միջից և սկսեց կատարել գանազան մանր ծառայութիւններ իր տիրոջ համար:

Մի ժամից յետոյ դատարկւեց Ալամօ խրճիթը և գուցէ այլ ևս չէր վերադառնալու նրա հիւրընկալ յարկի տակ իր առաջ կատարւած դրամայի հերոսը...:

ОТКРЫТА ПОДПИСКА

На 1908 год., на газету

БАКУ

Ежедневная общественно-литературная и политическая газета

Подписная цѣна на газ. „Баку“

Съ доставкой въ Баку: на годъ 7 р., 11 м. 6 р. 50 к., 10 м. 6 р., 9 м. 5 р. 50 к., 8 м. 5 р., 7 м. 4 р. 50 к., 6 м. 4 р., 5 м. 3 р. 50 к., 4 м. 3 р., 3 м. 2 р. 50 к., 2 м. 1 р. 50 к., 1 м. 1 р.

Съ пересылкой въ другіе города: на годъ 8 р. 50 к., 11 м. 7 р. 50 к., 10 м. 7 р., 9 м. 6 р. 50 к., 8 м. 6 р., 7 м. 5 р. 50 к., 6 м. 5 р., 5 м. 4 р. 50 к., 4 м. 4 р., 3 м. 3 р., 2 м. 2 р. 50 к., 1 м. 1 р. 50 к.

За границу: на годъ 15 р., на полгода 8 р.

Подписываться можно на всѣ сроки, но не иначе какъ съ первого числа каждаго мѣсяца. За перемѣну адреса просятъ высылать 5 семикопеечныхъ марокъ.

Отдѣльное нумера „Баку“ продаются въ конторѣ газеты и у разносчиковъ по 5 к.

Приемъ и печатаніе объявленій

Плата на объявленія: для мѣстныхъ—впереді текста за строку петита или занимаемое ею мѣсто 20 к., позади текста—15 к. Для иногородныхъ—впереді текста 25 к., позади текста—20 к. за строчку петита. Многократныя объявленія—по соглашенію съ конторой. Объявленія отъ лицъ ищущихъ труда печатаются за половину плату.

Подписка и объявленія принимаются въ конторѣ редакціи ежедневно, кромѣ праздниковъ, отъ 9 до 2 ч. дня и отъ 5 до 8 ч. веч.; въ праздники—отъ 10 до 12 ч. дня.

Статьи, присылаемыя въ редакцію, въ случаѣ надобности подлежатъ исправленію и сокращенію. Крупныя не принятыя статьи сохраняются въ продолженіи 1 мѣс. мелкія—не возвращаются. На рукописяхъ должны быть означены: фамилія автора, его адресъ и условія гонорара; безъ этого послѣдняго условія статьи считаются бесплатными.

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մ Ե Ր Զ Ա Յ Ն Ը

Հասարակական, գրական եւ հաղափական օրաթերթի:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ Է

Ճարեկան նոր-նախիջկան եւ Ռոստով 5 ռ., դուբսը 6 ռ., կէս տարուանը 3 ռ., երեք ամսուանը 1 ռ. 50 կ., հասը 5 կ.: Արտասահման 10 ռ.:

Յայտարարութեան իւրաքանչիւր տողատեղը առաջին երեսում 20 կ., չորրորդ երեսում 10 կ.:

Օտար տեղերից դիմել՝ Нахичевань на-Дону. ред. „Меръ Дзайнъ“ իսկ արտասահմանից՝ Nachitchevan s-Don, Яussie Redaction „Mer Dzain“:

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա Խ ՈՒ Ր Ե Ա Ն

Հասարակական գրական օրաթերթի:
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ Է

Ալէքսանդրապօլ տարեկան	2 ռուբ.
Ոււրիշ քաղաքներ »	3 ռուբ.
Արտասահման »	12 ֆրանկ
Ալէքսանդրապօլ կէս տարին	1 ռուբ. 25 կ.
Ոււրիշ քաղաքներ »	2 ռուբ.
Արտասահման »	7 ֆրանկ

Խմբագրութեան հասցէն՝ Александрополь, редакция газ. Ахурянъ. կամ Alexandropol, Rédaction «Akhourian». (Caucase).

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ“

ՔԱՂԱՔԱՔԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

Բաժանորդագիրն է տարեկան 4 ռուբ.
» » վեցամսուայ 2 ռուբ. 50 կոպ.:
Դիմել՝ New-York.—City. 199 p. o. box. M. S. Redaction Ieritassard Haiastan.
կամ Բաղու, Верхно-Прютская, д. № 3 Туманова. Кв. Саркисова.

ԲԱՅՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ Ո Վ Ի Ի

ԱԶԳԱՅԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

որ լոյս է տեսնում կիրակի օրը:

Բաժանորդագիրն է՝ Ռուսաստանում՝ տարեկան 4 ռ., կէս տարուան 2 ռ. 50 կ.: Արտասահմանում՝ տար. 12 ֆր. կէս տար. 7 ֆր.: Յայտարարութեան իւրաքանչիւր տող արժէ՝ առաջին երեսում 20 կ., վերջինում 10 կ.: Խմբագրութեան հասցէն. В. Ванкская, № 16: Դիմել. Օտար քաղաքներից՝ Редакция армянского журнала „Обивъ“, Тифлисъ. Արտասահմանից՝ Rédaction du journal arménien „Hovive“, Tiflis, Caucase, Russie.

„БАКИНЕЦ“

Подписная цена:

для городских:		для иногородних:	
На год	2 р. 50 к.	На год	3 р. 50 к.
„ полгода	1 „ 25 „	„ полгода	1 р. 75 „
„ 3 мѣсяца	— 65 „	„ 3 мѣсяца	1 р. 00 „
„ отдельные номера —	5 „		

Подписка и объявления принимаются ежедневно в конторѣ редакціи (Думская площадь, помѣщеніе Грузинскаго Общества). Прием по дѣлам редакціи по вторникам и четвергам от 11 до 1 часу дня въ редакціи.

ԲԱՅԻԱԾ Է 1908 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ)



մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսնոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով Մշտական աշխատակցութեամբ Յովհ. Թումանյանի

Բաժանորդագիրն է նաևապարհաժախով

տար. մանկական բաժին 3 ո.	մանկավարժ. բաժ. 4 ո.
կէս տարւանք 1 ո. 80 կ.	2 ո. 10 կ.
մէկ ամսւանք 30 կ.	— 35 կ.
Պարսկաստանում 3 ո. 50 կ.	4 ո. 50 կ.
Արտասահմանում ԻՆԸ Ֆր.	ՏԱՄՆԵՐԿՈՒ Ֆր.
Հրատարակութեան սկզբից մինչև 1908 թ. վերջը մանկական բաժնով 9 ո. 50 կ.	մանկավարժական բաժնով 11 ո. 50 կ.

Խմբագրութեան հասցէն՝ Թիֆլիս, Բենքութեան փող. 25. (Тифлисъ Редакція журнала «Аскеръ», կամ Tiflis (Caucase) Rédaction du journ. «Hasker».)

ԱՊԱՐԴԻՒՆ ԱՐՇԱԽԱՆՔ

Հնդիկների դէմ ձեռնարկւած արշաւանքը չորս օրից աւել չ'տևեց, որովհետև նրանք նպատակ չէին ունեցել սովորական և երկարատև արշաւանքներ կատարել, այլ դա եղել էր մի քանի երիտասարդների ցանկութիւն միայն, ձիաներ, անասուններ և մարդկային գերիներ ձեռք բերելու դիտաւորութեամբ:

Սոյնանման երևոյթներ հազւագիւտ չէին Տեխասում և կատարուած էին երբեմն առանց ցեղապետի դիտութեան: Ծրագիրը կազմուած էին մի քանի երիտասարդներ և ըսկտում այդ արշաւանքները, որոնք աւելի նման էին մեծ որսորդութեան նախապատրաստութիւնների:

Ինգէ ամբողջի պահապանները վերադառնալով իրենց տեղը, զարմացան որ նրանք հետամուտ են եղել հնդիկներին ոչ պատշաճաւոր ուղղութեամբ: Այն սպաները, որոնք ցանկանում էին ձեռք բերել տռաջին դափնիները կարմրամորթերի հետ ունենալիք պատերազմում, սաստիկ բարկացած էին և հաւանականօրէն այդ արամադրութիւնը կ'շարունակէր շատ երկար, եթէ ամբողջում նրանք չ'լսէին ամենաթարմ նորութիւններ:

Իդիոօրա Խօվարուբիօն իւր առնական գեղեցկութեամբ վերջին դէպքերի ժամանակ միշտ խօսակցութեան առարկայ էր լինում: Յաճախակի կրկնուող տարօրինակ դէպքերը Սրամօյում, վիրաւոր Մօրիսի անկողնում պառկելը, նրան կախելու վճիռը, Լուիզա Պօյնգեքստերի միջամտելը, Ջէք Ստոււմպի վճռողական բողոքը — այս բոլորը այնպիսի կէտեր էին, որոնք առիթ էին տալիս զանազան ենթադրութիւններ անելու: Այժմ բոլորն էլ գբազւած էին այն հարցի լուծմամբ, թէ արդեօք իսկապէս մեղաւոր է Հէնրի Պօյնգեքստերի սպանութեան մէջ չարախօսուող Մօրիսը:

—Սպանութիւնը ոճրագործութիւն է, ասաց փիլիսոփայօրէն կապիտան Սլօմանը, որին՝ իմ կարծիքով անընդունակ է Մօրիսը: Ես նորան այնքան լաւ եմ ճանաչում, որ երբէք չեմ կարող կասկածել:

—Բայց և այնպէս դուք պէտք է համաձայնէք, որ բոլոր փաստերը նրա դէմ են, պատասխանեց Կրօմմանը, որը այնքան էլ չէր համակրում Մօրիսին, որին Լուիզան միշտ բաղցր հայեացքով էր նայում:

—Անկասկածելի փաստ է, որ Հենրի Պօյնդեքստերը սպանւած է. հակառակ դէպքում ինչ կարող է եղած լինել նա. իսկ նրա ազգական Կէլհօունը պնդում է, որ լըսել է նրա Մօրիսի հետ ունեցած վէճը:

—Սյդ սչինչ, որովհետև այդ ազգականը պատրաստ է երդուել ինչով որ ցանկանայք, գէթ միայն դա լինէր ի վրէնաս Մօրիսի, վրա բերեց Հանկօլը:

—Եթէ մինչև անգամ վէճ էլ եղած լինի, չի կարելի եզրակացնել, որ դորա հետևանքը եղել է սպանութիւն:

—Ուրեմն դուք կարծում էք, որ նա սպանել է Պօյնդեքստերին ազնւօրէն—մեծամարտութեան մէջ:

—Սյդ աւելի հաւանական է...:

—Բայց ինչ պատճառաւ... ինչ ունէին իրար մէջ բաժանելու, հարցրեց Հանկօլը: Ես լսել եմ, որ երիտասարդ Պօյնդեքստերը շատ լաւ յարաբերութեան մէջ է եղել Մօրիսի հետ, չ'նայելով այն միջնադէպքին, որ տեղի ունեցաւ այս վերջինի և Կէլհօունի մէջ: Ուրեմն ինչի մասին կարող էին նրանք վիճել:

—Ձեր կողմից դա մի տարօրինակ հարց է, Հանկօլ, նկատեց Սլօմանը, առանձնապէս շեշտելով ձեռ բառի վերայ: Միթէ չ'գիտէք, որ տղամարդիկ ուրիշ ոչ մի պատճառաւ չեն վիճում, եթէ ոչ...:

—Եթէ ոչ կանանց պատճառաւ... ընդմիջեց ծիծաղելով Հանկօլը:

—Բայց չէ՞ որ երիտասարդ Պօյնդեքստերի քրոջ մասին ոչ մի խօսք չէր կարող լինել... որ...

—Ո՞վ գիտէ...:

—Դա անմտութիւն է, գոռաց Կրօմմանը: Միթէ մի ձիորս կարող էր մտածել Լուիզա Պօյնդեքստերի մասին:

—Ի՞նչ անմիտ արիստօկրատ էք, Կրօմման: Միթէ չը գիտէք, որ սէրը ընդհանրական բնոյթ ունի և ծիծաղում է իր դէմ արհեստական կերպով ստեղծւած բոլոր արգելքների վերայ: Թէպէտ ես չեմ պնդում, որ գործը իսկապէս այդպէս է, բայց Լուիզա Պօյնդեքստերը միակ կինը չէ, որի պատճառով նրանք կարող էին վիճել: Ազարակում կան և ուրիշ կանայք, որոնք ընդունակ են վէճ յարուցանել երկու երիտասարդ պարոնների մէջ, չը հաշւած մեր ամբողջում ապրողներին...:

—Կապիտան Սլօման, ընդհատեց դժգոհութեամբ Հանկօլը. անկարելի է չը խոստովանել, որ ձեր անհիմն խօսքերը վայել չեն ձեզ պէս մի խելացի մարդու: Մեր կանայք շատ դժգոհ կը լինեն ձեր նրանց հասցէին արած ակնարկների համար:

—Ի՞նչպիսի ակնարկներ, պարոն Հանկօլ:

—Միթէ որևիցէ մէկը մեր տիկիններից այն աստիճան կը ստորանայ, որ թոյլ տայ իրեն գէթ խօսելու այդ ձեր յիշած մարդու հետ:

—Ինչո՞ւ չէ:

—Ես շատ լաւ եմ հասկանում ձեզ կապիտան, ինչպէս և դուք ինձ: Մեր տիկնայք իրենց անշուշտ շողոթորթած կը համարեն, երբ իմանան որ իրենց անունները արտասանուած են մի ինչ որ արկածախնդրի, ձիագողի և բացի այդ, սպանութեան մէջ կասկածւած մարդու անուն հետ:

—Միայն ձեր վերջին խօսքերը կարող են վերա-

բերւել ձիորս Մօրիսին, իսկ մնացածները մասին ես չեմ կարող ինձ թոյլ տալ կասկածել. նա ոչ արկածախնդիր է և ոչ էլ ձիագող և եթէ պարոն Հանկօկը մտածում է, որ մեր տիկնանց համար ստորութիւն է նրա հետ խօսելն անգամ, զրանում էլ նա սխալում է, ինչպէս ուրիշ շատ բաներում: Ես այնքան լաւ չեմ ճանաչում այդ իրլանդացուն, բայց կարող եմ հաւատացնել ձեզ, որ նա իր կրթութեամբ յետ չի մնալ մեզնից ամենալաւից անգամ: Մեր երեւի տիկնանցը կարիք չը կայ խոյս տալ նրա ծանօթութիւնից և իսկապէս նրանք խոյս էլ չեն տալիս առիթը հերկայացած ժամանակ: Որքան ինձ յայտնի է, երիտասարդ Մօրիսը միշտ իրեն պահել է իսկական բարեկիրթ մարդուն վայել օրինակութեամբ: Ես շատ անգամ պատահել եմ նորան կանանց շրջանում և նա միշտ իրեն պահել է շատ պատշաճաւոր կերպով: Իսկ ինչ կը վերաբերի առանձնապէս նորան, ես հաւատացած եմ որ նա կատարեալ անտարբերութեամբ է վերաբերւել դէպի այստեղի բոլոր կանայք:

— Իսկապէս: Դա մի մեծ բաղաւորութիւն կարող է համարւել նրա հակառակորդների համար:

— Գուցէ և այդպէս էլ է, սառը կերպով նկատեց կապիտանը:

— Ո՞վ դիտէ, միջամտեց Հանկօկը, որպէսզի խօսակցութեանը աւելի մեղմ ընթացք տայ. գուցէ վիճաբանութեան առարկան եղել է այն գեղեցիկ օրիորդը, որի մասին այնքան շատ խօսւում է այժմ: Ես նրան չեմ տեսել անձամբ, բայց պատմութիւններին նայելով, նա իսկապէս մի այնպիսի որս է, որը կարող է երկու դիւրազգաց պատանիներից վազրներ պատրաստել:

— Գուցէ. — համաձայնեց կրօնամանր, միխթարւած զգալով իրեն այն մտքով, որ գեղեցիկ իրլանդացին իրեն

համար այլևս անոյեան չէր հանդիսանալ Լուիզայի նրկատմամբ:

— Այդ իրլանդացուն տեղաւորել են պահականոցում իր խիստ ծիծաղելի ծառայի հետ միասին, շարունակեց Հանկօկը: Այսօր մայեօրը հրամայեց կրկնապատկել պահականների թիւը: Այս ի՞նչ է նշանակում, կապիտան Սլօման, հաւանական է որ դուք իմանաք, որովհետև ձեզ յայտնի են մի քանի տեղեկութիւններ մեղադրեալի մասին: Չէ՞ որ այժմ նա անկարող է փախչել:

— Ի հարկէ, գոնէ մինչև այն ժամանակ, երբ նա կարող կը լինի զգալ իւր բանտարկութիւնը: Ես ինքս հերթապահ էի և գտայ նրան բոլորովին անզգայ դրութեան մէջ:

— Մի՞թէ պահապանները կրկնապատկւում են միայն այն պատճառով, որ նա ջղային տենդ ունի: Շատ զարմանալի է: Արդեօք չէ՞ խելագարւել ինքը մայեօրը:

— Գուցէ և այդ կարգադրութիւնը մայեօրի կիներն է արել. հա՛, հա՛, հա՛:

— Իսկապէս մի՞թէ մայեօրը երկիւղ է կրում Մօրիսի փախուստից:

— Չեմ կարծում. երևի նա չէ ցանկանում, որ կողմնակի մէկը գնայ մեղադրեալի մօտ:

— Այսինքն, դուք ի՞նչպէս էք բացադրում այդ:

— Ես կարծում եմ, որ Մօրիսը պահապանների հրահրութեան տակ աւելի ապահով է, քան մի որևիցէ այլ տեղում: Չորս շուրջը պտտում են զանազան անձնաւորութիւններ և արդէն իսկ լսում են խօսակցութիւններ, նուրից նրան Լինչի օրէնքին ենթարկելու մասին: Հերալդի բաղդիցն էր, որ նորան պաշտպան հանդիսացաւ ծերունի որսորդը: Եթէ մի օր մենք աչքաթող անենք, գուցէ պահականոցում այլևս Մօրիսին չը գտնենք: Աւելի լաւ է, որ այդ խեղձին օրինաւոր կերպով դատեն:

— Իսկ այդ երբ կը լինի:

— Հէնց որ նա ուշքի գայ:

— Ուրեմն դեռ մի քանի շաբաթներ էլ կանցնեն:

— Ո՞վ գիտէ: Մարմնի վերայ ունեցած վերքերը ան-
նըշան են, իսկ զառանցանքը կարող է գաղարել մի քա-
նի օրում, զուգէ և՛ մի քանի ժամում: Դատաւորները
պահանջում են, որ իրենց ներկայացնեն անմիջապէս,
երբ նա ուշքի կը գայ, չը սպասելով նրա կատարելա-
պէս առողջանալուն:

— Ի սրտէ ցանկանում եմ, որ նա կարողանայ բա-
ւարար բացազրութիւն տալ, ասաց Հանկօկը:

— Nous verrons, կը տեսնենք:

— Իսկ ես համոզւած եմ դրանում, ասաց Սլօմանը:

Տ

Handwritten scribbles in blue ink.

Ջրոն

ԳԱՂՏՆԻՔ ԵՒ ՍՈՒԳ

Վուզէյ Պօյնդեքստերի ընտանիքի անդամների յա-
բաբերութիւնները լարւած էին: Չը նայելով որ այժմ նը-
րանք երեք հոգի էին մնացել, այնուամենայնիւ շատ քիչ
էին պատահում միմիանց, այն էլ միայն ճաշին և ընթ-
րիքին և խօսում էին իբար հետ ամենամանրաժեշտ
բաների մասին: Բացի Հէնրիի մահից, որ արդէն ստուգւած
էր, կազա Դէլ-Կօրվօյի տէրերից իւրաքանչիւրն էլ ունէր
ընդհանուրից գաղտնի իր վիշտը, որի համար և գաղտնի
էր տանջւում:

Վուզէյ Պօյնդեքստերը դուրս չէր գալիս տնից, նա
ամբողջ օրերով անցուդարձ էր անում միջանցքում կամ
աննպատակ թափառում էր մի սենեակից միւսը: Նա ընկճը-
ւած էր իրեն հասած վշտի ծանրութեան ներքոյ:

Կէլիօունը անդադար չըջում էր: Նա տուն էր գալիս
միայն ճաշին կամ ընթրիքին և այն էլ ոչ միշտ: Մի ան-
գամ նոյն իսկ նա կորաւ ամբողջ օրը և վերադարձաւ
միայն ուշ գիշերին: Ոչ ոք չը գիտէր սակայն, թէ նա
որտեղ է լինում և չէր յանդգնում հարցնել նրան այդ
մասին:

Լուիզան նստում էր իր սենեակում կամ քարձրանում
ազօտէի վրայ և երկար ժամանակ մնում այնտեղ՝ տխուր
մտքերի մէջ խորասուզւած: Կորած եղբօր վիշտը, երկիւ-
ղըն այն մարդու մասին, որն այժմ նրա համար թանգ է
արխարհիս երեսին ամեն բանից աւելի և այն խռովայոյգ
սարսափը, թէ ինքն ամբողջ գաղութի խօսակցութեան առար-
կան կը դառնայ, — ահա բազմազան զգացմունքներ, որոնք
ծանրացած էին նրա սրտի վրայ:

Ենթադրենք, որ սիրելի եղբօր կորստի պատճառած
վիշտն արդէն սկսում էր փոքր առ փոքր հանդարտել,
բայց սիրած մարդու մասին ունեցած երկիւղը սաստկա-

նում էր ամեն օր, ամեն մի ընդհանուր զիտէ, որ Մօրի-
 սը գտնուում է բանտում, ամբողջի անմատչելի պատերի
 ետևը: Բայց այդ չէ նրա վշտի պատճառը, նա վախենում
 է, որ բանտի պատերը կարող են բաւական ամուր չը
 լինել նրան պաշտպանելու համար: Լուսիզան լսել էր, որ ցան-
 կանում են նրան Լինչի օրէնքով դատել, որ զարմանք էր պատ-
 ճառում բոլորին, քանի որ վերջին փաստերը բոլորն էլ
 յօգուտ Մօրիսի էին խօսում: Միայն երեք հոգի, Չէր Ստում-
 բը, Կասսիյ Կէլիօունը և Լուսիզան Հերալդի մասին եղած
 գրգռումի պատճառը գիտէին և նրանք էլ լուռ էին:

Շերունի որսորդն իրեն յատուկ նրբամտութեամբ գտաւ
 իրարանցում բարձրացնող մեղաւորին: Դրանք էին Միգէլ
 Դիազն ու նրա նման, տասն անգամ մարդիկ, իսկ ամ-
 բողջ պատմութեան սկզբնապատճառը կամաւորների պաշ-
 տօնաթող կապիտանն էր: Չէր իւր գուշակութիւնները
 հաղորդեց Լուսիզային, որը բոլորովին համաձայնեց նրա
 հետ. բայց վտանգի այդ պարզ գիտակցութիւնն աւելի
 տանջող էր նրա համար, քան թէ անհաւատալի ենթա-
 դրութիւնները:

Նա ամբողջ ժամերով նայում էր ամբողջից Կազա-
 դէլ-Կօրվօ տանող ճանապարհին և սպասում այնտեղից
 նոր տեղեկութիւնների մի այնպիսի անհանգստութեամբ,
 որ կարծես թէ դրանից կախուած լինէր նրա կեանքը կամ
 մահը: Նա չէր համարձակուում բանտը գնալ, այնտեղ կանգ-
 նած էին պահապաններ, շրջապատուած գտարկաշրջիկ
 հանդիսատեսների ամբողջ ամբոխով, որոնք, ինչպէս ա-
 մեն մի երկրում, այստեղ էլ ըստ երևոյթին, մի առանձին
 բաւականութիւն էին զգում, երբ աւելի մօտ էին գտնուում
 ոճրագործին: Բացի դրանից, այդ ոճրագործը մի առան-
 ձին հետաքրքրութիւն էր ներկայացնում. նա գառանցում
 էր և ամեն մարդ ցանկանում էր որևէ բառ լսել նրա
 բերնից իր գառանցանքերի ժամանակ: Որևէ կին չէր կա-
 րող երևալ այնտեղ, առանց իր վրայ դարձնելու հարիւ-

րաւոր ապուշների ուշադրութիւնը, ուստի և Լուսիզա Պօյն-
 դեքստերն էլ չէր կամենում վտանգի ենթարկել իւր բարի
 անունը: Սասնք, եթէ նա միայնակ լինէր, գուցէ կայցելէր
 Մօրիսին, բայց հայրը կար, որ արդէն սկսել էր կասկա-
 ծել իր և Մօրիսի իրար հետ ունեցած յարաբերութիւն-
 ների մասին: Լուսիզան ցանկանում էր, որ հայրն իմանայ
 իրենց սիրոյ մասին, երբ իր սիրած տղամարդը բոլորո-
 վին արդարացած կը լինէր իր վրայ բարդուած մեղադրանք-
 ներից:

Չորրորդ օրն առաւօտեան Կազադէլ-Կօրվօ եկաւ Չէր
 Ստումբը և յայտնեց, որ ինքը եղել է մայեօրի մօտ, հէնց
 որ նա վերադարձել է հնդիկների դէմ իր կատարած ար-
 շաւանքից և հաղորդել է նրան իր բոլոր գուշակութիւն-
 ներն ու պատմել գործի մանրամասնութիւնը, որքան ին-
 քը գիտէ:

— Բարեբաղդաբար, ինչպէս երևում է, նա տրամա-
 դրուած է դէպի մեր երիտասարդը, շարունակեց ծերունին:
 Պատմեցի նրան բանտի վրայ ենթադրուած յարձակման
 մասին, բոլոր ամերիկացիների, մեքսիկացիների մասին,
 չը մոռացայ հաղորդելու և անգամ սպանացի Դիազի մա-
 սին, որ ամբողջ աւագակային խմբի ամենակատաղին է:
 Բանը վերջացաւ նրանով, որ մայեօրն իսկոյն հրամայեց
 կրկնապատկել հսկողութիւնը և այժմ այնտեղ կրկնակի
 պահապաններ են հսկում:

— Ինչպէս ուրախ եմ: Ուրեմն դուք կարծում էք, որ
 Դիազից ոչ մի երկիւղ չը կ'ա՛յ:

— Համարեա թէ այո: Նա գտնուում է միևնոյն տան
 մէջ ուր բանտարկուած է Մօրիսն, բայց ոչ մի սենեա-
 կում. նրանց բաժանում է միմիանցից մի պատ և
 նրանք կարող են խօսել միմիանց հետ, եթէ կամենան:
 Մեքսիկացու հետ բանտարկուած են և նրա երեք անգամ
 ընկերները: Ես կարծում եմ, որ նրանք այժմ բաւակա-

նին ժամանակ կ'ունենան անվերջ խօսելու միմիանց հետ:

— Բայց ի՞նչպէս և երբ պատահեց այդ բանը, դուք դեռ ոչինչ չ'առաջիք այդ մասին:

— Յովսափան: Սպասեցէք մի քիչ, միսս Լուիզա: Իմ այստեղ եկած ընդհանր, դուք միջոց չէք տալիս ինձ շունչ անգամ քաշելու: Ձեր երկրորդ հարցն էր «երբ»: Դրա պատասխանը հեշտ է: Նրան բռնել են սրանից մի ժամ առաջ, ես տեսայ թէ ինչպէս բանտի դռները փակւեցան նրա ետևից և յետոյ եկայ ուղղակի այստեղ:

— Դուք դեռ չը պատմեցիք, թէ ի՞նչու համար են կալանաւորել նրան:

— Դեռ ժամանակ կայ, դրան չեմ հասել: Դա մի երկար պատմութիւն է և բաւականին շատ ժամանակ կը խլի: Կամենում էք լսել այժմ, թէ յետոյ...

— Ինչից յետոյ, միտեր Ստոլմպ:

— Տեսնում էք, միսս Լուիզա... Ես կամենում էի ասել իմ ձին կերակրելուց յետոյ: Նա շատ է ցանկանում ձեր եզրապատգործներից լցնել իւր փորը: Նախ քան ամբողջ գնալը, մենք բաւականին երկար ճանապարհ ենք կտրել և նա յոգնած ու քաղցած է:

— Ներեցէք ինձ, միտեր Ստոլմպ, որ ես առաջ չը մտածեցի այդ մասին: Պլուտոն, միտեր Ստոլմպի ձին տար ախոռը և կերակրի: Դուք ի՞նչ էք կամենում, միտեր Ստոլմպ:

— Շատ շնորհակալ եմ, միսս Լուիզա: Ես կը կամենայի հոգալ միայն իմ պառաւ ձիու մասին: Ինքս դեռ կարող եմ մի ժամ էլ մնալ առանց ուտելու: Սակայն եթէ ձեզ մօտ կը գտնուի մի բաժակ մօնօնգախելեանի օղի, չեմ մերժիլ ամբացնել նրանով իմ ձեր մարմինը:

— Մօնօնգախելեանի օղի: Որքան կամենաք: Բայց գուցէ դուք աւելի լաւ բան էք կամենում:

— Լաւ բան:

— Այո, օրինակ՝ խերես, շամպայն, կամ մի ուրիշ զինի:

— Ես նրանց սիրահար չեմ: Գուցէ դրանք լաւ զիններ են, բայց ես փորձել եմ միայն այն տեսակը, որը պահում է հիւրանոցատէրը: Ահա քեզ իսկական թոյն, որ փչացնում է մինչև անգամ ավիզատորի ստամոքսը: Ո՛չ, թող կորչեն Ֆրանսիական այդ զինները, աւէք ինձ հասարակ, մաքրած օղի, որը բերում են Պիտտուրգից:

— Յլօրինդա, Յլօրինդա:

Արախնին հարկաւոր չէր բացաղբել, թէ ինչու համար կանչում նրան: Ծերունի որսորդի ներկայումս թիւնը ցոյց էր տալիս, թէ ինչ պէտք էր անել: Մինչև մի ընդհանր, աղախինը բերաւ կիսով չափ լիքը մի շիշ նըշանաւոր մօնօնգախելեան զինի:

ԳՆԱՅԷՔ ԶԷՔ ԵՒ ԹՈՂ ԱՍՏԻԱԾ ՕԳՆԷ ԶԵԶ

Ծերունի որսորդը սիրում էր գործել առանց շտապելու: Նա սկսեց խմել օղին դանդաղ ու առանց ուշադրութիւն դարձնելու մանկամարդ աղջկայ անհամբերութեանը:

— Ասացէք ինձ, թանկագին Չէք, — ասաց վերջապէս Լուիզան, աղախնին հեռացնելով. — Եւր ինչո՞ւ համար է բռնած Միգէլ Դիագը:

— Ահա թէ բանը ինչու՞ն է: Երբ մենք վերադարձանք ամրոցը, վերադարձան այնտեղ և Ալամօն Երևացած հնդիկներին հետապնդողները և իրենց հետ բերին մի քանի իրեր, որոնք պարզ ցոյց էին տալիս, որ այդ հնդիկները կերպարանափոխուած սպիտակներ են եղել:

Չհանել հրէջուհին ոչինչ չը խօսեց: Սպիտակութիւնը յոյս էր տալիս նրան, որ ամեն ինչ կարող է լու վերջանալ: Նա կանգնեց, մտախոհութեամբ նայեց որսորդին և սպասում էր, թէ նա ինչ կասէ յետոյ:

— Խաղաթղթերը և այն մի քանի խօսքերը, որոնց լսել է իրլանդացին, հարկադրում էին ինձ կասկածելու, որ զրանք սպիտակներ են եղել և ես իսկոյն գուշակեցի, թէ նրանք որտեղից են երևացել: Բացի այդ, նրանցից մէկին ես արդէն նկատել եմ:

— Նկատել էք:

— Այո, միտս Լուիզա, յիշո՞ւմ էք, որ Ալամօն էր հրացան արձակեցի: Պէտք է ասած, որ ոչ մի ժամանակ չեմ սխալուում ես նշանառութեան ժամանակ, և գիտեմ, որ խփեցի մի անդգամի: Ճշմարիտ է, բաւականին հեռուից արձակեցի հրացանը, բայց գիտէի, որ զնգակը եթէ չի վիրաւորել նրան, գոնէ քերել է նրա մարմին: Ես տեսայ, որ նա արաքոցի ժամանակ տատանւեց և ինքս ինձ մտածեցի «դէհ, եթէ զնգակը գէթ մի փոքր վիրաւորել

է նրան, չէի ցանկանալ նրա տեղը լինել»: Ահա այդպէս, երբ ամրոցը վերադարձան զինւորները և պատմեցին գտած իրերի մասին, ես իսկոյն գուշակեցի, թէ ովքեր էին այդ հնդիկները և կարող էի ամեն մի բոլոր բռնել նրանց: Բայց ես այդ չարի:

— Ինչո՞ւ, միտեր Ստուպ: Մի՞թէ դուք միջոց տրվիք նրանց թաղնելու: Գուցէ այդ մարդիկ մեղաւոր են իմ եղբոր սպանութեան գործում:

— Շատ հաւանական է, հէնց դրա համար էլ ես նրանց առժամանակ հանգիստ թողեցի: Բացի դրանից ես չէի կամենում հեռանալ ամրոցից, որովհետեւ իմ բացակայութեան ժամանակ կարող էր վատ բան պատահել: Հասկանո՞ւմ էք, ինչ եմ ասում: Ունէի և երբորդ պատճառը՝ հետամուտ չը լինել նրանց իսկոյն: Ես կամենում էի բոլորը հաստատ իմանալ:

— Եւ ձեզ յաջողեց այդ:

— Բոլորովին: Ես գիտէի, որ դեռ երկար ժամանակ անձրև չի լինել և կարիք չը կար շտապելու, ուստի սպասեցի զինւորների վերադարձին: Ապա համոզուելով, որ առանց որևէ երկիւղի կարող եմ թողնել Մօրիսին բանտում, թամբեցի իմ մատակը և ճանապարհ ընկայ այնտեղ, ուր գտնւել էին հնդկական զարդարանքները: Ես հետևեցի ձիերի հակառակ հետքին և այդ հետքով հասայ մինչև աւազակների իջևանած տեղը:

— Յետո՞յ:

— Յետոյ ես խօսակցութիւն ունեցայ մայեօրի հետ, որից կէս ժամ յետոյ բոլոր չորսն էլ կալանաւորեցան և բանտարկւեցին իրենց զլխաւորի հետ, որ դեռ ոչ մի բան հոտը չէր անել և չէր շտապել թաղնելու: Ինչպէս արդէն գուշակել էի, Միգէլ Դիագը վրայ կար իմ զրած նշանը. զնգակը ծակել էր նրա աջ ձեռքի միտը և նրան ստիպել էր այդպէս արագութեամբ ցածրացնել պարանը:

— Ուրեմն նա է եղել. — մտախոհութեամբ խօսեց Ղուիզան: — Տարօրինակ է, — շարունակեց նա ինքն իրեն: — Միևնոյն Միգէլ Դիազը, որին ես տեսայ այնտեղ... բլրի վրայ մարգագետնում, իսկ կինը, այն մեքսիկուհին էր... Իգիգորան... Ախ, այստեղ ինչ որ գաղտնիք, ինչ որ մտայլ խորհուրդ կայ թագնւած: Բայց ո՞վ կարող է իմանալ այդ: Ասացէք ինձ, թանկագին Ձէք, — ասաց նա կմկմալով և աւելի մօտենալով ծերունի որսորդին: — չը գիտէք արգեօք, այն մեքսիկուհի տիկինը, որ երևաց այնտեղ, յաճմխ էր այցելում նրան:

— Ո՞ւմը, միսս Ղուիզա:

— Միստեր Հերալդին:

— Ձեմ կարծում, որովհետև եթէ նա եղած լինէր Մօրիսի խրճիթում, Փելեմն անշուշտ կը խօսէր ինձ այդ մասին:

— Ճիշտ է, — ասաց Ղուիզան և կամենալով խօսակցութեանը ուրիշ ուղղութիւն տալ աւելացրեց: — Այդպէս ուրեմն, դուք կարծում էք, որ մեզ այսքան վիշտ պատճառող մարդիկը մեքսիկացիներ են եղել:

— Ճիշտն ասած, միսս Ղուիզա, ինքս էլ չը գիտեմ: Երբեմն մտածում եմ, թէ այդ ոճրագործութեան հեղինակները մեքսիկացիներ են, երբեմն էլ չեմ կարողանում անջատել այն մտքից, թէ այդ սև գործի մէջ խառն է մի ուրիշը:

— Յամենայն դէպս ոչ նա, Ձէք:

— Մուստանդերը: Ո՛չ, նրա մասին խօսք չէ կարող լինել:

— Ատում են սակայն, որ բոլոր փաստերը նրա գէմն են և նրա օգտին ոչինչ չի կարելի ասել:

— Դէ՛հ, այդ դեռ բոլորովին իրաւացի չէ: Տախաստանում կարելի է գտնել մեր երիտասարդի անմեղութեան շատ ապացոյցներ: Այնտեղ խօսում է ամեն մի

տրորւած խոտ, ամեն մի կտոր հող: Գուցէ Ալամօի փերին մենք կարողանանք մի բան գտնել:

— Ուրեմն դուք յո՞յս ունիք, որ կարող էք ապացոյցներ գտնել:

— Կը փորձեմ: Կը գնամ, կ'դիտեմ շրջակայքը, առանձնապէս այն տեղը, ուր գտայ երիտասարդին բժաւոր գազանի ճանկերում: Թէև այն օրից անցել է մի շաբաթ, բայց հաւանական է, որ ինձ պէտք եղած բոլոր նշանները որոշ ու պարզ կերպով նկատելի են գետնի վրայ, միայն պէտք է կարողանալ որոշել նրանց մինը միւսից: Մակայն, միսս Ղուիզա, արդէն ժամանակ է ուղևորելու: Ես եկայ միայն ձեզ այդ նորութիւնը հաղորդելու: Ձը պէտք է ժամանակ կորցնել: Այսօր ինձ թոյլ տւին Մօրիսի մօտ մտնելու. նրա գլուխն արդէն սկսում է կարգի ընկնել: Հէնց որ նրա առողջութիւնը փոքր ինչ տեղը գայ, օրինակատարները դատ կը պահանջեն: Ո՞վ գիտէ, դուցէ նրանք այդ դատը կը նշանակեն երեք օրից յետոյ, իսկ ես պէտք է անպատճառ դատին ներկայ լինեմ:

— Գնացէք Ձէք, և թող Ասուած օգնէ ձեզ այդ ազնիւ գործի մէջ: Եթէ դուք նրա անմեղութեան ապացոյցները բերէք, ես իմ ամբողջ կեանքում երախտապարտ կը մնամ ձեզ:

Ա Շ Խ Է Տ Ը

Լուսիգայի ջերմ բարեմաղթութիւններով որսորդը դուրս եկաւ գազէնդայից և շտապեց ախոռը, ուր նրա մատակը զբաղւած էր եզիպտացորէնի քաղցր կերով, որը չէր խնայել ախոռապան Պլուտօնը:

Իւր սովորութեան հակառակ սև ծառան լուս էր և տխուր: Նրա տխուր տրամադրութեան պատճառը դժուար չէր իմանալ: Երիտասարդ տիրոջ մահը, որին շատ էր սիրում Պլուտօնը, ոչ պակաս սիրելի և յարգելի տանտիկնոջ վիշտը, գուցէ և Յլօրինդայի հետ իր ունեցած վէճը, իսկ ամենից առաւել կապիտան Կէլհօունի կողմ վարձուները, որ անա մի քանի օր է, որ ինչպէս լիակատար տէր՝ կարգադրում էր տանը, — այդ ամենը բնականազամ պարզում էին սև ախոռապանի գէմբի մտայլ արտայայտութիւնը:

Ձեքը չափազանց զբաղւած լինելով իւր ենթադրութիւններով, ուշադրութիւն չը դարձրեց նրա վրայ: Նա այնպէս էր շտապում, որ մինչև անգամ միջոց չը տուաւ իւր մատակին ճաշը վերջացնելու: Նա բռնեց ձիու դունչը, սանձեց և կամենում էր ախոռից դուրս բերել:

— Ինչո՞ւ համար էք այդպէս շտապում, մասսա Տոււմպ, — ասաց Պլուտօնը:

— Պէտք է շատ հեռու գնանք, խափշիկ:
— Շատ շուտ են գնում այստեղի տափաստաններում մասսա Ստոււմպ, ես ճանաչում եմ մի ձի, որ մի գիշերւայ մէջ երկու հարիւր մղոն է անցել:

— Ի՞նչ ձի է այդ:
— Ահա այն աշխէտը, որ կանգնած է դռան մօտ: Միտեր Կէլհօունի ձին:
— Ինչից գիտես, որ նա երկու հարիւր մղոն է անցել:

— Որովհետև տուն էր եկել ամբողջովին քրտինքի ու փրփուրի մէջ կորած և այնպէս յոգնած, որ համարեա չէր կարողանում քայլել: Երբ ես տարայ նրան գետը ջրբերու, նա տատանւում էր: Հօ, հօ, անա թէ որքան էր ուժից ընկել:

— Այդ ո՞ր գիշերն է եղել, Պլուտօն:

— Ո՞ր գիշերը: Ի հարկէ այն գիշերը, երբ կորաւ մասսա Հենրին: Այդ միկնոյն գիշերը, առաւօտեան դէմ, հէնց որ արեգակն սկսել էր երևալ երկնակամարի վրայ, — ես միշտ արշալուսին եմ գալիս ախոռը, — գալիս եմ այստեղ և տեսնում, որ ձին կանգնած է և ամբողջովին փրփուրի մէջ կորած, թրջւած և այնպէս յոգնած, որ կարծես թէ հէնց նոր էր վերջացրել մեծ արգելքներով սրարշաւը, որպիսին լինում էր մեզ մօտ Նոր Օրլէանում:

— Ո՞վ կարող էր նստել այդ ձին այն գիշերը:

— Չը գիտեմ, մասսա Տոււմպ: Բացի մասսա Կէլհօունից ոչ ոք չի նստում Աշխէտը: Նա ոչ ոքի թոյլ չի տալիս իւր ձիուն մօտենալ:

— Նշանակում է, նա ի՞նքն է ձին դուրս բերել ախոռից:

— Չը գիտեմ, մասսա Տոււմպ: Չը գիտեմ ո՞վ և ինչու համար է դուրս բերել ձին: Ես ոչինչ չեմ տեսել:

— Եթէ ասում ես, որ նա ամբողջովին փրփուրի մէջ կորած էր, նշանակում է, որ մէկը հեծել է նրան:

— Այդ ձիւն է: Մէկը հեծել է:

— Դէհ, Պլուտօն, ինչպէս երևում է, դու լաւ տղայ ես, չը նայելով որ քո կաշին սև է և ես հաւատում եմ, որ դու, յիբաւի չը գիտես թէ այդ գիշերն ով է նստել այդ ձին: Բայց ի՞նչ ես կարծում, ո՞վ կարող է լինել այդ: Ես հարցնում եմ քեզ նրա համար, որ միտեր Պօյնգեք-ես հարցնում եմ քեզ նրա համար, որ մի ուրիշը ստերն իմ բարեկամն է, ես չեմ կամենում, որ մի ուրիշը օգտւէր նրա կամ միտեր Կէլհօունի սեպհականութիւ-

նից: Հաւանական է, որ խափշիկներէց մէկը գաղտնի դուրս բերած լինի ձին և նրա վրայ ման եկած շրջակայքում: Այնպէս չէ:

—Ո՛չ, մասսա Տոմայ, ես այդպէս չեմ մտածում: Բանւորներին թոյլ չի տրուում այստեղ գալ: Նրանք չեն համարձակուիլ ախոռը մտնել:

—Գուցէ վերակացուն է՞ նրան դուրս բերելախոռից:

—Ո՛չ, ո՛չ:

—Ուրեմն ո՞վ կարող է անել այդ:

—Դա իմ գործը չէ, մասսա Տոմայ: Ա՛խ, այն առաւօտը ես էլ էի կամենում այդպէս մտածել, բայց...

—Բայց ի՞նչ...

—Մասսա Տոմայ, միևնոյն օրը կէսօրից մի ժամ անց ինձ ծեծեց մասսա Կէլհօունը:

—Ի՞նչու համար, երևի որևէ յանցանք ես գործել:

—Իմ յանցանքը այն էր, որ հարցրի նրան թէ ինչու Աշխէտն այնպէս յոգնած էր այն գիշերը: Նա գոռաց և յայտնեց ինձ, որ այդ իմ գործը չէ, ոտքով խփեց ինձ, յետոյ սկսեց ծեծել փոկով և վերջըն էլ սպառնաց, որ եթէ ես այդ մասին մի բառ իսկ ասեմ որ և է մէկին, կը հրամայէ ինձ մտրակի հարիւր հարւած տալ: Երդւեցի և ինչպէս երդւեցի: Ես իմ կեանքում մասսա Կէլհօունին դեռ այդպէս բարկացած չեմ տեսել:

—Նա այժմ որտեղ է: Ես նրան տանը չը տեսայ: Նրա ձին այստեղ է, հետևապէս պէտք է որ նա ոչ մի տեղ գնացած չը լինի:

—Ո՛չ, գնացել է, մասսա Տոմայ: Նա այժմ շատ քիչ է տանը լինում, ամբողջ օրերով կորած է լինում:

—Ձիով է գնացել:

—Այո: Այսօր հրամայեց թամբել մոխրագոյն ձին: Այն գիշերից յետոյ նա դեռ ոչ մի անգամ չի նստել Աշ-

խէտը. երևի գիտէ, որ ձին բաւականին յոգնել է և հարկաւոր է միջոց տալ նրան հանգստանալու:

—Լսիր, Պլուտօն,—ասաց Ձէբը մի բոպէ մտածելուց յետոյ.—ես կարծում եմ, որ լաւ կը լինի իմ ձիուն էլ միջոց տալ փոքր ինչ հանգստանալու և կշտանալու: Նա արդէն բաւականին ճանապարհ է անցել և դեռ երկար ճանապարհ պէտք է գնայ: Առածն ասում է «հանգարտ կ'երթաս, շաա կ'երթաս»: Թո՛ղ նա հանգստանայ և մինչդեռ նա կը լցնի իւր ստամոքսը, ես էլ կարող եմ իմ ստամոքսը լցնել: Ձեր տանտիկինն առաջարկեց ինձ միայն ճաշի, բայց ես այնպէս շտապում էի, որ մերժեցի. իսկ շին, բայց ես այնպէս շտապում էի, որ մերժեցի. իսկ այժմ տեսնում եմ, որ ժամանակ անցկացնելու համար կարելի է մի բան ուտել: Գնա խոհանոց և ուտելու մի բան բեր, թէկուզ մի կտոր հաց և միս:

—Այդ լաւ կը լինի, մասսա Տոմայ: Այս բոպէին ուտելու մի բան կը բերեմ ձեզ համար:

Խափշիկը վազեց դէպի խոհանոց. Ձէբը մնաց ախոռում միայնակ: Նրա դէմքի կեղծ անտարբերութիւնը վայրկենապէս փոխւեց լուրջ մտատանջութեան, հէնց որ ծառան թագնեց ախոռի դռան ետևը: Նա անցաւ քարած անցքը, որ բաժանում էր միմիանցից ախոռների երկու շարքերը և մօտեցաւ Աշխէտին: Կենդանին տանւելով մի կողմը քաշւեց, երևի վախեցաւ մօտեցող որսորդի վճռական տեսքից:

—Կանգնիր հանդարտ, անասուն,—գոչեց Ձէբը.—ես քեզ ոչինչ վնաս չեմ տալ, թէև քո աչքերին նայած դու պակաս չարը չես քո տիրոջից: Կանգնիր հանդարտ, ինձ հարկաւոր է միայն քո պայտերին նայել:

Այդ խօսքերն ասելով, նա փորձեց բարձրացնել ձիու պռաջին ոտը, բայց վախեցած կենդանին անձնատուր

չեղաւ նրան: Նա փռշտաց և անհամբերութեամբ սկսեց ոտները զետնին խփել այնպէս, որ Զէբը վերջապէս ստիպւած էր հանգիստ թողնել նրան:

— Դէ՛հ հանգիստ կ'աց, անասուն, — ասաց նա փաղաքշական եղանակով. — Թոյլ տուր ինձ նայել միայն քո պայտերին:

Նա դարձեալ փորձեց բարձրացնել ձիու ոտը, բայց նրա բոլոր աշխատանքն այս անգամ էլ ի զուր անցաւ:

— Անիծւած կենդանի, — բացականչեց նա այս անգամ. — հանդարտ, թէ չէ կը խեղդեմ քեզ:

Այդ խօսքերն ասելով նա արձակեց արկանը իւր թամբից, ձգեց օղակը ձիու պարանոցին և այնպէս քաշեց, որ նա աղեղի լարի պէս ուղիղ ձգւեց: Ձին կատաղաբար պտտուեց ախոռում և ամբողջ մարմնով դողալով փռշտաց, բայց պարանոցը խեղդող օղակը շուտով հնազանդեցրեց նրան. սպա մօտեցաւ, բարձրացրեց ոտները մինը միւսի ետևից և շտապով, բայց ուշադրութեամբ դիտեց պայտերը: Նա նկատեց նրանց ձևը, մեխերի թիւն ու դասաւորութիւնը, — մի խօսքով ամեն մի առանձնայատկութիւն, որով կարելի էր ճանաչել այդ պայտերի թողած հետքերը:

Երբ որ Զէբը բարձրացրեց ետևի երկրորդ ոտը, ուրախութիւնից բացականչեց: Պայտը կտարւած էր երկրորդ մեխի մօտից և ծայրից պակասում էր համարեա մի բաւոր դ մասը:

— Եթէ որ առաջուց իմանայի այդ, այսքան նեղութիւն չէի կրի, ասաց Զէբը պայտը դիտելով: — Այս պայտի թողած հետքը դժւար կարող է խառնուել միւսների հետ, բայց աւելի ճիշտ որոշելու համար հարկաւոր է այս պայտը վերցնել ինձ հետ:

Նա հանեց իւր որսորդական ահագին դանակը, բըռ-

նեց նրանով պայտը և ամբակից պոկելով դրաւ գրպանը, յետոյ արձակեց արկանի հանգոյցը:

Մի ընդհանուր շնորհակալութեամբ Պլուտօնը, բերելով իւր հետ բաւականին ուտելիք և մի մեծ բաժակ մօծանգախէլ: Զէբն իսկոյն սկսեց ուտել, առանց մի խօսք ասելու նրա բացակայութեան ժամանակ պատահած անցքի մասին: Բայց վերջինս նկատեց Աշխէտի գրգռւած դրութիւնը:

— Մի նայեցէք, մասսա Սոուսայ, ի՞նչ է պատահել Աշխէտին: Նա ձեզ է նայում, կարծես թէ վախենում է ձեզանից:

— Ինչպէս չէ, — ասաց Զէբը կեղծ անտարբերութեամբ: — Ի հարկէ, վախենում է: Նա կամենում էր մօտենալ իմ մատակին, ես մի երկու անգամ խփեցի նրան կաշիով, դրա համար էլ գրգռւած է:

Ախոռապանը բոլորովին գոհ մնաց այդ պատասխանից և դրանով էլ վերջացաւ այդ հարցի վերաբերեալ խօսակցութիւնը:

— Պլուտօն, — ասաց Զէբը, կամենալով գրաւել խափշիկի ուշադրութիւնը, վերջին անգամ երբ են պայտել ձեր ձիերը:

— Կարծեմ մի շաբաթ առաջ, իսկ այսօր միտք կէլհօունը պայտարին կարգադրել է, որ իր Աշխէտին էլ պայտի:

Պլուտօնի տւած պատասխաններից գոհ, Զէբը սանձեց ձին, դուրս բերաւ ախոռից, նստեց և մտախոհ ճանապարհ ընկաւ:

ԶԷԲ ԱՏՈՒՄՊԸ ԳՏՆՈՒՄ Է ՆԵՏՔԸ.

Կազա-դէլ-Կօրվօի սահմանից դուրս գնալով, որսորդը ամենամեծ արագութեամբ գնաց գետն ի վեր, Ինգէ ամբողջի ուղղութեամբ: Կէս ժամ յետոյ նա արդէն գտնուում էր ամբողջի առաջ, ուր իւր շնչասպառ ձին թողնելով հրապարակի վերայ, նա ուղղակի գնաց բերդապետի բնակարանը:

Նրա համար դժւար չէր տեսակցութիւն ունենալ ամբողջի գլխաւորի հետ: Սպաների մօտ նա արտօնւած մի անձնաւորութիւն էր, ամեն տեղ ազատ ելու մուտք ունէր և կարող էր ամբողջը մտնել առանց պայմանական խօսքի (պարօլ) և որևէ ձեւականութիւնների, որ սովորաբար պահանջուում են կողմնակի անձնաւորութիւններից: Պահապանը բաց թողեց նրան որպէս ծանօթ մարդու, հերթապահ սպան փոխանակեց նրա հետ ողջոյններ, իսկ ազիւտանդն իսկոյն յայտնեց նրա մասին մայեօրին:

— Վերջինս երևի սպասում էր Զէբին, որովհետև որսորդի ներս մտնելուն պէս ողջունեց նրան հետևեալ խօսքերով:

— Ա՛, միտեր Ստոււմպ, շատ ուրախ եմ, որ նորից տեսնում եմ ձեզ: Ի՞նչ է, որևէ նոր բան էք գտել: Նայելով ձեր շուտ վերադարձին, պէտք է որ նորութիւններ ունենաք: Յուսով եմ, որ ձեր տեղեկութիւնները մեր անբաղդ երիտասարդի օգտին կը լինին: Զը նայելով որ բոլոր ապացոյցները նրա դէմն են, ես այնուամենայնիւ մտում եմ իմ նախկին կարծիքին, որ նա մեղաւոր չէ: Պատմեցէք, ի՞նչ նոր բան գիտէք:

— Շատ քիչ բան, — պատասխանեց որսորդը քաղաքավարութեամբ գլխարկը բարձրացնելով: — Ես չէի կամենում այստեղ վերադառնալ տափաստանում խուզար-

կութիւններս վերջացնելուց առաջ, բայց ինձ հարկաւոր է խօսել ձեզ հետ:

— Լաւ: Ինչի՞ մասին էք կամենում խօսել:

— Ես կամենում էի խնդրել ձեզանից հնարաւորութեան չափ յետաձգել դատը երկար ժամանակով:

— Ես կարող եմ միայն արգելել օրէնքի խանգարումը, բայց նրան հակառակ գնալ չեմ կարող:

— Ես օրէնքի հակառակ ոչինչ չեմ պահանջում, միայն ես խօսում եմ այն մի քանի մարդկանց մասին, որոնք կամենում են այդ գործն իրենց ձեռքն առնել և վերջացնել այնպէս, ինչպէս կամենում են: Առանձնապէս կասկածում եմ ես մի մարդու մասին:

— Ո՞վ է:

— Առայժմ դեռ ժամանակ չէ դրա մասին խօսելու, որովհետև այդ միայն մի գուշակութիւն է և ես հեշտութեամբ կարող եմ սխալւել: Բայց երբ ես կը վերադառնամ Նուէցէս գետից, այն ժամանակ կը պատմեմ ձեզ բոլորը, ինչ որ կը յաջողւի ինձ իմանալ տափաստանում:

— Սիրով կը սպասեմ ձեր վերադարձին, որովհետև գիտեմ, որ դուք գործում էք յանուն արդարադատութեան: Զե՛մ կարող որևէ բանով օգնել ձեզ:

— Յետաձգեցէք դատը, մայեօր, ուրիշ ոչինչ հարկաւոր չէ ինձ, ամեն բան ինքն իրեն կընթանայ:

— Որքան ժամանակով:

— Կարո՞ղ էք ինձ երեք օր խոստանալ:

— Երեք օ՞ր:

— Այո՛, միմիայն երեք օր:

— Տեսնում եմ, մայեօր, որ զինւորական օրէնքներն էլ կարող են մեզ օգտակար լինել, թէև մենք ազաքաղաքացիներս այնքան էլ չենք սիրում նրանց ենթարկւել: Ես խնդրում եմ դատը յետաձգել միայն երեք օր:

իսկ այն ժամանակ կը տեսնէք, ով կը նստի մեղադրեալի նստարանի վրայ,—Մօրիս մուստանգերը, թէ նրանք, որոնք այժմ նրա հետ միասին բանտ են նստած, բայց կարող է պատահել, որ մի ուրիշը, որն այժմ մինչև անգամ կասկածի էլ չի ենթարկուել: Ուրեմն երեք օր յետոյ:

—Սպայի ազնիւ խօսք եմ տալիս, միստր Ստուժպ որ երեք օրից առաջ Մօրիս մուստանգերը դուրս չի գալ բանտից, թէև ինձ հարկաւոր լինի ի չարը գործ դնել իմ իշխանական իրաւունքը: Մեղաւոր է նա թէ ոչ, —ես կը պաշտպանեմ նրան հնարաւորութեան չափ:

—Գովելի մարդ էք, մայեօր: Երգուում եմ, որ երբեքիցէ ցոյց կը տամ ձեզ իմ երախտագիտութիւնը: Այժմ ես ոչինչ չունիմ ասելու, միայն խնդրում եմ մեր խօսակցութեան մասին ոչ ոքի չը հաղորդել: Կան մարդիկ, որոնք եթէ իմանան, որ իրենց վրայ կասկածում են, կարող են թագնուել կամ զգուշանալ:

—Հանգիստ եղէք, միստեր Ստուժպ, ոչ ոք ոչինչ չի իմանալ:

—Շնորհակալ եմ, մայեօր: Թո՛ղ Աստուած օրհնէ ձեզ: Գուք ամենաարդարադատ մարդն էք ամբողջ Տելասսում:

Հրաժեշտ տալով մայեօրին, որսորդը դուրս եկաւ բերդից հրապարակը, ուր թողել էր իւր մատակը, թուաթամբի վրայ և շտապով ձանապարհ ընկաւ:

Ամբողջից հեռանալով, նա վերադարձաւ այն ճանապարհը, որը տանում էր Կազա-դէլ-Կօրվօ: Դեռ չը հասած Պօյնդեքստերի ազարակին, Զէբը թողեց Աէօնի հովիտը և սկսեց զտփփեր շաւղով բարձրանալ բարձրախան-

դակը: շուտով նա հասաւ մացաններին և դուրս եկաւ մեսկիտական ծառերի սուերի տակը:

Նա առաջ էր գնում դանդաղ, աչքերը գեանին յառած մի այնպիսի անորոշ արտայայտութեամբ, որ ունենում են մտքերի մէջ խորասուզած մարդիկ:

—Գրո՞ղը տանի,—խօսեց նա ցած ձայնով: —Ահա մի կարևոր հանգամանք: Կապիտան Կէլհօունի ձին փրփուրի մէջ էր այն գիշերը, երբ... անշուշտ այդ մի բան է նշում: Ես վաղուց եմ կասկածում, որ նա մեղաւոր է նախկին գործի մէջ: Ինչքան տարօրինակ է մտածել, այս գարշելի գործի մէջ: Ինչքան տարօրինակ է մտածել, թէ նա է սպանել իւր ազգականին: Ի հարկէ, դա մի այնպիսի մարդ է, որ իւր օգտին կը կատարէ ամեն բան... Բայց նպատակն ի՞նչ է: Այդ շատ հասկանալի կը լինէր, եթէ կալածքն անցնէր Հենրիին: Բայց այդ չը կայ. ծեծութէ կալածքն անցնէր Հենրիին: Բայց այդ չը կայ. ծեծութեան Պօյնդեքստերն այլևս չի տիրապետում ոչ մի արկ բունի Պօյնդեքստերն այլևս չի տիրապետում ոչ մի արկ հողի և ոչ էլ մի նեգրի: Բոլորը վաղուց արդէն պատկանում են այդ անզգամին, էլ ի՞նչ կարիք կար ազատել իւր ազգականից: Ես երբէք չեմ լսել, որ երբեքից նրանք վիճէին միմիանց հետ: Ծշմարիտ է, կապիտանը սիրում է Լուիզային և այդ, ինչպէս երևում է, առանձնապէս զիւր չէր գալիս Հենրիին, բայց այդ հանգամանքը դեռ չէր կարող նրան սպանելու պատճառը լինել: Ի՞նչ կերպով խառնուել են այս գործում մուստանգերը, հնդիկները, մեքսիկուէին, անգլուիս ձիաւորը և չը գիտեմ դեռ ով: Յովսափան: Այստեղ ամենաճարակի և հմուտ փաստաբանն անգամ գլուխը կը կորցնէ: Սակայն ժամանակ կորցնելու տեղը չէ. կարելի է այս կտոր երկաթը կօզնէ ինձ այդ արիւնալի պատմութեան հանելուկը լուծել: Այժմ ո՞ր կողմը գնամ:

Նա նայեց շուրջը, որպէս թէ իւր հարցի պատասխանին էր սպասում:

— Խուզարկութիւնն սկսել ամբողջի կամ քաղաքի մօտից, բոլորովին անօգուտ է: Այստեղ ամբողջ շքեղ կապքը կոխուած է, ինչպէս տաւարի փարախում: Աւելի լաւ կը լինի, եթէ ես դուրս գամ տափաստանը և շեղ կերպով ուղևորեմ Ռիօ Գրանդէ տանող ճանապարհով: Այնտեղ ես կարող եմ գտնել այն հետքը, որը որոնում եմ: Այո, այդ աւելի խելացի կը լինի:

Որսորդը հաւաքեց ձիու սանձը, մըթմըթաց մի քանի խօսք էլ, խրախուսեց իւր պառաւ մատակին և դիմեց դէպի մացառների եզրը: Անցնելով մի մղոնի չափ Նուէցէս գետի ուղղութեամբ, նա յանկարծ, բայց վրձնականութեամբ, որ ցոյց էր տալիս նրա կանխօրէն մտածած դիտաւորութիւնը, համարեա ուղիղ անկեան տակ շուռ տաւ ձիու գլուխը դէպի արևմուտք և դիմեց դէպի Ռիօ-Գրանդէ:

Որսորդի դէմքի արտայայտութիւնը, նրա ձի նըստելու ձևը յանկարծ փոխեցին: Նա իզուր չէր նայում այս ու այն կողմը. նստած ձիու վրայ, գլուխը խոնարհած, ուշադրութեամբ դիտում էր գետինը, տափաստանի միջով անցնող շաւղի երկու կողմում:

Այդպիսով մօտ մի մղոն անցնելով, նա յանկարծ ձգեց ձիու սանձը և կանգ առաւ. գետնի վրայ մի բան գրաւեց նրա ուշադրութիւնը. նա շտապով ցած թռաւ ձիուց, անցաւ մի քանի քայլ և շոքեց: Յետոյ նա հանեց գրպանից պայտի կտորը և դրաւ հողի վրայ ձիու պարզ գրոշմած հետքերի վրայ: Պայտը և հետքը համապատասխան էին միմիանց:

— Գալիս է,— բացականչեց Ջէքն ուրախութեամբ: — Իսկ և իսկ նա է: Երդու՞մ եմ Յովսափաթով, որ այս եթէ ոչ մարդասպանի, գոնէ դաւաճանի հետքն է:

ԿՂԶԻՆ ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ

Կենդանական աշխարհի ամենափառահեղ տեսարաններէց մէկը,—այն է կանաչ տափաստանում հանգիստ կերպով արածող վայրի ձիերի երամակը, որ բաղկացած է լինում մի քանի տասնեակ և երբեմն մի քանի հարիւր գլուխ ձիերից,—երբէք չի զարմացնում Տեխասի սահմանային բնակչին: Ընդհակառակը նա աւելի է զարմանում, երբ տեսնում է մէկ ձի միայն:

Առաջին դէպքում իւրաքանչիւր ոք առանց մտածելու կասէ, որ դա ուղղակի մուստանգների մի հօտ է: Բայց տափաստանում թափառող մեն մենակ ձիու երևալը, մտածութեան մէջ է ձգում: Եզրակացութիւնը երկու տեսակ կարող է լինել. կամ դա կաւալկադայից (վայրի ձիերի երամակ) հարածած մի ձի է կամ թէ ճանապարհորդների իջևանից մոլորած և յետ մնացած մի ընտանի ձի:

Եթէ ձին սանձած և թամբած է, այն ժամանակ ոչ մի կասկած չի կարող լինել, որ դա վայրենի ձի չէ, այլ ընտանի, սովորեցրած կենդանի է և մնում է միայն գուշակել, թէ նա ինչ կերպով է փախել իւր տիրոջից:

Եթէ տափաստանում թափառող և արածող ձի վայրաստած է մի մարդ, այն ժամանակ ոչ ոք չի կասկածում նրան հաստագլուխ անւանելու, եթէ նա չի մտածում ցած իջնել ձիուց և այդպիսով հնարաւորութիւն տալ նրան աւելի լաւ արածելու: Բայց եթէ ձիաւորը ոչ միայն հաստագլուխ չէ, այլ և մինչև անգամ գլուխ չունի, այն ժամանակ այդպիսի տարօրինակ երևոյթը իւրաքանչիւր մարդու գլխում առաջ է բերում հազարաւոր գուշակութիւններ, որոնցից ոչ մէկն էլ, վստահութեամբ կարելի է ասել, մի կաթիլ ճշմարտութիւն չունի:

Մեր դարու (19-րդ դարու) յիսնական թւականներ

ըին այդպիսի մի ձիաւոր էր երևացել հարաւ արևմտեան Տեխասում:

Այդ անսովոր և երևակայական տեսիլքը երևաց Լէօօնի հարաւային վտակի և Նուէցէս գետի վերնամասերի մէջ ընկած տարածութեան վրայ, որն ունի մօտ քսան մղոն շրջապատ: Նրան տեսել են զանազան ժամանակներում երբեմն տափաստանում, երբեմն մացառոտում: Ըսկըզբում նրան տեսել են Հենրի Պոյնդեքստերին և նրան սպանողին գանելու ուղևորւած խուզարկուները, յետոյ Մօրիս մուստանգերի ծառան, կասսիյ Կէլհօուներ, որ գիշերով ուղևորւել էր անտառը շրջակայելու, Չէք Ստուպը և շատ ուրիշները.—որսորդներ, հովիւներ, ճանապարհորդներ:—Եւ այդ երևակայական տեսիլքը բոլորին էլ աննկարագրելի երկիւղի մէջ էր ձգել:

Անգլուխ ձիաւորի մասին լուրը արագութեամբ տարածեց Ինգէ ամրոցի շրջակայքում և հասաւ մինչև Ռիօ-Պրանզէի միւս կողմի հեռաւոր գաղութները: Ոչ ոք չէր կասկածում այդ լուրերի ճշմարտութեան վրայ, որովհետև չէր կարելի արհամարհել մի քանի տասնեակ մարդկանց ցուցմունքները: Բնութեան բոլոր օրէնքները խանգարող այդ տարօրինակ և անսովոր երևոյթը ամենքին կատարեալ տարակուսանքի մէջ էր ձգել:

Ժողովրդի մէջ պատուում էին և ճշմարտաման և բոլորովին անհեթեթ լուրեր: Մի քանիսը ենթադրում էին որ այդ հնդիկների խորամանկութիւն է, միւսները համարում էին ձիաւորին լցրած խրուիլակ, մնացածները հաստատում էին որ այդ իսկական մարդ է, որ հմտութեամբ գլուխը թաղցրել է ուսերին ձգած վերարկուի ախ և որ հաւանական է, նրա վերարկուի մէջ կան բացածքներ, որոնց միջով նա կարողանում է կառավարել ը ձին. Վերջապէս քիչ մարդիկ կային, որոնք այն կարօին էին, թէ դա ինքը սատանան է:

Այդ բոլոր ենթադրութիւնների և գուշակութիւնների հետ միասին, որոնցով աշխատում էին բացառել այդ գերբնական երևոյթը, տարածում էին նորանոր ձայներ անգլուխ ձիաւորի մասին: Ասում էին, որ իբր թէ մէկին յաջողել է տեսնել նրա գլուխը. կամ աւելի շուտ, նրա գծագրութիւնը, որովհետև նա ծածկւած է եղել վերարկուի տակ. մի քանիսներն ընդհակառակը հաստատում էին, որ ձիաւորը գլուխը բռնած է ձեռքում և այդ գլխին հազցրած է ոսկեղօծ ժապաւենով շրջապատւած գլխարկ: Քիչ չէին խօսում և Հենրի Պոյնդեքստերի ու այդ անգլուխ ձիաւորի երևալու տարօրինակ գուգադիպութեան մասին: Շատերը ենթադրում էին, թէ այդ անցքերի մէջ գոյութիւն ունի ինչ որ կապ, բայց թէ ինչպիսի, ոչ ոք չէր գիտէր: Միակ մարդը, որը կարող էր փոքր ինչ պարզել այդ աւեղծուածային պատմութիւնը, անզգայ ընկած էր և իրեն առաջարկւած հարցերին չէր պատասխանում:

Անցել էր մի ամբողջ շաբաթ և անգլուխ ձիաւորը ազատ շրջակայում էր: Նա երբեմն արշաւում էր, երբեմն առաջ էր շարժւում հանգիստ և դանդաղ քայլերով, երբեմն բոլորովին կանգ էր առնում մի առժամանակ: Նրա ձին գլուխը խոնարհած արածում էր քաղցր և հիւսթալի gramma խոտը, որի շնորհիւ տեխասեան արօտատեղիները կարելի է ամենալաւը համարել ամբողջ աշխարհում:

Մի կողմը թողնելով ժողովրդի մէջ պտտւող ուրիշ շատ զրոյցները անգլուխ ձիաւորի մասին, որոնցից մի քանիսը ծայրահեղ անհեթեթութիւններ էին, մենք յիշենք այստեղ մի միջադէպ, որը կազմում է այդ տարօրինակ և անսովոր անցքի էական մասը...

Բաց, հարթ տափաստանի մէջ գտնւում է մի փոքրիկ անտառ, որը բռնում է միայն երկու, թէ երեք ար

տարածութիւն: Տափաստանի բնակիչներն այդպիսի տեղերն անւանում են «կղզիներ» և եթէ դուք նայէք խոտի լայնատարած կանաչ ծովին, որը շրջապատում է այդ փոքրիկ անտառը, կըզարմանաք այդ համեմատութեան յաջողութեամբ: Այդ անունը մտածել են ոչ թէ Տեխասի բնակիչները, որոնք երբէք ծով չեն տեսել, այլ ինչ որ գաղթական: Յետոյ այդ անունը սերնդէ սերունդ անցնելով ընդհանուր գործածութեան մէջ է մտել:

Այդ «կղզից» երկու հարիւր եարդ հեռաւորութեան վրայ հանգիստ արածում է մի ձի, որի վրայ նստած է անգլուխ ձիաւորը: Այն ժամանակից սկսած, երբ տեսան նրան խուզարկուները, նրա արտաքինի մէջ ոչ մի նկատելի փոփոխութիւն չի առաջացել: Միևնոյն ասեղնագործւած վերարկուն ծածկում է ձիաւորի ուսերը, ուսերին կային յովազի մորթուց կարած մի և նոյն անթափանցիկ կօշիկները: Նա նստած է թամբի վրայ անշարժ, փոքր ինչ դէպ առաջ թեքուած, կարծես թէ հէնց նրա համար, որ ձին կարողանայ լաւ արածել: Երասանակները ազատ բաց են թողնւած, կամ կարելի է ասել, ձգւած են թամբի աղեղով: Այն մարդիկ, որոնք ասում էին թէ ձիաւորը գլուխ ունի, չէին խաբում: Գլուխը կախւած է նրա ձախ ոտի մօտից, ծնկան հաւասարութեամբ. նրա վրայ կայ սև գլխարկ: Բայց այդ գլուխը միայն նա կարող է տեսնել, ով որ կը նայէ ձիաւորին ձախ կողմից, բայց այն էլ ոչ միշտ: Ժամանակ առ ժամանակ վերարկուի ծայրը քամուց տատանւելով բոլորովին ծածկում է գլուխը:

Երբեմն կարելի է տեսնել և երեսը: Նա գեղեցիկ է, բայց չի կարելի առանց գողալու նայել նրան: Կիսաբաց, դունատ կապտագոյն շրթունքները կարծես թէ ժպտում են, ցոյց տալով երկու շաբթ խիստ սպիտակ ատամները:

Առաջ անգլուխ ձիաւորը շրջապատւած է միայնակ, իսկ այժմ նա շրջապատւած է հասարակութեամբ: Կէս տաս-

նեակ գայլեր վազում են նրա ետեից: Ըստ երևոյթին ձիուն դիւր չէ գալիս այդ հետամտութիւնը և նա սրմբակները գետնին է խփում ու խռոացնում, եթէ գայլերը համարձակում են աւելի մօտենալ նրան:

Ձիաւորի գլխավերը, օդի մէջ, պտտում են ահագին սև թռչուններ, բայց նա ըստ երևոյթին ոչ մի ուշադրութիւն չի դարձնում նրանց վրայ: Նրանցից մէկը, աւելի համարձակ քան միւսները, մի քանի անգամ նըստում է նրա ուսին հէնց այնտեղը, ուր պէտք է լինէր գլուխը. վախեցած ձին խրինջում և կանգնում է ետեի ոտների վրայ, իսկ նրա հեծնողը մինչև անգամ ձեռքը չի շարժում յանդուգն գիշատիչին հալածելու համար:

Անգլուխ ձիաւորը իւր գեղեցիկ ձին նստած՝ շրջաւայում է անտառային կղզու շուրջը: Երբեմն գայլերի խիստ մօտիկ հարկանութեամբ, կամ ուրուրների յանդուգն համարձակութեամբ վրդովւած, ձին արշաւում է մի քանի քայլ, յետոյ դարձեալ գնում չափաւոր և հանգաբար քայլերով, կամ բոլորովին կանգ է առնում և սկսում արածել հիւթալի խոտը:



Յետոյ նա հանկ գրանկն պղտը...
(Երես 373)

Դ Ի Տ Ա Ր Ա Ն

Վերը նկարագրած երևոյթն այնքան տարօրինակ և գերբնական էր, որ հազիւ թէ որ և է մէկը կարողանար տեսնել նրան առանց դողալու: Բացի տաժաստանի գայլերից և ուրուրներից, կար արդեօք մի կենդանի արարած, որ սկսէր հետամուտ լինել անգլուխ ձիաւորին այդ ամայի տեղը:

Հիւր

Այն, կար. մէկի աչքերն ուշադրութեամբ դիտում էին նրան և այդ աչքերը պատկանում էին Տեխասում միակ մարդուն, որը համարեա հասել էր ամենքին վըր-դովող այդ գաղտնիքի փարատմանը: Ի հարկէ, դեռ ամենինչ նրան լաւ հասկանալի չէր. շատ հանգամանքներ նրան բոլորովին շփոթում էին, բայց նա հաւաստի գիտէր, որ այդ ձիաւորը ոչ լցրած խրաւիլակ է և ոչ էլ սատանայ: Նա համոզւած էր, որ այդ երևոյթի մէջ գերբնական ոչինչ չը կայ, բայց այնուամենայնիւ, այդպիսի գիտակցութիւնն անգամ չէր կարող յաղթել նրանում ականայ երկիւղի զգացմունքը:

Անգլուխ ձիաւորին դիտող մարդը թագնւած էր անտառային կղզու ծառերի սոււերի տակ և ըստ երևոյթին, մտադիր չէր բաց տեղ դուրս գալու:

Նա բոլոր ուշադրութիւնը լարած, երկիւղից դողալով և ծառերի ետեւը թագնւելով, քայլ առ քայլ հետամուտ էր լինում անգլուխ ձիաւորին և ոչ մի վայրկեան աչքը չէր հեռացնում նրանից:

Նա նկատել էր վերջինիս դեռ հեռուից և հեշտութեամբ կարող էր խոյս տալ այդ անհաճելի հանդիպումից, բայց փոխանակ դրան, նա սկսեց մօտենալ անտառին և համեմտելով նրա եզրին, մի ընդէ կանգ առաւ շունչ քաշելու: Այժմ նա համոզւած էր, որ անգլուխ ձիաւորը չէր նկատել իրեն: Յետոյ սկսեց մօտենալ նրան ծառե-

րի տակ թագնւելով, ինչպէս մի որսորդ, որը հետամուտ է լինում վախկոտ եղջերուին, միայն այն զանազանութեամբ, որ երբէք ոչ մի որսորդ չի զգում այնպիսի յուզմունք, ինչպէս այդ մարդը, որ համարձակել էր մօտենալ սարսափելի տեսիլքին:

Աննպատակ չէր անցել նա տափաստանում ամբողջ տասն մղոն, ի զուր չէր նա զգուշութեամբ տանում իւր ձին ամենափափուկ հողի վրայով. և աշխատում չը կպչել ոչ մի ձիւղի, որպէսզի ամենաչնչին խշխշոցն անգամ լսելի չ'լինի տասն եարդ հեռաւորութեան վրայ: Նա աչքը չի հեռացնում անգլուխ ձիաւորից, ուշադրութեամբ հետևում է նրա ձիու բոլոր քայլերին և նրանց հետ համակերպում իւր սեփական քայլերը: Սկզբում երկիւղը նրանում գերիշխող զգացմունք էր, բայց շուտով նա փոխւեց անհամբերութեան և բարկութեան, երբ անգլուխ ձիաւորը փոխանակ անտառին մօտենալու, ամբողջ ժամանակը իրեն երկու հարիւր եարդ հեռաւորութեան վրայ էր պահում անտառի եզրից:

Նա չը կնրոզացաւ զսպել իրեն և ցած ձայնով մըթմըթած մի քանի խօսքեր՝ խառն հայհոյական խօսքերի հետ, առանց որոնց նա չէր կարող վարւել:

— Գրողը տանէ այդ անիծւած ձիուն: Եթէ նա մի քսան եարդ մօտենար, ես կարող էի հասնել նրան, թէ չէ իմ հրացանի գնդակը չի կարող անցնել այդ տարածութիւնը: Եթէ այստեղից իմ հրացանս արձակեմ, անշուշտ կը վրիպեմ և նա իսկոյն կը փախչէ: Միւս կողմից կարող է այլևս այսպիսի յարմար դէպք չը պատահել ինձ: Անիծւած կենդանի: Եթէ մօտենար գէթ մի քսան եարդ էլ, ես իսկոյն կը վերջացնէի նրա հետ ամեն ինչ:

Սօսողը վերջին խօսքերն արտասանեց կասկածանքով. թւում էր, թէ նա մի հայեացքով չափում էր այն

տարածութիւնը, որը բաժանում էր նրան անգլուխ ձիաւորից:

— Ոչինչ չի կարելի անել, — ասաց նա որսորդական կարճ հրացանը ձեռքին պատրաստ բռնած: — Ասենք թէ ես կարող եմ վիրաւորել կենդանուն, բայց զբանից ի՞նչ ես կը գայ. նա կը վախենայ և կը փախչէ: Հարկադուրս կը գայ. նա կը վախենայ և կը փախչէ: Վիրաւոր է փոքր ինչ համբերութիւն ունենալ և սպասել, մինչև որ նա աւելի կը մօտենայ: Անիծւած գայլեր: Մինչև որ նրանք չը հեռանան ձիուց, նա միշտ իրեն հեռու կը պահէ անտառից: Արդէն այգպէս է Տեխասի ձիերի սովորութիւնը, զրոյը տանէ նրանց: Բայց ի՞նչ կը լինի՞ փորութիւնը, զրոյը տանէ նրան փաղաքշանքով, — շարունակեց եթէ ես մօտ կանչեմ նրան փաղաքշանքով, — շարունակեց նա բոպէական լուծիւնից յետոյ: — Գուցէ մարդկային ձայնը նրան կանգնեցնէ: Բայց կասկածելի է. անշուշտ վաղուց նա մարդու ձայն չի լսել, գուցէ և իմ ձայնը վախեցնէ այդ մոլոտանգին, ինչպէս վախեցրեց նրան ամբողջ ժամանակ իմ ձիու երևալը: Ասենք որ այդ եղել է այն ժամանակ իմ ձիու երևալը: Ասենք որ այդ եղել է այն ժամանակ և կենդանուն հալածում էր շունը: Հազիշեր ժամանակը և կենդանուն հալածում էր շունը: Հալածանական է, որ նա բոլորովին վայրենացել է և զարմանալու ոչինչ չը կայ, երբ նրա վրայ նստած է սատանան գիտէ թէ ով: Անկարելի է... Այո, ինչ ուզում ես ասիր, դա մի խաղ է, դիւանական խաղ:

Նա պահեց ձին և առաջ թեքւելով, սկսեց դիտել հարթութեան վրայ դանդաղութեամբ շարժուող անգլուխ ձիաւորի սարսափելի կերպարանքը:

— Չէ որ այդ նրա ձին է, նրա թամբը, վերարկուն... Ո՛չ, ես չեմ սխալուում: Բայց ի՞նչպէս են զբանքընկել այդ մարդու ձեռքը:

Նա մի բոպէ լուց և յետոյ շարունակեց:

— Կատակ է այս թէ ոչ, բայց շատ վատ գործ է: Նա, ով որ հնարել է այդ, պէտք է իմանայ թէ ի՞նչ է պատահել այն գիշերը: Բայց ինձ համար անհրաժեշտ է

ձեռք բերել մի բան միայն, եթէ նա փոքր ինչ մօտե-
 նայ: Ինչո՞ւ ես այն ժամանակ այնպէս պարծեցայ: Ա-
 նիծւած ճակատագիր: Ինչպէս երևում է՝ այդ կենդանին բո-
 լորովին մտադիր չէ այստեղին մօտենալ, երևի վախենում
 է անտառից: Անասունը գիտէ, որ բաց տեղն ամենից աւելի
 ապահով է: Այժմ ինձ ի՞նչ է մնում անելու: Փորձեմ մօտ
 կանչել նրան, կարելի է մարդկային ձայնը գրաւէ նրան:
 Հէնց որ կենդանին մի քանի եարդ մօտենար, ես բոլո-
 րովին գոհ կը լինեմ: Թող ես կախւած լինեմ, եթէ իս-
 կոյն չը փորձեմ նրան կանչել:

Եւ անտառի եզրին մօտենալով, նա արտասանեց
 հետևեալ խօսքերը, որ տեխասցիները սովորաբար գործ
 են անում փախած ձիերին խաբելու համար:

— Պրօ, պրօ, պրօ. Եկ այստեղ, Եկ այստեղ, ձի՞ն-
 կըս:

Նա մի քանի անգամ կրկնեց այդ փաղաքշական հը-
 րաւէրը, բայց միշտ անյաջող: Տեխասի ձին երևի նրան
 հակառակ մտքով հասկացաւ, որովհետև հէնց որ փաղաք-
 շական «պրօն» նրա ականջին հասաւ, նա բարձրա-
 ցրեց գլուխը և բարկացած փռչտաց. ըստ երևոյթին մարդ-
 կային ձայնը նրան աւելի վախեցրեց, քան թէ մօտա-
 կայքում թափառող գայլերի ոռնոցը: Մոլստանգը գիտէր,
 որ իւր ամենամեծ թշնամին մարդն էր, առանձնապէս
 ձի հեծած մարդը և նրա մօտիկութիւնն զգալով, մի
 ակնթարթում երեսը դարձրեց և սլացաւ տափաստանում:
 Ձիաւորը նստած էր թամբի վրայ ուղիղ և անշարժ, ինչ-
 պէս առաջ, նա մինչև անգամ չը հաւաքեց սանձը և չը
 պահեց ձին. անշուշտ նա գիտէր, որ հրաւիրող մարդը
 թշնամի էր:

Վերջինիս շրթունքներից դուրս թռաւ մի բարձր
 անէծք: Նա շտապով դուրս եկաւ անտառից և հը-

րացանը արձակեց արագութեամբ հեռացող ձիաւորի
 ետևից, բայց նրա աշխատանքն ի դուր անցաւ. հրա-
 ցանի գնդակը չը հասաւ ձիաւորին, որ շուտով ծածկւեց
 նրա հայեացքից:



ոչ յովազը, արջը, գոմէշը կամ կարմրամորթը չէին կարող վախեցնել նրան: Եթէ մինչև անգամ մի ամբողջ խումբ կոմանչներ յարձակէին Ձէբի վրայ, հաւանաբար նա չէր զգալ կէսն այն սարսափի, որը պաշարել էր նրան այդ միակ ձիաւորին տեսնելուց:

Չը նայելով որ Ձէբը գիտէր բնութիւնը և հասկանում էր նրա բոլոր գաղտնիքները, չը նայելով այդպիսի վտանգից նրա բաժանելու անվեհերութեանը, նա այնուամենայնիւ հեռու չէր նախապաշարմունքից: Եւ մեղանից ո՞վ է ազատ նրանից:

Որսորդը ոչ միայն վախեցաւ, այլ մտածում էր կանխօրէն ապաստան գտնել իրեն համար: Ձիաւորն այնքան հեռու էր, որ Ձէբի կարծիքով չէր կարող իրան նկատած լինել: Նա շտապով վազեց մօտիկ բսած թփերի մօտ և թագնւեց նրանց խիտ ճղների տակ: Այդտեղ նա յիշեց, որ իւր մօտ կանգնած պառաւ մատակը կարող էր իրեն մատնել:

— Պառկիր, անասուն, — գոչեց նա իւր անլեզու ուղեկցին դառնալով, որը թէև խօսելու չնորհք չունէր, բայց հասկանում էր ծերունի որսորդին: — Թագնւիր, պառաւ, թէ չէ, երզում եմ Աստուծոյ անունով, կը սպանեմ քեզ:

Կարծես թէ կենդանին գիտակցելով, որ նրան մեծ վտանգ է սպառնում, իսկոյն պառկեց խոտերի վրայ:

Ձիաւորն արդէն մօտիկ էր: Նա արշաւում էր բոլոր ուժով և թւում էր, թէ մտադիր չէր կանգ առնելու, որից Ձէբ Ստոււսը շատ գոհ մնաց:

Ինչպէս երևում էր, անգլուխ ձիաւորն այդ ճանապարհը ընտրել էր պատահամբ և ոչ թէ նրա համար, որ նկատել էր ծերունի որսորդին:

Մինչև մի բոպէս նա ծածկւեց Ձէբի աչքից, սակայն որսորդը կարողացաւ գիտել նրան մանրամասնօրէն և ի-

մացաւ այն, ինչ որ մինչև այժմ ամենքի համար գաղտնիք էր:

Որովհետև ձին վազում էր շատ արագ, ուստի քամուց տատանւում էր վերարկուի ծայրը և Ստոււբի առաջ բաց անում նրան լաւ ծանօթ մի կերպարանք՝ հագած կրծքի վերայ գեղեցիկ ծալքերով բամբակեայ բլուզ: Որսորդն իսկոյն ճանաչեց նրան հէնց առաջին հայեացքից, նա տեսաւ նրա և գլուխը, որ կախուած էր թամբից ձիաւորի ձախ ոտի մօտից, բայց չը կարողացաւ տեսնել դէմքի գծագրութիւնը: Մինչև անգամ հարազատ մայրը նայելով այդ սիրելի և գեղեցիկ դէմքին, դժուար թէ այժմ կարողանար ճանաչել նրան:

Ձին, թամբը, ասեղնագործւած վերարկուն, բամբակեայ բլուզը, կոշիկները, ոսկէ ժապաւէնով գլխարկը, նոյնպէս և ասպանդակների վրայ անշարժ և ուղիղ կանգնած ձիաւորի կերպարանքը, լաւ ծանօթ էին որսորդին: Թամբից կախւած գլուխն անշուշտ նրան էր պատկանում, թէև իւր անզը չէր գտնւում:

Չը նայելով որ ձին սլանում էր շատ արագ, բայց նա անցաւ Ձէբի թագնւած տեղից այնքան մօտիկ, որ նա կարողացաւ լաւ գիտել արսափելի ձիաւորին:

Նա մնաց լուռ այնքան, մինչև որ ձին և ձիաւորն անյայտացան: Այն ժամանակ միայն, նա կարողացաւ պարզ կերպով ներկայացնել ինքն իրեն, թէ ով էր նա և տիրութեամբ շնչաց:

— Յովսափանթ, Ուրեմն ճիշտ է, խեղճ երիտասարդը մեռել է... Այն, մեռել է:

ԼԿՈՐԱԾ ՆԵՏՔԸ.

Ձէբ Ստուճալը չորքած խիտ թփերի տակ, դիտոււմ էր տափաստանուճ սլացող անգլուխ ձիաւորին, մինչև որ նա անյայտացաւ մեակիտական ծառերի ետևը: Յետոյ նա ոտքի կանգնեց, բայց մնաց անորոշ դրութեան մէջ, չը գիտէր ի՞նչ անէր, ո՞ր ուղղութեամբ գնար:

Ճարօրինակ և անսպասելի դէպքը հարկադրեց նրան փոխել իւր ծրագիրը: Փոխանակ կոտրած պայտի հետքով ճանապարհը շարունակելու, նա մտածում էր հետամուտ լինել հէնց նոր անյայտացած ձիաւորին: Թէ մի և թէ միւս դէպքում, նա կարող էր գործին վերաբերեալ շատ բան իմանալ: Եթէ նրան յաջողի բռնել անգլուխ ձիաւորին, այն ժամանակ նա կիմանայ նրա անվերջ թափառումների պատճառը, իսկ եթէ շարունակէ իւր խուզարկութիւնը, կարող է գտնել մարդասպանին:

Նորասուզած գանազան դատողութիւնների մէջ, Ձէբը բոլորովին մոռացել էր հրացանի արաքոցի մասին, որ լսել էր անտառային կղզուց: Սակայն նա շուտով յիշեց այդ մասին: Աչքը դարձնելով այն կողմը, ուր նկատել էր ծուխը, որսորդը տեսաւ մի բան, որն ստիպեց նրան կռանալ և ծածկել թփերի մէջ աւելի շտապով, քան թէ անգլուխ ձիաւորին տեսնելուց: Նրա պառաւ մարտիկը դեռևս պառկած էր և կարիք չը կար նրան նորից պառկեցնելու:

Այն առարկան, որ գրաւել էր Ձէբի ուշադրութիւնը, մի ձիաւոր էր, իսկական ձիաւոր, գլուխը իւր տեղը — ուսերի վրայ: Նա դեռ շատ հեռու էր և չէր նկատել թփերի մէջ կանգնած որսորդի բարձր կերպարանքը և նրա մօտ պառկած ձին:

Ձիաւորը նստած թամբի վրայ, մէջքից կռացած՝ հայեացքն ուղղել էր գեանին, ըստ երևոյթին նա դիտում

էր հետքերը և այդ հետքերով ուղղութիւն տալիս իր ձիուն:

Ձէբն իսկոյն գուշակեց, որ նա հետամուտ է լինում անգլուխ ձիաւորին:

— Օհօ՛, — մըթմըթաց նա ինքն իրեն: — Երևում է, որ միայն ես չեմ մտադիր գաղտնիքը գտնելու: Գրո՞ղը տանի. ո՞վ կարող է լինել այդ: Հետաքրքիր է իմանալ:

Նա երկար չը սպասեց: Որովհետև հետքերը բոլորովին պարզ երևում էին, ուստի ձիաւորը կարող էր արշաւելով գնալ այդ հետքերով, այնպէս որ նա շուտով մօտեցաւ թփերին, ուր թաղնւած էր Ձէբը:

— Յովսափանթ, — շարունակեց որսորդը: — Այդ նա է: Դէհ, եթէ ես չեմ սխալոււմ, մի նոր գլուխ միւնոյն պատմութիւնից, մի նոր հանգոյց ևս, որը կ'օգնէ ինձ կապել մինչև այժմ անբացադրելի անցքերի շղթան: Պառկիր հանգիստ, պառաւ. եթէ շարժւեցիր, իսկոյն կոկորդդ կը կտրեմ:

Ձէբը լռեց, գլուխը թաղցրեց ակացիայի ձգների մէջ և թափանցող հայեացքն ուղղեց մօտեցող ձիաւորի վրայ: Ամեն մի ոք, որ իւր կեանքում գէթ մի անգամ տեսել է այդ մարդուն, կը ճանաչէր նրան հէնց առաջին հայեացքից: Նա դեռ երեսուն տարեկան չը կար, բայց տեսքով աւելի մեծ էր երևում և նրա ճակատին ընկած էին խոր կնճիռներ:

Նրա դէմքի վրայ, որ կարելի էր գեղեցիկ և ազնիւ համարել, եթէ չը փշայնէր նրան շարախինդ արտայայտութիւնը, նկատելի էր մտատանջութեան և վրդովմունքի արտայայտութիւն:

Հագուստը, — կէս զինուորական ձևի մահուդէ սիւրտուկ, գլխարկ, գօտիկը խրած որսորդական դանակ, գոյգլցրած ատրճանակներ, — այդ ամենը, ինչպէս յայտնի է, պատկանում էին կապիտան Կասսիյ Կէլիօունին:

Ծերունի որսորդը մնաց իւր դարանում: Ի հարկէ, նա չէր վախենում նախկին կապիտանին հանդիպելուց, թէև նրա հետ այնքան էլ մտերիմ յարաբերութեան մէջ չէր՝ նա չէր կամենում դուրս գալ իւր դարանից նրա համար, որ ծառերի սոււերի տակ թագնւած նա աւելի լաւ կարող էր տեսնել, թէ ի՞նչ է կատարուում տափաստանում:

Կէլիօունն ուշադրութեամբ քննելով անգլուխ ձիաւորի հետքերը, առաջ անցաւ և շուտով թագնւեց նոյն ծառերի ետևում, ուր փոքր ինչ առաջ անյայտացել էր առաջին ձիաւորը...

Կարճ մտածութիւնից յետոյ, Զէբ Ստումպը վճռեց գնալ անգլուխ ձիաւորի և նրա հետապնդողի ետևից: Նոր հանդիպումը փարատեց նրա բոլոր կասկածը: Եթէ նա առաջ էլ մտածել էր առժամանակ թողնել իւր նախկին խուզարկութիւնները և փորձել հասնել տարօրինակ ձիաւորին, — այժմ այդ բոլորովին անհրաժեշտ էր:

Նա ուղղւեց և սանձը բռնելով ոտքով խփեց պառաւ մատակին, որը մի ակնթարթում ոտքի կանգնեց: Բայց որսորդը դեռ դանդաղում էր ձի նստելու. նա մտադիր էր դուրս գալ բաց դաշտը այն ժամանակ, երբ կապիտանը կը ծածկւի տեսքից: Ծերունի որսորդը կարիք չէր գտնում հետևել վերջին ձիաւորին: Շնորհիւ երկու թարմ հետքերի, նա կարող էր անսխալ կերպով ասել, թէ ո՞ր ուղղութեամբ են գնացել անգլուխ ձիաւորը և ամսիքս ձիաւորը:

Զէբը դուրս եկաւ թփերից և վստահութեամբ ուղևորւեց այն շաւղով, որը հէնց նոր էր թողել Կէլիօունը և առաջին անգամը իւր կեանքում սխալւեց նա և այդ նկատեց միայն այն ժամանակ, երբ անցաւ մետաքսափան ծառերի անտառը, որի ետև թագնւել էին երկու ձիաւորները:

Այդտեղից սկսած տարածուում էր կաւային անսահ-

ման տափաստան: Անգլուխ ձիաւորը ոչ մի տեղ չէր նկատուում, կապիտան Կէլիօունը մի կողմից միւս կողմն էր ընկնում, ինչպէս հնձած արտում կաքաների ետևից վազվզող շուն: Ըստ երևոյթին նա կորցրել էր հետքը և այժմ աշխատում էր նորից գտնել:

Որսորդը թագնւեց ժայռի ետևում և սկսեց դիտել կապիտանին: Վերջինիս աշխատանքն ի գուր անցաւ: Տափաստանի պինդ հողի վրայ հետքի ոչ մի նշան չը կար. գոնէ այնպիսի անփորձ մարդը, ինչպիսին կասսիյ Կէլիօունն էր, չէր կարող տեսնել նրանց:

Մի առժամանակ պտուելով հարթութեան վրայ, նա հրաժարւեց իւր դիտաւորութիւնից և բարկացած խթեց ձիուն ու սլացաւ դէպի Լէօնի կողմը:

Հէնց որ նա ծածկւեց տեսքից, որսորդն իսկոյն դուրս եկաւ անտառից և իւր հերթում փորձեց գտնել անգլուխ ձիաւորի հետքը, բայց նա ևս անյաշողութեան ենթարկւեց:

Կիզիչ արեգակը կուրացուցիչ կերպով խաղում էր տափաստանի սպիտակ մակերևոյթի վրայ և միայն սաւառանդրայի աչքերը կարող էին դիմանալ նրա անդրադարձող ճառագայթների փայլին: Որսորդը համարեա կուրացած, վճռեց թողնել այդ հետքերի որոնումը և վերադառնալ իւր առժամանակ թողած կտորած պայտի հետքին, որովհետև համոզւած էր, որ այդ հետքով առաջ գնալով, նա կարող էր կարևոր դիւտեր անել:

Նա առանց դժւարութեան գտաւ այդ հետքը և առանց ժամանակ կորցնելու առաջ շարժւեց նրանով: Մատակը հետևում էր նրան առաջւայ պէս:

Մի առժամանակից յետոյ նա իւր առաջ փոխանակ մի հետքի, տեսաւ երեք հետք, որոնք երբեմն գնում էին զուգահեռաբար, երբեմն միանում էին միմիանց հետ: Զէբն այդտեղ կանգ առաւ, դիտեց հետքերը և գտաւ, որ

բոլոր երեք ձիերն էլ պայտած էին. մէկն ըստ երևոյթին ամերիկական ձի էր, միւսը—մուստանգ, հաւանաբար մի մեծ երիվար, մեծ սմբակներով, ինչպէս և ամերիկական ձին: Զէքը զիտէր թէ ումն էին պատկանում են միկենոյն ճանապարհով, բայց զանազան ժամանակ: Ամենից առաջ անցել է մուստանգը, նրանից յետոյ ամերիկական ձին, իսկ վերջը կոտրած պայտով Աշխէտը. Զէքը վստահ և անսխալ կերպով կարող էր ասել թէ ինչ կարգով են գնացել ձիաւորները: Նա կարգում էր տափաստանի նշանները հեշտ և ազատ, ինչպէս ուրիշ մարդիկ արեգակային ժամացոյցի կամ շերմաչափի ցուցմունքները:

Սակայն ինչ էլ որ լինէին նրա մտքերը, նա ոչ մի խօսք չարտասանեց, բացի մի կարճ բացականշութիւնից: «Լաւ»—ասաց նա և առաջ անցաւ:

«Այստեղ նրանք բաժանուել են միմիանցից,—ասաց նա կրկին կանգ առնելով և հողը զիտելով:—Երիվարն ու ամերիկական ձին գնացել են միասին, իսկ կոտրած պայտի հետքը տանում է բոլորովին ուրիշ կողմը: Այս ինչ է նշանակում,—չարունակեց նա մըտածելով:—Երբէք դեռ չեմ տեսել այսպիսի խճճւած հետքեր: Նրանք կը մոլորեցնեն մինչև անգամ Դահիէլ Բունին: Այժմ ես ո՞ր կողմը գնամ: Գիտեմ, որ այս երկու հետքերը կը տանեն ինձ արեան փոսի մօտ. պէտք է գնալ կոտրած պայտի հետքով և տեսնել թէ նա էլ այստեղ է տանում թէ ոչ: Դէհ, պառաւ, շրջեր դէպ աջ, եկ իմ ետևից, թէ չէ կը մոլորւես մացառոտում և գայլերի բաժին կը դառնաս: Քո ճարտար, նրանց համար համով կերակուր կարող է լինել: Հա, հա, հա:

Ծերունին ծիծաղելով ինքը իւր սրախօսութիւնից, երեսը դարձրեց երրորդ ձիու հետքին, որ նախ գընում էր մացառոտների եզրով, ապա պտտւում թաւուար և մտնում անտառային շաւիղը: Սրագութեամբ առաջ անցնելով, նա յանկարծ նկատեց մի ծառ, որից ըստ երևոյթին, կապւած է եղել ձին: Ծառի մի կողմից գնում էին կոտրած պայտի հետքերը, որոնք ցոյց էին տալիս, որ ձիաւորը տափաստանն էր դուրս եկել ոչ այն ճանապարհով, որով եկել էր այստեղ. միւս կողմից նկատելի էին մարդկային ոտների հետքեր, որոնք ցոյց էին տալիս, որ ձիաւորն առաջ է գնացել ոտով: Որսորդը իւր մատակը թողեց նոյն ծառի տակ, ուր մի քանի ժամանակ առաջ եղել է Աշխէտը և ինքն առաջ գնաց ձիաւորի հետքերով: Այդ հետքերը երկու էին. մինը առաջ էր տանում, միւսը յետ դարձնում:

Որսորդը գնաց առաջինով և երբէք չը վարմացաւ, երբ տեսաւ, որ մօտենում է իրեն ծանօթ տեղին, ուր գննւում էր արեան փոսը, որ այժմ բոլորովին ցամաքած էր: Ամբողջ շրջակայքը կոխտուած էր ինչպէս անասունների փարախում:

Այդտեղ Զէքը նոր «նշաններ» գտաւ և այնքան կարևոր, որ նրանց հարկաւոր էր դիտել բոլոր օւշաղբութեամբ:

Առաջ անցնելով ակացիաների թաւուտի միջով, նա հասաւ մի տեղ, ուր ըստ երևոյթին կանգ էր առել մի մարդ: Այդտեղ խոտ չը կար և մաքուր սև հողը սաստիկ կոխտուած էր կոշիկներով: Այդ հետքերը տանում էին արեան փոսի մօտ և այնտեղից էլ յետ էին դառնում: Իւր շուրջը զիտելով, որսորդը տեսաւ ակացիայի ձիւղից կպած սևացած ու կիտով չափ

այրւած մի կտոր թուղթ, որը չէին նկատել ոչ խուզարկուները և ոչ նրանց առաջնորդ Շպանգլէրը

Որտորդը վերցրաւ թղթի կտորը, ուշադրութեամբ հարթեց ձեռքի ակի վրայ և նրա վրայ տեսաւ իրեն լաւ յայտնի անւան գլխատառերը. «Կ. Կ. Կ.»:

ԴԱՐՁԵԱԼ ՄԻ ՕՂԱԿ.

Երբ Ջէբ Ստոււմպը կարդաց թղթի վրայ գրւածը, նրա դէմքն աւելի ուրախութիւն էր արտայայտում, քան թէ զարմանք:

«Այս նամակի ծրար է, — մըթմըթաց նա ինքն իրեն, — և սա կը պատմէ ինձ այնպիսի մի երկար պատմութիւն, որպիսին, կարծեմ չի եղել ամբողջ նամակի մէջ: Եւ այսպիսի իրերը գործադրում են վառօդի խցանի համար: Լաւ է, ինչ ասեմ: Հրացանի խցանի համար թղթի կտորից լաւ բան չի գտնուել: Իսկ ձեռագիրն, ինչպէս երևում է, կնոջ ձեռագիր է, — շարունակեց նա ծրարի կտորը դիտելով: — Դէհ, այդ միւնսոյն է, կարևորն այն է, որ նամակն ուղարկւած է հէնց այն մարդուն և հետապնդման ժամանակ նրա մօտ է եղել: Հարկաւոր է լաւ պահել այս գիւտը, որ չը կորչի»:

Այդպէս խօսելով, նա հանեց կաշէ փոքրիկ պայուսակը, որի մէջ գտնուում էին արէթը, կայմքարը և հրացանը, թղթի կտորն զգուշութեամբ զրաւ պայուսակի մէջ և նորից թագցրեց գրպանում:

«Յոյս ունիմ, որ թղթի այս կտորը բանալին կը լինի այն խորհրդաւոր պատմութեան, որն այնպէս խճճւած է, որ ոչինչ չես կարող հասկանալ, — շարունակեց նա ինքն իրեն խօսելով: — Այժմ ինձ համար պարզ է, որ սպանւածը գտնուել է այնտեղ, արեան փոսի մօտ, իսկ նրա սպանողը, ով ուզում է լինի նա, կանգնած է եղել այնտեղ, ակացիայի ետևում: Եթէ որ այն համբալինները չը լինէին, կարելի էր շատ բան իմանալ. բայց այժմ ոչինչ չես կարող անել, նրանք այնպէս կոխտուել են շրջակայքը, որ ոչինչ չես կարող գտնել: Կարծեմ, որ չ'արժէ առաջ գնալ, աւելի լաւ է յետ գառնամ տեսնեմ որտեղ է գը-

ւացել նա իւր գիշերային որսորդութիւնից յետոյ: Դէհ, Ձաւուլօն Ստոլմայ, շուռ եկ, եղբայր և յետ դարձիր:»

Ինքն իրեն այդպէս խօսելով, որսորդը յետ դարձաւ և ենթացողած մարդասպանի անցած ճանապարհով գնաց այնտեղ, ուր թողել էր իւր ձին: Որովհետև վերջինս (մարդասպանը) պէտք է անցնէր փշոտ թփերի թաւուտի միջով, նա փոքր ինչ թեքել էր մի կողմը. նրա հետքը Ձէբին դուրս բերաւ մի բաւականին մեծ բաց տեղ: Այդտեղ Ձէբը նայեց իւր շուրջը և նկատեց մի շաւիղ, որը մի ծայրից մինչև միւսը կարում անցնում էր մարգագետինը և կոխտուած էր ըստ երևոյթին, մի քանի օր առաջ այստեղից անցնող ձիերով: Որսորդը կարող էր յայտնել և՛ օրը և՛ ժամը, երբ անցել են ձիերը, մինչև անգամ առանց «նշաններին» գիմելու: Նա գիտէր, որ այդ ճանապարհով անցել են Շպանգլերը և նրա ընկերները երբ բաժանուել են գլխաւոր խմբից, որ մայեօրի առաջնորդութեամբ ամբոցն էր վերադարձել: Ձէբը շատ անգամ էր լսել, որ Շպանգլերն ու նրա ընկերները հետևել են Հենրիի ձիու հետքերին մինչև այնտեղը, ուր նեգրը բռնել է նրան ազարակի մօտ: Խուզարկուները մտածելով, որ հետքերից ոչինչ չի կարելի իմանալ, բաւականացան իրենց խուզարկութեան հետևանքով. բայց ծերունի որսորդին այդ բաւական չէր թւում, նա կտնդ առաւ անորոշ դրութեան մէջ և չը գիտէր ինչ անէր:

Բայց շուտով նա վճռեց գնալ Շպանգլերի և նրա ընկերների կոխտուած շաւղով, որոնելով Հենրի Պօյենգեքստերի ձիու հետքը:

Նրա կարծիքով ամեն մի համբակ կարող էր գտնել այդ բազմաթիւ հետքերի մէջ Հենրիի ձիու հետքը, որովհետև երիտասարդ ազարակատիրոջ ձին գնացել էր արշաւելով, իսկ հետախուզողները հանգարտ քայլերով: Ձէբը սրբան կարողացաւ նկատել վերջինները ոչ մի տեղ կանգ քան կարողացաւ նկատել, վերջինները ոչ մի տեղ կանգ չէին առել և չէին դուրս եկել ուղիղ ճանապարհից: Բայց ամերիկական ձիու հետքերը, շաւղի սկզբից երեք քառորդ մղոն տարածութեան վրայ թեքել էին մի կողմը.

ըստ երևոյթին կենդանին պատահել էր գայլի, յովազի, կամ մի ուրիշ գիշատիչ գազանի և նրանից վախենալով մտել էր թփերի մէջ: Յետոյ նա շարունակել է արշաւել առաջւայ նման արագ և ուղիղ, առանց ճանապարհից թեքելու այս կամ այն կողմը:

Շպանգլերն ու նրա ընկերներն առանց ուշադրութիւն դարձնելու անցել են մօտից. Ձէբ Ստոլմայն աւելի հետաքրքիր էր. նա կանգ առաւ և սկսեց գիտել շուրջը: Դա բուսականութիւնից գուրկ, աւազով և կոպիճներով ծածկուած մի ամայի տեղ էր: Մի մեծ ծառ սաւերարկում էր նրան իր հորիզօնաձև տարածած ճղներով, որով անցել ընդից մէկը ձգուում էր այն շաւղի վրայով, որով անցել էր ձին և այնքան ցած, որ ձիաւորը հազիւ թէ կարողանար խոյս տալ հարւածից: Ձէբն ուշադրութեամբ գիտեց այդ ճիւղը և նրա կեղևի վերայ տեսաւ հազիւ նկատելի ճմլած տեղ, որը պէտք է առաջացած լինէր ինչ որ պինդ մարմնի կպչելուց:

«Հարկաւ ձիաւորը չի շտապել ժամանակին գլուխը խոնարհել և հարւածել է ճիւղին: Ձեմ կարծում, որ սրկէ մէկը կարողանար դիմանալ այդպիսի հարւածին և թամբի վրայ նստած մնար: Ուրո՞ւ, — բացականչեց նա յայտնելով թանակող ձայնով, գիտելով ծառի տակ հողը: — Ես չեմ սխալուել: Ձիաւորը ցած է գլորւել ձիուց: Այստեղից նա առաջ է գնացել սողալով: Այժմ գտայ նրա գլխի ճանկուածքի պատճառը, որ այնպէս սաստիկ վրդովել էր ինձ: Ես գիտէի, որ գէնքի, քարի, կամ փայտի հարւածից, չէր կարող այդպիսի վէրք առաջանալ: Ահա նա, այն փայտը, որ հարւածել է նրան:»

Եւ ծերունի որսորդը յաղթական դէմքով առաջ շարժուեց իւր առաձգական քայլածքով այն ուղղութեամբ, որն ընդունել էր ձիուց վայր ընկած մարդը: Այն վստահութիւնը, որով անցնում էր Ձէբը խիտ մացառների թաւու-

փրփրած էին և խթանների շարունակ հարւածներից ճանկը ոտուած:

Գեռ մի ժամ չ'անցած, նա դուրս եկաւ ագարակը շրջապատող մեակիտական ծառերի տակով անցնող շաւիղը: Այդ ճանապարհը ծանօթ էր Կէլիօունին: Երկարատե երաշտից չորացած գետի հունն անցնելով, նա երկիւղով նկատեց ցեխի վրայ կոտրւած պայտի հետքը, որ մի շաբաթ առաջ թողել էր նրա աշխատը: Մինչև անգամ առանց հետքը դիտելու, նա կարող էր ստել և օրը և ժամը, երբ անցել էր այդտեղով ձին: Կէլիօունը երկիւղի զգացմունքով նայեց պարզ հետքին, որ կարծես թէ հէնց երեկանից լինէր թողնւած: Ո՛չ քամին, ո՛չ անձրևը, ո՛չ կայծակն ու որոտումը չէին կարողացել ոչնչացնել նրան: Թոււմ էր, թէ բնութեան մրրկալից արհաւիրքները դիտմամբ պահպանել էին մարդկային և աստուածային օրէնքները խանգարող ոճրագործութեան այդ վկայութիւնը:

Կապիտանը ցած թռաւ ձիուց, մտադրելով կոխ տալ այդ դաւաճանող հետքը, բայց նրա աշխատանքն ի գուր եղաւ: Նրա կօշիկների հետքերը ցեխի վրայ գեռ աւելի պարզ կերպով ցոյց էին տալիս, թէ ումն էր պատկանում կոտրւած պայտով ձին, իսկ Կէլիօունի ետեից դնում էր մի մարդ, որը կարող էր օգտուել այդ նոր ապացոյցներով:

Գոհ իւր խորամանկութեամբ և հասկացողութեամբ, կապիտանը նորից թռաւ թամբի վրայ և մտախոհ շարունակեց ճիշտապարհը: Յանկարծ նա լսեց մի ձիու ոտածայն, որը թէև ծածկւած էր ծառերի ետևում, բայց ըստ երևոյթին մօտենում էր նրան դանդաղ և չափաւոր քայլերով, որ ցոյց էր տալիս, որ ձին չէր թափառում ազատ, այլ նրան դեկավարում էր մի մարդ:

Մինչև մի ըսպէն յայտնեց ձիաւորը. նա մի կին էր: Կապիտանն իսկոյն ճանաչեց նրան. նա դօննա Իգի-

դօրա Խօվարուբիօ դը-Լօս-Լանսոն էր, որ իւր հերթին ճանաչեց Կէլիօունին:

Նրանք պատահեցին միմիանց բոլորովին պատահմամբ, բայց յաճախ հասարակ պատահմունքը ունենում է կարելու հետեանքներ: Արդեօք ինչ մտքեր կարող էին ծագել նրանց երկուսի զլխում այդ հանդիպման ժամանակ:

Ի դէմս Կէլիօունի, Իգիդօրան տեսաւ մի մարդու, որ սիրում էր իրեն ատելի կնոջը. կապիտանն էլ իւր հերթին դիտէր, որ Իգիդօրան սիրում էր այն մարդուն, որին նա համարում էր իւր յետերիմ թշնամին, որին վճռել էր ոչնչացնել, ինչ որ էլ լինի:

Նրանք սակայն չէին կարող մտերմական յարաբերութիւն սկսել իրար հետ, որովհետև բնականօրէն մարդ զգանք է զգում դէպի նա, ով հրճում է իր հակառակորդով և կարող է մերձենալ միայն այն ժամանակ, երբ խանդի զգացմունքը կը գրգռէ նրանց երկուսին էլ դէպի արհեստի վրէժխորութիւնը:

Բայց կաստի Կէլիօունը և Իգիդօրան դեռ չէին եկել այդպիսի համաձայնութեան: Թէ մինը և թէ միւսը սիրով կը հրաժարէին այդ հանդիպումից, եթէ հնարաւոր լինէր միայն. առանձնապէս Իգիդօրայի համար նախկին կապիտանի ներկայութիւնը եթէ ոչ անհաճելի, գոնէ պիտանի էր: Իգիդօրան գիտէր, որ իւր յանկարծն ջանկարի էր: Իգիդօրան գիտէր, շատ խօսակցութիւն-ծակի անյայտանախն Ալամօի ափից, շատ խօսակցութիւնների պատճառ էր դառել և վախենում էր, թէ չը լինի Կէլիօունն սկսի հարցնել նրան, թէ ինչով վերջացաւ կարծեց-կէլիօունն սկսի հարցնել նրան, թէ ինչու որ պատճառներեալ հնդիկների հետապնդումը: Նա հիմնաւոր պատճառներ ունէր չը խօսել այդ մասին, ուստի կամենում էր անցնել մօտից, բաւականանալով միայն մի հասարակ ողջոյնով:

Անշուշտ կապիտանն էլ նոյնը կ'անէր, եթէ որ յանկարծ նրա գլխում ծագած միտքը չը հարկապէս նրան ուշադրութիւն դարձնել այդ աղջկայ վրայ:

Չը նայելով նրա հրաշալի գեղեցկութեան, Կէլիօունը

նրա երկրպագուները շարքին չէր պատկանում: Նրա կրծքի տակ տեղ չէր մնացել ուրիշ, թէ և զգալի տենչանքի համար: Այն միտքը, որը հարկադրեց նրան կանգնել շաւղի մէջ տեղը, վերցնել դիտարկն ու քաղաքավարի ողջոյնով սկսել խօսակցութիւն Իզիդորայի հետ, այդ աղջրկայ անձնաւորութեան չէր վերաբերում:

Մեքսիկուհուն բացի կանգնելուց՝ ոչինչ չէր մնում անել:

— Ներեցէք, սինեօրիտան, — ասաց կապիտանն ուշադրութեամբ դիտելով Իզիդորայի ձին: — Ես դիտեմ, ուր անքաղաքավարութիւն է իմ կողմից ընդհատել մի կնոջ զբօսանքը, առաւել ևս, որ պատիւ չունիմ ձեզ հետ ծանօթ լինելու, բայց...

— Արդարացումներն աւելորդ են, սինեօր: Եթէ չեմ սխալւում, մենք մի անգամ արդէն պատահել ենք միմիանց: Յիշո՞ւմ էք, տափաստանում, Նուէցէս գետի մօտ:

— Այո, այո, — շտապով համաձայնեց կէլիօները: — Ես յիշում եմ այդ հանդիպումը: Բայց, ասացէք խնդրեմ, ինչ պատահեց ձեզ հետ, երբ մենք տեսանք ձեզ Ալամօի կտրւածքի վրայ: Մենք բոլորս էլ շատ էինք զարմացել ձեր յանկարծակի անյայտանալովը:

— Այդտեղ զարմանալու ոչինչ չը կայ, կաբալերօ: Ձեզանից մէկն արձակեց հրացանը, որից վախեցան ինձ հետապնդողները: Ես տեսայ, որ նրանք յետ դարձան, ես էլ հանգիստ շարունակեցի իմ ճանապարհը:

Կէլիօնայն այդպիսի կարճ պատասխան ստանալով, երբէք դժգոհութիւն չ'արտայայտեց: Գուցէ նա աւելի յաջողութիւն ունենայ այդ գործի մէջ, որի պատճառով սկսել էր այդ խօսակցութիւնը մեքսիկուհու հետ:

— Ես չէի կամենում ասել, որ ինձ անձամբ զարմացրել էր ձեր յանկարծակի անյայտանալը, սինեօրիտան, — շարունակեց նա հրճւանքով դիտելով Իզիդորայի ձին: —

Ես կարծում եմ, որ դուք պատճառներ ունէիք ցած չիջնել մեզ մօտ հովիտը: Տեսնելով ձեր ձի նստելու հմուտութիւնը, ես երբէք չէի վախենում ձեր ապահովութեան մասին: Բայց այդ հմուտութիւնը չէր կարող չը զարմացնել մեզ բոլորիս: Ինչ հրաշալի ձի էիք նստած այն ժամանակ, նա չէր արշաւում, այլ թռչում էր: Եթէ չեմ սխալւում, դուք այժմ էլ նոյն ձիու վրայ էք նստած: Այնպէս չէ, սինեօրիտան: Ներեցէք, որ ես այսպիսի դատարկ բաներով անհանգստացնում եմ ձեզ:

— Ձը դիտեմ ճշմարիտ, այս էր, թէ մի ուրիշը: Ես յաճախ փոխում եմ ձիերը: Այո, երևի այն ժամանակ ես այս ձին էի նստած: Այո, այո, ճիշտ էք նկատել: Այժմ յիշում եմ, որ այս յիմար կենդանին ինձ մասանեց:

— Ձեզ մատնեց: Ինչպէս:

— Իե՛ռ երկու անգամ: Առաջին անգամը՝ երբ մօտենում էր ձեր խումբը, իսկ յետոյ՝ երբ մացաններում ինձ շրջապատեցին հնդիկները: Բայց ինձ ասում էին, որ նրանք բոլորովին հնդիկներ չեն եղել:

— Ինչպէս մատնեց ձեզ:

— Ի՛ր խրխնջիւնովը: Ձը դիտեմ ի՞նչ էր պատահել նրան, որովհետեւ նա բաւականին լաւ սովորեցրած է: Այժմ ես այլևս չեմ նստիլ այս ձին, ճէնց որ վերադառնամ Ռիօ-Գրանդէ, կը թողնեմ այնտեղ և կը հրամայեմ բաց թողնել դաշտում:

— Ներեցէք, սինեօրիտան, եթէ համարձակւում եմ հակառակել ձեզ:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ այդպիսի գեղեցիկ ձին չը պէտք է սուանց գործադրութեան մնայ: Ես շատ թանգ կը վճարէի նրան տիրանալու համար:

— Կատակ էք անում, ինչ է, կաբալերօ: Սա մի սովորական ձի է, թէև փոքր ինչ գեղեցիկ և արագավազ

միւսներէից: Իմ հայրն այսպիսի հազար ձի ունի, որոնք ոչ մի բանում յետ չեն մնալ սրանից: Ես հեծնում եմ այս ձին միայն նրա համար, որ դիմացկուն է և կարող է երկար ճանապարհ կտրել: Եթէ որ Ռիօ-Գրանդէ գնալս չը լինէր, ուրախութեամբ կը զիջէի ձեզ այս ձին, սինեօր: Հանգիստ կանգնիր իմ մուստանգ, տեսնում ես, որ գտնուել է մի մարդ, որին դու աւելի ես զիւր եկել, քան թէ քո տիրոջը:

Վերջին խօսքերը վերաբերում էին մուստանգին, որն անհամբերութեամբ սպասում էր խօսակցութեան վերջանալուն: Իզիդորան լոեց և պատրաստուում էր հեռանալու: Բայց կէլհօունը չը կամենալով հրաժարուել իւր դիտաւորութիւնից, նորից կանգնեցրեց նրան:

—Ներեցէք, սինեօրիտան,—ասաց նա աւելի գործնական եղանակով.—եթէ դուք ձեր մուստանգին այդպէս էժան էք գնահատում, ես շատ ուրախ կը լինէի փոխել մեր ձիերը: Թէև իմ ձին այնքան գեղեցիկ չէ, բայց Տեխասի վաճառականների համար թանկագին կենդանի է: Նա արագավազ չէ, ինչպէս ձեր մուստանգը, բայց կարող եմ երաշխաւորել, որ նա ձեզ անփորձ տուն կը հասցնէ:

—Ինչպէս, սինեօր,—բացականչեց աղջկին ակնյայտնի զարմանքով:—Դուք կամենում էք ձեր ամերիկական ձին փոխել իմ մուստանգի հետ: Ձեր առաջարկութիւնը չափազանց մեծահոգի է, եթէ կարելի է նրան լուրջ համարել: Գիտէք արդեօք, որ Ռիօ-Գրանդէում այդպիսի ձին գնահատում են երեք և դեռ վեց անգամ աւելի թանգ մեր ձիերից:

Կէլհօունն այդ շատ լաւ գիտէր, բայց մուստանգն այժմ նրա համար աւելի թանգ արժէր, քան թէ մի ամբողջ ախոռ ամերիկական ձիեր: Նա ինքն անձամբ ակահատես էր եղել նրա արագավազութեան: Վերջապէս նա

գտաւ այն, ինչ որ ցանկանում էր ունենալ: Նա ոչ միայն չէր ափսոսում մուստանգի փոխարէն տալ իւր մոխրագոյն ձին, այլ և սիրով կը վճարէր մի նշանաւոր գումար էլ, եթէ հարկաւոր լինէր:

Նրա բաղդից մեքսիկոնին բոլորովին մտադրութիւն չ'ունէր սակարգութեան մէջ մտնելու նրա հետ: Ունենալով հինգ հազար ձի հայրական մարգագետիներում, արօտատեղիներում և ախոռներում, նա առանձնապէս չէր մտածում թէ շահաւէտ էր արդեօք ձիերի փոխանակումն իրեն համար: Ինչո՞ւ համար այդպիսի մի չնչին լաւութիւն չ'անէ այդ մարդուն, երբ կարող է անել: Նա համաձայնեց:

—Եթէ դուք կատակ չէք անում, սինեօր,—ասաց Իզիդորան,—ես ուրախութեամբ կը կատարեմ ձեր ցանկութիւնը:

—Ես բոլորովին լուրջ եմ խօսում, սինեօրիտան:

—Ուրեմն վերցրէք մուստանգը,—ասաց նա ցած թռչելով թամբից և սկսեց արձակել փորկապերը:—Թամբերը մենք չենք կարող փոխել, որովհետև ձերը չափազանց մեծ է ինձ համար:

Կէլհօունն այնպէս երջանիկ էր զգում իրեն, որ խօսք չէր գտնում իւր շնորհակալութիւնն արտայայտելու: Նա օգնեց Իզիդորային մուստանգի թամբը վերցնելու և յետոյ վերցրեց իւր ձիու թամբը: Մինչև հինգ ընկէն ձիերը նորից թամբւեցան, սանձեցան և նրանց նոր տէրերն արդէն պատրաստ էին ճանապարհ ընկնելու:

Իզիդորայի համար այդ փոխանակումն այնքան գլարձալի էր թւում, որ քիչ էր մնում ծիծաղէր, այն ինչ կապիտանը, որ դորձին ուրիշ կերպ էր նայում, լուրջ էր և ըստ երևոյթին խորասուզած ինչ որ դատողութեան մէջ:

Միմիանց հրածեշտ տալով երկուսն էլ դիմեցին
զանազան կողմեր. մեքսիկուհին շարունակեց իւր ճա-
նապարհը դէպի Ռիօ-Գրանդէ ամերիկեան ձիւս վրայ,
իսկ կապիտանը դէպի Կազա-դէլ-Կորվօ՝ մուստանգի
վրայ:

408
54
462
408
354
54

34

ԱՆԻՈՆՁ ՆԵՏԱԻՈՅԸ.

Զէք Ստուժպը վերադարձաւ այնտեղ, ուր թողել
էր իւր մատակը: Որովհետեւ այդ տեղը նրան լաւ ծանօթ
էր, ուստի կարիք չունէր վերադառնալ վիրաւորի հետ-
քով, այլ կտրեց անցաւ մացառոտը, անտառային ուղիղ
շաւղով:

Վերցնելով ձին, նա նորից գնաց կոտրած պայտի
հետքով, միանգամայն վստահ, որ այդ հետքը կը տանէ
իրեն դէպի Կազա-դէլ-Կորվօ: Շուտով նա դուրս եկաւ
այն ճանապարհը, որ միացնում էր Ինգէ ամրոցը Ռիօ-
Գրանդէ տանող ճանապարհներից մէկի հետ: Այդ ճանա-
պարհն ունէր կէս մղոն լայնութիւն, որ հազաւորէպ չէ
Տեխասում, ուր իւրաքանչիւր ոք գնում է ինչպէս կա-
մենում է, բռնելով միայն ընդհանուր ուղղութիւնը: Այդ
ճանապարհի մի կողմով անցել էր կոտրած պայտով մի
ձի: Ինգէ ամրոցից չորս, թէ հինգ մղոն հեռաւորու-
թեան վրայ, այդ հետքը պտտում է մի կողմը և
գնում Վուզլէյ Պոյնդեքստերի ագարակի ուղղութեամբ:
Որսորդը, որ վաղուց զիտէր այդ համարեա չէր նա-
յում նշաններին և առաջ էր գնում այնպէս համոզած,
որ կարծես թէ ճանապարհի կողմերով կանգնած էին
ճանապարհ ցոյց տուող սիւներ:

Զէքը վաղուց էր դադարել օտով գնալ: Զը նայելով
որ նա ատում էր ձիով գնալը, բայց ստիպւած էր ձի
նստել, որովհետեւ տափաստանում և մացառներում եր-
կարատե խուզարկութիւնները սաստիկ յոգնեցրել էին
նրան: Ժամանակ առժամանակ նա նայում էր գետնին,
որ հետքերից մի նոր բան իմանայ: Երբեմն պատահում
է, որ տափաստանի չոր ու պինդ հողը ոչ մի նշան չէր
ցոյց ապլիս: Անսիրձ ճանապարհորդը կարող է մտածել,
թէ առաջին անգամ ինքն է անցնում այս տեղով. բայց

ծերունի որսորդը գիտէր, որ հետքերն անյայտացել էին միայն առժամանակ և նրանք կրկին կ'երևան աւելի փափուկ և խոնաւ տեղերում:

Առաջ գնալով մեծ մատամբ անխորհուրդ, Ձէբը յաճախ թեքւում էր ճանապարհից, որն անցել էր կոտրած պայտով ձին և նշաններ չէր գտնում այնտեղ, ուր յոյս ունէր տեսնել. այն ժամանակ նա դառնում էր մի կողմը և կարճ խուզարկութիւններից յետոյ, դարձեալ դուրս էր գալիս իսկական ճանապարհը: Այդպիսով նա մօտեցաւ Պոյնդեքստերի ագարակին. մինչև կազա-դէլ Կօրվօ մտնում էր մի մղոնից ոչ աւել: Մեսկիտական ծառերի կատարների վրայից երևում էին ազօտէի ատամնաւոր պատնէշները: Յանկարծ գետնի վրայ մի նշան գրաւեց Ձէբ Ստոմպի ուշադրութիւնը. նա ցած թուաւ թամբից, սանձը ձգեց մատակի պարանոցով և արագութեամբ քայլեց գտած հետքերով: Նրա ձին հնազանդութեամբ հետևում էր նրան. նա արդէն սովոր էր իւր տիրոջ այդպիսի քմահաճոյքներին:

Ինչ կարող էր նկատել ծերունի որսորդն այնպիսի մի տեղ, ուր, ըստ երեոյթին, դեռ ոչ մի մարդ չէր անցել: Եթէ անփորձ մարդն ուշադրութիւն չէ դարձրել գետի վրայ երևացող թէև ոչ բոլորովին պարզ հետքերին, այդ չի նշանակում, որ նրանք կարող են դուրս պրծնել Ձէբ Ստոմպի զննող հայեացքից:

—Նրա հակառակ հետքը,—խօսեց նա և բոլոր ուշադրութիւնը կենտրոնացրած՝ դանդաղութեամբ շարունակեց ճանապարհը:

Առաջ շարժելով գտած հետքերով, որսորդը մօտեցաւ մացառներին, բայց այդտեղ յանկարծ կանգ առաւ. կարծես թէ նրա առաջ բարձրանում էր մի անթափանցելի արգելք, այն ինչ այդտեղով անցնում էր

բաւականին լայն շաւիղ: Հէնց այդ էլ նրա կանգ առնելու պատճառն էր:

Այդ շաւիղը տանում էր դէպի մի ձորակ, որտեղով հոսում էր մի փոքրիկ գետակ: Այժմ նա համարեա շորացած էր և ներկայացնում էր մի շարք ցեխոտ փոսեր, մինը միւսից բաւականին հեռու: Գետի կիսով չափ շորացած ցեխի մէջ կանգնած էր մի մարդ՝ բռնած մոխրագոյն ձիու սանձը:

Նա ինչ էր անում այտեղ: Նրա շարժումները հանելուկ կը մնային ամեն մի կողմնակի մարդու համար, բայց Ձէբ Ստոմպը նրան տեսնելուն պէս իսկոյն հասկացաւ, թէ բանը ինչու մն է:

—Նկատել է կոտրած պայտի հետքը և կամենում է կոխտելով անհետացնել: Իզուր աշխատանք, միտեր է կասիյ կէլիօնն, բոլորովին ի գո՛ւր: Դրանով ինձ չես կարող մոլորեցնել, երդւում եմ Սմենաբարձրեալի անուանով, որ ես կը հետևեմ քեզ քո հետքերով, եթէ նրանք ինձ մինչև անգամ դժոխքը տանեն:

Որսորդը հազիւ թէ արտասանել էր այդ խօսքերը, երբ նախկին կապիտանը վերջացնելով իւր գործը, նստեց ձին և առաջ արշաւեց: Շուտով նա անյայտացաւ Ձէբի առաջից, բայց վերջինս երբէք չ'անհանդատացաւ դրա մասին: Աւելի շուտ որսի շունը կը կորցնէր նապաստամակի հետքը, բան թէ Ձէբ Ստոմպը թոյլ կը տար ծածկւելու կապիտան կէլիօնին: Ո՛չ մացառների թաւուտը և ոչ մի ուրիշ խորամանկութիւն չէին կարող այժմ պաշտպանել նրան:

Որսորդն առաջ գնաց՝ մտածելով կանգ չ'առնել մինչև կազա-դէլ-Կօրվօին հասնելը:

Նրա հաշիւը ճիշտ դուրս եկաւ: Ո՞վ կարող էր նախատեսել, որ կապիտան կէլիօնը իւր ճանապարհին կը հանդիպէ Իզիւօրա Սօվարուբիօ դը-Լօս-Լանսօսին: Թէև

Զէք Ստոլմպը շատ զարմացաւ, երբ նկատեց նրանց երկուսին, բայց ոչ մի բանով չ'արտայայտեց իւր զարմանքը, այլ մի քանի նախազգուշութիւններ ձեռք առաւ, որ նկատելի չը լինի:

Առանց աղմուկ հանելու յետ դարձաւ, ինչ որ բան շնչաց իւր «պառաւի» ականջին և ծառերի ետև թագնրէրով՝ առաջ անցաւ: Մատակը հետևում էր նրան: Մի քանի քայլ անցնելուց յետոյ նա կանգ առաւ. կենդանին ևս կանգնեց: Որսորդը չէր տեսնում կապիտանին և մեքսիկոնուն, որովհետև խիտ ծառերը բաժանում էին նրան երկու ձիաւորներին, բայց նրանց ամեն մի խօսքը պարզ կերպով հասնում էր ծերունի Զէքի ականջին: Նա մնաց իւր դարանում այնքան, մինչև որ կէլհօունն ու Իզիդօ-բան փոխելով իրենց ձիերը՝ ճանապարհ ընկան: Երբ որ նրանք հեռացան այնքան, որ չէին կարող տեսնել նրան, որսորդը դուրս եկաւ իւր դարանից շաւղը և նայելով երկու շարք հետքերին, բացականչեց:

—Յովսափանթ: Ահա սատանայի պայմանը կախարդ կնոջ հետ. թող ես անիծեմ լինեմ, եթէ կարողանամ ասել, թէ նրանցից որը շահեց:

ԼԱԻ ՊԱՆՊԱՆԻԱԾ ԵԼՔԸ.

Ինչպէս արդէն ասացինք, Զէք Ստոլմպը դուրս եկաւ ծառերի ետևից միայն այն ժամանակ, երբ ձիաւորներն անյայտացան: Նա նրանցից և ոչ մէկի ետևից չը գնաց, այլ կանգնեց շաւղի մէջ տեղը և սկսեց մտածել, թէ այժմ ինչ է հարկաւոր անել:

Ձիերի փոխանակումը նրան մտատանջութեան մէջ էր ձգել. նա լսել էր կէլհօունի և Իզիդօրայի բոլոր խօսակցութիւնը և գիտէր, որ դրա առաջին միտքը պատկասում էր կապիտանին: Ինչով բացազրել այդ տարօրինակ ամբարշտութիւնը: Ինչի համար էր հարկաւոր նրան ձիաւորի այդ փոխանակումը: Զէքը գիտէր, որ մեքսիկոնին ձիշտ էր ասում, —ամերիկական ձին աւելի թանգ արժէք՝ քան թէ մուստանգը. նա գիտէր նոյնպէս, որ կապիտանը չէր խաբւել, որովհետև նա ևս լաւ ձի ճանաչող էր: Բայց ինչո՞ւ համար էր նա համարեա ձրի տալիս իւր գեղեցիկ ամերիկական ձին մուստանգի փոխարէն:

Որսորդը վերցրեց գլխից թաղիքէ գլխարկը, մի քանի անգամ ձեռքն անցկացրեց մազերի վրայով, շոյեց ըսպիտակ միւրուքը և աչքը ձգեց գետնին, կարծես թէ կամենում էր իւր հարցի պատասխանն այնտեղ գտնել:

«Այստեղ կարող է միայն մի բացազրութիւն լինել, —վերջապէս ասաց նա:—Միտտեր կէլհօունին հարկաւոր էր մի արագավազ ձի. անշուշտ կամենում է հասնել... անգլուխ ձիաւորին: Ես այդ այնպէս հաստատ գիտեմ, ինչպէս գիտեմ, որ ինձ անւանում են Զաւուլօն Ստոլմպ: Ուրեմն և նա չի դանդաղիւղւորւելու անգլուխ ձիաւորին գտնելու համար, միայն նախ քան այդ նա երկի կը ճաշի տանը: Բայց երբ նա դուրս կը գայ տափաստանը, նրա ետևից կը գնայ և մի մարդ՝ Զաւուլօն Ստոլմպ անունով: Դէհ, պառաւ, —շարունակեց նա իւր

մատակլին դառնալով.— դու կարծում ես թէ մենք տուն կը գնանք: Ո՛չ, բոլորովին ի դուր ես այդպէս կարծում: Դու պէտք է սպասես դեռ մի երկու ժամ էլ, գուցէ և ամբողջ գիշերը: Ի՞նչ արած. այստեղ խոտը լաւն է, կարող ես արածել, որքան կամենաս: Դէհ, գնա քեզ համար արածելու»:

Այդ խօսքերն ասելով, որսորդը վերցրեց ձիու սանձը, կապեց թամբի վրայ և իր «պառաւին» բաց թողեց արածելու: Մի քանի հարիւր եարդ տարածութիւնից յետոյ վերջանում էր մացառոտը և տարածւում մի ընդարձակ հարթութիւն, որի հակառակ կողմում գտնուում էր կազա-դէլ-Կօրվօն, որի առաջ երևում էր մի ձիաւորի կերպարանք, որը շուտով անյայտացաւ դռների ետևում:

Այդ ձիաւորը ծանօթ էր Ձէբ Ստոււմպին: «Հէնց որ նա դուրս կը գայ անից, այստեղից ես կարող եմ տեսնել նրան,— խօսեց որսորդն ինքն իրեն:— Ես ես չեմ լինիլ, եթէ չը սպասեմ նրան, թէկուզ մինչև վաղն երեկոյ, միայն հարկաւոր է քիչ համբերել:

Եւ Ձէբը նստեց մի մեծ ծառի տակ, մէջքը յենեց նրա բունին, հանեց մեծ գրպանից պայուսակը, որի մէջ գտնուում էր մի կտոր հաց, մի կտոր տապակած խոզի միս և մի փոքրիկ սրւակ էլ խմիչք, որի անուշահոտութիւնից կարելի էր իմանալ, որ նա յայտնի մօնօնգախելեան օդի էր: Կերաւ հացի և մսի կէսը, քնացորդը դրաւ պայուսակի մէջ և կախեց ծառից, յետոյ խմեց մի քանի կում օդի, վառեց ծխամորձը և ձեռները ծալեց կրծքի վրայ ու աչքը ձգեց գաղէնդայի դարպասին:

Այսպէս անցաւ մօտ երկու ժամ: Ծառ մարդիկ էին շտապում գաղէնդայի բակը և դուրս գալիս այնտեղից, թէ տգամարդիկ, թէ կանայք և թէ երեխաներ, բայց չը նայելով այդքան հեռաւորութեան, Ձէբ Ստոււմպը նրանց հագուստից և մորթու թուխ գոյնից կարող էր

իմանալ, որ նրանք գաղէնդայի ծառաներն էին, բայց նրան հարկաւոր էր տեսնել նրանց տիրոջը: Բացի դրանից, նրանք բոլորն էլ գնում էին ոտով, իսկ այն մարդը, որին հսկում էր որսորդը, պէտք է դուրս գար գաղէնդայից ձիով:

Ծիրանագոյն արեգակն սկսել էր թեքել դէպի արեւմուտք. հարթութեան վրայ ձգւել էին երկար սոււերներ: Ձէբը ոտքի կանգնեց, ուղղեց ամբողջ հասակով և սկսեց նայել հեռու մթութեան մէջ երևացող գաղէնդային՝ յենւելով ծառի բունին, որպէս թէ այդ դրութեան մէջ աւելի լաւ կարող է տեսնել:

«Ծառ հնարաւոր է, որ այդ սրիկան դուրս գայ գիշերը,— մտածեց նա.— կամ գոնէ արշալուսին, իսկ ես անշուշտ պէտք է իմանամ, թէ նա ո՞ր ճանապարհով դուրս կը գայ տափաստանը: Կարիք չը կայ իմ պառաւը քարշ տալ ետևիցս,— շարունակեց նա նայելով դէպի այն կողմը, ուր թողել էր իւր ձին:— Նա միայն կը խանգարէ ինձ. բացի դրանից, ինչպէս երևում է գիշերը լուսնկայ կը լինի և նեղրերը կարող են նկատել նրան: Աւելի լաւ է թողնեմ նրան անտառում. այստեղ նա ապահով կը լինի»:

Նա վերադարձաւ ձիու մօտ, վերցրեց թամբը, կապեց ծառից, յետոյ թամբի վրայից վերցրեց շերտաւոր վերմակը, ձգեց ուսերին և գնաց կազա-դէլ-Կօրվօի ուղղութեամբ:

Երբ արեգակի վերջին ճառագայթը մարեց արեւմուտքում, որսորդը զգուշութեամբ մօտեցաւ գաղէնդային և երկու հարիւր եարդ տարածութեան վրայ պառկելով մի մեծ ծառի տակ, պատրաստեց հսկել կազա-դէլ-Կօրվօի դարպասին:

Ամբողջ գիշերը նա մի բոլէ անգամ աչքը չը փակեց: Ան եռանդուն ջանքը, որով նա կատարում էր իւր

վրայվերցրած պարտականութիւնը, ցոյց էր տալիս, որ նա մեծ նշանակութիւն էր տալիս կապիտան Կէլհօունի առաջիկայ շրջագայութեան:

Սկզբում նա լսում էր ձայներ, որոնք գրաւում էին նրա ուշագրութիւնը և ոյժ տալիս նրա միատեսակ լուռ հսկողութեանը: Ստրուկների խրճիթներից լսում էին ձայների խառն աղաղակներ, որոնց հետևում էր որոտալի ծիծաղ: Սակայն սև ստրուկների աղմկալից ուրախութիւնը նրն ևս աւելի չափաւորւած էր սովորականից. լսելի չէր ոչ ջութակի ձայնը և ոչ էլ նրանց սիրելի panjo-ի ուրախ զնգզնգոցը:

«Մեծ» տան մէջ թագաւորող մռայլ և տխուր լուծութիւնը չէր կարող չը ներգործել նեղրերի տրամադրութեան վրայ:

Կէս գիշերւայ դէմ ձայներն սկսեցին հանդարտել և տիրեց կատարեալ լուծութիւն, որը երբեմն խանդարւում էր միայն պահապան շների հաշոցով:

Ձէբը օրւայ աշխատանքից սաստիկ յոգնած, պէտք է բոլոր ջանքը գործ դնէր, որպէսզի չը բնէր: Մի անգամ քիչ էր մնացել որ ննջէր, բայց ժամանակին ուշքի եկաւ, ոտքի կանգնեց և փոքր ինչ ման եկաւ մարգա-գետնում, յետոյ վերադառնալով իւր առաջւայ տեղը, պառկեց թփի տակ, վառեց ծխամորճը և ձեռքից բաց չը թողեց այնքան, մինչև որ բոլոր ծխախոտը չը ծըխեց:

Որսորդը աչքը յառած՝ անդադար հսկում էր գաղէնդայի դրանը: Ծանր դռներով դարպասը լուսաւորւած էր լուսնի լուսով և Ձէբը պարզ կերպով կարողանում էր տեսնել, որ նրանք փակ էին և ոչ ոք դուրս չէր եկել անից:

Այդպէս անցաւ ամբողջ գիշերը և հորիզոնի վրայ սկսեցին երևալ առաւօտեան արշալուսի վարդագոյն շո-

ղերը: Որսորդը պէտք է փոխէր իր հսկելու տեղը: Նա վերկացաւ, փաթաթեց վերմակի մէջ և հեռացաւ գաղէնդայից նոյն ճանապարհով, որով եկել էր երեկ երեկոյեան, յաճախ կանգ առնելով և յետ նայելով:

Հասնելով այն ծառին, որի տակ ընթրել էր, Ձէբը հանեց պայուսակը և սկսեց նախաճաշել իւր պաշարի մնացորդը: Սրւակի մէջ մնացած օղին խմելով, լցրեց ծխամորճը և պատրաստւում էր վառել, բայց յանկարծ աբէթն ու հրահանը դրաւ պայուսակի մէջ և աչքը ձգեց մի կէտի:

Առաւօտեան կապտագոյն մշուշի միջից նա տեսաւ, որ գաղէնդայի դռները արձակ բացւեցան և մի բոպէից յետոյ այնտեղից դուրս եկաւ մի ձիաւոր՝ հեծած մի փոքրիկ մոխրագոյն ձի, որից յետոյ դռներն իսկոյն փակւեցան: Ձէբն այնքան էլ լաւ չը դիտեց այդ մարդն. նա երբէք չէր կասկածում, որ այդ այն մարդն էր, որն անցել էր այստեղով երեկ երեկոյեան, միևնոյն մոխրագոյն մուստանգի վրայ: Որսորդը միայն կամենում էր իմանալ, թէ նա ո՞ր ուղղութեամբ կը գնայ: Մինչև էր իմանալ, թէ նա ո՞ր ուղղութեամբ մօտենում է ծա-կէս բոպէն նա համոզեց, որ ձիաւորը մատակի մօտ, ոին: Որսորդը ոտի կանգնեց, վազեց իւր մատակի մօտ, հազցրաւ նրա գլխին սանձը, ուղղեց թամբը և շտապով առաջ անցաւ մեակիտական ծառերի թաւուտի միջով, որտեղից նա կարող էր տեսնել շաւիղը, ինքն անսկասե-լի մնալով:

Թագնւելով ծառերի տակ, սպասեց ձիաւորի մօտե-նալուն, որն, ինչպէս յայտնի է, Կասսիյ Կէլհօունն էր: Երբ վերջինս մօտեցաւ, կտրեց անցաւ մացառոտը և ա-տիճանաբար անյայտացաւ տափաստանի մէջ, որ ծած-կըւած էր առաւօտեան մշուշով, Ձէբ Ստուժպը թուա թամբի վրայ և ստիպեց նրան առաջ գնալ:

Նա գնաց կապիտանի ետևից, բայց աշխատում էր

հետու մնալ նրանից: Նա կարիք չունէր նրա ետևից հասնելու. ցողով ծածկւած խոտը նրա համար մի մաքուր երես էր, իսկ մոխրագոյն մուստանգի հետքերը—տաներ նոյնքան պարզ, որքան գրքում տպագրւածը:

Նա կարող էր որոշել թարմ նշանները մինչև անգամ ամենաարագ արշաւի ժամանակ:

Ր Օ Դ Ե Ր Ե Ի Ո Յ Թ Ը:

Կէլիօունը չէր կասկածում, որ բացի Պլուտոնից, որ թամբել էր նրա մոխրագոյն մուստանգը, որեւէ մէկը տեսած լինէր նրա զազէնդայից հեռանալը. ուստի սլացաւ տափաստանում և անցաւ այն տեղի մօտից, ուր թագնւած էր ծերունի Զէբը: Յոյս ունենալով, որ վաղ առաւօտեան կիսախաւարի մէջ դժւար կը լինէր նկատել իրեն, կապիտանը ոչ մի նախազգուշութիւն չէր ձեռք առել և ուշադրութիւն չը դարձրեց շրջապատին: Իւր ետև թողնելով մացառոտը, նա գնաց Ռիօ-Նուէցէսի ուղղութեամբ: Կապիտանն արշաւում էր առանց այս ու այն կողմը նայելու, միայն աչքը ձգած իւր առաջ տարածւած տափաստանին, յուսալով հորիզոնի վրայ տեսնել նրան, որն զբաղեցնում էր նրա միտքը: Մացառոտից բաւականին տարածութիւն հեռանալով, նա մի անգամ միայն յետ նայեց և ոչ ոքի չը նկատելով, հանգստացած շարունակեց իւր ճանապարհը:

Սակայն կապիտանը բոլորովին համոզւած չէր իւր ձեռնարկութեան յաջողութեանը, թէև նա հեծած էր այժմ տեխասեան եղջերու պէս արագավազ մի ձի: Շատ հնարաւոր է, որ նա մինչև անգամ չը տեսնէ իւր որսը, մի միտք, որ նրան շատ էր անհանգստացնում, թէև այդ բանը նրան չէր արգելում դիմել այնտեղ, ուր յոյս ունէր գտնել անգլուխ ձիաւորին:

«Տարօրինակ է, որ նա միշտ վերադառնում է միևնոյն տեղը,—մտածեց Կէլիօունը:—Կարծես թէ նա գիտէ, որ... Ոչինչ: Իրա պատճառն այն է, որ այնտեղ խոտն աւելի լաւ է, քան թէ ուրիշ տեղ, և զեւտիցն էլ մօտիկ է: Լաւ: Յուսանք որ ձին այսօր էլ կը գնայ այնտեղ, եթէ ոչ, մնում է ինձ շրջել ամբողջ մացառոտը. իսկ այդ գրողը տանի, ինձ բոլորովին հաճելի չէ մինչև անգամ»

օրը ցերեկով: Բայց ինչի՞ց պիտի վախենամ, երբ նա վա-
ղուց արդէն միւս աշխարհումն է: Ինձ սարսափեցնում է
միայն գնդակը և երգւում եմ, ես ձեռք կը բերեմ այդ,
ինչ ուզում է լինի: Ողորմած երկինք, այն ի՞նչ է այն-
տեղ»:

Նա միանգամից կանգնեցրեց մուստանգը և աչքերը
լայն բաց անելով նայեց իւր առաջ տարածւած հարթու-
թեան վրայ: Նրա աչքերում արտայայտւում էր անկեղծ
երկիւղ:

Եւ զարմանալի չէ, որ նա վախեցաւ: Այն՝ ինչ որ
տեսաւ նա, կարող էր սարսափեցնել անվեհեր մարդուն
անգամ:

Արեգակը վաղուց էր դուրս եկել և այժմ գտնուում
էր ձիաւորի ետևում, ուղիղ այն գծի վրայ, որով նա ա-
ռաջ էր շարժուում: Նրա առաջ, հորիզոնի վրայ տարած-
ւած էր կապտագոյն մշուշի մի շերտ: Ծառերը չէին
երևում թանձր մշուշի միջև, որը ինչպէս մի թեթև
կապտագոյն ծածկոց, տարածել էր անտառի վրայ և
բաւականին բարձրանալով՝ միացել էր աւելի մուգ կա-
պույտ երկնքի հետ: Այդ թափանցիկ վարագոյրի վրայ,
կամ աւելի ճիշտն ասած, նրա ետևում երևում էր մի
կերպարանք այնքան տարօրինակ, որ մարդ իւր սեպհա-
կան աչքերին անգամ կարող էր չը հաւատալ: Դա մի
անգլուխ ձիաւոր էր, բայց ոչ այն, որին առաջ տեսել
էին Կէհօունը և շատ ուրիշները: Ձեռով և գծագրու-
թեամբ նա նման էր առաջինին, բայց աւելի վիթխարի
և տասն անգամ մեծ սովորական մարդուց, իսկ ձին ուր-
պէս նախաշրջեղեղեան մի մօմօնտ:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Ձիաւորի հետ կատարել
էր աւելի տարօրինակ և անբացատրելի փոփոխութիւն.
Նա գնում էր ոչ թէ գետնի վրայ, այլ երկնքով. ձիու-
սմբակները պարզ երևում էին մշուշային վարագոյրի վե-

թին ծայրի վրայ, այն ինչ ձիաւորի ուսերը,— միայն ու-
սերը և ոչ գլուխը,— շփուում էին հորիզոնի գծին: Վե-
րարկուն, սանձը, ձիու բաշը, երկար ալիքաւոր պոչը,—
բոլորը դէպի վեր էին՝ հակառակ ձգողականութեան օ-
րէնքներին:

Ձիաւորը, որ այժմ նման էր տեսիլքի, քան երբևիցէ,
առաջ էր շարժուում դանդաղ և հանգիստ քայլերով: Կէլ-
հօունը երկիւղից յաղթահարւած դիտում էր նրան միև-
նոյն տեղն անշարժ կանգնած: Յանկարծ մի անսպասելի
փոփոխութիւն առաջացաւ: Անգլուխ ձիաւորի կանոնաւոր
գծագրութիւններն սկսեցին աւելի քիչ պարզ երևալ.
ձին շուտ եկաւ և արագ արշաւով վազեց հակառակ կող-
մը, դեռ ևս գլուխն ի վար, ոտներն ի վեր դարձրած:

Տեսիլքը վրդովեց և շտապով հեռացաւ: Ձին վա-
խեցաւ և յետ փախաւ: Միևնոյն վայրկեանին նա լսեց
մի ձիու ոտածայն և իւր առաջ տեսաւ անգլուխ ձիաւո-
րին:

«Օղերևոյթ, — բացականչեց նա, անիծելով ինքն ի-
րեն:— Ձէ՞ որ այդ նա է, որին որոնում եմ: Եւ ինչքան
մօտիկ: Իսկ ես վախեցայ նրանից որպէս մի յիմար:
Եթէ որ ես իմանայի այդ, իսկոյն կարող էի վերջացնել
ամեն ինչ այդ անիծւած կենդանու հետ, նախ քան նա
կը նկատէր ինձ: Այժմ յառաջ: Երգւում եմ, որ ես կը
հասնեմ նրան, եթէ հարկաւոր լինի արշաւել մինչև Տե-
խասի միւս ծայրը»:

Այդ խօսքերն ասելով նա մտրակեց ձիուն, խթան-
ները խրեց նրա կողքը և կատաղաբար սլացաւ անգլուխ
ձիաւորի ետևից...

Երկու ձիաւորներն արշաւեցին բաց տափաստանում
մի քանի ըոպէ միայն. կապիտանն արդէն սկսել էր շը-
նորհաւորել իւր յաջողութիւնը: Նրա ձին աւելի արա-
գավագ էր անգլուխ ձիաւորի ձիուց: Եւ մի քանի ըոպէ

յետոյ այնքան մօտեցել էր նրան, որ նա պատրաստեց հրացանը: Նա կամենում էր սպանել ձին և դրանով վերջ տալ հետապնդմանը: Կապիտանը կարող էր հրացանն արձակել հէնց այժմ, եթէ չը վախենար վրիպելուց, որ առաջին անգամը չէր պատահում նրա հետ: Յիշելով առաջին անյաջողութիւնները, նա վճռեց սպասել, մինչև որ աւելի կը մօտենայ անգլուխ ձիաւորին:

Մինչդեռ նա այդպէս էր մտածում, անգլուխ ձիաւորը ծուռեց դէպի անտառի եզրը:

Այդ անսպասելի շարժումը շահաւէտ չէր նրա հետապնդողի համար: Նա կորցրեց շահած տարածութիւնը և ձեռքից դուրս պրծած որսին հասնելու համար գնաց դեռ մի մղոնի չափ ևս իրեն լաւ ծանօթ տեղի ուղղութեամբ, ուր գտնուում էր արեան փոսը: Ուրիշ հանգամանքներում նա կաշխատէր խոյս տալ նրանից, բայց այժմ այդ նրա գործը չէր. անտանելի երկիւղը աւելի մտաբեր էր անցեալի ծանր յիշողութիւններէր: Միայն անգլուխ ձիաւորին բռնելով նա կարող էր հեռացնել սպառնացող վտանգը:

Կապիտանը նորից հասաւ իւր գոհին: Նրա ձիու ունցրած քթածակերը համարեա շփուում էին հալածւած ձիու քամուց ծածանող պոչին: Հրացանը պատրաստ էր կէլիօունի ձախ ձեռքին, իսկ աջ ձեռքով նա բռնած էր շնիկը և սպասում էր միայն յարմար բոպէին, որ նշան բռնէ:

Մի վայրկեան էլ և գնդակն արդէն վերջ կը տար այդ վայրենի սրարշաւին, երբ յանկարծ անգլուխ ձիաւորի ձին զգալով վտանգը, մի արագ պտոյտ արաւ և աքաղի տալով իւր հետապնդողի ձիու դնչին, բարձր խրխինջով արշաւեց միւս կողմը:

Այդպիսի ելքի անսպասելիութիւնը, որ պարզ կեր-

պով ցոյց էր տալիս կենդանու. անսովոր և գերբնական հասկացողութիւնը, մտատանջութեան մէջ ձգեց կապիտանին: Նրա ձին կանգնեց, բայց խթանները խորը ծակելով նրա կողքը, նորից ստիպեցին արշաւել:

Ձիաւորն սկսեց քշել նրան դեռ աւելի եռանդով քան թէ առաջ, որովհետև անգլուխ ձիաւորն արշաւում էր ուղղակի դէպի մացառները: Եթէ կապիտանին չը յաջողւի բռնել կամ սպանել կենդանուն իսկոյն, նա կը մտնի անտառի թաւուտը և այն ժամանակ նրան հասնելու ամեն մի յոյս կորած պէտք է համարել:

Այդ ժամանակ երկուսն էլ հասել էին մացառներին և անգլուխ ձիաւորը կիսով չափ արդէն ծածկւած էր ծառերի մէջ: Երևում էին միայն ձիու կողերը և կէլիօունն էլ հրացանն ուղղեց նրա կողերին:

Որոտաց հրացանը և ծխի թանձր ամպի միջից կապիտանը տեսաւ, որ մի կլոր առարկայ խուլ շրխկոցով ընկաւ գետնի վրայ և զլորեց իւր ձիու ոտների տակ:

Այդ առարկան գլորում էր մի կողմից միւս կողմը ինչպէս հօլ, մինչև որ կանգ առաւ: Մուստանդը փրուրտաց և յետ քաշեց: Կապիտանն ուշադրութեամբ դիտեց այդ առարկան, դողաց և նրա կրծքից դուրս թռաւ երկիւղի մի վայրենի աղաղակ:

Նա տեսաւ իւր առաջ մարդկային մի գլուխ, որին հագցրած կլոր ու կոշտ եզրերով գլխարկը թոյլ չէր տալիս նրան հանդիստ կանգ առնել տեղը: Նրա երեսը դարձրած էր կապիտանին, այնպէս որ վերջինս կարողացաւ լաւ դիտել նրան: Գունատ, կնճռոտւած դէմքը ծածկւած էր արեան բծերով. անկենդան մռայլ աչքերը լայն բացւած էին և կապտած շրթունքները ժպտում էին, ցոյց տալով երկու շարք խիստ սպիտակ ատամները:

Կասսիյ կէլիօունը գիտէր, որ այստեղ գերբնական ոչինչ չը կար, բայց այդ սարսափելի տեսարանը տեսնե-

լով, նա դողաց և արիւնը սառեց նրա երակներում: Կարճ էր նրա տեսակցութիւնն այդ համր, բայց պերճախօս գլխի հետ: Նախ քան նա դադարեց տատանւելուց և անշարժ կանգնեց, կապիտանը շուռ տուաւ ձիու գլուխը և յետ դարձաւ:

Նա այլևս հետամուտ չեղաւ անգլուխ ձիաւորին, որ մտել էր անտառի խորքը. այլ առանց յետ նայելու, արշաւեց Կազա-դէլ-Կօրվօի ուղղութեամբ:

ՏԱՐՕՐԻՆԱԿ ԳԻՒՏ.

Անտառից դուրս գալով, ծերունի որսորդը շարունակեց առաջ շարժւել Կէլհօունի հետքերով և խիստ զգուշութեամբ, դանդաղ, բայց հաւասար քայլերով, նա մօտեցաւ այն տեղին, ուր Կէլհօունը տեսել էր օդերևոյթը: Որսորդն այստեղ ոչինչ չը տեսաւ: Օդերևոյթը վաղուց էր անցել, մշուշը ցրւել էր, պարզ կապոյտ երկինքը հորիզօնի վրայ միանում էր կանաչ տափաստանի հետ: Թէև որսորդը չը տեսաւ սարսափելի տեսիլքը, բայց նա գետնի վրայ նկատեց ինչ որ խիստ ուշագրաւ բան: Մինը միւսից մօտ գնում էին երկու ձիերի հետքեր. ետևից գնում էր մուստանգը, որի սմբակների չափը որսորդն արդէն վերցրել էր: Ինչ վերաբերում է առաջի ձիու հետքերին, նրանք այնպէս լաւ յայտնի էին նրան, որ կարծես թէ իւր սեպհական մատակը թողած լինէր:

«Անզգամը գտել է նրան,— խօսեց Զէբը՝ մտախոհութեամբ գետնին նայելով:— Ասենք որ զրանից դեռ չի կարելի եզրակացնել, թէ նա հասել է նրա ետևից, սակայն ո՞վ գիտէ: Գրո՞ղը տանի, շատ հաւանական է, որ նա հասած լինի նրան: Կենդանին կարող է թոյլ տալ նրան իրեն մօտենալու, տեսնելով որ նա գնում է նոյնպիսի մուստանգի վրայ, այն ժամանակ... Ի՞նչ եմ այստեղ ցցւել: Ժամանակ չէ դատարկաբանութեամբ պարապելու. եթէ նա բռնել է այդ ձիաւորին և ձեռք բերել այն՝ ինչ որ կամենում է, այն ժամանակ իմ գործը տանուկ տուած է և ինձ մնում է միայն ծախել ձեռներս ու նստել: Հարկաւոր է շտապել: Դէհ, շարժւիր, պառաւ, և աշխատիր հասնել մոխրագոյն ձիուն, որ կէս ժամ առաջ անցաւ այստեղից: Ես գիտեմ, դու կարող ես մրցել ամեն մի ձիու հետ, եթէ կամենաս: Այժմ ամեն ինչ քո արագութիւնից է կախւած: Դէհ, յառանջ»:

Եւ Զէբը խթելով մատակին իւր միակ խթանով, ստիպեց նրան արշաւել. ըստ երևոյթին նա զիտաւորութիւն չունէր մոռանալով իւր սովորական զգուշութիւնը, աւելի շուտ գնալու: Առաջ գնալով հանգերձ, նա չը գազարեց ուշադրութեամբ և աչալըջութեամբ զիտել հեռու տարածւող կանաչ տափաստանը:

«Նայած այս հեաքերի ուշադրութեան,— մտածեց նա ինքն իրեն.— հաւաստի կարելի է ստել, թէ նա որտեղից էր դուրս եկել: Բոլորն էլ գնում են այդ ճանապարհով և նա, խեղճ պատանին էլ գնացել է նրանով, որ այլևս յետ չը դառնայ: Ի՞նչ անեմ, այժմ չի կարելի նրան յարութիւն տալ, բայց դրա փոխարէն կարելի է պատժել այն չարագործին, որ ոչնչացրեց նրան: Սուրբ գրքի մէջ ասւած է. «ակն ընդ ական, ատամն ընդ ատաման» և երգւում եմ, ես չեմ հանգստանալ, մինչև որ չը հատուցանեմ նրան իւր կատարած բոլոր չարիքի փոխարէնը: Նա մինչև անգամ չի կասկածում այդ, բայց...: Ա՛, ահա նա գնում է, ահա և անգլուխը: Երկունս էլ արշաւում են արագութեամբ: Ինչպէս երևում է, մոխրագոյնը հասնում է նրան: Նա դէպի մեզ չի գալիս, ուրեմն և կարիք չը կայ թագնւելու, պառնա: Սակայն ես կարծում եմ, որ լաւ կը լինի առժամանակ կանգ առնել, թէ չէ նա կը նկատէ մեզ: Բայց ո՛չ, դրանից վախենալու կարիք չը կայ. նա խիստ զբաղւած է իւր հետապնդումով և ժամանակ չունի չորս կողմը նայելու: Է՛, անգլուխը շուտ եկաւ ուղղակի դէպի անտառը: Ես այդ չէի սպասում. դեհ, պառնա, մենք էլ գնանք այն կողմը»:

Զէբն սկսեց մօտենալ մացառներին: Նա աչքը չէր հեռացնում այն շաւղից, որ դուրս էր գալիս տափաստանը: Թէև երկու ձիաւորներն արդէն ծածկւել էին, բայց նա գնում էր ոչ թէ ճանապարհով, այլ թփերի միջով, ճանապարհից այնքան հեռու, որ կարողանար տեսնել

հէնց նոր արշաւող ձիերի հեաքերը: Նա աշխատում էր դուրս չը գալ ծառերի սոււերներից, որպէսզի հակառակ կողմից մօտեցողներից ոչ ոք չը կարողանար նկատել նրան: Որսորդն այդպէս էր վարւում հասարակ նախագուշութիւնից դրդւած, որովհետև չէր ուզում հանդիպել այստեղ որևէ մէկին, առանձնապէս այն մարդուն, որը շուտով երևաց ճանապարհի վրայ:

Յանկարծ անտառում լաւեց հրացանի տրաքոց: Այդ երբէք չը զարմացրեց Զէբին. նա սպասում էր դրան, հէնց որ նկատել էր երկու ձիաւորներին: Տրաքոցը նրան լաւ ծանօթ հրացանից էր, որը պատկանում էր Կասսիյ կէլիօուկին: Բայց նա սաստիկ զարմացաւ, երբ տեսաւ որ կապիտանը յետ էր փախչում այնպիսի արագութեամբ, որ կարծես թէ կամենում էր փախչելով ազատել ինչ որ սարսափելի թշնամուց:

«Ինչո՞ւ նա այդպէս շուտ յետ դարձաւ,— խօսեց ինքն իրեն որսորդը.— Շատ տարօրինակ է: Երևի իւր հաշի մէջ սխալւել է: Հէ, հէ. այնպէս է արշաւում, որ կարծես թէ ամբողջ դժոխքը հալածում է նրան: Արդեօք անգլուխը չէ հալածում նրան: Ինչպէ՞ս է պատահել, որ նրանք փոխել են իրենց դիրքը: Ա՛յ քեզ բան, գրո՞ղը նրանի: Մի ամբողջ դուրս կը տայի այդպիսի մի տեսարան տեսնելու համար: Հա՛, հա՛, հա՛»:

Նա ցած իջաւ թամբից և ձիու հետ միասին թագնւելուց թփերի մէջ այնպէս, որ մօտից անցնող ձիաւորը չը կարողանար նկատել նրանց: Ետևով կապիտանը հաւասարեց որսորդին, բայց հագիւ թէ կարողանար նկատել նրան, եթէ մինչև անգամ նա կանգնած լինէր ճանապարհի մէջ:

«Յովսափանթ,— բացականչեց որսորդը՝ զիտելով նրա երկիւղից այլանդակւած դէմքը.— Եթէ սատանան չի հալածում նրան, նշանակում է այդ սատանան հասած է

հարգել Եսրէկի
 15ի կարող. այս քերք
 1927

նրա մէջ: Ճշմարիտն եմ ասում, երբէք դրանից աւելի անճոռնի դէմք չեմ տեսել: Ափսոսում եմ այն կնոջը, որ կը վճռէ նրա կինը լինելու: Խեղճ միսս Պոյնդեքստեր: Ի միջի այլոց նա չի համաձայնուի այդ շարագործին իւր տէրը և ամուսինը ճանաչելու: Սակայն ի՞նչ է նշանակում այդ: Ինչպէս երևում է, ոչ ոք նրան հետամուտ չի լինում, բայց նա շարունակում է առաջայ նման գլուխը կորցրած արշաւել: Որտեղ է գնում: Դարձեալ տո՛ւն,—ասաց որսորդը մօտենալով մացառների եզրին և նկատելով, որ Կէլիօունը արշաւում է Կազա-դէլ-Կօրվօի ուղղութեամբ:

—Դէհ, պառաւ,—ասաց նա, երբ մոխրագոյն ձին անյայտացաւ.—այժմ մենք դիմենք միւս կողմը: Հարկաւոր է իմանալ, թէ նա ի՞նչի վրայ հրացան արձակեց»...

Տասն րոպէ չանցած, Ձէրը կանգնեցրեց ձին, ցած թռաւ թամբից և գեանից բարձրացրեց մի առարկայ, որին տեսնելուց ամենամանկեհեր մարդն անգամ կը դողար սարսափից: Իսայլանդական մարդկային գլուխ էր: Շատերը չէին վճռիլ ձեռք տալ նրան, բայց Ձէրը ճանաչեց խիստ սիրելի պատանու դէմքի գծերը, չը նայելով որ մորթին կնճռուտել էր և ծածկւած էր սառած արեան շերտերով:

Այդպէս անխղճաբար այլանդակւած այդ դէմքը թանգ էր նրա համար մինչև անգամ այժմ, երբ նա այլևս ոչ ոքի չէր պատկանում: Ձէրը բռնեց գլխարկի եզրից և փորձեց բաժանել գլխից, բայց ի զուր. գլուխն այնպէս ուռած էր, որ գլխարկը մտել էր մտի մէջ:

Երկար ժամանակ նա կանգնեց և քնքշութեամբ դիտեց մեռածի գլուխը, երկու ձեռների մէջ բռնած:

«Աստուծ իմ,—վերջապէս բացականչեց նա:—Ինչպիսի բնծայ պիտի տանեմ ես նրա հօրն ու քրոջը: Թե-

րևա աւելի լաւ է չըվերցնեմ ինձ հետ այս գլուխը, այլ թաղեմ այստեղ անտառում և նրանց էլ ոչինչ չը պատմեմ այդ մասին: Ոչ, անկարելի է: Չը պէտք է մոռանալ, որ սա կարող է հարկաւորել ինձ, որ սրա օգնութեամբ ես հնարաւորութիւն կունենամ պարզել մի քանի հանգամանքներ: Տեսնենք ինչպիսի տպաւորութիւն կը թողնէ նա դատարանում»:

Այդ ասելով նա փռեց գետնին իւր հին վերմակը և խնամքով փաթաթեց նրանում գլուխը: Յետոյ այդ տարօրինակ բեռը կապեց թամբի աղեղից, նստեց ձին և մտածմունքի մէջ խորասուզւած յետ գնաց:

Handwritten notes in Armenian:
 23/10-22
 Կարճէն ժամանակ
 Հարստակից մի
 սպասիչ եւ կարգաւոր
 2 անգամ
 Կարճէն ժամանակ
 Կարճէն ժամանակ
 Կարճէն ժամանակ

ՕՐԷՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ.

Մօրիսին զինւորական բանդը նստեցնելուց հինգ օր յետոյ, նշանակւած էր դատը իր թշնամիներէ համար շատ բարեյաջող հանգամանքների տակ:

Դատաստանական պալատի նախագահը շրջագայում էր իւր շրջանը և բոլոր քրէական գործերի քննութիւնը ինգէ ամրոցում նշանակւած էր այդ շաբթին և որովհետև դատաւորը կանգ պիտի առնէր ամրոցում կարճ ժամանակով, մուստանգերի գործի քննութիւնը նշանակւած էր դատաւորի հէնց տեղ ժամանած օրը:

Մեղադրեալը կարող էր դատարանից իրեն համար պաշտպան պահանջել, բայց Ինգէ ամրոցում չը կար մշտական փաստաբան: Սահմանագծի այդպիսի տեղերում երկար պատմութեանաւոր պարոնները սովորաբար շրջում են մի տեղից միւսը դատաւորի հետ միասին: Դատաւորը դեռ ամրոցը չէր եկել, բայց այնտեղ էր եկել արդէն Սէն Անտօնիօից մի յայտնի փաստաբան և առաջարկել էր պաշտպանել մեղադրեալի գործը:

Դատաստանի նախընթաց օրը Ինգէ ամրոցը եկաւ և մի ուրիշ փաստաբան, որը նոյնպէս պահանջեց Մօրիսի գործն իրեն յանձնել և որ դեռ աւելի երկար ճանապարհ էր անցել, քան թէ Սէն-Անտօնիօի փաստաբանը.— նա կատարել էր մի ամբողջ ճանապարհորդութիւն, նա եկել էր Կանաչ Իրլանդիայի մայրաքաղաքից, կտրելով Ատլանդեան ովկիանօսը:

Դուբլինի փաստաբանը կամենում էր տեսնել մեղադրեալին ինչ որ կարևոր գործի համար, որ ոչ մի կապ չունէր մեզ յայտնի գործի հետ և շատ զարմացաւ, երբ իր իրերը Դուֆֆերի հիւրանոցում տեղաւոր

բելուց յետոյ իմացաւ, որ նա գտնուում է բանդում: Նա աւելի ևս զարմացաւ, երբ իմացաւ բանդարկութեան պատճառը:

— Ինչպէս. միտէր Հերալդի որդին, Բալլիբալազի նրա ամրոցի, փառահեղ ծառաստանի և բոլոր կալւածների ժառանգը մեղադրուում է սպանութեան մէջ: Ես բերել եմ ինձ հետ նրա բոլոր թղթերը: Անշուշտ այստեղ ինչ որ թիւրիմացութիւն կայ: Տարէք ինձ նրա մօտ:


Թէև հիւրանոցի տիրոջը թւում էր թէ նորեկ հիւրը բոլորովին առողջ խելքի տէր չէ, այնուամենայնիւ համաձայնեց կատարել նրա խնդիրքը և առաջնորդ տւաւ նրան բանդը տանելու:

Եթէ իրլանդական փաստաբանը յիրաւի ցնորւած էր, բայց նրա անմտութեան մէջ կար ինչ որ կանոնաւորութիւն: Նա ոչ միայն ձեռք բերաւ մեղադրեալի հետ տեսակցութիւնը, այլ և իրաւունք ստացաւ այցելել նրան, երբ կամենում է:

Այդ արտօնութիւնը ձեռք բերելը նա պարտական էր մի քանի վաւերացումների, որոնց նա ներկայացրեց բերդի հրամանատարին: Այդ թղթերը օգնեցին նրան յարաբերութեան մէջ մտնել և տեխասեան փաստաբանի հետ:

Իրլանդական փաստաբանի գալուստը այդպիսի ժամանակ ամրոցում և ամբողջ զաղութում շատ խօսակցութիւնների պատճառ էր դառել, սակայն ենթադրութիւններ անելու ժամանակ չէր մնացել. նրա գալու երկրորդ օրը նշանակւած էր դատը, ուստի նա

օրւայ մնացորդը անց կացրեց բերդում մեղադրեա-
լի մօտ, կամ իր սենեակում փակեաժ խորհրդակցում էր
Սէն Անտօնիօի փաստաբանի հետ:



Handwritten notes in blue ink:
 Մ. Ս. Ս. Ս. Ս.
 12. 15. 12
 1. 1. 1. 1.

ԱՆՁՆԻԷՐ ԱԶԳԱԿԱՆԸ ԵՒ ԲԱՐԻ ՔԵՌՈՐԴԻՆ.

Կասսիյ Կէլիօունը հրճուում էր:

«Եւ այդպէս՝ վաղը նշանակեաժ է դատը,—բացա-
կանչեց նա իւր ուրախութիւնը չթագցնելով: Միայն
կը ցանկանայի, որ մինչև այդ ժամանակ չը բռնէին ան-
գըլուխ ձիաւորին, առանց դրան նա անպայման կը դա-
տապարտուի. նոյնիսկ Սէմ Մանլէյը իմ կողմն է: Իսկ ո՞վ
է նրա պաշտպանը: Միմիայն Ստուժպը, որ թէև շատ
խորամանկ է՝ բայց ոչինչ չի կարող անել Մօրիսին ազա-
տելու համար: Գրո՞ղը տանի. մնում է դեռ մի մարդ ևս:
Նրա ցուցմունքները կարող են էական օգուտ տալ մե-
ղադրեալին: Արդեօք չի՞ կարելի հէնց այստեղ ճնշում
գործ դնել նրա վրայ»:

Մինչ այդ նա պատահեց քեռուն:

—Դուք հարկաւոր էք ինձ, ասաց նա դիմելով նը-
րան:

—Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել:

—Ես կամենում եմ խօսել ձեզ հետ մի շատ կարե-
ւոր գործի մասին:

—Լաւ, պատրաստ եմ ձեզ լսելու:

—Ես կամենում եմ խօսել ձեզ հետ Լուիզայի մա-
սին:

—Ես կը ցանկանայի սակայն, այսօր թողնել այդ ա-
ռարկայի մասին խօսելը: Հենրին դեռ չի գտնուած, և հարց
է թէ կը գտնուի գոնէ նրա դիակը: Ես որդի չունեմ
այլևս, Կասսիյ:

—Բայց մի աղջիկ ունես:

—Որն ինձ խայտառակեց:

—Բոլորովին ոչ, քեռի, և դրա ամենալաւ ապացոյ-
ցը այն է, որ ես խնդրում եմ ձեր աղջկայ ձեռքը և պէտք
է ստանամ:

Այդ խօսքերի մէջ հնչւում էր մի պահանջ, որին

ուրիշ հանգամանքներում Վուզլէյ Պոյնդեքստերը կը պատասխանէր մերժումով, բայց այժմ նա լռեց: Հարցը նրանումն էր, որ ծերունի ազարակատէրը իր բոլոր ունեցածով պարտական էր մնացել նախկին կապիտանին, որ լաւ հասկանալով իւր դրութիւնը, գործում էր համարեա յայտնապէս:

— Բո առաջարկութիւնը, սիրելի ազգական, ինձ համար շատ հաճելի է, բայց դարձեալ պէտք է կրկնեմ, որ այժմ ժամանակ չէ այդ մասին խօսելու:

— Ինչո՞ւ համար: Ես չեմ խօսում հարսանիքի մասին, որ կարող է կայանալ բարեյաջող պայմաններում: Առ այժմ ինձ հարկաւոր է միայն ձեր խոստումը:

— Որը ես կարող եմ տալ միայն իմ աղջկայ համաձայնութեամբ:

— Դուք հայրն էք և կատարելապէս կարող էք տրնօրինել նրա վիճակը:

— Դու շատ լաւ գիտես իմ աղջկայ բնավորութիւնը և ինքդ կարող ես վճռել արդեօք հնարաւոր է այդ թէ ո՞չ:

— Ինձ հարկաւոր է միայն ձեր համաձայնութիւնը, մնացածն ինքն իրեն կը կայանայ:

Դրանով էլ վերջացաւ նրանց խօսակցութիւնը: Վուզլէյ Պոյնդեքստերը հանգամանքներից ճշւած ոչինչ չէր կարող ասել և վճռեց անյապաղ խօսել Լուիզայի հետ:

— Լուիզա, ես եկել եմ քեզանից մի բան խնդրելու, — ասաց նա աղջկանը դառնալով:

— Ի՞նչ բան, հայրիկ:

— Կասսիյ Կէլիօունը սիրում է քեզ և խնդրում է քո ձեռքը:

— Ես նրա կինը չեմ լինիլ:

— Խեղի եկ, աղջիկս: Եթէ դու իմանայիր բոլորը...

— Որ նա ձեր պարտատէրն է — ես այդ շատ լաւ

գիտեմ: Բայց գիտեմ նոյնպէս, որ դուք Վուզլէյ Պոյնդեքստերն էք, իսկ ես ձեր աղջիկը:

— Ներիր ինձ, Լուիզա, որ թոյլ տւի ինձ, քեզ և ինձ համար այդ անհաճելի առաջարկութիւնն անելու քեզ: Նկարագրւած խօսակցութիւնից մի ժամ անց, Կասսիյ Կէլիօունը մերժեց:

— Լաւ մտածեցէք, թէ ինչ էք ասում, Լուիզա, — խիստ կերպով նկատեց Կէլիօունը, երբ նրանք հանդիպեցան միմիանց:

— Ես շատ լաւ եմ մտածել: — Բայց դուք չէք մտածել իմ անկեղծ սիրոյ մասին: Ես ձեզանից այսքան մօտ գտնելով, չէի կարող չը սիրել ձեզ: Ամբողջ ժամանակը ես տանջւում էի այդ սիրով:

— Ես մեղաւոր չեմ, որովհետեւ երբեք սօրիթ չեմ տւել ձեզ ինձ սիրելու:

— Իսկ ձեր գեղեցկութիւնը: — Ինձանից աւելի գեղեցիկ կանայք շատ կան, դուք կարող էք նրանց դիմել: Ես չեմ սիրում ձեզ և չեմ կապող սիրել, Կասսիյ, ահա իմ վերջին խօսքը:

— Այնուամենայնիւ դուք իմ կինը կը լինէք: Կան բաներ, որ կը հարկադրեն ձեզ այդպէս լինել:

— Երևի կամենում էք ասել, թէ այս տան տէրը դուք էք: Ես չեմ հերքում ձեր իրաւունքները, բայց մի մոռանաք, որ այդ բոլորով հանդերձ ես ազատ կի՞ն եմ:

Կէլիօունը դողաց, բայց չը յուսահատուց: — Բացի դրանից կան և ուրիշ բաներ:

— Օրինակ ի՞նչ:

— Վաղը պիտի դատեն մուստանգերին և դուք

պէտք է դուրս գաք դատաւորի առաջ Մօրիս Հերալդի հետ միասին... և որ գլխաւորն է, դուք ինքներդ պէտք է արտասանէք նրան մեղադրող դատաւճիռը:

—Ո՛չ, այդ չի կարող լինել, — նրան ընդհատեց Լուիզան: — Սյդ գործի մասին ես ուրիշներինց աւելի ոչինչ չը գիտեմ:

—Ո՛չ, դուք ուրիշներինց աւելին գիտէք: Մի՞թէ սպանութեան գիշերը Մօրիս Հերալդի հետ ձեր ունեցած տեսակցութիւնն արդէն անհետացել է ձեր յիշողութիւնից: Ձեզ նոյնպէս յայտնի է, որ ձեր եղբայրը գնաց Մօրիսի հակից:

Օրիորդը դողաց և գունատեց:

—Յետո՛յ:

—Յետոյ այն, որ դուք կամ պէտք է դուրս գաք դատաւորի առաջ իբրև վկայ, կամ ընդունէք իմ պայմանները:

—Ձեր պայմանները: Երբէք:

—Սյդ դէպքում վաղը դուք նստած կը լինիք վրահաների նստարանի վրայ և կը պատմէք ձեր խայտառակ վարմունքի մասին բոլորը:

—Բաւական է: Կորիւր այստեղից, անարգ լրտես:

—Ես գնում եմ, բայց ձեզ խորհուրդ եմ տալիս լաւ մտածելու այն ամենի մասին, ինչ որ ասացի:

Նա դուրս գնաց քմծիծաղ տալով:

Լուիզան թուլացած ընկաւ աթոռի վրայ:

—Օ՛, — բացականչեց նա. — որքան ստոր է այդ մարդը և որքան երկար ժամանակ համբերեցինք մենք

նրան: Ո՛չ, հէնց որ դատը կը վերջանայ, ես պէտք է խնդրեմ հօրս ազատել ինձ այդ գարշելի մարդուց, թէև դրա հետևանքը մեր թշւառութիւնը լինի:

ՏԵՒԱՍԻ ԴԱՏԱՍՏԱՆԸ.

Լուսանում է: Վարդագոյն գնդակաձև էօսը *) բարեհամբոյր ժպիտով բարձրանում է ովկիանոսի ակիքներից: Նրա բաց կարմիր ճառագայթները միաժամանակ լուսաւորում են և մեքսիկական ծոցի աւազոտ ծանծաղուտը և Ինգէ ամրոցի աստղաշար դրօշակը, թէև վերջինս հեռու է ծովից ամենաքիչը հարիւր մղոն:

Առաւօտեան թեթև քամին ծածանում է արեգակի առաջին ճառագայթներով լուսաւորւած դրօշակը և նրա սպիտակ, կարմիր ու կապոյտ շերտերը պարզ կերպով որոշւում էին երկնակամարի կապոյտ ֆօնի վրայ: Թերևս երբէք, սկսած այն օրից, երբ ամրոցի պատերի վրայ ցցւեց մեծ հասարակապետութեան դրօշակը, ոչ մի անցք չի գրգռել այդպիսի խիստ հետաքրքրութիւն, ինչպէս այդ օրը Հենրի Պոյնդեքստերի սպանողի վրայ նշանակւած դատը: Հէնց որ արևելքն սկսեց կարմրել, քաղաքում սկսեց շարժումը: Չը նայելով առաւօտեան վաղ ժամին, ամեն կողմերից սկսեցին բերդի մօտ հաւաքւել գաղութի բնակիչները: Նրանք գալիս էին երկ-երկու, երեք-երեք և երբեմն ամբողջ խմբերով, շտապով կապում իրենց ձիերը ցցապատի ցցերից, կամ թէ ոտները կապելով բաց թողնում տափաստանում արածելու, իսկ իրենք հաւաքւում են խմբերով հրապարակի վրայ և փոքր ինչ խօսելուց յետոյ՝ մինը միւսի ետևից դիմում են բարի առաւօտ ասելու հիւրանոցատիրոջը:

Բերդի առաջ խմբւած մարդկանց մէջ կարելի էր գտնել Եւրոպայի բոլոր երկրների ներկայացուցիչները, բայց մեծամասնութիւնը կազմում էին համարձակ ամերիկացի գաղթականների սերունդները, որոնք գուրս վրոնդելով հնդիկներին իրենց կալւածներից, նրանց թեթև

*) էօս-հին յունաց մօտ առաւօտեան արշալուսի դիցունին էր:

վիզմանների *) տեղ շինել են գերաններից խրճիթներ, կտրել են Միսսիսիպիի եզերքի անտառները և պարապւում են հողի, բամբակի մշակութեամբ, միւսներն էլ աւելի հարաւ գնալով, բնակութիւն են հաստատել Տեխասում և սկսել են մշակել ծխախոտն ու շաքարեղէգը: Այստեղ էր հաւաքուել մի բազմազան հասարակութիւն. ազարակատէրեր, անասնաբոյժներ, որսորդներ, եղջիւրաւոր անասունների, ձիերի և մինչև անգամ մարդկանց առևտրով պարապողներ, գաւառական փաստաբաններ, մանրավաճառներ և վերջապէս մարդիկ, որ ոչ մի որոշ պարապմունք չունին և միատեսակ պատրաստակամութեամբ մասնակցում են և անաւուններ բռնելու և դրօշմելու գործում և կօմանչների դէմ եղած արշաւանքներում և երբեմն էլ չեն հրաժարւում կողոպուտից:

Մենք հարկաւոր չենք համարում մանրամասն նկարագրել այդ ամբոխը, որովհետև քանի ժամանակ առաջ տեսել ենք նրան Կաղա-դէլ-Կօրվօի բակում. բայց ի հարկէ, հրապարակում հաւաքւած ամբոխն աւելի բազմամարդ է, քան թէ օրինակատարների խումբը, որ ուղևորւել էր մարդասպանին գտնելու: Բացի դրանից, այստեղ կային և կանայք,—գաղթականների կանայքը, աղջիկները և քոյրերը: Նրանցից մի քանիսը եկել էին ձիով և դեռ ձիերի վրայ էին. նրանց երեսներին ձգած քօղը բաւականաչափ պաշտպանում էր նրանց արեգակի կիզիչ ճառագայթներից. միւսերը նստած են ծածկւած սայլերի, կամ թէ շրքեղ կառքերի մէջ, որտեղից նրանք կարող էին տեսնել հետաքրքիր տեսարանը:

Շուտով կը սկսուի դատը, որի մասին վերջին ժամանակներս շատ էին խօսում գաղութում և շրջակայքում: Աւելորդ է ասել, որ պիտի դատեն Մօրիս Հերալդին, որ

*) Գոմշի կաշուց շինւած վրաններ Հիւսթայիս և մեքսիկայի նեղիկների մօտ:

յայտնի էր մուստանգեր Մօրիս անունով և մեղադրուով էր Հենրի Պօյնդեքստերի սպանութեան մէջ: Ի հարկէ, այդ ծանր ոճրագործութեան փաստը չէր գրաւել այսքան ժողովուրդը, առաւել ևս՝ որ մարդասպանի և նրա զոհի անունը քիչ յայտնի էին գաղութում: Միևնոյն դատարանը քննել էր շատ գործեր. գողութիւն, աւարառութիւն, յաճախակի մարդասպանութիւն և քննութեանը սովորաբար ներկայ են եղել հարիւրից ոչ աւելի մարդիկ, որոնք ինչ-ինչ պատճառներով հետաքրքրուում էին իմանալ գործի վախճանը: Այժմ բոլորովին ուրիշ էր. գաղթականների վախճանը: Այժմ բոլորովին ուրիշ էր. վաղթականների անցքերի բացաղբութիւնը, որոնք վրդովել էին բոլորի մտքերը. նրանք յոյս ունէին, որ գործի քննութիւնը լոյս կը սփռէ այդ անսովոր և մինչև այժմ անբացաղբելի անցքի վրայ:

Ի հարկէ, այդտեղ կային մարդիկ, որոնք հետաքրքրուում էին այդ դատով բոլորովին այլ պատճառներով: Այդ կարգի մարդկանց շարքին էին պատկանում կորած Հենրի Պօյնդեքստերի բարեկամներն ու ազգականները և այն անձինք, որոնք կարեկցում էին մեղադրեալին:

Խփում է տասն ժամը: Դատարանի նիստը բացուում է: Ամբոխը շատանում է: Առաւօտեան ծառայութիւնից ազատ զինուորները օգտւելով ազատ ժամանակից, նոյնպէս խառնւել էին հանդիսատեսների շարքերին: Նրանց փայլուն նշանազգեստները խիստ կերպով որոշուում էին քաղաքացիների սև հագուստների մէջ: Գաղթականները, դրագունները, հրացանաձիգները, հետևակները, ուբաձիգները, ազարակատէրերը, որսորդները, հօտերի տէրերը, ձիերի առևտրականները, սահմանազլխի կատաղի թափառաշրջիկները—այդ ամբողջ խառն ամբոխը վճռել էր սպասել, մինչև որ դատաւորը կարտասանէ հետևեալ հանգիստաւոր խօսքերը:

«Թող որդամի քեղ Աստուած»:

Այստեղ հազիւ թէ գտնւէր մի մարդ, որը չը ցանկանար լսել այդ խօսքերը, որոնք հաւասարագօր էին մահւան դատավճռին՝ մինչև արեգակի մայր մանելը:

Գուցէ շատերն էին ցանկանում մեղադրեալի մահը. բայց բոլորը համոզւած էին, որ գործի քննութիւնը կը վերջանայ նրա դատապարտութեամբ և նախ քան զիջերը վրայ կը հասնի, նա արդէն կենդանի չըլինիր...

Բացուում է դատարանի նիստը: Բացօղեայ մի տեղ, հսկայական մի կաղնու հովանու տակ, ուր դրւած էր մի սեղան և նրա շուրջը մի տասնեակ աթոռներ: Սեղանի վրայ ընկած էին մի քանի թերթ թուղթ, օրէնագրքի խիստ մաշած երկու հատորներ, թանաքաման՝ մէջը խրած փետուրէ գրիչներ, մի շիշ ծիրանի ջուր, մի գոյգ բաժակ, մի արկղ հաւաննայի սիգար և մի փոքրիկ արկղիկ լուցիկ:

Սեղանի ետև նստած է դատաւորը ոչ միայն առանց կնգումի պատմուճանի, այլ և անտանելի շոգի պատճառով առանց սիւրտուկի: Պարիկի փոխարէն նրա գլխին ուր ղրած է պանամա գլխարկը և բերանում բռնած հաթէք դրած է պանամա գլխարկը և բերանում բռնած հաւաննայի հաստ սիգարը, ամեն մի տեխասցու այդ անբաւած են փաստաբանները, դատախազը, շէրիֆը և նրա օգնականը, բերդի հրամանատարը, քահանան, բժիշկը, մի քանի սպաներ և երկու թէ երեք մարդիկ, որոնց կողմը դժւար էր գուշակել առաջին հայեացքից:

Փոքր ինչ հեռու երդւեալները բռնել էին իրենց տեղերը. նրանցից մի քանիսը նստած էին կոշտ ու կոպիտ նստարանների վրայ, միւսները ուղղակի պառկած էին խոտերի վրայ:

Երդւեալների այդ դատարանը, որ հիմնւած էր անգլիական դատարանի ձևով, այստեղ աւելի էր համա-

պատասխանում իր կոչմանը, որովհետև համարեա երբէք չի ենթարկուում դատաւորի ազդեցութեանը, որ յաճախ է տեղի ունենում Անգլիայում:

Կաղնին, որի տակ կայանում էր նիստը, շրջապատւած էր խիտ ամբոխով: Սպիտակ քաթանից և պայծառ կապոյտ բամբակեայ կտորից կարած բլուզներ, եղջերուի մորթուց պատրաստւած պատմուճաններ, կարմիր Ֆլանէլի շապիկներ, տնային գործւածքից պատրաստած լայն հագուստներ, չը նայելով անտանելի տօթին՝ վերևից ուսերին ձգած հաստ վերարկուներ, դրագունների, հետևակների, ուբաճիգների նշանազգեստներ—այդ ամենն անկարգ խառնուել էին իրար հետ: Այստեղ այնտեղ երևում էին մեքսիկական ազգային հագուստներ—թաւշեայ կուրտկա, որ կոչուում է jaquela calsoneros և լայնեզր սօմբրեթօ (գլխարկ), որ սոււերարկուում էր նրանց բնորոշ թուխ դէմքերը:

Սկզբում մտադիր էին դատի ենթարկել մի քանի մարդկանց էլ, այն է Միգէլ Դիագին, նրա ընկերներին և իրլանդացի Ֆելիմ Օ'նելին: Բայց մեքսիկացի մուստանգերին յաջողեց ապացուցանել իրենց alibi-ն և բոլոր չորսըն էլ ազատ արձակեցան:

Նախնական քննութիւնից իմանալով, որ բոլոր ապացոյցներն առ ձեռն են և յետագայ ուրացումը անօգուտ կը լինէր, նրանք խոստովանեցին, որ յիբաւի հագնուել էին հնդիկների նման և հաստատեցին, որ այդ արել էին միայն կատակի համար: Կատարւած քննութիւնը պարզեց, որ նրանք Հենրի Պոյնդեքստերի անյայտացած գիշերը անց են կացրել տանը: Միգէլ Դիագը սաստիկ հարբած է եղել և հարց ու փորձ անողները հարկաւոր չեն համարել նրան կալանաւորելու:

Ֆելիմին նոյնպէս ազատեցին դատից, եթէ նա խառն է եղել սպանութեան մէջ, գործել է իւր տիրոջ

հրամանով և կարող է մեծ օգուտ տալ իբրև վկայ, քան թէ մեղադրեալ:

Եւ այդպէս, դատարանի առաջ կանգնած էր միայն Մօրիս Հերալդը, որ յայտնի էր մուստանգեր Մօրիս անունով:

Ք Քառասնի քայքայ քայքայ քայքայ
նետի միտ արշալույսի շեմ կար
դայեւ է նայելուց էլ այս գիրքի և
վերջուպէս համարեց մարի քայքայ
նետունելի և միտայելուի քայքայ
խաղերի արշալույսի և այլ
քայքայ քայքայ և երկար մէջ
քայքայելուց համար էր կարգ
չէլ այս գիրքի

Գրքի և
արշալույսի
ոպի ինչ նիւթայ արշալույս
արի իմ արի միտ քայքայ
չիլ այս գիրքի և նետունելու

Ս Ո Ւ Տ Վ Կ Ա Յ .

Հանդիսատեսները մէջ քիչ մարդիկ կային, որոնք ան-
ձամբ ճանաչում էին մեղադրեալին, թէև անշուշտ չէր
զանաւիլ մէկը, որ լսած չը լինէր նրա անունը:

Բոլորն էլ համաձայն էին, որ նա մի գեղեցիկ երի-
տասարդ է անկեղծ բնաւորութեամբ, ինչպէս համարեա
բոլոր իրլանդացիք, սաստիկ սիրում է ձիեր և մեղք չէ
համարում՝ երբեմն քնքոյշ և սիրալիւր հայեացքներ ձգել
գեղեցիկ կանանց վրայ:

Մուստանգերը քաջ էր, բայց նրա քաջութիւնը չէր
հասել անսահման անվեհերութեան. նա ամեն բանի մէջ
գիտէր չափը, երբէք չէր խօսում առանց լաւ կշռելու
իւր խօսքերը, երբէք չէր բամբասում և զսպում էր ի-
րեն մինչև անգամ խմելու ժամանակ,—մի յատկութիւն,
որ բոլորովին հազւագէտ է նրա հայրենակիցների մէջ:
Ոչ ոքի յայտնի չէր, թէ նա սրտեղից էր եկել, ինչո՞ւ էր
գաղթել Տելսաս և ի՞նչն էր ստիպել նրան ընտրել մուս-
տանգերի ոչ առանձնապէս յարգի արհեստը: Այդ առա-
ւել ևս տարօրինակ էր նրա համար, որ Մօրիսը ոտից
մինչ գլուխ ջէնտլմէն էր թէ կրթութեամբ, թէ ծագու-
մով:

Ազնւութեան կնիքն դրօշմւած էր երիտասարդ իր-
լանդացու ամբողջ արտաքինի վրայ և հէնց առաջին հայ-
եացքից ոչ ոչ ոք չէր հաւատար, որ նա մեղաւոր է այդ
ծանր ոճրագործութեան մէջ: Սակայն այժմ նա կանգ-
նած է դատարանի առաջ և բոլորը նայում են նրան որ-
պէս մարդասպանի վրայ, որ դաւաճանօրէն խլել է իւր
մերձաւորի կեանքը:

Միթէ ճիշտ է այդ մեղադրանքը: Եթէ ճիշտ է, այն
ժամանակ թող Աստուած ողորմի նրա հոգուն: Այդ միտ-
քըն էր զբաղեցնում բոլոր ներկայ եղողներին, որոնք

անհամբերութեամբ սպասում էին քննութեան սկսելուն:
Մի քանիսը եկել էին այստեղ ուղղակի հետաքրքրութիւ-
նից, միւսների դէմքերի վրայ կարելի էր նկատել ատե-
լութեան և վրէժխնդրութեան ծարաւի արտայայտութիւն:
Մէկի հայեացքը լի ամենաշերմ քնքշութեամբ և

վրդովմունքով ուղղւած էր մեղադրեալի վրայ: Գունատ
դէմքով և զարմանալի գեղեցկութեամբ մի կին, ծածկւած
կառքի վարագոյրների ետեր, աչքը չէր հեռացնում նրա
նից:

Մեղադրեալը նոյնպէս նկատել էր գեղեցկուհուն,
տեսել էր իւր վրայ ձգած քնքոյշ հայեացքը և հպարտ
ուրախութեամբ լցւել էր նրա սիրտը. նա վարձատրւած
էր այն բոլոր տանջանքների և ստորացումների փոխա-
րէն, որ ստիպւած էր տանել վերջին օրերի ընթացքում:
Նա մինչև անգամ առ ժամանակ մոռացաւ իւր գրու-
թեան ամբողջ սարսափը: Այժմ նա գիտէր, որ երկնա-
յին գեղեցիկ տեսիլքը, որն այցելում էր նրան զառան-
ցանքի ժամանակ, նրա քայքայւած երևակայութեան ցր-
նորքը չէր, այլ իրականութիւն. միևնոյն գեղեցիկ դէմքը,
որ թեքւել էր այն ժամանակ նրա գլխովերևը, նկատ-
ւում է այժմ կառքի վարագոյրի ետեից: Սիրով լի հայ-
ւում է այժմ կառքի վարագոյրի ետեից: Սիրով լի հայ-
եացքը ցոյց էր տալիս, որ այդ մուսյլ և չարացած մարդ-
կանց մէջ նա ունի բարեկամ, որը հաւատարիմ կը մնայ
նրան մինչև կեանքի վերջը...

Նիստը բացւում է առանց որևէ ձևականութեան:
Դատաւորը վերցնում է գլխարկը, վառում լուցիկին և
ծխում սիգարը: Մի քանի անգամ ներս քաշելով ծուխը,
նա սիգարը դնում է սեղանի մի ծայրին և սկսում խօ-
սել:

— Պարոնայք երդեալներ: Մենք հաւաքւել ենք այս-
տեղ քննելու մի գործ, որի մանրամասնութիւնը բոլորիդ
յայտնի է: Սպանւած է մեր ամենայարգելի համաքաղա-

բացիներից մէկի որդին. ձեր առաջ կանգած մարդու վրայ է ընկնում այդ սպանութեան մեղադրանքը: Իմ պարտականութիւնն է ղեկավարել այդ գործը՝ ինչպէս պահանջում են մեր երկրի օրէնքները, դուք էլ պէտք է լսէք վկաներին և ձեր դատավճիռը դուրս բերէք:

Յետոյ նա առաջարկում է մեղադրեալին սովորական մի հարց:

—Մեղաւոր էք, թէ ոչ:

—Ո՛չ, ես մեղաւոր չեմ, — պատասխանում է նա հանգիստ, բայց հաստատ ձայնով:

Կէրօունը և նրա կուսակիցները անվստահօրէն ծիծաղում են: Դատաւորը նորից վերջնում է սիգարը և խորասուզւում լուսթեան մէջ: Դատախազն սկսում է կանչել մեղադրող վկաներին:

Առաջինը Փրանց Դուֆֆերն է: Սովորական հարցերից յետոյ խնդրում են նրան պատմել բոլորը, ինչ որ յայտնի է նրան այդ գործի մասին:

Դուֆֆերը ցոյց է տալիս, որ Հենրիի անյայտացած գիշերը Մօրիս Հերալդը հեռացել է իւր հիւրանոցից կէս գիշերից շատ ուշ: Հեռանալուց առաջ նա վճարել է բոլոր հաշիւները և Դուֆֆերը տեսել է, որ նրա մօտ, հակառակ սովորականին, շատ փոքր կար: Նա ուղևորւեց իւր տունը, Ալամօ, թէ մի ուրիշ տեղ, Դուֆֆերը չը գիտէր, որովհետև Մօրիսը վկայի հետ երբէք մօտ յարաբերութեան մէջ չէր և չէր ասել, թէ ուր է գնում: Բայց հիւրանոցի տէրը կարծում է, որ նա սուն գնաց, որովհետև նախընթաց օրն ուղարկել էր այդտեղ իւր ծառային բոլոր իրեղէնների հետ, բացի մի քանիսից, որ նա իւր հետ վերցրեց: Թէ դրանք ինչ իրեր էին, վկան չէր կարողանում լաւ յիշել. նա գիտէր միայն, որ թամբի պատեանում կային ասորճանակներ, իսկ մուստանգերի գօտկի մէջ խրւած էր որսորդական կեռ դանակը: Հրա-

ջան նա չէր տեսել, կարելի է որ դա մնացած լինէր թամբից կախւած՝ համաձայն մեքսիկական սովորութեան:

Հերալդը, ինչպէս միշտ, հագած էր մեքսիկական հագուստ, ուսերին ձգած ոսկով ասեղնագործւած վերարկու: Մուստանգերի հիւրանոցից հեռանալն այդպիսի ուշ ժամին՝ շատ զարմացրեց Դուֆֆերին, առաւել ևս որ նա յայտնել էր նրան, թէ մտադիր է գնալ միայն հետեալ առաւօտեան:

Միևնոյն գիշերը դեռ աւելի շուտ Հերալդը հեռացել էր հիւրանոցից ոտով և ձին թողել էր Դուֆֆերի ախոռում: Վերադառնալով և վճարելով բոլոր հաշիւները, նա իսկոյն թողեց հիւրանոցն ու հեռացաւ ձիով: Այդ ժամանակ մուստանգերը սաստիկ զրգուած էր և շատ էր շտապում, բայց նրա զրգումունքը չէր կարելի օղիին վերադրել: Թէև նա օղի պահանջեց և լցրեց իւր սրւակը, բայց մինչև հեռանալը ոչ մի կաթիլ օղի չը խմեց: Վկան պատրաստ էր երդւել, որ նա բոլորովին զգաստ էր: Երբ որ նա գնաց իւր ձին թամբելու, ամբողջ ժամանակը չէր դադարում բարկացած ձայնով ինքն իրեն խօսելուց: Անշուշտ նրա հետ ինչ որ անախորժ բան էր պատահել հիւրանոցից բացակայ եղած ժամանակը, բայց թէ նա ո՞ր տեղ է եղել, վկան բոլորովին չը գիտէր. ի միջի այլոց յետոյ նա լսել էր, որ մուստանգերը գնացել է միստեր Պօյնդեքստերի ազարակի ուղղութեամբ գետի ափով: Խօսում էին նոյնպէս, որ յաճախ պատահել են նրան այդ ճանապարհին և գիշերը և ցերեկը, առանձնապէս վերջին երեք չորս օրւայ մէջ, երբ նա հիւրանոցումն էր գտնւում: Երբեմն նա գնում էր ձիով, բայց ամենից շատ ման էր գալիս ոտով:

Ընդհանուր առմամբ այդպէս էր Դուֆֆերի ցուցմունքը մեղադրեալի վերաբերմամբ: Յետոյ հարցնում են նրան Հենրի Պօյնդեքստերի մասին:

Այդ երիտասարդ ջէնտրմէնին վկան ճանաչում էր շատ քիչ, որովհետեւ նա շատ քիչ էր այցելում նրա հիւրանոցը: Վերջին անգամ նա գնացել էր հիւրանոց միևնոյն գիշերը մուստանգերի հեռանալուց յետոյ և առանց ներս մտնելու, կանչեց վկային և հարցրեց թէ որտեղ է Մօրիս Հերալդը: Նա նոյնպէս գրգռած էր, բայց բոլորովին զգաստ էր: Իմանալով որ մուստանգերն արդէն գընացել է, նա աւելի ևս գրգռեց, ասաց, որ այսօր անհրաժեշտ է տեսնել Հերալդին և խնդրեց յայտնել, թէ ո՞ր ճանապարհով է գնացել նա: Դուֆֆերը ցոյց է տալիս նրան Ռիօ-Գրանդէ տանող ճանապարհը, ենթադրելով թէ Մօրիսը այն կողմը պէտք է գնացած լինի: Պօյնդեքստերն ասաց, որ այդ ճանապարհը ճանաչում է և իսկոյն գնաց մուստանգերի ետևից:

Էլի մի քանի հարցեր և Դուֆֆերին ազատ են թողնում:

Ընդհանուր առմամբ նրա ցուցմունքը նպաստաւոր չէր մեղադրեալի համար. առանձնապէս կասկածելի էր թւում նշանակւած ժամանակից շուտ հիւրանոցից հեռանալը, զեռ աւելի ևս նրա յուզմունքը: Ամբողջի մէջ լուրջ շշուկն ու սրտաբանները ցոյց էին տալիս, որ նրա ցուցմունքը աննպաստ տպաւորութիւն էր թողել լսողների վրայ:

Բայց ինչո՞ւ համար էր Հենրի Պօյնդեքստերն այդպէս վրդովւած: Ինչո՞ւ համար էր նա այնպէս շտապով հետամուտ լինում Հերալդին: Ինչն էր ստիպել նրան սովորութեան հակառակ այդպէս ուշ գիշերով դուրս գալ տանից:

Եթէ որ հակառակը լինէր, այսինքն մուստանգերը գնար Պօյնդեքստերի ետևից, այն ժամանակ գործը շատ հեշտութեամբ կը պարզէր: Սակայն այն ժամանակ ևս ո՞ճիր գործելու պատճառները գաղտնիք կը

մնային: Ո՞վ կարող էր բացատրել այդ և փարատել դատաւորների կասկածը:

Կանչւում են մի քանի մարդիկ ևս, բայց նրանց վկայութիւնները յարւում են մեղադրեալի օգտին. համարեա բոլորը միաձայն հաստատում են, որ մուստանգերի և երիտասարդ ազարկատիրոջ մէջ յարաբերութիւնները շատ մտերմական են եղել:

Վերջապէս առաջ է գալիս մի վկայ, որի ցուցմունքը բոլորովին նոր լոյս է սփռում այդ գործի վրայ: Այդ վկան կապիտան Կասսիյ Կէլիօունն է:

Նա ոչ միայն պարզում է սպանութեան շարժառիթը, այլև գործը ներկայացնում է բոլորովին աննպաստ կերպով: Սկզբում նա որպէս թէ տատանւում է, ասում է որ իր համար շատ անախորժ է սուղ է, ևս ասում է որ իր համար շատ անախորժ է սուղ գալ իւր ցուցմունքներով, բայց յետոյ պատմում է բոլորը, ինչ որ պատահել է այն գիշերը: Նա պատմում է այդուամենայնիւ Մօրիսի և Լուկայի տեսակցութեան մասին, է նենրիի և Հերալդի վիճաբանութեան մասին և թէ ինչպէս մուստանգերը հեռացաւ Հենրիին սպանալով, իսկ վերջինս իսկոյն գնաց նրա ետևից: Սակայն կապիտանը խոհեմաբար լռեց այն իսկական պատճառի մասին, որ հարկադրեց նրա քեռորդուն գնալ մեղադրեալի ետևից, լսեց նոյնպէս և այդ գործում իւր ունեցած մասնակցութեան մասին:

Բոլոր ներկայ եղողները ապշած են մնում այդ խայտառակ մերկացումներով: Ամբողջի մէջ լուրում է շարագուշակ շշուկ և բարկացած բացականչութիւններ: Ամբողջի ատելութիւնն ուղղւած է այն մարդու դէմ, որն այժմ մեղադրւում է կրկնակի յանցանքի մէջ. նա ոչ միայն սպանել է յարգելի քաղաքացու որդուն, այլ և անպատուել է նրա աղջկանը:

Մի ճնշւած հառաչանք դուրս թռաւ տխուր և այ-

լայլած դէմքով մի չափահաս մարդու կրծքից: Դա անբաղդ աղջկայ և թշառ ուրդու հայրն էր:

Բայց հանդիսատեսները նրան չեն նայում: Նրանք իրենց հայեացքներն ուղղել են այն կողմը, ուր ծածկւած կառքի մէջ նստած է մի ջահել կին, որի գեղեցկութիւնը դեռ առաջ էլ զբաւել էր ընդհանուրի ուշադրութիւնը: Դա Լուիզա Պոյնդեքստերն էր:

Միթէ նա եկել է այստեղ իր սեփական ցանկութեամբ.— ահա մի հարց, որ առաջարկում էին միմիանց բոլոր ներկայ եղողները: Բայց նրանք դեռ չէին շտապել որևէ եզրակացութեան գալ, երբ ոստիկանը բարձր ձայնով արտասանեց նրա անունը:

- Լուիզա Պոյնդեքստեր:
- Կէլիսունը կատարեց իւր խօսքը:

Նախ քան ոստիկանն շտապեց կրկնել իւր կոչը, Լուիզան դուրս եկաւ կառքից և սզաներից մէկի ուղեկցութեամբ դիմեց այն տեղը, ուր կանգնում են վկաները:

Վճռական և բոլորովին աներկիւղ կերպով նա կանգնեց դատաւորի առաջ և աչքը չը խոնարհեց ներկայ եղողներին ուշադիր հայեացքների առաջ: Մի քանիսը նայում էին նրան հարցական եղանակով, միւսներն արհամարհական ծաղրով, մի քանիսն էլ ընդհակառակը ականջ առնում և հրճւանքով, որ պատճառում է անձնագոհ, թէև յանցաւոր սէրը:

Մի մարդ միայն նայում էր Լուիզային ամենաքննաբոյժ սիրոյ լի հայեացքով: Բայց նրա դէմքի վրայ նկատելի է անհանդստութեան արտայայտութիւն, կարծես թէ նա դեռ չի հաւատում իւր երջանկութեանը: Դա մեծ զարդեալն է: Բայց մանկամարդ օրինորդն ուշադրութիւն չի դարձնում ոչ Մօրիսին, և ոչ շրջապատողներից որևէ մէկին: Նա աչքը չի հեռացնում իւր ազգական Կասսիյ կէլիսունից, որ հէնց նոր էր հեռացել այժմ նրա բռնած տեղից: Նրա հայեացքն արտայայտում էր այնպիսի ատելութիւն, որ կապիտանը շփոթւեց, յետ քաշւեց և ծածկւեց ամբօրսի մէջ...

— Միսս Պոյնդեքստեր, որտեղ էք եղել դուք այն գիշերը, երբ անյայտացել է ձեր եղբայրը.— հարցնում է նրան դատախազը:

— Տանը:

— Թոյլ տւէք հարցնելու. դուրս չէք եկել այն գիշերն այգին:

— Այո, դուրս եմ եկել:

— Ո՞ր ժամին:

— Որքան յիշում եմ, կէս գիշերին:

— Դուք միայնակ էիք:

— Ո՛չ բոլոր ժամանակը:

— Նշանակում է ձեզ հետ եղել է մի ուրիշը:

— Այո՛:

— Նայելով ձեր անկեղծութեան, միսս Պոյնդեքստեր, անշուշտ դուք չէք մերժիլ յայտնել դատարանին այն մարդու անունը, որ եղել է ձեզ հետ:

— Ի հարկէ, ո՛չ:

— Կարո՞ղ եմ հարցնել այդ մարդու անունը:

— Ինձ հետ իմ եղբայրն էր:

— Բայց մինչև ձեր եղբոր դալը եղե՞լ է մի ուրիշը:

— Այո՛:

— Մենք կը ցանկանայինք իմանալ այն անունը: Յուսով եմ, որ դուք չէք թագցնիլ:

— Ես թագցնելու պատճառներ չունիմ: Այդ մարդը միսսեր Մօրիս Հերալդն էր:

Այդ պատասխանն ընդհանուր ատելութիւն և մինչև անգամ վարմանք առաջացրեց: Միայն մի մարդու վրայ Լուիզայի խոստովանութիւնը բոլորովին ուրիշ տպաւորութիւն թողեց: Նրա վերջին խօսքերի ժամանակ մեղադրեալի դէմքը փայլեց ուրախութեամբ և նա յաղթանակով նայեց իւր դատաւորներին, մոռանալով որ այդ վկայութիւնը շատ հեռու էր իւր օգտին լինելուց:

— Թո՛յլ աւէք հարցնելու ձեզ, միսս Պոյնդեքստեր, այդ տեսակցութիւնը պատահական էր, թէ կանխօրէն որոշւած, — շարունակեց դատախազը:

— Կանխօրէն որոշւած էր:

— Ներեցէք, միսս Պոյնդեքստեր, եթէ ես առաջարկում եմ ձեզ դեռ մի շատ անհամեստ հարց ևս: Այդ պահանջում է իմ պարտականութիւնը: Ի՞նչ էր այդ տե-

սակցութեան նպատակը, կամ աւելի լաւ է ասել, շարժառիթը:

Ձահել աղջիկը տատանւեց, բայց մի ըսպէ միայն: Նա ուղղեց և մի համարձակ հայեացք ձգելով ներկայ եղողներին վրայ, պատասխանեց:

— Ես դիտաւորութիւն չունեմ ոչինչ թագցնելու: Ես դուրս էի եկել հանդիպելու մի մարդու, որին սիրում էի, սիրում եմ և այժմ, չը նայելով նրա վրայ բարդւած բոլոր մեղադրանքին: Յուսով եմ, սեր, որ դուք բաւական էք:

— Ո՛չ բոլորովին, — ասաց դատաւորն, ուշադրութիւն չը դարձնելով շուրջը բարձրաձայն արհամարհական տրրտունջին: — Ես պէտք է առաջարկեմ ձեզ մի հարց ևս, միսս Պոյնդեքստեր: Թէև այդ կը լինի փոքր ինչ յետ նահանջել ընդունւած կարգերից, բայց կարծում եմ, որ ոչ ոք չի բողոքիլ դրա դէմ: Դուք լսեցի՞ք ինչ ասաց վկան, որ ձեզանից առաջ յայտնեց իւր ցուցմունքը: Ճիշտ է որ ձեր եղբայրը բաժանւել է մեղադրեալից զրգուած և բարկացած:

— Այո՛, ճիշտ է:

Այդ խօսքերին հետևեց ատելութեան բռնկում: Կէլիօնի խօսքերը ճշմարիտ էին: Սպանութեան շարժառիթները պարզւած էին: Լուիզան կամենում էր դեռ մի բան ևս ասել, բայց աղմկալի աղաղակները խլացրին նրան:

— Կախել նրան, կախել, — լսեց ամեն կողմից:

Ամբոխն ալեկոծւեց, կարծես թէ մտադիր էր իրագործել իւր սպանալիքը՝ դատարանի դատավճռին չը սպասելով:

— Հրաւիրում եմ ձեզ կարգի գալ, — բացականչեց դատաւորը՝ հանելով բերանից սիգարը և խիստ կերպով նայելով շուրջը:

Handwritten note: Կախել է

— Երբ որ իմ եղբայրն ուղևորեց միստեր Հերալդի ետևից, նրա բարկութիւնն արդէն անցել էր, — շարունակեց Լուիզան՝ չը սպասելով հարցին: — Հենրին ներեց միստեր Հերալդին և գնաց ներողութիւն խնդրելու նրանից:

— Թոյլ տւէք ինձ նկատելու, որ նրանք յետոյ վիճել են, — միջամտեց Կէլիօունը: — Ես տերրասի վրայ կանգնած լսել եմ այդ:

— Միստեր Կէլիօուն, — նկատեց դատաւորը. — եթէ դատարանը հարկաւոր կը համարէ ձեզանից որևէ բան իմանալու, նա կը կանչէ ձեզ: Նեղութիւն կրեցէք մինչև այդ չընդհատել նիստը:

Մի քանի հարցերից յետոյ, որոնք վերաբերում էին զանազան մանր մանրամասնութիւնների, Լուիզան ազատեց այդ անախորժ պարտականութիւնից: Նա վերադարձաւ կառքը ծանր գիտակցութեան տակ, որ իւր ցուցմունքով ոչ միայն չօգնեց մեղադրեալին, այլև աւելի վատթարացրեց նրա դրութիւնը: Այդ անկեղծ խոստովանութիւնը հէնց իրեն Լուիզային էլ փաստեց շրջապատողների առաջ: Ամբոխի միջից անցնելու ժամանակ նա նկատեց, որ շատերը նայում էին նրան համարեա արհամարհանքով:

Հպարտ տեխասցիները վիրաւորած էին նրա ընտրութեամբ և դեռ աւելի այն համարձակութեամբ, որով նա խոստովանեց այգում նշանակած գաղտնի տեսակցութիւնը: Բայց կային շատերը, որոնք նախանձում էին նրա ընտրածի երջանկութեանը...

Դարձեալ կանչում են Կէլիօունին և նա զանազան ակնարկներով աւելի ևս գրգռում է ամբոխի ատելութիւնը դէպի մեղադրեալը: Նրա ամեն մի խօսքը սուտ է, բայց պատմութիւնն այնքան ճշմարտաման, որ չէր կարելի չը հաւատալ նրան:

Նորից հնչում են «կախել նրան» խօսքերը դեռ աւելի բարձր, աւելի հաստատ, քան թէ առաջ: Յուզմունքը սաստկանում է, տղամարդիկ աղաղակելով դէպի վեր են շարժում գլխարկները, կանայք, մինչև անգամ բարձր դասակարգի կանայք, բորբոքած խօսում են միմիանց հետ, ատելութեամբ լի հայեացքներ ձգելով մեղադրեալի վրայ: Նրանցից մէկը միայն, որ ծածկւած էր կառքի վարագոյրի ետևը, նստած է լուռ և տխուր մտածութեան մէջ: Լսելով ամբոխի կատաղի աղաղակները, նա դողում է, բայց ոչ թէ երկիւղից, այլ դառն տանջող գիտակցութիւնից: Նա գգում էր, որ ինքը իւր ցուցմունքով գրգռեց այդ չարիքը Մօրիսի դէմ: Այդ սարսափելի ընդդէմ Լուիզան յիշում է Կէլիօունի նշանակալից խօսքերը, որ ասել էր նրան, թէ նա ինքը կը շտապեցնէ մեղադրեալի դատավճիռը:

Բոպէ առ բոպէ յուզմունքն աճում է: Լսւում են վրէժխնդրութեան ձայներ:

Դատաւոր Բոբերտսը գտնւում էր հեռացրած լինելու և իւր տեղը Լինչի դատաւորին զիջելու վտանգի մէջ:

Ինչ կը լինի դրանից յետոյ: Քննութիւնը կընդհատուի, որովհետև դատավճիռն արտասանեց միաձայն: Մեղադրեալին մինչև անգամ ժամանակ չեն տալ գղջալու իւր մեղքերը և խոստովանելու: Այդ գործում տասն հմուտ մարդիկ կը յարձակեն նրա վրայ, պարանոցը կը ձգեն օղակը և առանց երկար դատելու, կը կախեն նրան մօտիկ բսած կաղնու հաստ ճիւղից:

Բոլորն էլ բոպէ առ բոպէ սպասում էին, որ մէկը յարձակելու ազգանշան կը տայ: Ոչ ոք չէր կասկածում, որ ամբոխի մէջ կը գտնուին շատ մարդիկ, որոնք առանց մտածելու իրենց վրայ կը վերցնեն դրա նախաձեռնութիւնը: Բայց Ասատուծոյ ողորմութեամբ, ներկայ եղողների մէջ գտնւում էին մարդիկ, որոնք տրամադրւած էին դէպի

մեղադրեալը և հաստատ վճռել էին գործին ուրիշ ընթացք տալ:

Զինւորական նշանազգեստներով մի քանի մարզիկ մի կողմը քաշւելով, բորբոքւած խօսում էին ինչ որ բանի մասին: Իրանք ամբողջ սպաններն են, բերդի հրամանատարի գլխաւորութեամբ: Նրանց խորհուրդը մի քանի ընդհանրական տեղեց: Յանկարծ հնչւեց զինւորական փողի ձայնը. դա մի ազդանշան էր, որ տրւեց մայեօրի հրամանով:

Միևնոյն ընդհանրական բացւեցան բերդի դռները և քառասուն դրագուն, այնքան էլ ձիաւոր հրացանաձիգներ դուրս եկան հրապարակ և դիմեցին դէպի կաղնին, ուր կայանում էր նիստը:

Լուռ ու խիստ կարգադրութեամբ նրանք կանգնում են շարէ շար և երեք կողմից շրջապատում դատարանը: Ամբոխը տեսնելով այդ անսպասելի երևոյթը, մտում է ապշած և ընդհանրապէս հանդարտում է: Իսկոյն բոլորն իմանում են, որ ամբողջ հրամանատարը խիստ միջոցներ է ձեռք առել և թոյլ չի տալ ընդիմանալու. մտում է միայն հնազանդւել և համբերութեամբ սպասել, թէ ինչով կը վերջանայ դատը:

Զինւորների գալով լինչի դատաստանը անհնարին է դառնում: Շուտով կարգը վերականգնւում է և դատուոր Բօբերտսն այժմ անարգել կարող է շարունակել ընդհատւած նիստը:

— Քաղաքացիներ, — խօսեց նա ամբոխին դառնալով: — Ինչպէս միւս նահանգներում, այնպէս էլ Տեխասում պէտք է պահպանել արդարադատութեան մի անգամ սահմանւած կարգը: Դուք ինքներդ պիտէք այդ, որովհետև ձեզանից շատերը եկել են այստեղ Միսսիսիպիի միւս ափից: Ինչո՞ւ համար էք ստիպում ինձ յիշեցնել ձեզ, որ անկարելի է կախել մի մարդու, չը լսելով թէ

նա ի՞նչ կասէ իրեն արդարացնելու համար: Այդպիսի վարմունքը ապօրինի է, անիրաւացի և ուղղակի սպանութիւն կը լինի:

— Բայց միթէ նա մարդասպան չէ, — հարցնում է Կէլհօունի մօտ կանգնածներից մէկը: — Մենք կամենում ենք նրա հետ վարւել այնպէս, ինչպէս նա է վարւել երիտասարդ Պօյնդեքստերի հետ:

— Մեղադրեալի յանցաւորութիւնը դեռ բոլորովին ապացուցւած չէ: Զգոյշ միանք դատապարտելուց, մինչև որ չը լսենք բոլոր վկաների ցուցմունքները: Պարոն ոստիկան, — աւելացրեց նա, — կանչեցէք պաշտպան վկաներին:

Դատարանի առաջ յայտնւում է իրլանդացի Ֆելիմ Օ'Նիլը: Նախկին ախոռապանի անկապ, հակասութիւններով լի և տեղ-տեղ էլ ոչ ճշմարտանման ցուցմունքը դեռ աւելի ևս գրգռում է ամբոխի կասկածը նրա տիրոջ դէմ:

Սէն Անտօնիօի իրաւաբանն անհամբերութեամբ ըստաւում էր նրա ճառի վերջին, որովհետև նա աւելի յոյս էր դնում միւս վկայի վրայ: Վերջապէս հասնում է և նրա հերթը:

— Զաւուօն Ստոմպ, — կանչում է ոստիկանը և ամբոխի միջից երևում է Զէբ Ստոմպի բարձրահասակ ու նիհար դէմքը, որ ամբողջ գաղութի ամենայայտնի որսորդն էր:

Նա արդէն կանգնած է դատարանի առաջ: Աստուծաշնչի վրայ կրկնելով երգման յայտնի խօսքերը, ծերունի Զէբը համբուրում է գիրքն այնպէս պինդ, որ չը նայելով հանդիսաւոր ընդհանրական, ամբոխի միջից լսւում է զսպւած ծիծաղ: Դատաւորը խիստ կերպով նայում է

ներկայ եղողներին. որսորդը նոյնպէս նայում է շուրջը, կամենալով գտնել մեղաւորին: Ծերունի Զէբի բնաւորութիւնը լաւ յայտնի էր ամենքին. բոլորն էլ գիտէին, որ նա թոյլ չի տալ անպատիժ կերպով ծաղրել իրեն և նրա բարկացած հայեացքն իսկոյն խողաղացրեց չարաճրճիներին:

Նախնական մի քանի հարցերից յետոյ՝ պաշտպանն առաջարկեց որսորդին պատմել բոլորը, ինչ որ յայտնի է նրան վերջին անցքերի մասին:

Բոլորն էլ լսեցին և լարւած ուշադրութեամբ պատրասուեցին լսել Ստոււպին: Ընդհանուրի կարծիքով նա միայն կարող էր պարզել այդ խորհրդաւոր անցքը:

— Պարոն դատաւոր, — սկսեց վկան՝ դատաւոր Բօբերտսին դառնալով, որ լուռ նստած ծխում էր իւր սիգարը: — Ես ոչինչ չունեմ ձեր առաջարկութեան դէմ՝ պատմել այն, ինչ որ գիտեմ այդ անցքի մասին: Բայց եթէ ձեզ համար միևնոյն է, լսեցէք նախ այն երիտասարդին, իսկ յետոյ ես կարող եմ հաստատել նրա ցուցմունքները:

— Ո՛ւմ մասին էք խօսում դուք, — հարցրեց դատաւորը:

— Ի հարկէ Մօրիս մուստանգերի մասին, որ մեղադրւում է երիտասարդ Պօյնդեքստերի սպանութեան մէջ:

Այդ բոլորովին կանոնաւոր չի լինիլ. — ասաց դատաւորը. — բայց իմ միակ նպատակը լինելով երևան հանել ճշմարտութիւնը, ես չեմ սկսիլ պահպանել մի անգամ սահմանւած խիստ ձևականութիւնը: Եթէ որ պա-

րոնայք երգւեալները համաձայն են իմ կարծիքին, թող ձեր ասածը լինի:

Երգւեալներն իրենց աւագի միջոցով յայտնեցին իրենց համաձայնութիւնը և որսորդի ինդիքը յարգւեց:

Handwritten notes in Armenian script, including names like 'Սեյս գործիչ', 'Կարթայր ԿԱ Չար', 'Կարթայր ԿԱ Չար', '1949 թվին', 'Տեո Չարեհ Կի', '99 ցց. քարեկաւ', 'ԵՏ Տոյնաճ Տեղ Ի՞մ ԿԱ՛', and 'Երեւան'.



ՄԵՂԱԴՐԵԱԼԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ.

Մօրիսը իւր պաշտպանի խորհրդով չը հրաժարուեց օգտուել իրեն ներկայացրուած իրաւունքից: Դատաւորը հրաւիրեց նրան ոտի կանգնել. պահապան սպաները մի քանի քայլ յետ կանգնեցին: Տիրեց կատարեալ լռութիւն, մինչև անգամ ծղրիտները, որ ուրախ թռչկոտում էին կաղնու մի ճիւղից միւսը, թւում էր թէ լռեցին, որպէս զի չը խանգարեն ընդհանուր լռութիւնը: Բոլոր ներկայ եղողների հայեացքներն ուղղւած են մեղադրեալի վրայ, բոլորն էլ ականջ են դնում լարւած ուշադրութեամբ, աշխատելով բաց չը թողնել նրա խոստովանութիւնից ոչ մի խօսք:

— Պարոն դատաւոր և պարոնայք երգւեալներ, — սկսեց նա իւր ճառը: — Դուք այնքան ներողամիտ գտնւեցաք դէպի ինձ, որ թոյլ տւիք ինձ պաշտպանուելու: Շնորհակալութեամբ օգտուելով այդ իրաւունքից, ես չեմ ձանձրացնիլ ձեզ երկար պատմութեամբ: Չը նայելով շատ տարօրինակ և մինչև անգամ անհաւատալի հանգամանքներին, իմ պատմութիւնը շատ հասարակ է: Ինչ որ դուք լսեցիք վկաներից, բոլորը ճշմարիտ չեն. մի քանի ցուցմունքներ մինչև անգամ այնպէս սուտ են, ինչպէս նրանց արտասանող շրթունքները:

Եթէ որ այդ բոլորին որևէ մէկը նայէր Կէրիօնին, նա ապշած կը մնար նրա վրդովւած դէմքը տեսնելով: Կապիտանը տեսնելով իւր վրայ ուղղւած մեղադրեալի հայեացքը, այնպէս գունատուեց, որ կարծես թէ տեսնում էր հիւրանոցում իւր վրայ ուղղւած ատրճանակի փողը:

— Ճշմարիտ է, ես տեսակցութիւն եմ ունեցել միսս Պօյնդեքստերի հետ, — շարունակեց նա: — Ճշմարիտ է, մենք հանդիպել ենք միմիանց գաղտնի և մեր տեսակցութիւնը խանգարել է նա, ով այլ ևս չի կարող հաստատել

իմ խօսքերը: Ճշմարիտ է և այն, որ նա ինձ յանդիմանեց, բայց իմ կողմից ոչ մի բարկացած խօսք չը լսեց: Այն մարդը, որ երգւում է, թէ վէճը յետոյ նորոգւել է, սուտ է խօսում: Նա չէր համարձակւիլ հաստատել այդ: Եթէ որ ես ազատ լինէի և կարողանայի պատասխանել նրան:

Մեղադրեալի հայեացքը նորից ուղղւեց Կէրիօնի վրայ, որ թագնւել էր ամբօխի մէջ:

— Ընդհակառակը, — շարունակեց Մօրիսը. — իմ երկրորդ հանդիպումը Հենրի Պօյնդեքստերի հետ ամենախաղաղն էր: Նա ներողութիւն խնդրեց ինձանից, ես առաջարկեցի նրան իմ մտերմութիւնը, որովհետև վաղուց արդէն սիրում էի այդ երիտասարդին: Եւ ով կարող էր չը սիրել նրան: Ես այնպէս ուրախ էի մեր հաշտութեամբ և գոհ նրա բարեկամական տրամադրութիւնից, որ ներեցի և մոռացութեան տւի նրա բոլոր կոպիտ խօսքերը, որ արտասանել էր իր բարկացած ժամանակ:

— Եւ այդպէս դուք հաշտեցա՞ք, — հարցրեց դատաւորն օգտուելով բոլորական լռութիւնից: — Որտե՞ղ պատահեց այդ հաշտութիւնը:

— Չորս հարիւր քայլ հեռու այն տեղից, ուր կատարւել է սպանութիւնը:

Դատաւորը և երգւեալները բարձրանում են իրենց տեղերից: Ունկնդիրները կատարեալ զարմանք են արտայայտում: Նրանք դեռ առաջին անգամն են լսում, որ սպանութեան մասին խօսում են որպէս մի կատարւած փաստի մասին և այնպէս ճշտութեամբ ու որոշ կերպով ցոյց են տալիս սպանութեան տեղը:

— Երևի դուք խօսում էք այն տեղի մասին, ուր գտնուել է արեան փոսը, — հարցրեց դատաւորը:

— Ես հասկանում եմ այն տեղը, ուր սպանւել է Հենրի Պօյնդեքստերը:

ձեզ դրա նման մի բան Իրլանդիայում, գործը չէր սահմանափակել միայն նկատողութեամբ:

—Պարոններ, կարգի եկէ՛ք,—ասաց դատաւորը հրամայող ձայնով:—Մեղադրեալ, շարունակեցէ՛ք ձեր ցուցմունքը:

—Ես գնում էի հանդարտ քայլերով, որովհետև շտապելու կարիք չը կար: Գիտէի, որ եթէ կանգ չառնեմ ճանապարհին, կը հասնեմ Սլամօ դեռ մինչև արևի ծագելը: Բայց ինձ համար միևնոյն էր՝ թէ ուր պիտի գիշերեմ—տափաստանո՞ւմ թէ տանը: Ես ոչ մի անգամ յետ չը նայեցի, որովհետև չէի կասկածում, որ որևէ մէկը հետևում է ինձ, բայց անցնելով մօտ մի մղոն Ռիօ-Գրանդէի ուղղութեամբ, յանկարծ մացառների մէջ իմ ետևում լսեցի արագութեամբ արշաւող մի ձիու ոտածայն: Ուր մոլոր շաւիղը, որով ես գնում էի, պտոյտներ էր անում և ես չը կարողացայ տեսնել այդ ձիաւորին, բայց լսում էի, որ նա մօտենում էր ինձ: Մտածելով որ աւելի լաւ կը լինի խոյս տալ անծանօթին հանդիպելուց, ես քաշեցի մի կողմը ծառերի ետևը և սկսեցի սպասել ձիաւորի մօտենալուն: Ի հարկէ ես չէի վախենում այդ հանդիպումից, բայց միևնոյն ժամանակ ոչ մի բան չէր խանգարում ինձ զգոյշ լինել: Ծուռով ճանապարհի մէջ յայտնուեց մի ձիաւոր: Հեշտութեամբ կարող էք երևակայել, թէ ես որքան զարմացայ, երբ տեսայ նրան, որից դեռ նոր էի բաժանել իբրև թշնամիներ: «Թշնամիներ» ասելով ես կամենում եմ ասել այն, որ նա իրեն վիրաւորւած էր համարում, իսկ ես դէպի նա ոչ մի թշնամուած էր համարում, իսկ ես դէպի նա ոչ մի թշնամուած էի չունէի: Անցել էր արդեօք նրա բարկութիւնը, թէ նա դեռ առաջւայ նման զրգուած էր և հետամուտ էր լինում ինձ վրէժխնդիր լինելու, իւր կարծիքով, քրոջը իմ հասցրած վիրաւորանքի համար, որ գուցէ նրա ներկայութիւնը խանգարել էր նրան կոչ անելու ինձ, չը գիտեմ: Պատոնայք երդեալներ, ես չեմ

Adix

թագցնում ձեզանից, որ այդ առաջին միտքն էր, որ ծագեց իմ գլխում, երբ տեսայ Հենրի Պոյնդեքստերին: Բայց որովհետև ես մեղաւոր չէի գտնում ինձ, ուստի վճռեցի խոյս չը տալ նրան հանդիպելուց: Ծշմարիտ է, ես տեսնել էի նրա քրոջ հետ ծնողներից գաղտնի, բայց այդ ոչ իմ և ոչ նրա մեղքն է: Ես սիրում էի և մինչև այժմ էլ սիրում եմ այդ աղջկան ամենավսեմ և մաքուր սիրով և չեմ վախենում խոստովանել այդ:

Լուիզա Պոյնդեքստերը լարւած ուշադրութեամբ լսում էր մեղադրեալի խօսքերը: Թէև նա գտնուում էր կառքի մէջ, ամբոխի ետևը, բայց շուրջը տիրում էր այնպիսի անդորրութիւն, որ Մօրիսի ամեն մի խօսքը նրա ականջին էր հասնում:

Այդ համարձակ և անկեղծ խոստովանութեան ժամանակ, նրա այտերը վառուեցին կարմրութեամբ և տխուր դէմքի վրայ փայլեց ուրախ և յաղթանակող ժպիտը: Նա այլևս չէր աշխատում թագցնել իւր զգացմունքը. մոռանալով ամեն ինչ աշխարհումս, նա սողորւում էր ցանկութեամբ և այն համարձակութեամբ, որին ընդունակ է միայն անձնագոհ կանացի սէրը—վազել սիրած մարդու մօտ, չը նայելով որ նրան մեղադրում են հարազատ եղբոր սպանութեան մէջ:

Եւ այդպէս այն խօսքերը, որ Մօրիսը ասել էր զառանցանքի մէջ, ճշմարիտ էին: Նրանք հաստատուում են այն ժամ աւելի բարձր և զիտակցաբար մի մարդու կողմից, որը կանգնած է մահաւան առաջ և կեղծ լինելու պատճառ չունի:

ԸՆԴՀԱՏԻԱԾ ՆԻՍԵՐ.

Մեղադրեալի ճառը, որ Լուիզա Պոյնդեքստերը լսեց
այնպիսի հրճանքով, ներկայ եղողների մեծամասնու-
թեան վրայ բոլորովին ուրիշ սպառնութիւն թողեց:

Գիտնութիւն զգալ ամեն ինչ կլանող սաստիկ սի-
րոյ ժամանակ, որին մենք չենք կարող մասնակից լինել
մարդկային բնական յատկութիւններից մինն է: Այդ դժուար
չէ բացադրել: Երբ մենք գիտենք, որ երիտասարդը և
օրիորդը այնպէս զբաղւած են միմիանցով, որ արդէն
ուշադրութիւն չեն դարձնում մեզ վրայ, մեր ինքնասիրու-
թիւնը վիրաւորում է նրանց անտարբերութեամբ:

Հանդիսատեսներից նրանք, որոնք անտարբեր էին
դէպի ջահել կրէօլուհին ու նրա գեղեցկութիւնը, չը կա-
րողացան զսպել իրենց նախանձի ակամայ զգացմունքը,
իսկ նրանք, որոնք հետաքրքրում էին նրանով, մինչև
հոգու խորքը վիրաւորված էին այդ անամօթ և յանդուգն
խոստովանութեամբ:

Եթէ մեղադրեալի պատմութիւնը չի բովանդակում
իւր մէջ աւելի լաւ ապացոյցներ նրա անմեղութեան, նա
կարող էր նեղութիւն չը կրել պատմելու: Իւր վերջին
խօսքերով նա իւր դէմ գրգռեց շատերին, որոնք առաջ
անկողմնապահ էին: Ամբօխի մէջ նորից չարագուշակ տըր-
տունջ է բարձրանում: Կէլհօունի մօտ կանգնած ժողո-
վուրդն սկսում է յուզւել՝ սպառնալով մեղադրեալին
բռնել և կախել առանց որևէ դատապարտութեան: Բայց
այժմ այդ սպառնալիքները սարսափելի չէին: Մայեօրը
նշանակալից կերպով նայեց իւր զինւորներին, որոնք ո-
տից մինչև գլուխ զինւած պատրաստ էին: Դատաւորը
բարձր ձայնով արտասանեց սովորական խօսքը:

— Հրամայում եմ կարգի գալ:

Ազմուկը փոքր առ փոքր հանդարտեց և մեղա-
դրեալը շարունակեց իւր պատմութիւնը:

— Տեսնելով Հենրի Պոյնդեքստերին, ես դուրս եկայ
ծառերի ետևից և կանգնեցի ճանապարհի մէջ տեղը: Գի-
շերը լուսնկայ էր և պարզ. նա իսկոյն ճանաչեց ինձ,
բայց փոխանակ փոթորկալից բացադրութիւնների, որոնց
սպասում էի ես, մեր հանդիպումը սրտառուչ էր: Նա
խնդրեց ինձ ներել իւր անզգոյշ կերպով ասած խօսքերը
և մտերմաբար ձեռքը մեկնեց դէպի ինձ: Արդեօք հար-
և մտերմաբար ձեռքը մեկնեց դէպի ինձ: Արդեօք հար-
կաւճը է ասել թէ ինչպիսի ուրախութեամբ սեղմեցի ես
նրա ձեռքը: Գիտէի, որ Հենրին անկեղծ էր խօսում և
սկսեցի փայփայել ինձ այն յուսով, թէ երբևիցէ նրան իմ
եղբայրը կանուանեմ: Պարօնայք երգեալներ, ի հարկէ
դուք չէք պահանջել ինձանից, որ ես յայանեմ ձեզ մեր
խօսակցութեան բովանդակութիւնը: Մենք խօսում էինք
այնպիսի իրերի մասին, որոնք երբէք ներկայ գործին չեն
վերաբերում: Մի առ ժամանակ մենք առաջ անցանք
լուս, սիգար ծխելով, յետոյ կանգ առինք մի ճիւղաւէտ
ծառի տակ և այդտեղ իմ միտքն ընկաւ առաջարկել
Հենրիին փոխել մեր գլխարկներն ու վերարկուները
ի նշան մեր հաշտութեան, ինչպէս սովորութիւն է կո-
մանչների մէջ: Նա համաձայնուեց և սուաւ ինձ իւր վե-
րարկուն ու պանամա-գլխարկը, իսկ ես դրանց փոխա-
րէն աւի նրան իմ մեքսիկական սօմբրերօն և սերպալէն:
Յետոյ մենք միմիանց բարի գիշեր մաղթեցինք և բա-
ժանւեցինք: Աւաղ, ես չէի կարծում, որ մենք բաժան-
ւում ենք յարտեան: Հենրին գնաց տուն, իսկ ես մնացի
ծառի տակ: Չեմ կարող բացադրել ձեզ, ինչը դրդեց ինձ
մնալ այդտեղ: Երևի ես կամեցայ աւելի մնալ այնքան
ցանկալի և դրա հետ միասին չը նախատեսուած հաշ-
տութեան տեղը: Ես այնպէս երջանիկ էի զգում ինձ, որ
վճռեցի չշտապել տուն գնալու, այլ գիշերն անցկացնել
անասունի: Չին կապեցի ծառից, փաթաթեցի վերար-

կուլիս մէջ, պառկեցի խոտերի վրայ և մինչև մի քանի վայրկեանը քուն մտայ: Ինձ երբէք չէր պատահել որ այդպէս շուտ քնէի. դրանից կէս ժամ առաջ ես չէի կարող մի ըստէ անգամ աչքս խփել: Այդ փոփոխութիւնը կարելի էր վերագրել այն ուրախ արամադրութեանը, որ փոխարինել էր առաջւայ բարոյական յուզմանը: Իմ քունը թեթև էր և կարճատև: Մի քանի ըստէ չանցած, ինչ որ ձայն արթնացրեց ինձ: Ինձ թւում էր, թէ դա հրացանի տրաքոց էր, բայց ես բոլորովին համոզւած չէի դրանում: Ըստ երևոյթին իմ ձին նոյնպէս լսել էր մի ձայն, որովհետևնա կանգնած էր ականջները սրած և ամբողջ մարմնով դողում էր: Ես իսկոյն ոտի կանգնեցի և ականջ դրի: Շուրջը տիրում էր խորին լուսթիւն. շուտով իմ մոտտանդը հանգստացաւ, երևի նա վախեցել էր թփերի միջով անցնող ինչ որ գազանից, իսկ ինձ արթնացրել էր կարատուող ճղների ճրթճրթոցը, կամ մի ուրիշ խորհրդաւոր, անբացադրելի ձայն, որ յաճախ պատահում է անտառում գիշեր ժամանակը: Այդպէս բացադրելով իմ արթնացումը, ես բոլորովին հանգստացայ, դարձեալ պառկեցի և խոր քուն մտայ: Այս անգամ ոչ մի բան չը խանգարեց ինձ և ես զարթնեցի միայն լուսադիմին՝ առաւօտեան թարմութիւնից: Անտառում երկար մնալն աւելորդ էր. թամբեցի ձին և կամեցայ ճանապարհ ընկնել, բայց յիշելով գիշերւայ լսած տրաքոցի մասին, յանկարծ ինչ որ անհանգստութիւն զգացի: Ինչպէս թւում էր ինձ, տրաքոցը լսեց այն կողմից, ուր պէտք է գնար Հենրի Պոյնդեքստերը և ինչ որ նախազգացումից շարժւած, ես փոխանակ իմ ճանապարհը շարունակելու, շուտ եկայ և գնացի նրա հետքով: Երկար չը գնացի և շուտով տե-

այ Տէր Ասուած, ինչպիսի տեսարան: Ես տեսայ...

— Անգլուի ձիաւորը, — լսեց ամբոխի միջից մի ձայն:

Ներկայ եղողները զարմացած երեսները դարձրին այն կողմը:

— Անգլուի ձիաւորը, — միանգամից կրկնեցին մի քանի տասնեակ ձայներ:

Ինչ է այդ, ծանոր: Ո՛չ, ոչ ոք չէր մտածում ծաղրել դատարանին, բայց ներկայ եղողների համար պարզ էր, թէ ինչ բան պատճառ եղաւ այդ յանկարծակի բացականչութեան: Հարթութեան վրայ իւր բոլոր սարսափելի փառահեղութեամբ յայտնեց անգլուի ձիաւորը:

— Նայեցէք, նայեցէք, նա գալիս է ուղղակի այստեղ: Ահա մօտենում է ամբողջին:

Յիրաւի ձիաւորը դիմում էր դէպի ամբողջը, բայց մի ըստէից յետոյ նա կանգ առաւ և կարծես թէ դիտում էր ծառի տակ հաւաքւած ամբոխը: Այդքան մարդկանց մօտիկութիւնից վախեցած, նրա ձին փոշտաց և բարձր խրինչաց:

Մեղադրեալի խոստովանութեամբ զրգուած սաստիկ հետաքրքրութիւնը փոխուում է զարմանքի, երբ տեսնում են այդ տարօրինակ ձիաւորի երևակայական կերպարանքը, որը կարծես թէ հէնց դիտմամբ գալիս էր այդտեղ, որպէսզի բացադրէ բոլորը, ինչ որ պատահել էր: Գոնէ բոլորը համոզւած էին, որ եթէ նրան բռնեն, կարելի է գանել այդ խորհրդաւոր թէ նրան բռնեն, կարելի է գանել այդ խորհրդաւոր անցքի լուծումը: Ներկայ եղողների կէսից աւելին ընկաւ անգլուի ձիաւորի ետևից. երգւեալները ևս անմասն չը մնացին. տասն երկուսից գոնէ վեցը

ձի նստեցին և արշաւեցին նրա ետեւից: Ձիաւորը մի րոպէ անշարժ կանգնում է, բայց տեսնելով մօտեցող ձիաւորներին, նրա ձին բարձր խրինջալով յետ է դառնում և փախչում, որին հետապնդում է աղմկալի ամբօրէր:



Հ Ե Տ Ա Պ Ն Դ Ո Ւ Մ Ն

Անգլուխ ձիաւորն սկսեց արշաւել դէպի մացառնե-
րը, որ ընկած էր ամբողջից տասն մղոն հեռաւորութեան վրայ:

Մի քանի մղոն անցնելուց յետոյ հետապնդողները ձգւեցան մի երկար շարքով և մինը միւսի ետեւից սկսեցին յետ մնալ, այնպէս որ նրանց ձիերը յոգնած կատաղի արշաւից, հազիւ հազ կարողանում էին շարժել իրենց ոտները: Մացառներին հասնելով, անգլուխ ձիաւորը մտնում է թաւուտը, որին առանց կանգ առնելու հետամուտ են լինում միայն կապիտան Կէլհօունն ու ծերունի Չէք Ստոււմպը: Առաջինը լաւ հասկանալով իրան սպանացող վտանգ, վճռել էր ինչ էլ որ լինի հասնել անգլուխ ձիաւորին և իւր մուստանդի արագավազութեան շնորհիւ նա փոքր ինչ արագ անցաւ Չէք Ստոււմպից, որ նոյնպէս վճռել էր հասնել իւր նպատակին:

Շուտով երկուսն էլ մտան անտառը և ծածկւեցան միւս ձիաւորների աչքից:

Քիչ յետոյ նրանք ծածկւեցան իրար աչքից էլ և միայն անտառի վրայ օդում սաւառնող ուրուրները տեսնում էին նրանց երեքին միանգամից:

Անգլուխ ձիաւորը ծածկւելով իւր հետապնդողների աչքից բաւական առաջ էր անցել. նա գնում էր կատարեալ արագութեամբ, այն ինչ միւս երկուսը յաճախ կանգ էին առնում, սկանջ գնում ամբակների ձայնին ու ճղների ճրթճրթոցին, որպէսզի իմանան թէ նա որ կողմը գնաց: Բայց այդ ձայները փոքր առ փոքր սկսեցին լսուել և Կէլհօունն սկսեց յուսահատուել, հասկանալով որ իւր և անգլուխ ձիաւորի մէջ եղած տարածութիւնը բոլորովն առ րոպէ մեծանում էր: Վերջապէս այլևս չէ լսում ոչ ամբակների գոփիւնը և ոչ տերևների խշխշոցն ու

ճղների ճրթճրթոցը. անտառում տիրում է կատարեալ անդորրութիւն:

«Անիծւած,— յուսահատութեամբ բացականչեց Կէլիօ-
ունը:— Դարձեալ ձեռիցս դուրս պրծաւ: Ասեմք որ, ես
չէի նահանգստանալ, եթէ այն ծեր աղւէսը, Ստումպը ինձ
չը հետևէր: Սակայն պէտք է դրան որևէ կերպով խա-
բել:

Եւ կապիտանը կանգ առաւ ու ուշադրութեամբ նա-
յեց շուրջը, ինչպէս մի մարդ, որ իւր մտքում ծրագիր-
ներ է կազմում և այդ ծրագիրներն իրագործելու տեղ է
որոնում: Տենդային արագութեամբ նա բռնեց հրացանը
և ջղաձգաբար սեղմեց ձեռքում: Բայց արդէն նկատելի
էր, որ կապիտանն այնքան համարձակութիւն չունէր մի
բան հաստատ վճռելու: Եւ յիշաւի, բոլորական մտա-
ծութիւնից յետոյ նա հրաժարւեց իւր մտադրութիւ-
նից:

«Ո՛չ, այդ պէտք չէ,— խօսեց նա:— Մեր ետևից
գալիս են շատ մարդիկ, նրանց մէջ գտնւում են
այնպիսիները, որ կարող են հետքերը գանազանել:
Նրանք կը գտնեն նրա դիակը կամ, որ աւելի վատն
է, կը լսեն հրացանի ձայնը: Ո՛չ, ո՛չ. դա ոչինչ օգուտ
չի բերիլ ինձ»:

Կէլիօունն ականջ դրաւ: Շուրջը ոչ մի ձայն, մի-
այն վերկում, օդի մէջ լսուում էր անտառի վրայ սա-
ւառնող ուրուրների թևերի թափահարութիւնը:

«Շուտով նա կը մօտենայ այստեղին: Ցաւալի է,
որ միւսները գալիս են մեր ետևից, թէ չէ ես կը
օգուտէի յարմար դէպքից և վերջ կը տայի այդ լրտեսու-
թեան»:

Եւ երբ համոզւեց, որ ծերունի որսորդին առայժմ
գոնէ ոչինչ չի կարող անել, Կէլիօունը խթանները խը-
րեց ձիու կողքը և առաջ արշաւեց այնքան արագ,

որքան նրան թոյլ էր տալիս որոր մոլոր շաւիղը: Եր-
կու հարիւր քայլ անցնելուց յետոյ նա յանկարծ
կանգ առաւ և նրա դէմքի վրայ փայլեց ուրախութեան
զարմանքը: Նրա առաջ թփերի մէջ կանգնած էր ան-
զըլուխ ձիաւորը, որի ձիու սանձը փաթաթւել էր մե-
կիտի ճղներին և արգելում էր նրան առաջ գնալ:
«Փանք Աստծոյ, վերջապէս բռնւած է»:

See boys
19-7-1951
top beam
Shivan
22/7 53p
Երևան
Արցախ

ԱԿԱՄԱՅ ՎԵՐԱԴԱՐՁ.

Կէլիօունն առանց ժամանակ կորցնելու բռնեց ձիու սանձը: Ձին աշխատում էր դուրս պրծնել նրա ձեռքից, բայց ի դուր: Նա ոչ միայն կարողութիւն չունէր փախչելու, այլ և չէր կարողանում գլուխը դուրս բերել թփի միջից և պտտում էր միկնոյն տեղը: Ձիաւորը լուռ և անշարժ նստած էր թամբի վրայ, առանց հակառակելու և ուշադրութիւն դարձնելու իւր ձիու կատաղի ոստիւններին:

Կարճ կուից յետոյ ձին անձնատուր եղաւ իւր թըշնամուն: Կապիտանի կրծքից դուրս թռաւ ուրախութեան մի բացականչութիւն. բայց նա իսկոյն յիշեց, որ այդ ուրախութիւնը դեռ կանխաժամ է, քանի դեռ չի իրագործել իր դիտաւորութիւնը:

Դիտելով իրեն շրջապատող թփերի թաւուար և ոչ մի ձայն չը լսելով, նա գործի ձեռնարկեց: Գօտկից հանեց դանակը, բարձրացրեց անգլուխ ձիաւորի վերարկուի ծայրը և ձեռքը շարժեց, կարծես թէ նա մտադիր էր դանակը խրել նրա սիրտը: Մինչև մի բուլէն սուր դանակն արդէն խրեւած կը լինէր անգլուխ ձիաւորի կրծքի մէջ, բայց յանկարծ անտառից լսում է մի ձայն և ծառերի ետեից դուրս է գալիս Ձէբ Ստուժպը:

— Սպասիր, — գոռաց որսորդը թփերի միջից անցնելով: — Սպասիր, ասում եմ քեզ:

— Ի՞նչ է պատահել, — ասում է Կէլիօունը շփոթւելով և դանակը թազցնելով: — Ինչո՞ւ համար էք այդպէս աղմուկ բարձրացնում: Այս կենդանին փաթաթել էր ծառի ճղներին և ես կամենում էի կտրել նրա կոկորդը, որ նորից չը փախչի մեր ձեռքից:

— Լաւ, լաւ, սակայն առանց դրան էլ կարելի էր

նրան պահել, Միստեր Կէլիօուն, մանաւանդ որ ձիաւորը չի կարող նրա սանձը արձակել ճիւղերից:

— Ճիշտ է, երևի մեռած մարդ է սա, միտար Ստուժպ:

— Դժուար է առանց գլխի կենդանի լինել: Իսկ ճանաչում էք ո՞ւմ դիակն է սա, միտար Կէլիօուն. — սա այն մարդու մարմինն է, որի սպանութեան համար դատապարտում են մուստանգերին, սա ձեր քեռորդու, երկպարտում են Պոյնդեքստերի մարմինն է: Երգւում եմ Ամենաբարձեալի անունով, որ նա է:

— Ինձ թւում է, որ դուք իրաւացի էք: Ասուած իմ, յիրաւի այդ նրա մարմինն է:

— Յովսափանթ, — շարունակեց Ձէբը ձևացնելով որ իբր թէ շատ է զարմացած այդ դիտով: — Ինչպիսի հրաշք: Դէ՛հ, միտեր Կէլիօուն, կարծում եմ, որ այլ ևս կարիք չը կայ կանգնել այստեղ և դատարկ տեղից դատողուծ թիւններ անել: Վերցնենք մեզ հետ այս դիակը և յետ դառնանք: Կարելի է նրան բոլորովին ձեռք չը տալ. ինչպէս երևում է, նա բաւականին ամուր նստած է թամբի վրայ, իսկ ձին անշուշտ սիրով կը գայ իմ մաթամբի վրայ, իսկ ձին անշուշտ սիրով կը գայ իմ մաթամբի ետեից, — նրանք հին բարեկամներ են. մենք նրան կը տանենք սանձից բռնած. ուրեմն, միտեր Կէլիօուն, — աւելացրեց որսորդը գաղտագողի նայելով նրան, կամենալով իմանալ, թէ ինչ սպաւորութիւն կը թողնեն կապիտանի վրայ իւր խօսքերը. — յետ դառնանք չէ: Կարելի է դատը դեռ շարունակում է, իսկ մեր ներկայութիւնն այնտեղ անհրաժեշտ է: Ես կարծում եմ, որ այս վկան կը բացադէ մեզ բոլոր գործը և մուստանգերը կամ կը կախի, կամ, որ աւելի հաւանական է, բոլորովին կը արդարանայ բոլոր մեղադրանքից: Համաձայն էք գալ ինձ հետ:

— Ի հարկէ, գուք բոլորովին իրաւացի էք. մեզ համար աւելորդ է այստեղ մնալը:

Որսորդը բռնելով մուտանգի սանձը, առաջ ընկաւ: Ձին ոչ միայն չը հակառակեց, այլ շատ ուրախ էր, որ պատահեց իւր հին ընկերին և սիրով գնաց նրա ետեւից:

Կէլիօունը դանդաղ, բայց ոչ սիրով գնում էր Ձեբի ետևից: Հասնելով այնտեղ, ուր շաւիղը մի պտոյտ է աւնում շրջելով ծառերի մի խումբ, նա կանգ առաւ, որպէս թէ մտածում էր՝ առաջ գնալ, թէ յետ դառնալ և թագնուել անտառում: Նրա գէմքը տանջող անհանգստութիւն էր արտայայտում: Որսորդը յետ նայելով մի հարցական հայեացք ձգեց կապիտանի վրայ: Նրա վրդովմունքը նկատելով, իսկոյն հասկացաւ Կէլիօունի միտքը և առանց մի խօսք արտայայտելու բարձրացրեց հրացանն ու աջ ձեռքում բռնելով, մի հրամայողական հայեացք ձգեց նրա վրայ, կարծես թէ այդ հայեացքով կամենում էր ասել:

«Հապա մի համարձակւիր յետ դառնալ»:

Կէլիօունը ձևացրեց, որ իբր թէ չը նկատեց Ձեբ Ստումպի սպառնական շարժումը և առանց այլ և այլութեան առաջ շարժւեց: Սակայն որսորդն արդէն կասկածում էր. նա հրաւիրեց իւր ուղեկցին գնալ առաջից, իսկ ինքը հետևեց նրան:

Ձիաւորներն մօտենում էին անտառի եզրին. շուտով նրանց առաջ բացւեց տափաստանը: Կէլիօունը նայեց դէպի այն կողմը, ուր հորիզոնի վրայ հազիւ նկատելի կերպով սև կէտի նման երեւում էր հսկայական կաղնուկատարը և նրա սիրտը լցւեց, վրդովմունքով ու երկիւրով: Նա դարձեալ կանգ առաւ և չը զիտէր ինչ վճռէր. յետ դառնալ անտառը, թէ համարձակ գնար վտանգի առաջ: Այժմ նա կը տար ամենը, ինչ որ ունէր, ամենը:



Որսորդ յետ նայելով մի հարցական հայեացք ձգեց կապիտանի վրայ: (Երես 475)

ինչ որ յոյս ունէր ունենալու, մինչև անգամ կ'զոհէր դէպի
 Լուսիզա Պոյնդեքստերն ունեցած սէրը, միայն թէ ա-
 զատէր ատելի Ձէբ Ստոււմպից և մի քանի բոպէ միայ-
 նակ մնար անգլուխ ձիաւորի հետ: Բայց այլևս խօսք չէր
 կարող լինել այդ մասին:

Սակայն ի՞նչ կարող էր անել նրան ծերունի որսոր-
 դը: Նա ոչինչ չը գիտէ այն հանգամանքի մասին, որն
 այդպէս վրդովում էր կապիտանին: Պարզ է, որ որսորդը-
 կասկածում է, բայց կասկածներից կարող է վախե-
 նալ այն մարդը, որը բարեկամներ չունի, իսկ կապիտանն
 ունի շատ հաւատարիմ մարդիկ, որոնք թոյլ չեն տալ,
 որ որևէ մարդ իրան վիրաւորի:

Եւ կապիտանն ինքն իրեն յոյս տալով, քաջալերւեց
 և կեղծ անտարբերութեամբ դուրս եկաւ հարթութիւնը,
 Ձէբ Ստոււմպը հետևում էր նրան քաշելով իւր ետևից
 մուստանգը, որի վրայ նստած էր չենրի Պոյնդեքստերի
 դիակը:

Գ Լ Խ Ա Տ Ի Ա Ծ Դ Ի Ա Կ Ը .

Որովհետև անգլուխ ձիաւորի ետեւից գնացել էին համարեա բոլոր հանդիսատեսները և երգեւախմբից մի քանիսը, ուստի նիստն առժամանակ ընդհատուեց:

Ընդմիջումը տևեց մօտ մի ժամ. դատաւորը ծխեց մի քանի սիգար, խմեց ծիրանի ջրից, խօսեց փաստաբաններին, երգեւախմբի և հանդիսատեսներից նրանց հետ, որոնք մնացել էին ծառի տակ: Նրանցից մի քանիսը ձի չունէին, միւսներն էլ չէին ցանկանում յոգնեցընել իրենց ձիերը:

Ժամանակն անցնում էր շատ դանդաղ. բոլորի դէմքերն անհամբերութիւն էին արտայայտում: Փէ և խօսեւորու համար դժուար չէր նիւթ գտնել, բոլոր տեսած ու լսածների մասին կարելի էր խօսել ոչ միայն մի ժամ, այլ մինչև անգամ մի ամբողջ տարի, այնուամենայնիւ ներկայ եղողները այնքան էլ սիրով չէին խօսում միմիանց հետ. նրանք անհամբերութեամբ սպասում էին ընկերների վեճադարձին, որովհետև յոյս ունէին, թէ նրանք կը բերեն իրենց հետ անգլուխ ձիաւորին: Այն ժամանակ կը պարզուի թէ ո՞վ է այդ խորհրդաւոր ձիաւորը և կարելի կը լինի կարևոր մանրամասնութիւններ իմանալ սպանութեան վերաբերեալ, եթէ նա որ և է յարաբերութիւն ունի Հենրի Պոյնդեքստերի մահւան հետ: Այստեղ կայ մի մարդ, որը շատ բան կարող է բացազբել այդ գործում, բայց նա դատաւորի կարգադրութեամբ և իւր պաշտպանի խորհրդով առժամանակ ընդհատել էր իւր ցուցմունքը: Դա ինքը մեղադրեալն էր, բայց նրան էլ յայտնի չէր, թէ ո՞վ և ինչպէս է սպանել երիտասարդ Պոյնդեքստերին:

Վերջապէս հետապնդողներն սկսեցին վերադառնալ խմբերով: Նրանց հետապնդումը յաջողութիւն չէր ունե-

ցել: անգլուխ ձիաւորը ծածկուել էր մացանների թաւուտում, ուստի նրանք թողնելով իրենց անօգուտ հետապնդումը, վերադարձել էին ի գուր տեղից տանջելով իրենց ձիերին:

Փոքր առ փոքր բոլորը հաւաքւեցին ծառի տակ. պակասում էին միայն Ձէբ Ստումպը և կամաւորների պաշտօնաթող կապիտանը: Պատմում էին, թէ կապիտանն արշաւում էր բոլորից առաջ և որսորդը հետևում էր նրան քիչ հեռաւորութեան վրայ:

Անցնում է մի ժամ. հետապնդողները չը կան: Հարց են բարձրացնում. հարկաւոր է շարունակել նիստը, թէ սպասել Ձէբ Ստումպի և կապիտանի կէլհօունի վերադարձին: Դատախազը պնդում է շարունակել դատը, իսկ պաշտպանը խնդրում է յետաձգել մինչև հետևեալ օրը, որ գլխաւոր վկան, Ձէբ Ստումպը գեռ հարց առարկելով, որ գլխաւոր վկան, Ձէբ Ստումպը գեռ հարց առ փորձի չէ ենթարկւած: Կէլհօունից կաշառւած ամբօռու փորձի չէ և ազդակելով պահանջում ընդհատուած իւր յուզում է և ազդակելով պահանջում ընդհատուած նիստը շարունակել: Դատաւորը երգեւախմբի համաձայնութեամբ վճռում է վերսկսել քննութիւնը, ի նկատի չառնելով գլխաւոր վկայի բացակայութիւնը: Կարելի է նա կը վերադառնայ աւելի շուտ, նախ քան իւր հերթը կը հասնի, հակառակ դէպքում գեռ բաւականին ժամանակ կը լինի խօսել յետաձգման մասին:

Նորից առաջարկում են մեղադրեալին ոտի կանգնել և շարունակել իւր անսպասելի կերպով ընդհատուած պատմութիւնը...

— Դուք կամենում էիք պատմել մեզ, թէ ի՞նչ տեսաք անտառում, — սկսեց պաշտպանը Մօրիս Հերպիին դառնալով: — Շարունակեցէք ձեր ցուցմունքը: Դուք ի՞նչ տեսաք այնտեղ:

— Ես տեսայ գետնին փուած մի գլխատուած մարդ, — պատասխանեց Մօրիսը:

Սարսափի դողը պաշարեց բոլոր ներկայ եղողներին:

— Դուք ճանաչեցի՞ք նրան, — հարցրեց պաշտպանը:

— Այո, իսկոյն ճանաչեցի, որովհետև հագուստն ինձ լաւ ծանօթ էր:

— Նա ի՞նչ էր հագած:

— Ուսերին ձգած էր սպիտակ ասեղնագործւած վերարկու, գլխին դրած մեքսիկական սօմբրերօ, և վերարկուն և գլխարկը ինձ էին պատկանում, այնպէս որ սպանւածին կարելի էր ընդունել ինձ տեղ: Դա Հենրի Պօյնդեքստերն էր:

Անբաղդ հօր կրծքից դուրս թռաւ մի ճնշւած հաւաշանք:

— Ես ձեռք տւի մարմինն, նա արդէն սառած էր, որից եզրակացրի, որ սպանութիւնը կատարւել էր բաւական ժամանակ առաջ: Արիւնն արդէն սառել էր և սևացել: Սկզբում ես ենթադրում էի, թէ մահւան պատճառը այն հարւածն է եղել, որը գլուխը բաժանել է մարմնից, բայց յետոյ յիշելով գիշերը լսածս տրաքոցի մասին, վրձնեցի դիտել մարմինը, որպէսզի իմանամ ուրիշ վերք և՛ս կայ, թէ ոչ:

Ես չէի սխալւել. դիակը շուռ տալով նկատեցի արեան մէջ թաթախւած վերարկուի վրայ մի ծակ. վերքը կրծքի վրայ էր, որովհետև մէջքի կողմից ծակ չը կար, նշանակում է, որ գնդակն անշուշտ մնացել էր սպանւածի մարմնի մէջ:

— Դուք կարծում էք՝ որ այդ գնդակը բաւակամ էր մի մարդու մահացնելու համար և գլխատումը յետոյ է եղել:

— Յամենայն դէպս, այո: Մահը պէտք է հետևէր տրաքոցից մի քանի րոպէ, մինչև անգամ մի քանի վայրկեանից յետոյ:

— Դուք ասում էք, որ գլուխը կտրւած էր: Ի՞նչ է,

մարդասպանը բոլորովին բաժանել էր նրան մարմնից:

— Բոլորովին:

— Կտրւածքը հաւասար էր, ինչպէս սուր գէնքի կտրւածք:

— Այո:

— Ի՞նչ էք կարծում, ինչպիսի՞ գէնքով էր կտրւած գլուխը:

— Կտրւածքին նայելով, — լայն կացնով, բայց այդպէս կարելի է կտրել և որսորդական մեծ դանակով:

— Դուք չէ՞ք նկատել, թէ քանի հարւած է հասցրւել գլուխը մարմնից բաժանելու համար:

— Գուցէ մի քանի, բայց նրանցից ոչ մի նկատելի հետք չէր մնացել: Առաջին հարւածն այնքան սաստիկ է եղել, որ համարեա պարանոցը կտրելւանցել է: Այդ հարւածն ուղղւած է եղել մէջքի կողմից, ողնաշարի ուղիղ անկեան տակ: Պարզ է, որ այդ ժամանակ սպանւածն ընկած է եղել գետնին երեսն ի վայր:

— Դուք չը կասկածեցի՞ք, թէ ով կարող էր կատարել այդ ոճրագործութիւնը:

— Ո՛չ. գոնէ առաջին րոպէին սարսափից ապշած՝ ես մինչև անգամ այդ մասին չը մտածեցի: Յետոյ երբ ես փոքր ինչ հանգստացայ և սկսեցի մտածել պատահած դէպքի մասին, ես մտածեցի, թէ գուցէ Հենրի Պօյնդեքստերը պատահել է շրջակայքում թափառող կօմանչներին, որոնք և սպանել են նրան: Սակայն տարօրինակ թւաց ինձ այն, որ նրանք ո՛չ միայն չեն վերցրել սպանւածի գանգամազը, այլ և թողել են նրա գլխի վրայ գլխարկը:

— Եւ այդպէս, դուք այն եզրակացուցի՞րան եկաք, որ այդ հնդիկները չեն կատարել:

— Այո, ես փոխեցի իմ սկզբնական կարծիքը:

— Ձեր կարծիքով ո՞վ կարող էր սպանել Պօյնդեքստերին:

— Այն ժամանակ ես վճռականապէս չը գիտէի՝ ինչ մտածէի, որովհետեւ երբէք չէի լսել, որ Հենրիին թշնամիներ ունենար, բայց յետոյ իմ մէջ մի քանի կասկածներ ծագեցան:

— Ո՞ւմ դէմ:

— Ես բողոքում եմ, այդ հարցն անտեղի է, — ընդհատեց դատախազը: — Մենք գործ չունենք մեղադրեալի կասկածներ ի հետ: Բաւական է, որ նրան թոյլ ենք տալիս պատմել այդպիսի հեմարսանման պատմութիւններ:

— Մեղադրեալ, շարունակեցէք ձեր ցուցմունքը, — խօսեց դատաւորը մի նոր սիգար վառելով:

— Ի՞նչ արիք դուք դիակը դիտելուց յետոյ, — հարցրեց պաշտպանը:

— Սարսափելի գիւտն այնպէս էր կայծակնահարել ինձ, որ ես առժամանակ չորքած մնացի սպանւածի առաջ և չը գիտէի ինչ անէի: Այլ ևս կասկած չը կար, որ ես գիշերը լսել եմ հրացանի տրաքոց և այդ արձակել է Հենրիի սպանողը: Ո՞վ է կատարել ոճիրը: Կարճ մտածութիւնից յետոյ ես որոշեցի, որ այդ հնդիկները չեն կատարել, այլ մի ուրիշը, գուցէ տափաստանային աւաղակները, որոնք սպանել են երիտասարդին կողոստելու նպատակով: Բայց այդ ենթադրութիւնն էլ սխալ դուրս եկաւ: Իմ մեքսիկական ոսկով ասեղնագործւած վերարկուն, որ առնւազն արժէր հարիւր դոլլար, սպանւածի ոսկի ժամացոյցը և շղթան մնացել էին առանց ձեռք տալու: Այն ժամանակ ես եկայ այն եզրապատման, որ սպանութիւնը կատարել է վրէժխնդրութիւնից: Բայց ո՞վ կարող էր վրէժխնդիր լինել երիտասարդ Պոյնդեքստերից: Ես չեմ կարողանում յիշել, որ նա երբ և իցէ կուած լինէր որեւէ մէկի հետ: Ինձ ամենից աւելի զարմացրել և սարսափեցրել էր նրա գլխատումը: Ես չէի կարողանում բացատրել ինձ, թէ ի՞նչու համար էր մարդասպանն այդ արել: Յետոյ սկսեցի մտածել, թէ ի՞նչ է հարկաւոր անել և վճռեցի գնալ ամբողջ, յայտնել այն-

տեղ պատահած դէպքի մասին և օգնութիւն խնդրել դիակը կազա-դէլ-կօրվօ տանելու համար: Բայց յանկարծ իմ միտքն ընկաւ, որ նախ քան մենք կը վերադառնանք, դիակը կը պատառոտեն դայլերն ու վիշատիչ ուրուրները, որոնք արդէն որսի հոտն առել էին: Ես նայեցի իմ անբաղդ բարեկամի այլանդակւած մարմնին, յիշեցի նրա ծնողներին, յիշեցի նրա քրոջը, որին լուր պէտք է տանէի իւր սիրելի եղբօր մահւան մասին և իմ սիրտը ճնշեց սաստիկ վշտից:

ԼՈՒՍԱԲԱՆԻԱԾ ԳԱՂՏՆԻՔԸ

Մեղադրեալը կանգ առաւ: Ոչ ոք նրան նկատողութիւն չարաւ, ոչ ոք նրան չշտապեցրեց և ոչ մի հարց չ'առաջարկեց: Բոլորն էլ լուռ էին, վախենում էին ընդհատել պատմութեան թելը, որ, ըստ երևոյթին, դեռ վերջը չէր հասցրւած: Նրանք լսում էին ուշադրութեամբ: Դատաւորը, երգւեալները, հանդիսատեսները շունչները Դատաւորը, երգւեալները, հանդիսատեսները շունչները զսպած՝ աչքերը յառել էին մեղադրեալի վրայ: Խորին լուռութեան մէջ նա շարունակեց:

— Յանկարծ մի նոր միտք ծագեց իմ գլխում: Արդեօք լաւ չի՞ լինիլ փոխանակ միայնակ ամբողջ գնալու, նրան էլ տանել հետս: Նրան կարելի էր խոտորնակի դընել թամբի վրայ և կապել արկանով, որ վայր չընկնի: Ես մօտեցրի իմ ձին և կամենում էի մեռածի մարմինը բարձրացնել դնել թամբի վրայ, երբ յանկարծ նկատեցի հանգուցեալի ձին: Փորձեցի սպանւածին նստեցնել իւր ձիու վրայ, բայց այդ փորձն անյաշող անցաւ: Մնում էր փոխել մեր ձիերը: Ես գիտէի, որ իմ մուստանգն աւելի հնազանդ է և իմ մեքսիկական խոր թամբը աւելի յարմար ենթադրւած սպատակի համար և ինձ յաշողւեց սպանւածի մարմինը նստեցնել ձիու վրայ, ինչպէս կենդանի մարդ. ոտներն ազատ կերպով մտան ասպանդակների մէջ և ես նրանց կապեցի միմիանցից ձիու փողակների մէջ և ես նրանց կապեցի միմիանցից ձիու փողակներին: Բայց աւելի լաւ ամրացնելու համար՝ կտրեցի իմ արկանի ծայրը և նրանով մարմինն ամրացրի թամբի վրայ. արկանը գօտիի նման կապեցի մէջքին, մի ծայրն ամրացրի թամբի միջից, միւսը թամբի ետևից: Այդ ամենն անելուց յետոյ՝ յիշեցի գլխի մասին: Գլուխը ևս հարկաւոր էր վերցնել: Բարձրացրի գետնից և փորձեցի գլխարկը վերցնել, բայց այդ չ'յաշողւեց, որովհետև գլուխը սաստիկ ուռել էր և գլխարկը մտել էր մտի մէջ: Այն

ժամանակ մի կտոր թուղով գլուխը կապեցի թամբի ադեղից: Այդպէս ամեն ինչ պատրաստելով, ես նստեցի ըսպանւածի ձին, առաջ ընկայ և կանչեցի իմ մուստանգին հետևել ինձ: Ես գնում էի ամբողջ ուղղութեամբ: Հինգ րոպէ չանցած՝ ես վայր ընկայ ձիուց և ուշագնաց եղայ: Եթէ որ այդ չը պատահէր, անշուշտ ես այժմ կանգնած չէի լինիլ դատարանի առաջ իբրև մեղադրեալ սպանութեան մէջ:

— Դուք վա՛յր ընկաք ձիուց, — հարցրեց դատաւորը: Այդ ինչպէ՞ս պատահեց:

— Շատ հասարակ կերպով: Դրա պատճառն իմ անհոգութիւնն էր: Ես միշտ սովոր լինելով ման գալ իմ ձայնին հնազանդ ձիու վրայ, չէի հոգացել սանձը ձեռքս առնել: Հագիւ անց էինք կացել մի քանի քայլ, երբ ձին յետ նայելով տեսաւ իր ետից եկող մուստանգի վրայ ձիւնորի սարսափելի կերպարանքը, որից ամենաքաջ սիրտն անգամ երկիւղից կը դողար: Ես կամեցայ սանձը ձեռքս հաւաքել, բայց նախ քան այդ՝ ձին փախցրեց ինձ: Սկզբում ես երբէք չը վախեցայ, գիտէի, որ եթէ սանձը ձեռքս առնեմ, հեշտ կը լինի նրան կանգնեցնել, բայց այդ ի գուր էր. երասանակները կախ էին ընկել դէպի ցած և նրանց ձեռք բերելու համար հարկաւոր էր պառկել ձիու պարանոցի վրայ: Ես ուշադրութիւն չէի դարձնում, թէ ինչ ուղղութեամբ էր արշաւում իմ ձին և միայն այն ժամանակ, երբ ձիւներն սկսեցին մտրակել իմ երեսին, ես իմացայ, որ ձին թողնելով շաւիղը՝ վազում է անտառում: Այժմ ժամանակը չէր մտածելու սանձը ձեռք բերելու համար, ամեն կողմը փուած էին մեակիտների հաստ փշերը և եթէ ես չը շտապեմ թեքել նրանցից, ինձ սպանում է թամբից վայր ընկնելու վրտանգը: Մի առ ժամանակ այս ու այն կողմը թեքւելով՝ ես խոյս տուի սաստիկ հարւածներից, բայց շուտով

տեցի իմ առաջ մի մեծ ծառի մի հասա և ուղիղ ճիւղ,
որ ընկած էր ճանապարհի վրայով այնքան ցած, որ
թեքւելն անհնարին էր: Սաստիկ հարածը վայր ձգեց
ինձ թամբից: Ձին առաջ անցաւ, թէ որտեղ, ես չեմ կա-
նոյ տեսել. հաւանական է, այդ ձեզ աւելի յայտնի կը լի-
նի, քան թէ ինձ: Ես տեսայ ինձ գետնի վրայ՝ գլուխս
չարդւած և ոտս խիստ ուռած, բայց այդ ամենն իմացայ
ձիւնից վայր ընկնելուց և գիտակցութիւնից զրկւելուց եր-
կու ժամ յետոյ: Երբ որ ես ուշքի եկայ, արեգակն ար-
դէն գտնուում էր բարձր երկնակամարի վրայ. ուրուրներն
զգալով որսի հոտը, սաւառնում էին օդում իմ գլխի
վրայ: Գիշատիչ թռչուններն ու տանջող ծարաւը ստի-
պեցին ինձ թողնել այդ տեղը: Բարձրացայ ընկած տե-
ղիցս, բայց երկիւղով նկատեցի, որ չեմ կարողանում
օտի վրայ կանգնել և առաջ շարժել: Այդտեղ մնալ—նշա-
նակում էր անհետ կորչել, գոնէ այն ժամանակ ինձ այդ-
պէս էր թւում և ես բոլոր ուժս հաւաքելով գիմեցի գէ-
պի գետակը, որ այնքան էլ հեռու չէր ինձանից: Մա-
սամբ սողալով գետնի վրայ, մասամբ յենւելով փայտի
վրայ, որ վերցրել էի անտառում, մի կերպ հասայ գե-
տակին, յագեցրի ծարաւս և փոքր ինչ թեթեւութիւն բզ-
գալով շուտով քուն մտայ: Վեր կենալով տեսայ, որ
ըջապատւած եմ գայլերով, նրանք կը լինէին մօտ չորս
տասնեակ, բայց ի նկատի ունենալով նրանց երկչոտու-
թիւնը, ես ոչ մի վրդովմունք չը զգացի, որովհետեւ մը-
տածում էի, թէ նրանք ինձ ոչ մի վնաս չեն պատճառիլ,
սակայն այդ եզրակացութիւնը սխալ էր: Գայլերը նկա-
տելով որ ես վերաւոր եմ, ամբողջ խմբերով յարձակւե-
ցին ինձ վրայ: Ես ոչ մի զէնք չունէի հետս, բացի դա-
նակից, որ բարեբախտաբար մնացել էր գօտկումս, առանց
դրան անշուշտ ես այժմ պատառուտած կը լինէի գայլե-
րից: Իսնակը հանելով սկսեցի պաշտպանւել և սպանեցի

մի քանի գայլ, բայց քաղցից և արիւն կորցնելուց թու-
լանալով, զգացի, որ ուժասպառ եմ լինում և շուտով կա-
րողութիւն չեմ ունենալ դիմադրելու: Յուսահատ կոիւր
կը վերջանար, ի հարկէ, իմ կորուստով, եթէ որ շնորհիւ
բաղդաւոր դէպքին, ես անսպասելի օգնութիւն չը ստա-
նայի: Իմ ազատութիւնը ես չեմ կարող վերագրել հասա-
րակ պատահականութեան, երևի այդ վերին նախախնա-
մութիւնից էր:

Այդ խօսքերն ասելով, մեղադրեալն ակնածութեամբ
աչքը բարձրացրեց դէպի երկինքը և մի առ ժամանակ
կանգնեց լուռ մտածութեան մէջ: Ամբողջ ժողովի խորին
լուսթիւնը ցոյց էր տալիս, որ ներկայ եղողները յարգում
էին նրա զգացմունքը: Ամենադաժան մարդկանց սրտերն
անգամ շարժւած էին նրա խօսքերի անկեղծութեամբ:

— Ինձ օգնութիւն հասաւ իմ հաւատարիմ բարեկա-
մը, իմ շունը, — թարան, — շարունակեց Մօրիս Հերալդը:
— Ես վազում էր անտառում երևի ինձ գտնելու համար
և գտաւ հէնց ժամանակին, որպէսզի պաշտպանէ ինձ թըշ-
նամիներից: Գայլերը ցրւեցին և ես ազատւած էի մահ-
ւան ճանկերից: Դրանից յետոյ չը գիտեմ ինչ պատահեց
ինձ հետ: Երևի ես քնեցի, կամ ուշքից ընկայ, բայց շու-
տով գիտակցութեան գալով, սկսեցի քննութեան առնել
իմ դրութիւնը: Շունը եկել էր իմ բնակարանից, որ
գտնուում էր մի քանի մղոն հեռաւորութեան վրայ: Նրան
ուղարկել էի այնտեղ մի օր առաջ իմ ծառայ Ֆելիմի
հետ: Իմանալով, որ ծառան սպասում է ինձ և չի կարող
բացակայել խրճիթից, մտածեցի շան միջոցով տեղեկու-
թիւն ուղարկել նրան իմ մասին: Մի քանի խօսք զրեցի
թիւն ուղարկել նրան իմ մասին: Մի քանի խօսք զրեցի
թիւն մօտ գտնւած այցետուսի վրայ, փաթաթեցի մի կը-
տով պատտառի մէջ, որ պոկել էի գլխարկիցս և կապեցի
թարայի պարանոցին: Ես գիտէի, որ Ֆելիմը կարգաւ չը
զիտէ, բայց յոյս ունէի, որ իմ այցետուսը անանելով,

նա կը գտնէ շրջակայքում մէկին և կարգացնել կը տայ նրան: Այդ աւելի հաւանական էր նրանով, որ ես թանաք չունենալու պատճառով գրել էի արիւնով և նա պերջապէս նա թողեց ինձ և ինչպէս սպասում էի, գնաց Դժար եղաւ հեռացնել ինձանից հաւատարիմ կենդանուն. վերջապէս նա թողեց ինձ և ինչպէս սպասում էի, գնաց ուղղակի տուն: Բանից դուրս եկաւ, որ շունը ճշտութեամբ կատարել էր իւր վրայ դրած պարտականութիւնը, այդ մասին ես միայն երեկ իմացայ: Երբ որ Թարան հեռացաւ, ես նորից քնեցի և արթնանալով իմ առաջ տեսայ գայլերից աւելի վտանգաւոր մի թշնամի: Դա մի յովազ էր: Մեր մէջ կռիւ սկսեց, բայց թէ ո՞րքան ժայռակ տեւեց այդ կռիւը և ինչպէս վերջացաւ, ես ոչինչ մանակ տեւեց այդ կռիւը և ինչպէս վերջացաւ, ես ոչինչ չեմ յիշում և այդ մասին թողնում եմ պատմելու իմ ազեմ յիշում և այդ մասին թողնում եմ պատմելու իմ ավերադաճնայ և կը պատմէ շատ բան, որ ձեզ և ինձ այժմ անհասկանալի է թւում: Այն ամենից, ինչ որ պատահեց ինձ յետոյ, ես յիշում եմ միայն զառանցանքի մէջ ինձ երևացած տեսիլքները, երբեմն սարսափելի և այլանդակ, երբեմն այնքան գեղեցիկ և հրապուրիչ, որ ես ինձ երկնքումն էի կարծում: Երէկ, երբ ես գիտակցութեան եկայ, իմացայ, որ գտնուում եմ բանտում և ինձ պէտք է դատեն Հենրի Պոյնդեքստերի սպանութեան համար: Պարոնայք երգեալներ, ես վերջացրի...

«Se non e vero e ben trovato», մտածում էին դատաւորը, երգեալները և հանդիսականները, երբ մեղադրեալը վերջացրեց իր ցուցմունքը: Ի հարկէ նրանք չէին կարող արտայայտել իրենց մտքերն այնպիսի ճիշտ դարձածքով, բայց իմաստը միևնոյնն էր:

Սակայն շատ շատերը հաւատում էին Հերալդին: Նրա պատմութիւնը չափազանց հասարակ էր և դրա հետ միասին, չափազանց հանգամանօրէն էր, այնպէս որ այդ

չէր կարող հնարել մի մարդ, որ հէնց նոր էր ուշքի եկել: Իւր հասարակ, փոքր ինչ անկապ պատմութեամբ Մորիսն աւելի լաւ պաշտպանեց իրեն, քան թէ կարող էր անել այդ փաստաբանը իւր ամենափայլուն և պերճախօս ճառն արտասանելով. բայց այնուամենայնիւ նա ոչնչով չը հաստատեց իւր խօսքերը և նրան արդարացնելու համար հարկաւոր էին աւելի կարևոր և կտրուկ ապացոյցներ:

— Ո՞րտեղ է այն վկան, որից կախած է մեղադրեալի ճակատագիրը: Ո՞ւր է Ձէք Ստուժպը:

Բոլոր հինգ հարիւր հանդիսատեսները միանգամից, ինչպէս մի մարդ, երեսները դարձրին դէպի հարթութիւնը և աչքները ձգեցին հեռուն: Բոլորն էլ անհամբեր ըստ պատմւում էին տեսնել ծերունի որսորդին. այժմ նրանց համար միևնոյնն է, թող նա վերադաճնայ առանց կապիտան Կէյօունին, մինչև անգամ առանց սարսափելի անտան Կէյօունին, որն արդէն դադարել էր գերբնական և անբացադրելի երևոյթ լինելուց, երբ Հերալդը ցրեց նրան շրջապատող խորհրդաւորութեան խաւարը:

հետ միասին գնացինք ցոյց տւած տեղը. մենք վրայ հասանք հէնց այն ժամանակ, երբ յովազը պատրաստուում էր նրան պատառել: Ես իսկոյն արձակեցի հրացանս և տեղն ու տեղը սպանեցի գազանին, որից յետոյ Մօրիսին տուն տարինք, ուր մնաց այնքան, մինչև որ եկան օրինակատարները:

Վկան կանգ առաւ: Նա մտածում էր թէ յետոյ ինչ ասէ: Արդեօք լաւ չի լինիլ մեղադրեալի համար, եթէ նա չը պատմէ այն, ինչ որ պատահել էր այն գիշերը մինչև դատաւորների գալը: Նա վճռեց լռել այդ մասին, բայց դատախազը նկատելով որ նա տատանւում է, սկսեց հարցնել նրան և Զէբը հարկադրւած էր մանրասկսեց հաշիւ տալ բոլոր անցքերի մասին մինչև այն ժամանակը, երբ Մօրիս Հերալդին տարան քաղաք և բանտարկեցին:

— Այժմ, — ասաց որսորդը, երբ հարց ու փորձը վերջացաւ. — ես հաղորդեցի ձեզ ամենը, ինչ որ գիտէի այդ գործի մասին, բայց դուք չը հարցրիք ինձ շատ բան, իսկ ես կամենում եմ պատմել ձեզ մի բանի մասին ևս:

— Եթէ այդպէս է, շարունակեցէք, միտեր Ստուժպ, — ասաց Սէն-Անտօնիօի փաստաբանը:

— Այն, ինչ որ ես պիտի ասեմ, մեղադրեալին չի վերաբերում, այլ այն մարդուն, որ պէտք է կանգնած լինէր նրա տեղը: Ես չեմ ասում այդ մարդու անունը, նէր նրա տեղը: Ես չեմ ասում այդ մարդու անունը, բայց կը հաղորդեմ ձեզ այն, ինչ որ յաջողւել է ինձ գտնել և ինքներդ արդէն կը գուշակէք, թէ ո՞վ է նա:

Որսորդը կանգ առաւ և շունչ քաշեց, կարծես թէ պատրաստուում էր մի երկար ճառ արտասանելու:

— Քաղաքացիներ, — սկսեց Զէբն արդէն բոլորովին ուրիշ եղանակով. — այն ամենից յետոյ, ինչ որ ես լսել էի և առանձնապէս տեսել, եկայ այն եզրակացութեան, որ երիտասարդ Պօյնդէքստերն անյայտացել է երկրի ե-

րեսից, որ նա կորել է մարդասպանի ձեռքով: Բայց ես հաւատացած էի, որ այդ ստոր ոճրագործութիւնը Մօրիս Հերալդը չէ կատարել: Ուրեմն ո՞վ է նրան սպանողը, — անհա մի հարց, որ ինձ հանգիստ չէր տալիս, որն անշուշտ անհանգստացնում է և ձեզ, գոնէ նրանց, որոնք սովորութիւն ունեն լաւ մտածելու, նախ քան մի բան սովորութիւն ունեն լաւ մտածելու լինելով, որ իրլանդացին վճռելը: Եւ այդպէս համոզւած լինելով, որ իրլանդացին մեղաւոր չէ, ես մտադրեցայ բաց անել ճշմարտութիւնը: Ես կամենում էի դիտել այն հետքերը, որոնք տանում էին ոճրագործութեան տեղը, և այն հետքերը, որոնք յետ էին դառնում այնտեղից: Թէև այնտեղ շատ ընդ յետ էին դառնում այնտեղից: Թէև այնտեղ շատ հետքեր կային, որ ինձ մեծ ջանք և դժւարութիւն էր հարկաւոր նրանց որոշել, բայց նրանց մէջ կար մէկը, հարկաւոր նրանց որոշել, բայց նրանց մէջ կար մէկը, որը որոշում էր իւր մի քանի առանձնայատկութիւններով, և ես վճռեցի իմանալ թէ այդ հետքն ուր է տանում, թէկուզ ինձ հարկաւոր լինէր մինչև աշխարհի վերջը գնալ: Այդ ամբերիկական մի ձիու հետք էր, երեք ամբողջ և մի կոտրւած պայտերով: Ահա և այդ կոտրւած պայտը:

Վկան ձեռքը ձգեց զրպանը և հանեց պայտը, որից պակասում էր մօտ մի քառորդ մասը: Որպէսզի բոլորը կարողանային լաւ տեսնել, նա բարձրացրեց ձեռքը և մի քանի րոպէ մնաց այդ դրութեան մէջ:

— Այժմ, պարոն դատաւոր և պարոնայք երգւեալներ, հարկաւոր է ասել ձեզ, որ այդ ձին արշաւել է ըստ պանւածի և մեղադրեալի ետևից: Զիաւորը, որին նա պատկանում էր, գնացել է ուղղակի նրանց երկուսի պատկանում էր, գնացել է սկզբակի նրանց երկուսի հետքերով և կանգ է առել ոչ հեռու այն տեղից, ուր կատարւել է սպանութիւնը: Այդտեղից նա ոտով գնացել է մինչև փոքրիկ մարգագետինը, ուր յետոյ գտել են արեան փոսը:

—Շարունակեցէք, միտեր Ստուժայ, նկատեց դատաւորը:—Դուք դեռ աւելի բան ունիք:

—Այո: Ես կամենում էի ասել, որ այդ մարդը կանգնել է թփերի մէջ և այնտեղից հրացան արձակել երիտասարդ Պոյնդեքստերի վրայ:

—Ո՞վ է այդ մարդը: Ասացէք նրա անունը: Տոյց տւէք նրան: Նրա անունը,—լսում էր ամեն կողմից:

—Ես կարծում եմ, որ դուք ինքներդ կարող էք իմանալ այդ:

—Ինչպէս:

—Քննեցէք մեռածի դիակը: Տեսնո՞ւմ էք,—շարունակեց նա ցոյց տալով դիակը.—նրա վերարկուի վրայ կայ մի կարմիր բիծ, մէջ տեղը մի ծակ: Ես կարծում եմ, որ գնդակը կպել է այդտեղին, ուղղակի կրծքին: Որովհետև մէջքի վրայ արեան հետք չը կայ,—նշանակում է, որ գնդակը մնացել է մարմնի մէջ: Հանեցէք վերարկուն և տեսէք:

Բոլորն էլ լուռ համաձայնեցան որսորդի առաջարկութեանը. մի քանի մարդ, որոնց թւում և Սէմ Մանլէյը, առաջ անցան և դէպքին վայել լրջութեամբ սկսեցին վերցնել դիակից սերասպէն: Բոլոր շուրջը կանգնածները սրտի բաբախումով դիտում էին նրանց: Կատարեալ լուռութիւն էր տիրում, որ երբեմն խանդարւում էր խաղաղ շնչոցով և զսպած բացականչութիւններով: Վերարկուն վերցրին և ներկայ եղողները աչքերի առաջ ներկայացաւ ձիււորի կերպարանքը՝ հագած բամբակեայ կտորից կապոյտ բլուզ՝ կրծքի վրայ ծալքերով և կոճկած կոկորդի մօտից. ոտներին կար նոյն կտորից վարտիկ, որի վրայից հագած էր յովազի բժաւոր մորթուց կարած կոշիկներ: Գօտկատեղի շուրջը կապած էր ձիււ մագից հիւսած թոկով. այդ թոկի մի ծայրը ամբարցրած էր թամբի առաջից, միւս ծայրը թամբի ետևից և դրա օգ-

նութեամբ դիակը բոլորովին ուղիղ մտում էր թամբի վրայ: Արկանի մի կտորը կապած էր ասպանդակներին ձիււ փորի տակից: Բոլորն այնպէս էր, ինչպէս պատմել էր մեղադրեալը, պակասում էր միայն գլուխը: Բայց ո՞րտեղ էր նա: Համարեա ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց դրան: Բոլորն էլ ուշադրութեամբ նայում էին ձիււուորին, աշխատելով գտնել Ձէք Ստուժայի խօսքերի հաստատութիւնը:

Սպանւածի կրծքի վրայ երկու վէրք կար. մինը ուղիղ սրտի դէմը, միւսը նրանից քիչ ներքև: Առաջին վէրքը գրաւեց ընդհանուրի ուշադրութիւնը, շապիկը նըրա շուրջը ծածկւած էր սառած արիւնով, որն, ըստ երեւոյթին, հեղեղի նման հոսել էր վէրքից: Իսկ միւս բացւածքը մի սիսեռի մեծութեամբ էր և առանց արեան հետքի:

—Այդ իմ հրացանի հարւածն է, որի մասին ես արդէն պատմեցի ձեզ,—ասաց Ձէքը ցոյց տալով փոքրիկ վէրքը:—Նրա շուրջը ոչ մի կաթիլ արիւն չը կայ, նշանակում է գնդակը կպել է արդէն մեռած մարմնին: Բայց անա այս վէրքը հասցրւած է սպանւածին այն ժաբայց անա այս վէրքը հասցրւած է սպանւածին այն ժամանակ, երբ նա դեռ կենդանի է եղել, և դրանից էլ նա մահակ, երբ նա դեռ կենդանի է եղել, և դրանից էլ նա մեռել է: Ակնհերև է, որ գնդակը մնացել է մարմնի մէջ, հարկաւոր է միայն կտրել և հանել գնդակը:

Ոչ ոք չը հակառակեց նրան և դատաւորը հրամայեց կատարել այն, ինչ որ ասում էր Ձէք Ստուժայը:

Մի ըստէ անց, գնդակը հանեցին, մաքրեցին արիւնից և տւին երզւեալներին:

Ձը նայելով որ գնդակը տաշւել էր հրացանի փողից դուրս գալուց և տափակել կողերին գիպելուց, այնուպէս մեղայնիւ, նրա վրայ կարելի էր սրտել կխապուստի և Կ. Կ. Կ. տատերի գծադրութիւնը:

— Դուք ինչպէ՞ս էք բացադրում այս բոլորը, միս-
տեր Ստոնմպ, — խօսեց դատաւորը՝ որսորդին դառնա-
լով:

— Ես կարծում եմ, որ այստեղ ոչ մի բացադրու-
թիւն հարկաւոր չէ, — պատասխանեց նա. — մինչև անգամ
ամենափոքր երեխան կասէ ձեզ, որ Հենրի Պոյնդեքստերն
սպանւել է այդ գնդակից:

— Իսկ ձեր կարծիքով ո՞վ է արձակել հրացանը:

— Այդ էլ կարծեմ բաւականին պարզ է:

— Դրանում ես դեռ այնպիսի մի կարևոր սպա-
ցոյց չեմ գտնում, — միջամտեց դատախազը: — Ենթադրենք
որ այդ գնդակը իւր նշանով ու տառերով յիշա-
ւի պատկանում է մի շէնտլմէնի, որը լաւ յայտնի
է մեզ բոլորիս: Բայց միթէ առաջին անգամն է ո-
ճիր գործուում որևէ մէկից գողացւած հրացանով: Բացի
դրանից, — շարունակեց նա յափշտակած իւր սեպհա-
կան պերճախօսութեամբ. — ցոյց տւէք ինձ այն պատճա-
ւը, որը զրդել է սպանութիւն գործելու այն մարդուն
որի վրայ կասկածում էք:

— Ա՛, այդ դէպքում անա ձեզ մի այլ սպա-
ցոյց, — սօսաց որսորդն անհամբերութեամբ սպասելով
դատախազի ճառի վերջին և պայուսակից հանեց ար-
բորւած, ծայրերից խանձւած և վառօդի ծխից սևա-
ցած թղթի կտորը: — Դուք ինչպէ՞ս կ'անւանէք այս
իւրը, — շարունակեց նա դատաւորին դառնալով: — Իմ
կարծիքով թղթի այս կտորը ծառայել է որպէս խը-
ցան այն հրացանի համար, որից դուրս է եկել նը-
շան արւած գնդակը: Այդ ես գտայ մեսկիտական
ճառի ճղան վրայ: Ինչպէ՞ս երևում է, սա նամա-
կի ծրար է և նրա վրայ գրւած է մի անուն, ո-
րը զարմանալի կերպով նման է գնդակի վրայ նշանակ-
ւած անւանը: Դուք ինքներդ կարող էք կարդալ:

Այդ խօսքերն ասելով նա թուղթը տւաւ երդւեալ-
ների աւագին, որը հարթելով թուղթը, կարգաց ծրարի
վրայ գրւածը նախ ինքն իրեն և յետոյ արտասանեց
բարձր ձայնով:

— Կապիտան կառսիյ կէրիօնին:

~~Կապիտան կառսիյ կէրիօնին:~~

րի իրան ուղղած ատրճանակի փողը: Նա լաւ գիտէր այդ, դրա համար էլ արշաւում էր բոլոր ուժով, ժամանակ առ ժամանակ մի կատաղի հայեացք ձգելով դէպի յետ:

Սակայն նա դեռ չէր յուսահատուում, նրա ձին դիւրագրգիռ էր ու արագաթօռիչ, ինչպէս քամին, և կարող էր շուտով հասցնել նրան մինչև կօմանչներէ բնակավայրերը, ուր նա ապահով ապաստան կը գտնէր, որովհետև մի սպիտակ մարդ էր սպանել:

Handwritten notes in blue ink, including the word "հարկ" (tax) and other illegible scribbles.

ՆԵՏԱՊՆԴՈՒՄՆ ՄԱՐԴԱՍՊԱՆԻ ԵՏԵԻՅ:

«Միթէ Աստուած թոյլ կը տայ մարդասպանին թագնրելու և իր պատժող Աջը չի ձգիլ նրա փախուստը խանգարելու», մտածում էին կաղնու տակ մնացածները. բայց իմանալով, որ նրա ետևից հետապնդում են հարիւրի չափ զինւորական և քաղաքացի ձիաւորներ, նոյնպէս և Զէբ Ստումպը, ոչ ոք չէր կասկածում, որ կապիտանը կը բռնէի և արժանի հատուցումն կը ստանայ: Այդ աւելի հաւանական էր, երբ միւսներէ հետ միասին արշաւում էր և Մօրիս մուստանգերը իւր ձիու վրայ, որը յայտնի էր իւր արագավազութեամբ: Թէև նա գնաց ամենից վերջը, բայց բոլորն էլ գիտէին, որ նա առաջ կ'անցնի: Ոճրագործութեան հեղինակին գտնելուց յետոյ, եղած բոլոր բացականչութիւնները հասկացրին Մօրիսին, որ իւր գատը բոլորովին վերջացած է: Նա իրեն ազատ զգալով, վազեց իւր ձիու մօտ, որի վրայ վերջին ժամանակներս ման էր գալիս անպուխ ձիաւորը:

Բոլոր ներկայ եղողներից միայն Լուիզա Պօյնդերստերը չէր մասնակցում ընդհանուրի ցանկութեան և ցաւում էր ոճրագործի վիճակի վրայ: Նրա վշտալի դէմքի վրայ երևաց մի փութանցիկ և յողթական ժպիտ, երբ մօտիցն անցաւ Մօրիս մուստանգերը: Նա բարձրացնելով կառքի վարագոյրը, սաստիկ յուզման մէջ սկսեց նայել ձիաւորի ետևից և կրկնել հետևեալ խօսքերը:

— «Տէր, խղճա՛ մեղաւորին»...»

Մինչև Մօրիսը վազեց իւր ձիու մօտ և ձեռք բերաւ արկանը, անցան մի քանի բուպէներ, այնպէս որ, երբ դուրս եկաւ ամբօսի միջից, որը ցրել էր զանազան կողմեր՝ որ աւելի լաւ դիտէ տափաստանում կատարուող տեսարանը, նա նկատեց, որ փախստականին հետապնդող անձինք գտնուում էին իրենից մի քանի հատ:

ուաջ: Բայց այդ հանգամանքը երբէք չէր անհանգստացնում մուստանգերին, նա գիտէր, որ իւր ձին արագութեամբ առաջ կանցնի բոլորից և չը սխալւեց: Ձին, որ հէնց նոր էր ազատւել իւր սարսափելի բեռնից, զգալով որ իրեն կառավարում է իւր տէրը, արշաւում էր տափաստանի փափուկ հողի վրայով թեթև ոտիւններով: Շուտով նա հասաւ բոլոր ձիաւոր հետապնդողներին և անցնելով մէկը միւսի ետևից, բոլորից առաջ անցաւ:

Նա առաջ էր սլանում առանց մի բանի ուշադրութիւն դարձնելու՝ երբեմնկանաչ մարգագետնով, երբեմն սուր քարերի վրայով, թռչելով գետակների և խրամատների վրայից և վերջապէս, ծածկւեց միւս հետապնդողների աչքից: Մի մարդ միայն նստած պառաւ մատակի վրայ, որին կարելի էր ընդունել մի հալից ընկած ձիու տեղ, յետ չէր մնում երիտասարդ իրլանդացուց: Ձէք Ստումպը սուր դանակով խթելով իւր ձիուն, ստիպում էր նրան վազել ամենայն արագութեամբ, սրբան նա ընդունակ էր:

Կէլիօունը շուտով նկատեց իւր հետապնդողին: Նա, որ իրեն վտանգից դուրս էր համարում, յաղթական դէմքով յետ նայեց և տեսաւ իւր ետևից արշաւող իրեն լաւ ծանօթ ձին, որի վրայ նստած էր ոչ թէ մի մեռած, այլ կենդանի մարդ, նա, որից նա աւելի էր սարսափում ամբողջ աշխարհում: Կապիտանը չէր կասկածում, որ մուստանգերը, որ քիչ էր մնում կորչէր իւր ջանքերի շնորհիւ խայտառակ մահով, այժմ արշաւում է նրա ետևից վրէժխնդիր լինելու ցանկութեամբ վառւած:

Կէլիօունը դողաց երկիւղից. ախ մի ուրիշից նա կարող էր ազատւելու յոյս ունենալ, բայց ոչ Մօրիս Հերալդից: Ձգալով, որ իրան վիճակւած չէ թագնւելու, որ բոլոր ջանքերն անօգուտ կը լինին, նա յուսահատու-

թեան մէջ դեռ ևս առաջ էր արշաւում, անգիտակցաբար խթելով իւր ձիուն:

Մացառներն արդէն մօտիկ էին. կապիտանը նորից սկսում է յուսալ. նա մտրակելով իւր յոգնած ձիուն, ստիպում է վազել դեռ աւելի արագ: Մի բոպէ էլ և նրա առաջ բացւում է կտրւած անտառը, նա մըտնում է անտառը և հասնում այն տեղին, ուր շաւիղը մի պտոյտ է անում: Այս բոպէին փախստականը կը մտնի թաւուտը և կը թագնւի իւր հետապնդողից, բայց յանկալած մի բարկացկոտ ձայն հրամայում է նրան կանգնել:

Կէլիօունը չը շտապեց անցնել անկիւնը. արդէն ուշ էր անտառի թաւուտում ազատութիւն որոնել: Մի յուսահատ և զրգուած աղաղակով, ինչպէս հետապնդողը յուսահատ և զրգուած արձանակը և ցած բերաւած յովազ, նա դուրս հանեց ատրճանակը և ցած բերաւ շնիկը: Լաւեց ատրճանակի սուր տրաքոցը և վառօղի ծխի թանձր ամպը շրջապատեց կապիտանին, բայց գնդակն անցաւ մօտից, որովհետև արձակողի ձեռները դողում էին: Ատրճանակի տրաքոցին իբրև պատասխան հնչւեց էինչ որ սուրող ձայն և ցրւող ծխի միջից կապիտանը տեսաւ, որ արկանը օձի նման կտրեց օդը: Նա ոչ միայն չը շտապեց երկրորդ անգամ ատրճանակն արձակել, այլ և չը կարողացաւ մի կողմը ծուել: Նա զգաց թէ ինչպէս օղակը փաթաթեց նրա ուսերի շուրջը և մի բարձր ձայն կանչեց նրան.

— Անձնատուր եղիր, չարագործ, — և մուստանգերը շուռ տուաւ իւր ձիու գլուխը:

Թէ յետոյ ինչ պատահեց, կապիտանը չէր կարող իրեն հաշիւ սալ. նրան թւում էր թէ ցած է թռչում մի բարձր գանգակատան գլխից: Այդ նրա վերջին գոչումն էր: Ձիուց վայր ընկնելով նա ամբողջ մարմին խփեց քարէ գետնին և ուշագնաց եղաւ:

—Ի՞նչ կը լինի, եթէ ես խթեմ իմ ձիուն և ետևիցս քարշ տամ այս շարագործին: Նա արժանի է այդպիսի պատժի,—խօսեց Մօրիսն ինքն իրեն,—քանի որ նա է սպանել իւր ազգականին և կտրել նրա գլուխը: Բայց ինչն է առիթ տւել նրան այդ սարսափելի ոճրագործութիւնը կատարելու: Արդեօք ո՞վ կարող է բացատրել այդ բացի իրանից:

—Ձէբ Ստուժպը, յարգելի երիտասարդ,—ասաց Ձէբը մօտենալով Մօրիսին և ընդհատելով նրա մտածմունքը:—Բայց դեռ այժմ ժամանակը չէ, ոչ էլ այստեղ խօսելու տեղը: Մենք պէտք է նրան տանենք կաղնու տակը, այնտեղ նրան կը վարձատրեն ըստ արժանւոյն:

—Իսկ ի՞նչպէս կը տանենք նրան,—հարցրեց Մօրիս ձերալը:—Նրա ձին փախել է:

—Այդ մասին չարժէ անհանգստանալ, միտեր ձերալը,—նկատեց Ձէբ Ստուժպը:—Նա միայն ուշագնաց է եղել կամ ուղղակի այդպէս է ձևանում: Ես իսկոյն ոտի կը կանգնեցնեմ նրան: Եթէ նա կարողութիւն չի ունենալ ոտով գնալ, մենք կը նստեցնենք նրան իմ մատակի վրան:

—Իսկ դո՞ւք:

—Ինձ բոլորովին ձանձրացրել է ձիով մանգալը և իմ պառաւն էլ ուրախ կը լինի ազատւել ինձանից. այսօր ես առանց խնայելու շատ եմ խթել նրան: Դէհ, աւազակ, վեր կաց,—շարունակեց որսորդը բռնելով Կէլհօունի օձիքից և սաստիկ թափահարելով նրան:—Վեր կաց, ասում եմ քեզ, ժամանակ է գնալու, քեզ սպասողում են:

—Ո՞վ, որա՞նց,—խօսեց գերին փոքր ինչ ուշքի գալով և անմտաբար շուրջը նայելով:—Ո՞վ է ինձ սպասում:

—Առաջինը՝ ես, ապա...

—Ա՛, դո՞ւք, Ձէբ Ստուժպ, և... և...

—Միտեր ձերալը, մուսափանգերը: Կարծեմ նա ձեզ լաւ ծանօթ է: Դէհ, նա ձեզ սպասում է, բացի դրանից և կը ցանկանային տեսնել ձեզ հետ, և՛ նրանք, որոնք մնացել են ամբողջ մօտ: Դէհ, վեր կացէք գնանք միասին:

Անբաղդը ոտքի կանգնեց և տեսաւ, որ ամբողջովին կաշկանդւած է թոկով:

—Ո՞ւր է իմ ձին,—բացականչեց նա շուրջը նայելով:

—Ո՞վ գիտէ, ո՞ւր է նա: Երևի գնացել է Ռիօ-Գրանդէ: Վերջին ժամանակս դուք այնքան նեղութիւն էք տւել նրան, որ նա անշուշտ անբաւական է եղել իւր տիրոջը փոխելով և վերադարձել է իւր հայրենի արօտատեղիներում հանգստանալու:

Կէլհօունը չը պատասխանեց: Նա նայեց Ձէբ Ստուժպին, մուստանգերին, յետոյ նրա աչքերը կանգ առան սերտուկի զրպանից դուրս ցցւած վեց հարւածեան ատրճանակի կոթին, որի նմանը նա վայր էր ձգել ձեռքից ձիուց վայր ընկնելու ժամանակ: Նա մի անվճռական շարժում գործեց, կարծես թէ կամենում էր բռնել զէնքը, բայց արկանը թոյլ չէր տալիս նրան ձեռքը բարձրացնելու:

—Դէհ, շուտ,—գոչեց որսորդը՝ սպառնական դէմքով հրացանը բարձրացնելով:—Ձին ձեր առաջն է: Մենք սպասում ենք: Նստեցէք թամբի վրայ:

Կէլհօունն այլևս չը հակառակեց, մահւան երկիւղն ստիպեց նրան հնազանդւել: Լուռ, համարեա անգիտակցաբար նա ձի նստեց: Ձէբը բռնեց ձիու սանձը և ձանապարհ ընկաւ: Մօրիսը մտախոհութեամբ հետևեց նրան:

Ի Ն Ք Ն Ա Ս Պ Ա Ն Ը .

Երկրորդ ակամայ ընդմիջումը տևեց ոչ այնքան երկար, ինչպէս առաջինը և դատարանը նորից հաւաքւեց մշտադալար կաղնու տակ:

Արդէն երեկոյ է: Արեգակի թեք ճառագայթները թափանցում են ծառերի սոււերների տակ: Յերեկն այնքան պայծառ և լուսաւոր երկինքը կարմրել էր, նախագուշակելով մօտիկ փոթորիկը: Որքան էլ որ սովորական էր այդ երևոյթը, մօտեցող փոթորիկը բոլորին թուում էր իբր նշան երկնային բարկութեան, բոլոր ներկայ եղողների դէմքերը մուսյլ էին ու դաժան:

Երբ Մօրիս մուստանգերը վերադարձաւ, բոլոր ժողովականները շերմ կերպով ողջունեցին նրան: Նա բռնեց իւր տեղը վկաների նստարանի վրայ և ժողովականներից ոչ ոք արդէն ուշադրութիւն չէր դարձնում նրա վրայ, որովհետև բոլորն զբաղւած էին այն մարդով, որն այժմ կանգնած է դատարանի առաջ իբրև մեղադրեալ: Կասսիյ Կէլիօունը փոխել էր իւր տեղը Հերալդի հետ և դրանում էլ կայանում էր ամբողջ փոփոխութիւնը: Դատարանը նորոգւեց նոյն կազմով, ինչպէս և առաջ: Միևտարանը նորոգւեց նոյն կազմով, ինչպէս և առաջ: Միևտարանում էին իրենց մեղադրական դատավճիռն արտասանելու, որովհետև նոր յանցաւորի յանցանքը ապացուցւած էր: Մօրիսի ցուցմունքը հաստատուեց, զինուորական բժիշկը քննելով մարմինը, զրականապէս յայտնեց, որ մահը վրայ է հասել ընդհանրապէս զնդակահարութիւնից յետոյ և գլուխը կտրել է արդէն մեռած ժամանակը:

Բայց ինչո՞ւ համար էր Կասսիյ Կէլիօունը սպանել իւր քեռորդուն: Ի՞նչն էր հարկադրել նրան նրա գլուխը կտրելու:

Այդ գիտէ մի մարդ միայն, ինքը մարդասպանը, բայց ոչ ոք յոյս չունէր նրանից որևէ բացադուրթիւն ստանալու: Սակայն սպանութեան պատճառներ չիմանալը չի խանգարում դատապարտել ոճրագործին և շուտով նա պէտք է հաշիւ տայ իւր կատարած բոլոր գործերի մասին Ամենաբարձրեալ Դատաւորին:

Դատաստանը վերջացաւ. դատապարտեալը մեղաւոր ճանաչւեց. դատաւորը պահամա—գլխարկը վերցնելով՝ գլխին դրաւ սև գտակը, որ մահւան դատավճոխ սարսափելի խորհրդանշանն էր: Հստ սովորութեան դատապարտելի խորհրդանշանն էր: Հստ սովորութեան դատապարտելի առաջարկեցին ասել իւր վերջին խօսքը: Նա ցրնցւեց կայծակնահար եղած, վայրենաբար և կատաղի կերպով նայեց շուրջը, աշխատելով շրջապատող մարդկանց դէմքերի վրայ կարգալ կարեկցութեան արտայայտող թիւն: Բոլորն էլ երեսները դարձրին ոճրագործից: Մինչև անգամ նրա կաշառած կուսակիցները փախել էին օրէնքի առաջից, երբ նրա մեղաւորութիւնն ապացուցւեց:

Ձը նայելով իւր հարստութեան, հասարական դիրքին, այդ օրհասական ընդհանր Կէլիօունը մնաց միայնակ առանց բարեկամների, առանց պաշտպանութեան:

Ինչպէս նայում է նա անօգնական, ստորացած և ողորմելի հայեացքով: Որտե՞ղ է նրա նախկին հպարտունբարտաւանութիւնն ու գոռոզութիւնը: Նա արդէն հասկանում է, որ իր համար այլևս ազատութիւն չը կայ, որ կանգնած է գերեզմանի ծայրին յաւիտենականութեան տուփ:

Յանկարծ նրա մարած հայեացքը փայլեց. նա բարձրացաւ տեղից, կարծես թէ պատրաստուում էր խօսելու: Արդեօք կը խոստովանուի՞ նա իւր մեղքը. կը թեթևացնուի՞ մաքուր խոստովանութեամբ:

Ներկայ եղողները զսպելով իրենց շունչը, "

էին, թէ նա ինչ կատէ: Լուսթիւնն ընդհատուում է դատաւորի սովորական հարցով:

— Մեղադրեալ, որևէ բան ունի՞ք ասելու ձեր մահւան դատավճռի դէմ:

— Ո՛չ, պատասխանեց նա, — երգեաները արդար դատավճիռ են կայացրել: Խոստովանուում եմ, որ ես արժանի եմ մահւան:

Այդ ամենամասնավոր անցքերով և անսպասելի մերկացումներով լի օրւայ ընթացքում ներկայ եղողները դեռ ոչ մի անգամ զարմանքից այնպէս չէին յափշտակել: Նրանք կանգնած էին լուռ և ոյժ չունէին մի խօսք անգամ արտասանելու:

Դատապարտեալը շարունակեց իւր խօսքը գերեզմանային լուսթեան մէջ:

Խոստովանուում եմ, որ ես եմ սպանել Հենրի Պօյնզեքստերին: Ես գնդակահարեցի նրան անտառում:

Ամբոխի միջից լսում է կորած որդու հօր սարսափի ճիչը և յուսահատ հառաչանքը: Վայրկենապէս խորին լուսթիւն:

— Գիտեմ, որ ես պէտք է մեռնեմ, — շարունակեց կէլիօունը: — Դուք ինձ մահւան էք դատապարտել և անկասկած, չէք փոխիլ ձեր վճիռը: Այն բանից յետոյ, երբ ես ինձ մեղաւոր եմ ճանաչում, բոլորովին անմտութիւն կը լինի ներումն յուսալ կամ ներուճն խնդրել: Երբէք ես այդ աստիճան չեմ ստորանալ: Ես վատ մարդ էի. ես կատարեցի ոճիւրդ և արժանի եմ պատժի, բայց չեմ կամենում ինձանից յետոյ թողնել բոլորիդ այն համոզման մէջ, որ ես դիմամբ եմ սպանել իմ բեռորդուն: Ճշմարիտ է, ես զրկեցի նրան կեանքից, այդ ես անկեղծօրէն խոստովանուում եմ. բայց դուք հարցնում էք թէ ինչու ես արի այդ, զանազան գուշակութիւններ էք անում

գտնելու համար այն պատճառը, որը զրդեց ինձ այդ ոճրագործութիւնը կատարելու, — ես կասեմ ձեզ, որ ոչ մի պատճառ չը կայ:

Կէլիօունի խօսքերը, որ թէև ընդունեց փոքր ինչ անվստահօրէն, բայց ընդհանուր հետաքրքրութիւն առաջացրեց: Բոլորը լսում էին լարւած ուշադրութեամբ:

— Դուք զարմանո՞ւմ էք, — շարունակեց դատապարտեալը: — Սակայն այդ հեշտ է բացադրել: Ես սպանեցի նրան սխալմամբ:

Նոր շարժում ամբոխի մէջ:

Կէլիօունը նայեց շուրջը, յուսալով իրեն շրջապատող մարդկանց դէմքերի վրայ կարդալ խղճահարութեան և կարեկցութեան արտայայտութիւն, մտածելով թէ իւր անկեղծ և մաքուր խոստովանութեամբ շարժեց նրանց սրտերը: Բայց ի զո՛ւր: Բոլորն էլ նայում էին մռայլ և դաժան:

— Ես չեմ հերքում, որ դիտաւորութիւն ունէի ըսպանելու մի մարդու, — ասաց կէլիօունը. — ես չեմ թաղցնում ձեզանից, թէ ով է նա: Ես կամենում էի սպանել այն իրլանդացի թափառաշրջիկին, որ կանգնած է իմ դէմը:

Եւ նա ասելութեամբ լի հայեացքով նայեց Հերալդին, որ հանդիստ, համարեա անտարբեր նայում էր նրան:

— Այն, ես կամենում էի սպանել նրան: Դրա համար ես ունէի իմ պատճառները, որոնց յայտնելու կարիք չը կայ, որովհետև այդ ոչ ոքի չի վերբերում: Ինքը սասանան էր ներշնչել նրան փոխ իւր հազուստը իմ կրթօր հետ: Մնացածը զուգար

տէք: Անբաղդ Հենրիին ընդունելով իմ թշնամու տեղ,
 նշան բռնեցի և արձակեցի հրացանը: Նա ցած գլոր-
 ւեց ձիուց: Նրա ուսերին ձգած վերարկուն ինձ խա-
 բեց և ես ցանկանալով զործը վախճանին հասցնել, հո-
 նեցի որսորդական դանակը և գլուխը կտրեցի:

Ամբոխի մէջ մի խուլ և ասելութեամբ լի արը-
 տունջ ընդհատեց ոճրագործի խօսքը: Լսուով էին վը-
 բէթխնդրութեան ձայներ: Ամբոխը յուզուով էր: Ա-
 մեն ինչ պարզւած է. ոճրագործութեան պատճառը յայտ-
 նի է, էլ ինչի՞ են սպասում:

— Այժմ, — բացականչեց Կէլհունը. — ձեզ յայտնի
 է բոլորը, ինչ որ կատարւել է. բայց դուք չը գի-
 տէք, թէ ինչ կը կատարւի այժմ: Ես կանգած եմ
 գերեզմանի ծայրին, բայց իմ հաշիւները կեանքի հետ
 դեռ վերջացած չեն: Ես մեռնում եմ, բայց երգում եմ
 որ նա ևս կը հետևէ ինձ:

Ներկայ եղողները ժամանակ չունեցան մտածե-
 լու կապիտան Կէլհունի վերջին խօսքերի նշանա-
 կութեան մասին: Ամբողջ ժամանակը նա կանգնած
 էր ձեռքը սիւրբատուկի դրպանում դրած. յանկարծ նա
 հանեց ձեռքը և արեգակի տակ փայլեց ատրճանա-
 կի փողը: Մինը միւսի ետևից լուեց երկու տրա-
 բոց և երկու մարդ գետին ընկան: Նրանցից մէկը
 Մօրիս Հերալդն էր, մուստանգերը, միւսը — կասսիյ Կէլ-
 հունը, հեծելագործի պաշտօնաթող կապիտանը:

Ընդհանուր իրարանցում ընկաւ: Լսուով է մի
 կանաչի յուսահատ ձիչ: Անակնկալութիւնից գլուխ-
 ները կորցրած և սարսափից յաղթահարւած հանգի-

սատեաները վազեցին ընկածների մօտ և շրջապատե-
 ցին նրանց: Կէլհունն արդէն մեռած էր. գնդակը շար-
 դել էր նրա գանգը: և

[Handwritten scribbles and signatures in pencil, including the name 'KELHUN' and other illegible text.]

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ.

Բարեբաղդաբար չարագործի նոր սպանութիւն կատարելու փորձը, յաջողութեամբ չը պսակւեց և շուտով բոլորն էլ ուրախութեամբ համոզւեցան, որ Մօրիսը կենդանի է: Հեշտ է երևակայել, թէ Լուիզա Պօյնդեքստերն ինչպիսի հրճւանքով լսեց այդ լուրը: Նրա երջանկութիւնն այնքան մեծ էր, որ նա մոռացաւ վերջին օրերի ողբերգական անցքերը, մոռացաւ ամեն ինչ աշխարհումս բացի իւր սէրից:

Դրա համար չըսկսենք կշտամբել մանկամարդ օրիորդին. թող խիստ մաքրակրօնները դատապարտեն սէրը, բայց մենք զիտենք, որ այդ զգացմունքն ամենագոր է, որ նա հարկադրում է մոռանալ հօրն ու մօրը, եղբայրներին ու քոյրերին և յաճախ մինչև անգամ ինքն իրեն:

Լուիզայի ուրախութիւնն անսահման էր, երբ իմացաւ, թէ ինչպիսի հրաշքով մահից ազատւեց նրա սիրած մարդը: Կէհօունը ուղիղ նշան էր բռնել նրա սրտին և անշուշտ կըսպանէր նրան տեղն ու տեղը, եթէ Լուիզայի ընծան, նրա սիրոյ գրաւականը չը հարկադրէր գնդակին շեղւել ուղղութիւնից, վիրաւորելով մօտիկ մարդկանցից մէկին: Բայց գնդակն ի գուր չանցաւ. հարւածը և դեռ աւելի բարոյական յուզմունքը այնպէս ներգործել էին հիւանդութիւնից հէնց նոր կազդուրւած Հերալդի վրայ, որ նա զրկւեց զգացմունքից: Բայց այժմ նրա կեանքին փառանգ չէր սպանում. նա մացառներում չէր գտնուում շրջապատւած արիւնածարաւ գայլերով և դիշատիչ ու բուրներով, չէր գտնուում միայնակ խրճիթում կամ բանտում, ուր կարիք էր զգուժանալ անհրաժեշտ բաների: Ուշքի գալուստն իւր մօտ կանգնած նրան, որի գեղեցիկ էր նրան տեսիլքների մէջ. տեսաւ Սեխասում ամենագեղեցիկ

կնոջը, Լուիզա Պօյնդեքստերին: Ծերունի Պօյնդեքստերին հասած դժբաղդութիւնը կտարել էր նրա հպարտութիւնը. նա թողեց իւր արիստօկրատիքական նախապաշարմունքները և համաձայնեց, որ իր աղջիկը ամուսնանայ Մօրիս Հերալդի հետ, մանաւանդ որ այս վերջինն էլ ազնւական էր:

Այն, այժմ նա մի հոտարակ մուստանդեր չէր, այլ իրլանդացի բարօն, սիր Մօրիս Հերալդ:

Թէև ազնւականութիւնը մեծ դեր չէր խաղում Տեխասում և ինքը Մօրիսն էլ քիչ նշանակութիւն էր տալիս նրան, բայց բարօնի տիտղոսը նրան նշանաւոր կարողութեան տէր դարձրեց, որի շնորհիւ կարողացաւ գնել Կազաթէլ-Կօրվօն կապիտան Կասսիյ Կէլհօունի ժառանգներից: Կապիտանի մահից յետոյ յայանւեց, որ նա արդէն ամուսնացած է եղել և Նոր-Յորլէանում ունէր մի փոքրիկ աղայ, որ և նրա օրինաւոր ժառանգն էր:

Սեր Մօրիս Հերալդն ամուսնացաւ դեղեցիկ կըէօլուհու հետ և ամուսնութեան առաջին ամիսներում հայրենիք գնալուց և Եւրօպայում ճանապարհորդելուց յետոյ վերադարձաւ Տեխաս և բնակւեց Կազա-գէլ Կօրվօնում:

Ինչ էլ որ լինէր, Լուիզա Պօյնդեքստերը կամ Լէզի Հերալդը, ինչպէս պէտք է անւանենք նրան այժմ, նախանձելու ոչ մի առիթ չունէր. միայն մի անգամ այդ զգացմունքը վայրկեանապէս զարթնեց նրա սրտում, երբ ամուսինը տուն գալով՝ զրկած բերաւ մի գեղեցիկ կին: Կինը դեռ մեռած չէր, բայց արիւնը գետի նման հոսում էր նրա կրծքի վերքից, որ պարզ ցոյց էր տալիս, որ նրա բոսկները համբւած էին: Երբ հարցրին նրան՝ ով է այդպէս վիրաւորել իրան, նա հազիւ կը պատասխանէր:

— Դիանգ, Դիանգ:

Այդ Իզիդորա Սովարուբիօ-դը Լօս-Լանուսի վերջին
խօսքերն էին:

Երբ նրա հոգին թուա յաւիտենականութեան մէջ,
Լուիզայի սրտից անյայտացաւ դէպի անբազդ հակառա-
կորդուհին ունեցած թշնամութիւնը: Նա սրտանց ցաւեց
նրա վրայ և խնդրեց ամուսնուն շուտով թամբել ձին և
հետամուտ լինել մարդասպանին:

Մօրիսը կատարեց նրա ցանկութիւնը և շուտով յետ
դարձաւ արևանի վրայ իւր ետևից քարշ տալով Դիագին:
Շուտով հաւաքեցին օրինակատարները, դատապարտեցին
չարագործին մահան ՚պատժի և մինչև մի քանի ըսպէն
նա արգէն կախաւծ էր:

Դա մի անօգուտ դաժանութիւն չէր, այլ իրագոր-
ծումն խիստ օրէնքի «ակըն ընդ ական և ատամն ընդ
ատաման»:

Դաժան օրինակատարները մինչև հոգու խորքը յուզ-
ւած էին տեսնելով անբազդ աղջկայ անկենդան դիակը:
Մահան պատիժը նրանց բաւական չէր թւում և
նրանք ցաւում էին, որ այդպէս շուտ վերջացրին նրա
հետ: Երկար ժամանակ նրանք հայեցին Իզիդորայի գու-
նատ, գեղեցիկ դէմքին, որի վրայ դրոշմած էր խորին
տխրութեան արտայայտութիւն, յետոյ մտահոգութեամբ
ցրեցին իրենց աները...

Հազիւ թէ երկրագնդի վրայ գտնւի մի տեղ, ուր
վերջին տանն տարւայ ընթացքում պատահած լինին այն-
պիսի փոփոխութիւններ, ինչպէս հարաւարեւմտեան Տե-
խասում:

Այդ տեղերում, ուր երբեմն բաժ էին կուսական
հտատներ, այժմ երևում են ազարակներ, իսկ անաս-
տափաստանի վրայ, ուր գեռ նոց ժամանակներս ա-
նի վայրի ձիերի երամակներ, շինւած են նոր
ձա նայլ ու բոլոր փոփոխութեան, այժմ

էլ գտնուում են մարդիկ, որոնք կ'առաջնորդեն ձեզ դէպի
մի գաղէնդա, որ կրում է իւր նախկին կազա-դէլ-Կօրվօ
անունը: Այնտեղ գնալով դուք կը հանդիպէք Եւրօպայում
չը տեսնւած հիւրասիրութեան, որ ցոյց կը տան ձեզ
կալւածի տէրը՝ մի գեղեցիկ աղամարդ միջին տարիքով,
և նրա կինը՝ ամենագեղեցիկ կինը ամբողջ Տեխասում:

Մնալով գաղէնդայի տանիքի տակ, դուք կը ծանօ-
թանաք մի յարգելի, շատ աւելի և զրուցասէր ծերունու,
արխատօկրատ՝ դէմքով, որը կը տանէ ձեզ ախոռը և կօ-
րալը և հաղարութեամբ կը պատմէ թէ քանի հարիւր,
մինչև անգամ հազար գլուխ ձի և կղջիւրաւոր անասուն
են արածում իր կալւածքի ընդարձակ արօտատեղինե-
րում: Բայց ամենից աւելի նա հպարտանում է իւր գե-
ղեցիկ աղջկանով և կէս դիւժին կայտառ մանուկներով,
որոնք շարունակ բռնում են նրա սիրտուկի փէշը և նը-
րան «սիրելի պապիկ» անւանում: Անկասկած նա կը
ներկայացնէ ձեզ և տան երկու հաւատարիմ ծառաներին:
Նրանցից մէկը՝ գլխաւոր ախոռապան Ֆելիմ Օ'Նեկն է,
միւսը՝ սեամորթ կառապան Պրուտօն Պօյնգեքատերը: Այն
ժամանակից, երբ մենք տեսանք նրան վերջին անգամը,
նա ամուսնացել է Ֆլօրինդայի հետ, և աւելի լուրջ և մի
կարևոր անձնաւորութիւն էր դառել, այնպէս որ այլևս
իրեն վայել չէր համարում նայել ձիերին:

Գեռ մի անուն ևս յաճախ արտասանուած է գաղէն-
դայում, գլխաւորապէս ճաշի ժամանակ: Ճաշին մատու-
ցանելիք բոլոր որսը սպանում է մի որսորդ, որը երբէք
չէ վրիպում: Գինու բաժակների հետ դուք կը լսէք շատ
զայրներ ծերունի Ջէք Սաւումպի մասին, բայց նրան շատ
քիչ կը պատահի տեսնել: Նա դուրս է գալիս տանից վաղ
տառտօտեան, արեգակը ծագելուց առաջ և վերադառնում
է միայն ուշ երեկոյեան. մի մեծ հնդկահու և մի քանի
աւելի մանր որսի թռչուններ նրա որսորդական հմտ
թեան պերճախօս ապացոյցներն են:

Երև զուք երկար ժամանակ մնաք Մօրիս Հերայրի մօտ, հուանորէն ծառաները կը պատմեն ձեզ մի տարօրինակ պատմութիւն, որը համարեա առասպելական էր դառել, բայց միայն հանդարտ, տէրերից ծածուկ, որոնց մէջ այդ պատմութիւնը տխուր յիշողութիւններ զարթեցընում:

Իսկ «անգլուխ ձիաւորի» պատմութիւնն է:

Handwritten notes on the left page, including dates like 1950, 1951, 1952, and various signatures and scribbles.



Handwritten notes at the top of the right page, including the date 30/12/53 and other illegible scribbles.

Large handwritten notes on the right page, including the date 22/1/54 and other illegible scribbles.



ՀՀ Ազգային գրադարան



NL0004310

